զիմքդ տալ ոչ ամենեցուն ծանուցել, և ընկալեալ է աւետարանն, այլ կան բազումք անտեղեակք և անընդունակք: Արդարև այդ այդպէս է ասէ· սակայն ոչ մերում պաշտամանն մէղ է, ոչ մերում անհոգութենէ, և· ոչ Տանգամա- նաց աւետարանին: Աղ· Ես էի՛ Աս ծածկեալ, այլ քաղցրկել, առագաստել, սաթոբանն մէ, քարոզութենէ աւետարա- նին, Տաւատքն զոր քարոզեմք, ի մէղ կորուսելոցն է ծածկեալ· առ այնոսիկ մէ- այն ծածկեալ է կի անձանօթ, որք կա- մաւ ընտրեն զկորուստ խրեանց· որք ոչ կամին լսել, Տաւատալ, և փրկիլ· որք խրեանց ախտից ծառայ դոլով, զբժշկարար Ճշմարտութենէն ընդունել չկարժէն, և այսու զինքեք կորստեան, և զանօն կորուսելոց կրնն յանձնէս: Ըստ այսմ կորուսեալս խմանն բա- զումք զանարգելն յայ, որք ի դատա- պարտութենէ կարգեալ են վա մեղաց և անՏաւանութենէ իւրեանց· զի ամ ոք որ կամաւ անաստուածութեամբ աւե- տարանին, յայտնի կորստական է· ո- րովհետև առանց Տաւատոց աւետա- րանին չէք փրկութենէ: Եւ այսու գլուխ վինն լուծանէ առաքեալս զսարակու- սանան· իբր զի անծանօթանալն ոմանց ի Տաւատս աւետարանին՝ ոչ է ցոյցք մեղութեան վարդապետութենէն, և ոչ ի պաշտօնեէիցն քարոզողաց, իբր թէ ըստ օրինակին մովսէսի թաքուցանիցեն քողով զպայծառութենէ լուսոյ աւետա- րանին· այլ է նշանակ անՏաւանութե- լոցաց, և կորստեանն՝ որ այնմ ղՏեռ գայ· զի կափուցեալ զաչս մտաց՝ ան- տեսք մնան պայծառափայլ Ճշմարտու- թենէ աւետարանին, և ուղղութենէ քա- րոզողացն: Եւ ոչ այնու ի դերև է- լանէ պաշտօն նոյ, կի դիտաւորութենի· վա զի քարոզութենի աւետարանին սի- րապէս առ ընտրեալսն սահմանեալ է, և ոչ առ անարգեալս· որք թէ և առ ժամանակ մի ընդրկիցեն զաւետա- րանն, յետոյ անզղջութեան կորուսա- նեն զպատուական աւետարանին: Ի սոյն միտս ասէ· (ԸՂ· տիմ· Ը· 10·) * Վա ոմոքիկ նովի Համբերեմ վա ընտրելոցն, զի և նոք փրկութենէն Հասանիցեն՝ որ ի քա- ջա երկնաւոր փառաւքն Հանդերձ: Սակայն Թուի ասասնօր կորուսեալս կոչել մանաւանդ զանՏաւանսն ի հրէ- ից՝ ընդ ի հնէ ժամանակաց· վա զի յայնմ ժա- մանակի առ հրէայս առաւելապէս վայ- լեալ էր լուսաւորութենէ աւետարանին յոմ տեղիս նոյ· որում և եղեալքն ի Տաւսվմ վկայեցին առ աքսն պօղոս, Թէ * վա հերձուածողդ այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամ ուրեք հակառակութենէ կրէ· (գործ· իը· 22·) Ապա ուրեմն անընդունելութենէ նոցա ոչ էր ի ծած- կութենէ աւետարանին, այլ յիւրեանց անՏաւանութենէ:

Կայնէք այլազգ և յարմարէք զքնա- բանս· իբր զի նախ ասաց Թէ՝ մերով բացայայտ ուղղութենէ վարուց և վար- դապետուէ առ ամենեսին արդոյ եմք, անկարօտ ընծայական Թղթոց: Առ այս մարթ էր ասել ոմանց, Թէ և առ որս քարոզեցեր՝ չունիս պէտս վկայա- կան Թղթոց, բայց զնմանէ չունիցիս պէտս՝ առ որս ոչն քարոզեցեր: Պա- տասխանի առաքեալն· Թէպէտ և ան- Ձամբ ոչ ամ ուրեք Տասաք քարոզու- Թիւ, սակայն Տռչակ քարոզուէ մերոյ սփռեալ կայ առ ամենեսին· և մինչն առ այնոսիկ անծանօթ է, որք զկո- րուստ իւրեանց ախորժէն:

Աղանդաւորք ոմանք Թիւրեցին զայս բան, Համարելով Թէ բանք ընծային դրոց դիւրինաց և անծանուկ են առ ընտրեալս· որովհետև առաքեալն վՃիռ տայ Թէ առ կորստական միայն ծած- կեալ է աւետարանն: Սակայն անմըտու- Թիւ Տետևեցուցանեն· զի նա ոչ զդրեալ բանիցն նոյ խօսի, այլ զայսպէս նի քարոզեալ վարդապետութենէնց աւետարանին· որք արդարև ամենե- ցուն բացայայտ առաջի եդեալ են· և ոչ այդմ ղՏեռ գայ, Թէ յանծայնի վերս չկայցեն այլ բանք դժուարիմացք· որք միայն խմաստնոց և Ճշմարիտ վարդա- պետաց քննելի են, և ոչ պատասանց և մանկանց, դեղկաց և գործասրաց:

4· Արդ ընծ այնքան այդորիկ խօսե- ցայց զքերթս անկատարին· զի ի ծա- գէնչէ ի նս լուսաւորչին աստիճան ֆասացն տէ· որ է պատիւ անէրնո- րին ևս:

Ցունականն զդերանունն որոյ՝ դնէ ներգոյական հոլով յոր· և այնպէս ու-

նի լսումին· գուցէ վճռ այսր ոսկանչիւր տղայոցդիրն եղ. Նորոյ, զի տառն իբր նախ դիր յաւելեալ : Ասկայն յինչ Տոլով և առցի , յարաբերութենէ ունի ը բառին անհատապէս · ուստի բազում մեկնիչք մի Տոլովով բացատրեն զերկասին · ՚ի որոց անհատատից · և ասորին դնէ , այնոցիկ որոց ՚ած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս · կամ ըստ այլոց , յորս անհատատս : Եւ զի այս դերբանուն յարաբերէ և զառն կորսուելոցն, որ յանցել տան , նմին իրի մեր Թարգմանիչս Տամաձայնեալով զՏոլովն , եդ որոյ : Իմաստքն են · յիրաւի այնոցիկ որք կորսուականքն են , ծածկել է ծած ծնօթութենէ աւետարանին · զի ՚ած աշխարհիս այսորիկ կուրացոյց զսիրտս , կի ը յանձականին՝ զմիտս նոցա , անհաս պիցն , ՚ի այնու զի անհատատք են , կի զի զանան ՚ի գիտատք իւրեանց : Ասյսպէս բացատրէ ոսկեբերան , և նոյնպէս Թարգմանէ ասորին և արաբացին , ՚ի զի ոչ հաւատան :

Ած աշխարհս բազմօրինակ տեսեալ լինի : Մարկիոնացիք իմանային այսու զիւրեանց արդար ՚ածն՝ որոշել ՚ի բարի ՚ած . և զայն ասէին արարիչ զդալի աշխարհիս : Մանիքեցիք յերազելին զչար ՚ած կամ զսատանայ՝ ստեղծիչ մարմնական իրաց : Ջերկաքանչիւրն յիշէ ոսկեբերան (Ճառ. ը·) և ծիծաղելով մերժէ :

Նա ինքն ը այլոց ուղղափառ վարդապետաց իմանալով զ՚ածն Ճշմարիտ , այլ և այլ օրինակաւ դարձուցանէ զիմաց ուածն : Նախ՝ փոխադրութենէ բառիցն ընթեռնու այսպէս · * Անհատատից աշխարհիս այսորիկ զմիտսն ած կուրացոյց : ‖ Ջայս եղանակ ընթերցման ոչ միայն այլ յոյն մեկնիչք ընկալան , այլ և ՚ի լատինացուց ամբրոսիան և պեզադեան մեկնիչք բերեն . և յատաջ քան զնա եւսեբիոս , և տերտուղիանոս . և օգոստինոս ևս վկայէ յայլ և այլ տեղիս՝ բազմաց յուղղափառաց այսու որոշմամբ բացատրել : Եւ ը ոսկերբանին՝ անհատատքն կոչին աշխարհիս այսորիկ , զի ատ միայն գոյ նց տեղի. և ՚ի հանդերձել աշխարհին չունին բաժին : Երիդ , նա ինքն ոսկեբերան և այլք պահելով զսովորական շարադրութիւն , իմանան զՃշմարիտ ած՝ որ ևմի արարիչ գոլով , է և կոչի ած աշխարհիս այսորիկ , առանց նշանակելոյ՝ թէ չիցէ ած միւսում աշխարհի . ոչ յոլ ժամ ած երկնից կոչի , ոչ իմանի այսու՝ թէ երկրի ած չիցէ : Եւ այսու կուսմանէ ցուցանի՝ թէ անհատատք գէթ ՚ի ղգալի աշխարհէս ունէին Ճանաչել զՃշմարիտն ած · որով Թերևս ՚ի լոյս աւետարանին ոչ գայթակղէին :

Արդ՝ ը երկաքանչիւր եղանակի և աձևն , ած Ճշմարիտ կոչեցոյց զսիրտս անհատատիցն , ոչ իմանի դրուԹիւ կի հաւանուել ներգործել՝ այլ ՚ի նա զկուրուԹիւ մտաց , այլ միայն գաղանի խորհրդովք իմատատքն և արդարուել իւրոյ Թողուտ՝ զի կուրատցին վն անհատատանուել իւրեանց : Ասյսու մտօք ասի մատնել այ զանբարիշտսն ՚ի միտս ա նարդութիւն , խստացուցանել զսիրտս մարդկան , և՚ն· (տես ՚ի մեկն· հռոմ· ա· 23· ժա· 32·) Ըստ վարդապետացն՝ այս մեկնուն չունի ինչ արատ · սակայն այլոց մեկնչաց ոչ այնչափ հարազատ Թուի՝ զածն Ճշմարիտ իմանալ ՚ի բնութենէ · ոչ ը առաջին եղանակին · զի այն փոխադրուն բառից բռնադատել երևի · և ոչ ը երկդին · զի ՚ի ած դերս չէ սովորական՝ զՃշմարիտն ած կոչել ած աշխարհիս այսորիկ· մանաւանդ Թէ ը հակառակն սովոր են դիրք առատել ՚ի նոր կտակարանի՝ այս աշխարհ իմանալ ՚ի չարին մասին :

Վայ այլք ոմանք ՚ի լատին մեկնչաց՝ ած աշխարհիս իմանան զգանակալի իրս իւրաքանչիւր աշխարհասիրի · զոր վախճան եդեալ իւրոյ յօժարութենէն և գործոց , իբրև այ պատճառ մատուցանել . եԹէ մարմնոյ հեշտութի իցէ , եԹէ փառք , եԹէ հարստատ · յայս միտս ապահովեցին կոչեցաս կռապաշտութի . և որք վերին՝ ած մարմնասիրաց : Եւ այս ած կուրացուցանէ զանհատատս . զի սխտուոր յօժարութիք խաւարեցուցանեն զմիտս ՚ի տեսանել ածային լուսոյն : Բայց և այս իմատք՝ առաւել բարդական են , քան ը Ճատին . զի ը այդմ բազմատորական ՚ի դէպ էր ասել՝ ածք աշխարհիս այսորիկ · և զրՀ , նիւթք ախտից ոչ արձակաբար կոչին ած , և ոչ ը ՚ած աշխարհիս այսորիկ , այլ ած

աստուած սուրբ կամ նորա :

Ապա առաւել հասարակաց և ընտանի մեկնութեի՛ն՝ ՚ի՛ ած աշխարհիս իմանալ պատանայ . որ և կոչեցաւ իշխան աշխարհիս այսորիկ . (յովհ. ժբ. 31. ժդ. 30 :) և ինքն պարծեր առ քա՛ թէ ինչ քեան առնէ՛ է տերութեի՛ն աշխարհի . (ղուկ. ի. 6 :) որոյ և պաշտօնեայ դևքն կոչին իշխանութի՛ւնք , և աշխարհակալք խաւարիս այսորիկ : (եփես. գ. 12 :) ՚Ի սոյն միտս առնուն բազումք ՚ի յուներ , ըստ որս և ՚ըստ կիւրեղ , ՚ի սկիզբն հակաճառութենն ընդեմ յուդեացոսի . յիշէ նաև տերտուղիանոս , և օգոստ. նոս . և ոչ ակնարկէ պետգեան մեկ նիչն , ոչինչ ընդեմ էր այլոց վարդապետ ացս ևս հաւանել ընդ այս մեկնութե՛ն . բայց զգուշանայիմ՝ զի մի ըստ աղանդոյն մանիքեացւոց իմանայցէ , ՚ըստ աշխարհիս ասել զատանայ՝ իբրև արարիչ դոլ նիւթական արարածոց երկրի :

Հարաշատաւե այսր նշանակաւե այնու իսկ յայտնի է , զի ըստ սովորական ոճոյ գրոց՝ այս ա՛խտրո՛ն նշանակին մարդիկ երկրաւորք , որք զաշխարհիան և եթե դիտեն և խնդրեն . կի՛ իմանի սէր երկ րաւորաց , ապականաւեի և չարութե՛ն մարդկան , որք բազում մասամբք լցել էն զաշխարհս : (յովհ. ժբ. 27. ժե. 18. 19. ժդ. 8. 20. ժե. 14. 25 :) Ասացեալ աշխարհի ըստ կոչի սատանայ , զի նա ստեղծ զչարութե՛ն մարդկան , և իբրև դերիս ծառայեցուցանէ զնա իւրոցն կամաց : Եւ դարձեալ ըստ ոմանց , նաև նիւթական աշխարհիս ած կոչի սատա նայ , կամ ըստ համարման անհաւատից՝ որք իբր սոյ պաշտօն տանին նմա , և ամ կռամոլութիք ՚ի պատիւ նո՛ դառնային . և կի՛ կիրառաւե նիւթոց ինչ աշխար հի . զորս յոյն Թոյլ տալոյն բազում ա դամ ՚ի վնաս մարդկան ՚ի կիր առնու սատանայ . բան որում իմացան ոմանք զբան Տեովմայեց . (ըստ. 20.) * Ձի ընդ ունայնութե՛ն արարածքն հնազանդե ցան . ՚ի ոչ ած :

Աբդ՝ այսր չար աստուծոյ կուրացու ցանելն զմիտս անհաւատից՝ ինքնին յայտնի է . զի ՚ի բնէ տեեցող դոլով ճշմարտաւե , խաւարաւ անհաւատաւե և ախտից լնու զմիտս անհաւանիցն , պատրանօք և մոլար դիտութի՛ւ՛ ոչ ըստ լավ գնա՛ յաւետարանին : Ոչ զի ծա գէոցէ ՚ինա լ-ոաոոոր-ոո՛ն : ՚Ի՛ սատա նայի առնէ , ոչ զնա պատճառական է . այլ զա այնորիկ կուրացուցանէ զմիտս անհաւատիցն , ոչ զի ամենևին զրկեա ցին ՚ի լուսոյ աւետարանին . և ուր ՚ի հին օրէնսն՝ մոլեցս արկաւ զդօղն ՚ի ծածկել զլոյս օրինացն , ասա ՚ի՛նորումս սատանայ արկանէ զմտօք անհաւատից զծածկոյթ կուրութե՛ն : Իսկ ՚ի՛ ի՛ճշմար տին ոչ առեալ զկուրացուցանելն , ոչ դնէն լոկ հեռուզական է . այլ Թոյլ եա ած կուրանալ անհաւատիցն . որում դՀետ դայ՝ զի լոյս աւետարանին չծա դէ ՚ի սիրտս նո՛ա առ ՚ի՛ հաւատալ :

Աստեղ , ը-ոաոոոր-ոո՛ աւետարան ֆաոայն ասէ , իմանի՛ լուսաւոր զօրութի՛ն կամ ճշմարտաւե՛ն՝ որ դոյ յաւետարանն . փառաւոր քարոզութի՛ն աւետարանին քո՛ , կի՛ աւետարանի՛ն՝ որ է փառք քո՛ . զի ՚ի քարոզութի՛ աւետարանին Հաս կնին սքանչելի գործք քո՛ , վարդապե տութե՛ն , մահ , և յարուն , Համբար ձումն , երկնաւոր Թագաւորութի՛ն , դա տաւորութե՛ն , և այլն ամ որովք փա ռաւորի քո՛ :

Որպէս ըստ զոյս փառաց աւետարա նին՝ իմանայ յաւուրկ ՚ի՛ ի՛ծանօթուե՛ գաղտնի խորհրդոց Հաւատոյ . և ըստ այսմ առ ճշմարիտն ած ևս ՚ի պատճա ռական միտս առնու զչաղկապն ոՀ զի՛. իբր ասել . Թոյլ եա ած կուրանալ ան հաւատիցն . ոչ զի միաբն անհաւան մի՛ նկատեսցէ զնեբքին խորհուրդս ոյ։ Քանզի շատ այնպիսիսն լսել՝ Թէ փըր կութե՛ն աշխարհի է խաչն , և Թէ խա չեանն գալոց է փառօք , և այլք այս պիսիք այժմուբ և Համեմատել խոր հուրդք . որովհետև այսոքիւբ առա ւել խոտանայ անհաւատն , ոչ ոտա գիան ՚ի լոյս արևու։ Այլև ՚ի բանն ծա գէոցէ , խորհրդածէ դանկատարութե՛ն այժմու Համեմատման մերոյ . իբր զի զի ութե՛ն հաւատոյ՝ ծագումն ինչ է խոր հրդոցն սոյ , և ոչ բովանդակ պատճա ռութե՛ն . ոչ և վերագոյն (ը. 14.) Հա

կուչեաց զայժմու ծանօթութե՛ն :

Որ է գործէր անբնութի՛ն սոյ։ Յունաց սովորական օրինակն , սատրին և լա տինն չունին զբառն անբնութի՛ն . բայց դոյ յայլ ձեռագիրս յունաց , և յարա բա

բացին. ոմանք կարծիս առին՝ ի կողոպուտս բանէն մտեալ այսր. (ա. 15.) Սակայն չէ աւելորդ և յայսմ տեղւոջ զի գիւղիցիկ բացատրէ՝ թէ բնութիւն ազ ներելոյն ձեռ՝ ի քէն երևելանայ մեզ իբր ի պատկերի:

Իսկ զքո պատիւդ ասել ոյ, իմանի նախ՝ ըստ ձեռային բնութիւն, յորում իբրև որդի ծնեալ յայր հօրէ, համաբուն և ամենակատար նմանութիւն երևեցուցանէ զհօրն իսկուն և զրովանդակ ածուէն կատարելուն: Իմանի եկիր՝ ըստ մարդկութեն, և ըստ պաշտաման միջնորդի, որոյ առաջին գործ էր յայտնել մարդկան զհայր իւր: Ասէ ամ զոր արար և ասոյց քէն, երևեցոյց աշխարհի զայ զբութիւնն, զիմաստութիւնն, զբարութիւնն, և զորբութիւնն. որով ամ հայր և ամ ածայինքն՝ որք ինքնին անտեսանելի էին, ըստ իւայ ինչ երևելի եղեն՝ ի անօրինութենէն քէն. ուստի պատկեր եղիւ ոյ ոչ միայն ըստ ներքին և էական նմանութեն, այլև ըստ արտաքին երևեցուցանելոյն առ մարդիկ. որ և նախ եցոյց զինքն առաքելոյ, և ապա նոյ քարոզութեն ամ աշակերտելոյ աւետարանին:

Եւ վերջին յաւելուածովս զնկուցանէ առաքեալն, թէ բովանդակ լուսաւորութիւն աւետարանին՝ զորմէ ցայս վայր խօսեր, ի քէն՝ ի հօրէն լուսոյ. վասն զի հաւատացեալ աշխարհ ընկալաւ զլոյսն յառաքելոյ, առաքեալք ի քէն, և քէն յայր հօրէ՝ իբրև պատկեր ի նախատիպէ: Եւ դարձեալ, ըստ ոսկեբերանին՝ զի մի կարծիցէ անհաւատն կամ երկայն՝ թէ անձանօթ զոլով քէն, կարիցէ ձշմարտութիւն ձանաչել զնա, ի մէջ էած զքան պատկերին. ցուցանել թէ որք քէն փառացն անբնդունակք են, չձաչ նաւէն բնաւ զնձ հայր, որ ի նմանի երևիւ. ոչ և ասէն առ հրէայս. (յովհան. ը. 19.) * Ոչ զնս գիտէք, և ոչ զհայրն իմ. եթէ զնս գիտէիք, և զհայրն իմ թերևս գիտէիք: ‖ Եւ սակ րելի աշակերտն երկրորդէ. (ա. յովհ. ը. 23.) * Ամենայն որ ուրանայ զորդի, և ոչ զհայր ընդունի: ‖

Ապա յաստացելոցս ամբողջ իմաստք բնաբանիս ըստ ընտրելագոյն մեկնութեն այս են: Լուսաւոր յայտնութիւն աւետարանին՝ միայն առ կորստականան ծածկեալ կայ. զորոց զմիտս կուրացեալ սատանայ իշխանն մեղանչական աշխարհիս՝ սակս նոցա անհաւատութեն. և արգել զնոցա խստատրութիւն մի ծանօթասցի նոցա զնաւետարանն քո. և ամենայնօքն միասիրով քեզ՝ որ ես ճշգրիտ պատկեր անեռևութեն ոյ, բնաւ անլոյս մնայցեն ի ճշմարիտ ածածանօթութենէ:

Ց. ( ) ի զնէ երեք գոյից տարբերս, այլ զա ‖ յ ջեր, և զնէ ծառայս չեչ զե տեն:

Ցարմարումն բանիս առ անցեալն զանազանաբար տեսանի. ըստ ոմանց կամի ծանուցանել այսու, ընչեր յաւել անդանօր ֆառայն տէ. վասն զի ի քարոզութեն մերում զքէն փառան խնդրեմք մեք: Ըստ այլոց, ցուցանել կամի՝ թէ ոչ մերով յանցանօք կուրանան ոմանք ի լուսոյ աւետարանին. որովհետև մեք ոչ ախտաբար զմեր անձինս քարոզեմք, ոչ զի այնու ի դերև և անպատուաբ կալցէ քարոզութիւ մեր: Ըստ ոսկեբերանին (Ճառ. ը.) հայեցումն ունի բանս առասցելական ի 2 տան. թէ ոչ խորհ մանկութեն և նենգութեն վարիմք իբրև զառա առաքեալն. իբր զի ոչ նման նոցա զմեր անձինս քարոզեմք, զիտաս և զչահ անձանց որոնեբովն. կամ, զի ցուցցէ, թէ պատերազմ նոցա ընդդէմ առաքելոյն՝ ձգի առ քէն, զոր նա քարոզէ:

Ձի ոչ երեք գոյից տարբերս: Ի քարոզութեն աւետարանին՝ ոչ զհոգևական անուանն մերոյ խնդրեմք. ոչ եթէ զմեզ տրտատբակեմք լինել իշխանս կամ տեարս աւետարանական գործառնութես. ոչ եթէ կամիմք այնու որսալ մեզ մեծարանս և կամ դիւրութեն անձանց: Եթէ այսու օրինակաւ քարոզէաք զմեզ, արդարև չէաք ազատ ի խորամանկութեէ և ի նենգաւոր ախտից. և ոչինչ զարմանք էին ի գերև ելանելոյ վատակոց մերոց:

Այլ ոչ չո գոր: Ասյսու կարգաւ ընդ հեռնուն մեր ձեռադիրք, այլև յոյնն և ասորին: Իսկ լատինն և սրաբացին ըստ այլ յոյն օրինակի՝ ունէ: Եւ ևս, լատինն և ասորին ընդհեռնուն զգոր դեր: Բայց չնք դեր ի յոյնին և յատրաբացին. և ոչ ի հին օրինակս լատինականս:

Զքե՛ յեր քաղցեմք, որ է որ մեր, և բովանդակ արարածոց. որ է իշխան և հրամանատար պաշտաման մերում. զնա հաչակեմք լինել որ ասի. ի փառս նո՛ և ի հնազանդութեի հնարիմք շարժել զամենեսին։

Եւ դէղ ծառայ յէ։ Բան կարդի ասէ, լոյ էր ծառայս քեի. սակայն զիտնալ հաղոյն ընարեաց դնել, ձէզ ծառայս ասելով, և ոչ տիրօջս, ոմ էին սուտ առաքեալքն։ Զօրուբ կրկնելի է բան ֆորձից. զի Թէպետ զքե քաղցէին, բայց ըզ նմին զիւրեանց ծառայուե առաչակերտան՝ բանիւք և գործովք յայտ առնէին. Աննչափ հեռի եմք ասէ՝ յաւետարանական պաշտաման մեր փառս կի իշխանութեի կի հանգիստ գրաւել անձանց, մինչ զի և ոչ ձեր ծառայ լի նել, հրաժարիմք, այլ և պարծանօք խոստովանիմք. զմմ զմեր վաստակս նախանձ ի ձեր օգուտ և ի փրկութեի. ոմ տաղտրութեի է ծառայից ի շահ տէ. բանցն պարապիլ հանապազ։ Եւ այս ամ ձե տէ. այսպէս գնեն յոյնն և այլ Թարգմանք. միայն յատկին ի տաղտրական օրինակի ասէ՝ ի չէտ տէ. բայց և նո՛ հին օրինակք գնեն, ձե տէ։ Յամի՛ եթէ ի քարոզել զաւետարանին, և եթէ ի ծառայել ձէզ քե է նպատակ վաստակոց մերոց. վե կամաց և հրամանին քեի առնեմք զմմ. ոմ զի զքե միայն փառաւորիցեմք, և վե նո՛ շահիցիմք զամենեսին։ Արդարև եղկելիք ոմանք էաք, եթէ վաստակօք մերովք զրկանս առնէաք՝ կամ փառացն քեի, և կամ ձերում բարելաւութեի։

6. ( ) ի ՚ն՝ որ ասաց ՚ի Խաւսէ լոյս ծա-
* ՚ գէլ. որ Ե ծագեաց խո ՚ի սէրս
դէր՝ ՚ի լուսաւորութ գիտութեն քառասն ՚ն
՚ի դէմս չէտ տէ։

Այսու պատճառս տայ անցելոյն, Թէ ըզ կէր զքե միայն պարտիմք քարոզել, և վե նո՛ Հարկանել ձեզ զհոգևաւորն ծառայութեի, և միանգամայն մեծ պարգևս ՚ն զոյն մեզ վարկանել։ Զի ՚ն՝ որ ասաց ՚ի Խաւսէ էն։ Բնաբանս ամենեին ըզ յաւնականին է. և յատաջին մասին զորուբ էական բայ իմանի ըզ եբ բայական ոճոյ. ՚ի, ՚ն է՝ որ ասաց բանի՝ Հրամանի Աւրոյ, ՚ի Խաւսէ անդրընդոյն լոյս ծագէլ ՚ի սկզբան արարչուէն, ասելով՝ եղեցի լոյս։ ՚Ի Խաւսէ ասելի՝ ոչ Եթէ զնիւթական պատճառ եղանուլեե լուսոյն նշանակէ, այլ միայն զեղծն յորմէ բովանդակ կազմած աշխարհի փոխեցաւ ՚ի զգալի լուսաւորութեի, իբրև ՚ի պակասուէ յուսնկուէ։ Որ և ծագեաց խո ՚ի լաւինն փոխանակ որ զերանուան դնէ՝ ենդ. ոմ զի առանց էական բոյի կազմիլ բանին այսպէս. ՚ն՝ որ ասաց ՚ի խաւսել լոյս ծագել, ինքն ծագեաց ՚ի սիրտս մեր Են։ Սակայն յոյնն կրկնէ զդարաբերական ձեն, և սոյնպես ընԹեռնաւուն ոմանք զառաջին. այլ և ՚ի լաւին հին օրինակս կայ այնպէս ՚ի Խէրս Ձէր. յօրինակ ոսկեբերանին դնի՝ չէր. սակայն այլք առհասարակ ընԹեռնուն Ձէր։ Եւ զայս ոմանք ընդհանուր առնուն ՚ի վե ոմ հաւատացելոց. զո՛ ՚ի սիրտս մեր հաւատացելոց։ Իսկ այլ առանձին ՚ի վերպաշտօնէից. զո՛ ՚ի սիրտս մեր պաշտօնեից։ Ծագեաց ասէ՝ ոչ իմանի ներդործական, այլ կրաւորական, կի իբր չէզոքական, զո՛ ծագեցաւ, փայլեցաւ. ոմ զ ասորին գնէ. և ոսկեբերան ՚ի սոյն միտս առնալ ասէ. յայնժամ յարթուցեն ասաց ՚ն՝ լինել լուսոյ. իսկ այժմ ոչ ասաց, այլ ինքն եղև լոյս։

Այս իմաստքն են. ՚ն՝ որ ՚ի սկզբան արարածոյ աշխարհիս՝ իւրով հրամանաւ դոյացոյց զլոյսն զգալի, փարատելով զխաւարն աշխարհամած. որ և նոյնպէս փարատելով ՚ի մուտ մերոց զխաւար մոլորութեե, կի հրեական անդիտաւե, ծագեցաւ ՚ի սիրտս մեր պայծառ լուսով հաւատոյ և յայտնութեի Խորհրդոց իւրոց։ Ակնարկէ այսու զպայքարութեին՝ որ ծանկեալ կայր ՚ի պատմուե առաջնաստեղծ լուսոյն. զի ոմ յայնժամ ՚ն՝ որ ասաց ՚ի Խաւսէ լոյս ծագել, նոյնպես յետ այնր նո՛ կարողութեն փոխեցան մարդիկ ՚ի խաւսէրէ անՀնազանդե ՚ի լոյս օրինացն մանկաբարձ. և այժմ ՚ի մեզ ՚ի մեզ ՚ի պայծառութեե առետրանին. որ և առաւել պես ՚ի մեզ ՚ի պաշտօնեայքս փայլեցաւ դերագոյն ՚ն՝ ասացեալ Խորհրդոյն քեի։ Այս ոմ ՚ի նմանէ ընկալաք զայս լոյս ձերմ՝ և առանց ակնառուե, նոյնպես ՚ի տա-

տարածել մեր վնասն յայլս քարոզութիւն պարտիմք զնոյն փառաւն խնդրել, և ամենայառատութիւն լուսաւորել զամենեսեան ամ ուրեք առանց մերոյ շահու։

Ի լռասարսռիւն գիտեմ զոռն ես։ Զոյն մեկնիչք կրաւորաբար իմանան զլուսաւորութիւնն, այլ առ ի լուսաւորել մեզ զիտութիւն հաւատոյ, և ի սոյն միտս թարգմանեն ասորին· իսկ այլք յարմար ևս դատին ներգործաբար ի մանալ· այլ առ ի լուսաւորել զայլս ծանօթութիւն հաւատոյ, նման ասացուածն եսեւասց· (գ. 8· 9·) * Ինձ որ տրուաս եմ ամենայն ըստ ինձ այս ... լուսաւոր առնել զամենեսին՝ թէ զինչ է տնտեսութիւն խորհրդոյն, ‖ ևն։ Ի մեզ ի պաշտօնեայքս աւետարանին հրաշս փառապէս փայլեցաւ իմանալի լոյս հաւատոցն, ոմն զի յետոյ զայլս լուսաւորիցեմք զիտութիւն ֆառաւն ես, այլ փառաւոր խորհրդոյն այդ, և մանաւանդ խորհրդոյ փրկագործութեան, կի ծանօթութիւն կատարելութեանցն՝ որովք փառաւորի ես։

Ի դէմս չեն չեն։ Լատինն ընթեռնու, չեն չեն· այլքն ըստ մերում դնեն։ Ջբառն ի դէմս, լատինն թարգմանէ՝ յերեսս և բազումք մեկնեն· փառացն այդ՝ որք փայլեն յերեսս քոյ, կամ ի քո որ է պատկեր այդ· իբր ասէ· ի վարս քոյ, ի վարդապետութեն, ի աքանչելիսն որք ի քո փայլեցան, պայծառ և հատասի երևիս մեծանալն այդ։ Այս ծանօթութիւն ասի լինել յերեսս քոյն, վասն զի յայտնի ճանաչի ոք ի կերպարանացն· և ասի որ արտաքին զգայարանօք ըմբռնի՝ նման ծանօթութիւն կոչի երես իրացն· կամ ըստ այլոց՝ յերեսս քոյն ասի, իբրև թէ միջնորդութիւն քոյն, ըստ որում նա եղաց մեզ միջնորդս և զկատարելութիւն այդ· և ի սոյն միտս առնու ասկերպան ասէ լով, թէ այսու ցուցանէ՝ քոյին ժամանել մեզ ի ճանաչումն տօր։

Բայց այլք նոյն համարին զայս ըստ վերադրգոյն ասացելոյն (գ. 10·) շնորհել ի դէմս քոյն· զի յաւնականն նոյն բառ է ասա և անդ։ Այս որոյ ընտանեգոյն իմաստքն են· ի մեզ պաշտօնեայքս լուսաւորչեայս աւետարանն առ ի լուսաւորել զայս ծանօթութիւն փառաւոր խորհրդոյն այդ ի կողմանէ քոյն, ան-

ուամբ և իշխանութիւն քոյն, որոյ ևմք պատգամաւորք և ապաւորք։ Ասա իբրև պաշտօնեայք քոյն՝ զնո փառն միայն պարտիմք քարոզել, զնորայսն ուսուցանել, նէ զօրութիւնն համարել զնմ։ Այս իմաստք առաւել յարիւն յանցեալսն և ի յաջորդսն։

7· Այսուհետև ոչինչ զնձէն այս յամենայն Իեցելէն· զի ասելով զբօրեն էջէ յ՞, և ո՛չ ի ինձ։

Ոսկեբերան ի վեր հաւատացելոց առ հաստարակ իմացեալ զընաբանս, զայլ մարմնին նէ առ անցեալսն այսպէս բացատրէ· որովհետև զգալանի փառաց աւետարանին բազում ինչ և մեծամեծ ասացել էր, զի մի ոք խորհեսցի՝ թէ զիարդ այնքան փառաց արժանացել ևք, ի մահկանացու մարմնի մնայցեմք, պատասխանի առնէ· այդ իսկ են պատճառք զի տկար անօթի կարեցեն զգանձ լոյս և զգանձ։ Բայց ոչ նա ինքն ոսկեբերան ակնարկէ զարձեալ, ի վեր պաշտօնէից աւետարանին յաւելու իմանալի է ընաբանս· և ըստ այսմ ոմանք զայսմարմնին բացատրեն՝ լուսեղէնացն լուծումն առնել տարակուսանաց ոմանց, որք ունէին ասել· զնարդ պաշտօն աւետարանին փառաւորագոյն է քան զՀինն, իբր զի պաշտօնեայք նորոյս անփառունակք են, որ համարհէք յաշխարհի։ Առ այս ցուցանէ, թէ ապաւեալպէս այդու փառաւորի ևն, ի ձեռն անարգից տարածելոյ զաւետարանին։

Սակայն ըստ այլոց՝ լաւ ևս Թուէլ համարիլ զնմա իբր եղրակացուի անցելոցն· զի ասացէ՝ թէ քոյն միայն քարոզողք ևմք, և ոչ անձանց, և թէ ինքն ևս է՝ որ ի խաւարել միտս մեր ծագեաց զլոյս հաւատոյ առ ի սփռել զնոյն ըստ աշխարհ, գեղեցիկ ի վեր բերէ, թէ ապրեմն մեք չանիմք ինչ ի մէնք· այլ իբր տկար և անարգ անօթք կրեմք զգանձ հաւատոյ, զի երևեսցի զօրութիւնն այդ։ Ջայս կապակցութիւն յայս առնէ մերոյ բնագրիս ասելն Այսուհետ· որ մարբերական է, փոխանակ ասելոյ, ապրեմն, կամ վասն որոյ· Այլ Թարգմանքն դնեն· բայց ասեմք։

Գանձոյն անուամբ ոմանք իմանան զլու-

լուսաւոր դիտաւ՝ հաւատոյ, և այլք լաւ եւս՝ զաւետաբանական պաշտօնն, զարդարեալ հաւատոյ։ Իսկ ամէն ինչ ըստ ընդունելի հաւատոյ։ Եւ զի ամենայնի ի մարդկանէ կամ ի հրեշտակաց ասի, ոչ ինչ է ընդունելի, եթէ ոչ ի հաւատոյ։ Եւ զի ամենայն ինչ ի հաւատոյ է, ասէ Պաւղոս առաքեալ, եւ ամենայն ինչ որ ոչ ի հաւատոյ է, մեղք է

վշտանամք ձախողակ դիպուածովք : Ալ·ի նոմոլը : Բայց ոչ այնպէս պա կասիմք յօգնութեէ , մինչև անհնար լի նել առ ազատուէ · ի ոչ բազմադիմի վշտաց պահիմք անվնաս : Ամենք զնը ճաղիլն իմանան՝ լքանիլ սրտիւ , պա կասիլ ի քաջալերութեէ · Լեհ և Նեղու թեք յիսէ կողմանց պաշարեն զմեզ , այլ անմեղկելի մեամբ :

Կ·ըօթելը , այլ·ի պոբոխ·նելը : Համա րին ոմանք՝ Թէ բառն չէ , զորութեէ իմանի ասս և՝ ի յաջորդ մասունս : Յոյնն փոխանակ բային ԷԲօթելը , դնէ ԱՓօ·ՈՒՆՆ , և փոխանակ փաբախ·նելը , դնէ զբաղագրելն , ԷՁ·ՈՒՆՆ , որ իբր սասակացուցիչ առաջնոյն Աղոյ զբայն ԱՓօ·ՈՒՆՆ , սովորաբար Թարգմանեն՝ վարանելը , տարտամելը · այ ի դժուարին իրս վարանիմք խորհըր դովք՝ Թէ զինչ առնիցեմք : Արդ է ի սոյն միտս առնուէ և զկարօտելն , այ ի դժուարասպառաց իրս պէտս ունել խորհրդոց և հնարից : Ասկայն ոչ միայն ի յունաց Թէոփիլակտոս , այլև ի լատինացաց տերտուղիանոս , ամբրոս սեան մեկնիչն , կայսեանոս և այլք ըզ յոյն բայն իմանան՝ կրել զչքնաւորուէն , ի կարօտուէ անկանիլ կարեաւր իրաց · զոյն միտս առնուէ բացայայտ հայ Թարգմանն · և ոսկէբերան իսկ ի մեկ նելն նմանաբար խօսի :

Աղա խմաստքն էն · բազմերնակաբար տանջիմք կարօտուէ իրաց կարեւորաց մեր , կամ մեր այլոց հաւատացելոց · ծանր գժուարութէ տագնապիմք · զոր կամիմքն՝ բաղում անդամ չկարեմք ի ձեռս բերել : Ալ ոչ բնաւ մեամբ ի տարակուսի · ոչ բնաւ լքանիմք յառաջ ջի եդեալ զործոյ , այ զորութէն զևս իրացն առյով անակնկալ ճանապարհ · ոչ յայնվայր Թոյլ տայ ած այսոցիկ՝ զի յաղթիցիմք , այլ զի իրատէ ցիմք :

Զատացելքս առաքելոյն ոչ այնպէս պարտ է իմանալ , Թէ մինչև ի կատ բան կենաց ապրեցոյց զնոսա ած յեմ դժնդակ պատահարաց · ապա Թէ ոչ՝ զնմին զործ ժառանգէին զպտակն մարտի բոսական : Ալ յուցանէ մեզ՝ Թէ մինչ ի ժամանակն առնմանեալ յոյ յոբսւ ունէին պակիլ սակս հաւատոյ իմ զործակալուէն , բազում և դժուա րին անգք ընդ անցանէին՝ անհնարինք ի մարդկային կարողութէ · յորոց ոչ անդամ զերձանէին յաղթող արիութէ ի հանդէս բազմաճնար զորուէն այ :

Ց· ՚ելօթելը , այլ·ի լբելը · լոբլ·բէ·ը , այլ·ի ոսբ·նելը :

ի մարդկանէ բազմօրինակ հալածիմք ի քաղաքս , և ի ճանապարհի · ոչ ուրեք զգալ գտանիմք ի մատնողաց և ի հալածելոց · իբրև ի Թշնամեաց վարեալք քաղաքէ ի քաղաք փոխիմք : այլ ոչ լբելը · այլ ոչ լքանիմք յայ · ոչ Թոյլ տայ ած՝ Թէ կամք հալածելոցն կատարեսցին ի մեզ · ոչ մատնիմք ի ձեռս դատաւորաց : Կամ ոչ անվախճար Թողեալ լինիմք յայ · ոչ անկանիմք ընդ բռնաւէք հալածանացն · այլ անվնեհեր սրտիւ ընդհանամք ամ ուրեք ի քարոզուէ : Զոբլոբելը · յոյնն և այլ Թարգմանք ասեն , ընկեցեալք կամ կործանեալք , այլ ոչ կորուսեալք : իբրև Թէ ի բարձանց ի վայր արկեալք , այլ ոչ խորտակեալք : կամ իբրև ի մարտակից յերկիր կործանել ընդ ոտիւք , և մերձ ի սպանանել · այլ ոչ կորուսանէք զրով : Արդ է ի սոյն միտս առնուէ զբարերարին · այ ի ձեռս Թշնամւոյ անկանելով պակասս տագապիլ վտանգաւ մահու , այլ զորուէնէն այ մեալ ազգանգամ :

Վհառնակ հաւատածովք բանիցս՝ իբր ճարտասանական ընարձակուէ դրեմք զնոյն իրս նշանակել կամն առաքեալս , առանց հարկ լինելոյ յիւրաքանչիւրս զՇիշդ որոշումն խնդրել · զուցանէ զմարդեալ մասամբքն՝ Թէ զինչ ներգործեր ի նմ չարաւն մարդկան՝ կի իրացն գժուարութէ , և որպէս զորութէն այ զնոսա իւր երևեցուցանէր յաղագս Թէ նոցն , և ի յառաջադիմաւն գործոց աւետարանին : Յիմի կողմանց փորձուէք յամախէն , խակ որ ի փորձուէն սաստիկ են Դնանել , խափանեալ կարճէին · ոչ փոքր հաւատովք էին այսոքիկ զորութէն այ , քան վառեալ մարնէոյն անկիզելի մեալ , կամ լնդ ծովն կարմիր անթաց անցանել ոտիւք :

10· Յամբաղմանն յետ ի մարմնոյ մեր ի բնեա-
ցոյց· զի ի կենդան յետ ի մարմնոյ
մեր յայտնէսցին ։

Յունականն և այլք զայս անորոշ
լեալ նկատելոյ դնեն իբրև զառաջինն,
այ կրելով· իսկ ասորին ասէ, կրեմք ։
Վա որոյ զմերոյ բնագրիս ասելն ի բնա-
ցոյց, չէ պարտ առնուլ հրամայական,
այլ իբր առարկայական, փոխանակ
ասելոյ՝ կրիցեմք, կրել ունիմք ։ Գոյ
այլ միաբր տարբերութիւն ընդ միմեանս
թեև յառաջին մասին· զի յունաց ա-
ղոտականն դնել, գնան ան յետ ի մարդի
երթալով· և արարացին յաւելուածով·
զնաց ան մերոյ յետ քան ի մարմնի մե-
րում կրելով ։ Իսկ աղեքսանդրեան օ-
րինակն, լատինն, և ասորին իբրև ըզ-
մերս՝ գնան յետ ։ Լատինն, ի մարդի ձ-
բաւ· ասորին, ի մարմնոյ մերմէ ։

Իսկ ըստ իմաստիրն՝ մահ և կենաց յետ
կրկնակի տեսանել լինի ի մեկնեցս ։ Ասա
Ջին՝ մահ յետ իմանի այն, զոր ինքն քա
կրեաց յանձին խաչակիր չարչարա-
նաքն· և կենաք՝ այն որով այժմ կեաց
անմահ և փառաւոր կենդանութե·
և քան այսմ իմաստքն են ։ Քանի ժամ,
ամ ուրեք ըստ մեզ և ի մեզ տանիմք ըզ-
մահն քան, այ զարչարանս և զմահ քան
յանձինս մեր երևեցուցանեմք Տանա-
պազորդ մահաբեր վշոտք և վատնգօք·
իբրև պաշտօնեայք և փոխանորդք նո
կամաւորապէս նկարեմք ի մարմնոս
մեր վնասչիկեր մեռանելն նո յաճապա-
րիզի բարոզուելն մերոյ ։ Որպէս զի և
կենաքն յետ՝ որով այժմ կենդանի է
անմահ յարուցէ, երևեսցին ի մարմնոս
մեր· և այս՝ նախ ըստ ցուցմանն· զի ոմն
ասէ ասկերբեան և այլ մեկնիչք, մեք
ի մահաբեր վտանգս հանապազորեայս
կենդանի պահելով, յայտնապէս ցու-
ցանեմք՝ թէ կենդանի է քո, որոյ վս
զորեբան վիշտս կրեմք անմեղելի· Ա-
նապազորդ մահուանքն՝ ցոյցք են յարու-
թեան քոյ· զի թէ ոչ կամիցի ոք հաւա-
տալ ըզնա մեռեալ և յարուցեալ, ի մեզ
ինքեանս հայեսցի, որք զօրհնանապազ
մեռանիմք, և ի կեանս ելանեմք· այն
պատանի զօրուն՝ որ զմեր կենդանութիս
անմեռ պահէ ի մահաբեր ձգումանն,
յայտնի վկայ է քոյ կենդանական վայե-
լման ։ Եթէ անվնաս և անբեդիմա-
կաց կեանս ունեաք, ոչ այսպէս ցու-
ցանիւր զօրութիւն քոյ, որպ այժմ ի
վշտանայն և յանցաղթելն մեռանլն ։

Եկիր՝ յայտնել կենացդ յետ ի մարմնս
մեր՝ իմանի ըս վայելմանն· զի ոմն մա-
կակիր վշտաբեր հաղորդիմք մահուն քոյ,
նոյնպէս և փառաւորեալ կենաց նորս
կցորդ լինիցիմք· ուստի դժնդակ նե-
զուելիքն՝ որք ցուցակ են տկարութե և
լքման մարմնոյ մերոյ, լինին գուշակք
երջանիկ յարուե նո ։ Ջայսմանիկ կրկին
միտս նշանակէ ասկերբեան, և այլք և·
Իսկ ըս այլում տեսուե՝ մահ յետ իմանի
խաչակիր վշտամբերութիւնն կրեալ յա-
ռաքելոց· և կոչի յետ, իբրև ըստ օրէ-
նականին քոյն և վս անուանն նո կրեալ· զի
սովորութե է՝ զնմանսն նոովին անուամբ
կոչել· կամ, զի քս վս կցորդութիւնն ըս-
գայ· կամ, զի ըս դիտաւորութիւնե չար-
չարողացն՝ վշտակիր նախատինք պաշ-
տօնէիցն առ քս վերանան ։ Սակս այ-
սոցիկ պատճառաց՝ այն առաքել ըզ-
մոլեսնի վիշտս կոչէ նախատինս (եբ-
բայ· ժա· 26)։ և քս որն զհալածանս
հատուցանելոց բերեալս ի սորոսե՝ ի-
րում անձինն վերադրէր ։ (գործ· թ·
գ· 5 ։) Այսպէս կենաց յետ ըս երկիր տե-
սուե՝ իմանի կեանքն առաքելոյ նման
կենացն յետ, այ անմահ, երջանիկ, երկ-
նային· կիմ ըս այլոց, իմանի ուժգնու-
թեին և կենդանական զօրութին ներգոր-
ծելոյ՝ ի քոյ հոգւոյն սբ· որով՝ ի մա-
հաբեր վտանգս անխորտակելի մնա-
ցին ։ Կամ, յաջողութեին այն և զօրա-
ւոր ազդումն՝ որ ի պաշտաման առա-
քելոց երևեր յայտնապես, ընդէմ բազ-
մապատիկ արգելոց՝ անխափան ներ-
գործելով զնոր արդիւնսն· որպ ծառ՝
որ ի բաղխել հողմոց և հեղեղաց ան-
վրէպ պտղաբերիցէ զնոն պատասխ,
զանխառամելի կենդանութիւնն յու-
ցանէ ։

Ապա ըս այսմ տեսուեն իմաստքն են·
Հանապազ և ընդ ամ կոչին ի մահս
վտանգս մատնիմբ վս անուանն քոյ ի
պատճառս աւետարանին· ոմն զնչայ-
թօզ և բազմարդիւն մնալով մեր ի
պաշտաման մերում, երևեսցի ի մարմ
նի մերում կենդանատրոգ զօրութեին

քնի: Ոմանք զերկդ մխոս նախամեծար առնեն քան զառաջինն. իբր զի առաքեալն՝ի կարգի բանիցս ոչ այնչափ ըղձասէր համբերութիւնէ վշտաց և զնեղ հատուցմանցն խօսի, քան թէ զպահպանական զօրութիւնէն այ, որով՝ի մէջ հանապազ զորդ վտանգաց մահու առանձինն խնամոյ ապրին ընտրեալքն՝ի հաստատութիւն եկեղեցւոյ: Սակայն յայսմ բանիցն երկաքանչիւր իմաստից և ձեռն տան:

11· Պատուի դիր որ հնդկանէս է, ի տահ մաթխիմ վան յոն. զի և հնդիան յոն յայսի էիցին ի մահկանացոս մարդս դէր:

Մեկնաբան երկրորդէ զյառաջասացեալն: Մեք ասե որ հնդկանէս է. այ որ յայրեան վտանգս տակաւին կենդանի մնամք զօրութեն այ, կամ որք չեն ելեալ եմք յայս աղցաւոր կենաց՝ իբրև զրազմնոցեալս, դիր, օրըստ օրէ, յաշխատակի, և՝ի բազմազան դիպուածս, ի տահ մաթխիս, ի դժուարին և յանհնար վտանգս ահկանիմք, որոց ըստ քնական զօրուն զհետ գայր կորուստ կենաց. և այն մեզ յոն, ոչ սակս մարդկային ինչ պատճառաց. այլ վասն անուանն քրիստոսի, վասն քարոզութեն աւետարանին: Աչյոս ասա բացատրէ զասելն՝ տահ յոն. այ մահ յանձն առեալ վասն յայնի:

Զի և հնդիան յոն յայսի էիցին: (յոմանս, լինէիցին:) Ոպ զի՝ի կենդանի մեռելոս, կի՝ի դիւրամեռիկ յայս մարմնոս մեր յայսոսպէս երևեացի՝ թէ քան զոր քարոզեմքն, կենդանի է. որպ զի զօրուն կենացն քան յայսոսաւոսիլ վկայեսցի՝ի վշտակիր մարմնոս մեր. զի ծանիցի՝ թէ կարօղ է և զմեզ կենդանարձել ըստ իւրում կենդանութեն: Կամ առ հանդերձեալ յարութեն ձգելով, ոպ զի այժմ մահու նէ հաղորդեալք, վկայեսցի և ապագի մեզ յոյս, թէ յերջանիկ կեանս ունի կոչել զմեռեալ մարմնոս մեր: Զկնի կաքանչիւր իմաստից ուրոյն յիշատակ ոսկեբերան և այլք: Դարձեալ ըստ այլոց· միշտ մահու մտանելք կենդանի մեռանել՝ զի ապրեցուս, թէ նէ ներգործեսցէ՝ի սկար մարմնոս մեր· զի յայսոսեսցի կենդանարար հոգին քրիստոս, և կարողութեն՝ որով զօրաշնամք ըստ կիւրեղի խիղախել իբրև զանմահս: Ի վէր այսց բանից սկսեալ՝ի 7 տանէն՝ խօսելով ոսկեբերանն՝ի ձառն յաղագս ըստ ըմբռնման եւտրոպիոսի, տահ· զօրութի ձեռնից զանձուն երևի այսու, զի ոչ ելեի ինքն պահպանի յանձն՝ի ոչ կորնչի, և բեռնն նաւէ անվնաս:

12· Պատուիպոս տահ՝ի մէջ զօրաւոյ, և հնդիան՝ի յեղ:

Աչյոսհէպոն մակաբերական է, որպ դնեն և այլ թարգմանք, այ վէ որոյ ապա ուրեմն. իբրև՝ի նախասացելոցն եզրակացութեի առնելով: Որովհետև ասէ՝ի պատճառս քարոզութեի աւետարանին՝ անդադար կամք՝ի վտանգս մահու, ուրեմն՝ի մեզ՝ի պաշտօնեայքս քրիստոսի մէջ տահ զօրաւոյ, այ մահ ներգործի և կատարի. և հնդիան՝ի յեղ: Ոմանք՝ի լատինացւոց իմացան իբրև հեգնութեի ասել զայս՝ի յանդիմանութի կորնթացւոց· ոպ թէ զուք խաղաղիկ և առանց վտանգաց կեալ խնդրէք, որ չէ իրաւացի: Ի սոյն միտս համարին և զոսկեբերան· բայց՝ի բանս նր չերևին այդ իմաստք: Ոմանք և այսպէս շեղ ջնեն զնմաստան· մեք՝ի հանապազորդ վտանգս մեր ոչ այլազգ կեանք, քան զոր զուգ կեայք՝ի յաջողուածս և յանվտանգ կեցցաղս· իբրև թէ զուք անվշտութեի համարիք ունել զկեանս զայս· բայց մեք՝ի մեծամեծ վիշտս մերզնոյն կեանս վայելեմք:

Սակայն այսպիսի իմաստք ոչ հաստատին յանցեալ և՝ի յաջորդ բանս առաքելոյն, այլ ըստ կարգի հաստարակաց և ընտանի միաբն են: Քարոզութի աւետարանին՝ որով մահու արկածք հանդիպեալ

դիպին մեզ, ի չեզ հոգևոր կեանքն ծնանին, աճեն և կատարելանան· բիւր աղգի տառապանք յաճախեն ի մեզ· այլ նոքօք չեզ փրկութեի և կեանք յաւիտենական մատակարարին· և զպէս տուղ վաստակոց մերոց՝ դուք խաղաղղութեք և անվնաս վայելեք: Բայց ոչ զչարիքք ք այդ խաղաղական վայելուն չեր· զի ամ անոք մեր վա չեր են· և կայ մեզ և յոյս՝ ք ժամանակին ժառանգել զփոխարէնն վաստակոց մերոց: Ջայսպիսի միտս ակնարկէ և ասկերբ բան· և յայտ խակ է՝ լսողդացն: Եւ թուի ինձ, թէ այս բան՝ հանատուոյ թէ ինն է աստուածոյն յառաջին կորնթացին (ԺԲ· 9·) * Ջմեզ զառաքեալս յեանորդս առաբ ևնե· տես անդ:

13· Ա՛ղբ ոհնչ զնոյն հոգի հաւատոց· ոհ ՚ն գրեալ է· հաւատացի՝ վ որոյ և խօսեցայ· և մ՚ հաւատամ, վ որոյ և խօսիմ խսկ:

Կամի առաջելակիւս ցուցանել, թէ պաշտօնեայք աւետարանին՝ թէ և մա հուելսւի վշտացեալք հանապազ, ոչ են ատրև քան զհաւատացեալսն՝ որք ա ռանց այնպիսի վշտաց ժառանգին ըզկեանս աւետարանին· և ոչ նուազելք փառաւք քան զմովսէս· թէպէտ և աւ տաքոյ անփառունակք երևին: Գիտելի է, զի ի վէր այսր բնաբանի ասկերբ բան բաց ի մկնութեի թզթոյս՝ ունի և ձառս երիս խօսեցեալ յանտիոք:

Ա՛ղբ ոհնչ զնոյն հոգի հաւատոց· Ձոյնն և այլ թարգմանք անոքոյ ժամանակաւ դնեն զբայն՝ առ ի յօդել ք յեսային մասին· ՚ի Ա՛րդ ունելով, կի որովհետև ունիմք զնոյն հոգի հաւատոց··· և մեք հաւատամք, վ որոյ և խօսիմք: Հոգի հաւատոց իմանի հոգի տուիչ հաւատոյ, հոգի՝ որ հաւատացուցանց մեզն, կի որ հաւատովք միայն տուիչ լինի: Կի ք այլ ոձոյ գրոց, հաւատքն՝ որ ի հոգւոյն սքի յառաջ եկեալ· ոյգ ասի՝ հոգի հեզուհի, իմաստուհի, երկիւղ, ևն· ՚ի հեզուհիւն, կամ իմաստուհի, կի երկիւղ պարգևեալ ի հոգւոյն սքի: Ապա ունել զնոյն հոգի հաւատոց՝ իմանի, ունել զնոյն հոգի շարժիչ հաւատոյ· ունել զնոյն հաւատս ի նմին հոգւոյ, շարժիլ ի նոյն հաւատս նովին հոգւով:

Բայց ք որոց ասէ՝ նոյն· Ոսկեբերան, և այլք բազումք ի յունաց և ի լատին նացւոց իմանան ք դաւանիլ, զորոյ ըզբանն յարէ զկնի, կի ք ամ սքզ հնոյ կտակին, իբր ասել· ունելով մեր զնոյն հոգի և դհաւատս զոր ունէր դաւիթ, և ամ արդարք ի սկզբանէ· նովին հաւատովք զօրացեալ մեր, որով դաւիթ և ամ առաջինքն: Ըստ այսմ մտաց ոչ կերերան (աստ· և յեկիդ ճառին·) և այլ վարդապետք յաղթահարէին զմանիքեցիս և զմսրկիհնայիս, ցուցանելով ի բանէս՝ թէ նոյն ոճր և ասե ե հնոյ օրինացն և նորոյս, և նոյն հաւատք՝ երկաքանչիւր կտակարանաց: Եւ ըստ տեսութեն ոմանք այսպէս ձևացուցա նեն զնմաստսն· երևիմ թերևս բուռն առնել բանին դաւիթ, յարմարելով զայն յառաջիկայ նիւթս· բայց չէ այնպէս· զի նովին հոգւով նորս վարիմ, որ ե տուիչ հաւատոց:

Ա՚յլք բազումք ի լատինայոց՝ իմանան ունել զնոյն հոգի ք կորնթացւոց, կի ք ամ հաւատացեալս նոր օրինացս· իբր ասել· թէպէտ և մա՚ ի մեզ զբանակ այժմ, և կեանք ի չեզ, սակայն որովհետև զնոյն հաւատս ք ձեզ ունիմք ի նոյն հոգւոյ, նովին հոգւով ծնունդս ենք ամենեքին, վ այն ի նոյն խոստմունս դիմիմք, և ակն ունիմք զնոյն կեանս անմահականս ընդ ձեզ ժառանգել, կի զօրանամք յազատ խոստովանութեի քրի: Ա՚յս երկդ տեսութեի առաւել յարմարի ի յաջորդ տունն:

Որպես ե գրեալ է· յոյնն դնէ, ըստ գրեցեալսն: Ջայս մասն ոմանք յարեն յանցեալն ք առաջին մեկնուե· ՚ի ունիմք զնոյն հոգի՝ զոր և առաջինքն, զորոց գրեալն է, կամ, որոց մին ազդեալ ի հոգւոյն ասաց, հաւատացի ևն· Բայց այլք լաւ ևս ք յաջորդին յարեն այսպէս· ք որում գրեալ է՝ հաւատացի, վ որոյ խօսեցայ, նմանապէս և մեք հաւատամք, վ որոյ և խօսիմք: Ա՚յս բան է ի սաղմ· ճժէ· 1· և ք ճառին խօսի մարգարէն զհաւատոցն՝ որով ք խոստմանն ոչ ծանուցելոյ ի չեռն առ մուելի՝ ակնուներ ապրել ի վշտացն, և

և հաստատել՝ի Քրիստոսէ խոստո-
ւմն • եթէ ասել՝ Ես Թէպէտ՝ի մեծա-
մեծ և յանճառագործելի վտանգս մատ-
նեալ, տակաւին անհրկեցայ հաւատա-
ցի խոստմանն ոյ՝ի փրկել զիս, և՝ի
բարձրացուցանել յարքայական խոստո-
ւմն։ Վէ որոյ Ե խօսեցայ • վէ հաւատա-
լոյս խօսեցայ • եթէ չհաւատայի, և խօ-
սէի ոչ բնաւ • նովին հաւատովս խո-
սեցայ կի յայսմանէի ոչհաւատալս • յայն
Ճշմարիտ վստահութէն խօսիմ, և նո-
վին վստահութէ հրատարակեմ զնոյ առ-
ի՛ս բարութէն։

Եւ՝ ինչ հասարակ, վէ որոյ Ե խօսիմ ևս։
Քանզի որպէս դանիէլ զանձնէ զրեաց,
նոյնպէս և մեք ըստ նոր օրինակին հաւա-
տամբ զերծանիլ՝ի մեծամեծ չարեաց
մահաբերաց, և հաստանիլ՝ի խոստա-
ցեալ փառսն • վասն այնր և համարձակ
խօսիմք, այլ խոստովանիմք զոյս ապա-
տութեան մերոյ, և անհամ յարատէն։
Ջորովք ասէ ոսկեբերան յայտնութիւ
Ճառին • միթէ՝ի չհաւատալոյ ոչ խօ-
սեր, այլ կայիր անբարբառ։ Այո
ասէ • առանց հաւատոյ ոչ բերան շար-
ժի, և ոչ լեզու, և ոչ շրթունք • որպէ
ծառ առանց արմատոյ ոչ բերէ պտ-
ուղ։ կամ • յերկարել վտանգացն զո-
բացեալք հաւատովք տևեմք՝ի քարո-
զութէն մերում • և անեղիւզաբար ըն-
ծայեմք զդաւանութէն հաւատոյ մերոյ •
առանց ձանձրանալոյ առ ետարանեմք
զնծային Ճշմարտութիս մինչև՝ի կատա-
րած։ Վայելչապէս յարմարէ առաքե-
իւրում առաջարկութէնն զրան դաւ-
թէ • զի Թէպէտ նա առ տեղեաւն ոչ
զնոյն հաւատալի իրաց խօսէր, այլ զա-
զատուէ՝ի մարմնական վշտաց՝ի մարմ
նաւոր Թագաւորութէ, բայց զի օրի-
նակ էր Տգաւորականին յարմարութէ
յառաջ բերէ զայն • ցուցանելով՝ Թէ
ոյ դաւթէ և այլք արդարք՝ի բազմ-
բինակ վիշտս անկեալք, հաւատով և
յուսով առ ետ կային անասանելի, և
ժառանգեցին զնուրացանելիս բարիս
խոստացեալս յոյ, նոյնպէս այժմ
վշտացեալս՝ զորաթէ հաւատոյն ա-
րիանամբ ժուժկալել, և անվրէպ հա-
ստանել երկնաւոր հատուցմանն։

14 • Օ այս գիտեմ, եթէ որ յարոյն ոչ,
■ ■ ■

նեմք և զոր կրեմք, եթէ քարոզեմք, եթէ վշտանամք, եթէ հալածիմք, եթէ յաղեմք թշնամւոց, եթէ սկարանալ եւս իմք, այս ամ վա՛ս ձեր առաւել կատարին՝ քան վա՛ս մեր։ ՚ի ձեր օգուտ և ՚ի փրկութի՛ն կարգեալ են՝ և ո՛չ ՚ի մեր անձանց դիւրութի՛ն։ Ապա իրաւացի է՝ զի և մեք բաժանորդ լինիցիմք ձերում փառաւորութե՛ն։ Կամ ըն՞ սակաւ երանութի՛ն և քան այլոց, այն ամ զոր արար ք՛ս, եթէ միառանձն, եթէ յառնելն, և որ այլևս անտեսանիք նորա, վա՛ս ձեր ամենեցուն կատարեցան, և ո՛չ վա՛ս այս և այն մարդոյ։ վա՛ս ձեր հեթանոսական ազգաց եղեւն, և ո՛չ միայն վա՛ս հրեից։ ուստի մեզ և ձեզ փառք ըն՞ նիմ կալ յանմահ երանութի՛ն։

Ամենք կարի ամփոփելով զմտաս բնաբանիս՝ մեկնեմն այսպէս։ ամ զոր ասեմ՝ ՚ի պատճառս ձեր են։ ոչ զի հայեցեալ ձեր ՚ի բազմապատիկ վիշտս մեր, յոյժ ապաստանիցիք աղօթիւք։ և ըստնելով ՚ի նմանէ զազատուի՛ մեր, ոգևնդամ տեսանիցիք զմե՛զ և վա՛ս այսպիսի մեծի շնորհաց՝ հաւատարք դոհութի՛ն փառաւորիցիք զնա՛ս։ Այս իմաստք սակաւուց են, և ոչ իսկ ընտանի կարգադրութե՛ն բանից առաքելոյն։

Ջի՞ շնորհն յաճախէ։ փոքր ինչ մի՛ծութե՛ն կայ ՚ի բնաբանիս ՚ի պատճառս շնորհագրութե՛ն։ մեր ընտիր օրինակք զբ՛ս բոշոնն կետին առնեն ոչ եդաք։ իսկ յոմն ամենեին ըն՞ մերում կարդի ընդեռնու այսպէս։ Ոչ զի շնորհն յաճախեալ բազմացն դոհութի՛ն առաւել լասցի ՚ի փառս նո՛ց։ Եւ ըն՞ հասարակաց մեկնութե՛ն իմանի։ ոչ բաժանորդ առնելով զձե՛զ և զմե՛զ ՚ի նոյն փառս՝ այս պատուդ կատարի, զի շնորհք փրկութե՛ն կի՛ բարերարութե՛ն ոչ առատացնէ՛ և բազմապատկէ՛, դոհութի՛ բազմաց ընդունողացն առաւելացի՛ ՚ի փառս նո՛ց։ Կամ, որպէս զի օրէնի առատապարգև ի՛ցէ բարերարութի՛ն, նոյնպէս առաւել լինի՛ փառքն ոչ՝ բազմաց շնորհակալ լինելոյն։ վա՛ զի մեծանան փառքն ոչ, յորժամ շնորհակալութի՛ զպարգեա՛ նի՛ մեծացուցանիմք։ Ըստ մեկնութե՛անս՝ բառքն ՚ի բազմաց փո՛խ-ո՛ւրէ, յարին ՚ի բազմս աստուա՛ծոյն։ Իսկ որ ՚ի զլխի անդուա՛ծ կրկնութի՛ն նախդրին, ՚ի բազմաց ՚ի փո՛խ-ո՛ւրէ, ՚ի սակաւս օրինակս է։

Իսկ այլ Թարգմանք զբառն բազմացյուելով ՚ի բառն չաճախէ՛, այսպի՛ կալ մեն զնա՛ս։ Լատինն։ * ոչ զի շնորհն առաւելի՛ ՚ի ձեռն բազմաց՝ շնորհս կալցէ՛ առաւելգի՛ ՚ի փառս նո՛ց։ ‖ Ասորին։ * ոչ զի յառաւելու՛ շնորհաց ՚ի ձեռն բազմաց՝ առաւելգի՛ շնորհակալեսցին ՚ի փառս նո՛ց։ ‖ Արաբացին։ * ոչ զի յաճե՛ շնորհաց ՚ի յոյսվազդոնս, առաւելգի՛ շնորհակալուե՛ն ՚ի փառս նո՛ց։ ‖ Ըստ այսմ ընթերցուածոյ խնամացքն են։ որպէս զի շնորհքն սփռե՛ն ՚ի բազմս՝ կի՛ առ բազումս հնչի՛, առաւելացի՛ ՚ի փառս նո՛ց։ Բայց ըստ այսմ շնորհ փոխանակ շնորհակալուե՛ խնամալի է։ Իսկ այլք ոմանք զբ՛ն բայն առ-ո՛ւ-ելնոցի՛, համարին իբր ա՛ն ցողական կի՛ ներգործական։ ըզ՞ առաւելութե՛ կի՛ առաւել արասցէ՛։ զի նո՛ն բայ սովին մոտք վարի այրու։ (առած. Թ. 8։ եփեսաց. ը՛. 8։ ա՛. Թեսաղ. ՚ի. 12.) և զնմասան ձևացուցանեն այսպէս։ ոչ զի շնորհն սփռե՛ ՚ի բազմս, առաւել արասցէ կի՛ յաճախեսցէ զնոցին բազմաց դոհութի՛ն, որով փառաւորի՛ ա՛ծ։

Այլևայլ ընթերցուածք ՚ի մի դիտաւորութե՛ հային։ որով ցուցանի առաքեա՛ն Թէ՝ ա՛մ վաստակք մեր ՚ի ձեր փրկութե՛ կատարին։ և փրկութե՛ ձեր աւարտի ՚ի փառս նո՛ց։ մեք վշտանամք ՚ի շահել նց զբազմագոյնս։ որով պարգեւք փրկութե՛ առատանան, և դոհութի՛ բազմացն մեծանան ՚ի փառաւորել զնա՛ս։ Այս դիտով նպատակ մերոց վաստակոց, անձանձրոյթ ՚ի նոյնս պա՛ բազմիմք, դիտելով Թէ՝ ոչ անպտուղ ելանեմք։

16. Վասն որոյ և ո՛չ յանձրանամք. այլ եթէ արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքինն մերդն հանդերձ օրըստօրէ։

Վերատին առնու զառաջինն ՚ի 1 տան՝ յետ ծանուցանելոյ զչմպատակ շահեկա-

կանուլթիւս առաքելական վաստակոց իւրոց: Վա՛ որ՛ ասէ· ՚ի վա՛ յուսոյ յաւիտենից փառացն, և սակս վաստակուլթեան՝ որով ակնունիմք զբաժակ ժողովուրդս սահմանալ ՚ի մերումն վաստակոց, ոչ ՚ի՞նչ ոմանք, ոչ լքանիմք հոգւով ՚ի մահճակին նեղուլթիւս մեր· ոչ թուլանամք յաշխատուլ, ՚ի՛նդամիտ առանիմք ամէն: Այլ ՚ի՞նչ· Հաղկապն այն իրը պատճառական նշանակէ· ՚ի վի լիճ պէտ: Արա՛ն և Նէրսէհ մարդ՝ ոչ է նոյն ընդ առելոյն հին և նոր· որ յիշատակի ՚ի Հռոմ· (ՃՀ· 6· և փետաց· ՃՀ· 22· 23· կողոսաց· ՃՀ· 9· 10·) Վա՛ ի՞նչ այս որոշումն պատշաճի մարդոյ յետ ապաքանալոյ մեղաց· իսկ արա՛ն և Նէրսէհ ասի մարդոյ առանց հայելոյ ՚ի մեղս· մինչ դի և քա՛ի իսկ պատշաճի ընծայել: Իսկ զբոշումն այսորիկ ոմանք առնուն ՚ի վե՛ր մի և նոյն մարդոյ կի՛մասին նո՛ ընդ այլ հանդամանաց կենաց· Բերդի ըստ երկրաւոր և մարդկային կենաց հայեցեալ, կոչի մարդ արա՛ն· իսկ ընդ հնգեւոր և յաւիտենական կենաց, մարդ Նէրսէհ:

Բայց սովորաբար ոսկեբերան և այլ մեկնիչք իմանան ՚ի վե՛ր այլեւայլ մասանց մարդոյ, զոր առաքե՛լս ընդ իւրում ոճով մարդ կոչել սովոր է: Եւ ընդ այսմ ա՛ր պարի՛ն մարդ իմանի մահկանացու այս մարմին ընդ իւրում զգայական բնութիւնն և յատկութիւնց· իսկ Նէրսէհ ասի հոգին կի՛ բանական մասն ընդ իւրոց հոգեկան զօրութիւնցն, որովք կարող է ճանաչել զՀոգևորս և արդեամբք վայելել: Ապա իմաստքն են· ոչ բնաւ թուլալ նամք ՚ի վշտացն և յաշխատութիւնց որ վա՛ւ ուեւտարանին· վա՛ զի թէպէտև մահ կանացու մեր մարմինս օր ընդ օրէ նուա՛զ զի յեկելոց վշտացն, զոլով և բնութիւ՛ իսկ եղծանելի· թէպէտ և հանապազ զօրեալ նեղու՛ զանից, հալածանաց, անարգութիւց յեղծուածն գնայ, այլ՝ նէ՛ն մարդն ներ· Հոգին մեր ժուժկալու թի՛ տարեալ զոյն զայս եղծուածն մարմնոյ, նորո՛ն օր ըստ օրէ· նոր զօրութիւս ղգնոու և աս քան զևս, առ այդմանայ ուժով և արիութի՛ · իբրև ոսկի յաճախ փորձե՛լ ՚ի հուր՝ առաւելագոյն պայծառանայ ՚ի շնմարտութիւնե և ՚ի սրբութիւն· ղգայ յանձին զառաւելագոյն հաւատս ժա

զգնդազգոյն յոյս, և զարիագոյն սէր ՚ի վաստակիլ յաւէտ ևս յօժարամտու՛ թի՛ ՚ի գործս աւետարանին: Յոյնն, ասորին և լատինն դնեն լոկ· այլ Նէրսէհն· բայց զի լռելեայն իմանի՝ մարդն, բացատրեաց մերս և արաբացին:

17· Ո՛ ՚ի՞նչ յամենայն ՚ի՞նչ ՚ի՞նչ ՚ի՞նչ

թէն առաւելութի՝ զյաւիտենից ծանրութիւն փառացն գործէ ի մեզ ։ ‖ Սակայ տեսանել զառաքելութիւն այսոցիկ նշմարիտ մտօք ընթերցօղն ։ Առին ընթեռնու ։ * Ձի նեղութիւն այսր ժամանակի՝ թէև դիւրաքեայ և թեթև , զանատման փառս յաւիտեանս յաւիտենից պատրաստէ մեզ ։ ‖ Առին ասէ ։ * Ձի որ ի ներկայս է առժամայն և թեթև նեղութիւն մերոյ՝ ի վեր քան զչափ ի զեղուցանցուէ զյաւիտենական ծանրութիւն փառացն գործէ ի մեզ ։ ‖ Ապրացին ասէ ։ * Ձի թեթևութիւն տխրութեան մերոյ անցաւոր ժամանակի՝ ներապատնոյ և աննատադրոյն օրինակաւ գործէ մեզ ըզյաւիտենական ծանրութիւն փառացն ։ ‖ Ի բաղադատուն այսոցիկ նշմարիտ մտօք դիր ընթերցօղն , զի այլ թարգմանք ըստ մտացն առաւել հուպ մատչին ի յունականն ։ բայց քան բարւոյ ամենեքին օտարանան ի նմանէ, թէպէտև ի դլխաւոր իմաստսն միաբան են ։

Արդ՝ բանիւս զլծոլին ունայնացուցանէ առաքեալ զնատութիւն ատելի վշտացն , հռետորական դիմադրութիւն դնդատմանս վշտացն մերձ գնելով . Տառապմանցն ասէ ։ Ա իշխէն՝ այժմուս են , և տառապմունքն հանդերձելոցն։ մին առժամայն կի անցանելի , և միւսն՝ յաւիտենական՝ անանց ։ մին թեթև , և միւսն ծանր կի առաւ ։ մին նեղուխ և թեթ , իսկ միւսն փառք ։ Եւ ասա այս երկիս ասէ՝ որ անհամեմատ առաւելու , յառաջեղ անտի ծնանի ։ Ա՛ր զի անցաւոր և թեթև վշտակրութիւն զոր ի պատճառս աւետարանին յոլովակի յանձն առնումք, տալ մեզ ժառանգել ի հանդերձեալն զմեծութիւն փառաց յաւիտենից ։ Ա՛նհնարն վաստակք մեր՝ թէ և ըստ իրեանց բնութեան ոչինչ կամ մեծատութեան ունին առ դերազանց փառքն , սակայ սիրով կրեալք վասն , ի նոր խոստմանցն գործեն մեզ զանհնարս մեծատ փառն՝ իբրև արդիւնաւորիչ պատճառք ։ Տես զասացեալն ի մեկնութ. ժ. 18. ։ * Ոչ են արժանի ժամի չարչարանք ժամանակիս հանդերձելոյ փառացն ։ ‖ Թէպէտ ասել զնեղութիւն՝ ոչ խնդի ըստ բնութեն , իբրև. Թէ դիւրատանելի . զի ըստ մտաւորեի էին բազումք անդամ , ոչ և վերադրոյն ասացս . այլ ասէ թեթևութ՝ համեմատութ առ մեծութ վաղձուցն . և զի առ սատակութ սիրոյ աքաղելոյն՝ որով վառեալ էր ի պաշտօն աւետարանին , ոչ իբրք ծանրանային նմա մարմնական վիշքն ։ Ա յսպիսի էր առաքելական մտածութիւն , որով արհամարհէր զդիմադրակ դժդակութիւս աշխարհի . և զի ուսուցեալ մեզ զօրհնական առանալոյ զայս վանմական իմաստութիւն , ի վեր բերէ ։

18. Ա՛նդէն ոչ գիտեմք զերեսեցս , այլ զաներեւոյթսն . զի երեսեցս ժամանակ գոյ են , և աներեւոյթսն՝ յաւիտենական ։

Գիտել առեալ է աստանօր փոխանակ նկատելոյ , կի ուշ ունելոյ յիրս ինչ ։ Ա՛նք ասէ՝ ոչ իբրև զաշխարհադեաս նկատմամբ զերեսեցս , և զներկայ ըզգալիքս , որք մարմնով աչաց կի զգալութի ներքոյ անկեալ են ։ այլ զաներեւոյթսն , զհանդերձեալսն՝ անտես ի զգայութի , որք մտաց աչօք և հայատոմբ նշմարին ։ Ընդհանուր դնի զերեսեցին և զաներեւոյթն , առ ի փակել զնոքօք զհետաքրքիրն , և զդժդակս , եթէ հանդիսս , և եթէ վիշտ ։ իբր ասել ։ ոչ մեծ ինչ համարիմք զերեսեցիս վիշտս , կի զդիւրուն , այլ միայն զաներեւոյթսն՝ զհետաքիս , կամ զտրամանս։ Եւ յաբէ զպատճառն ։

Ձի երեսեցս ժամանակ գոյն։ Այ՛ր երեսեցիքս՝ հաճելի կի անհաճոյ , մեծ և փոքր , առժամանակեայք են , կարճատև ։ յոյն բառն ասէ ֆաւոյէմա . այ՛ժամանակեան , սակաւատև ։ և մեր թարգմանիչն այլուր և ժամանակ զսովոր է դնել ։ (մատթ. ժ՟ը. 21 ։ մարկ. ի՟. 17 ։ ե՛բրայ. ժ՟ա. 25 ։) Եւ աներեւոյթսն՝ հանդերձեալքն ևս հաճելիքք կի տրտմալիքք , են յաւիտենական , անվախճան , անոյանալի ։ զի այսպէս նշանակէ բառս ի նոր կտակարանին՝ սակս մշտնջենաւորութեն նորոց օրինացս ։ ուր ըստ հակառակն ի հին յանցանելն կտակին երբեմն յաւիտենական իմանի երկարատեւ , հաստատուն , և ասի և այլ զերից՝ որք ունիցին զվախճան ։

Արդ՝ եթէ երեսեցիքս առժամանակեայք են , չեն ինչ բնաւ նկատելիք

իբրև զանգուած և զչեզեալս · վայ ո՛չ'ի հնշտալեաց արժան է մեղկանալ և ո՛չ'ի վշտալեացն անկանիլը Իսկ անեւրևոյթքն գոլով անասցանելիք , բարիքն լինին 'ի յորդոր քաջալերութեան , և չարիքն յետ կիւղ զգուշութեան : Ա յսպէս իմաստասիրելով ձեռայիս առաքելոյս , ոչինչ են զարմանք՝ թէ յուսով հանդերձելոցն ծաղր առնէր զնա աշխարհի դժուագս կօք , թեթեւս կոչելով զմեծամեծ կիրս վշտացն : Ապա և մեր զսոյն ճշմարտութիւն վարժել , բնաւ և ոչ վիշտս իշխել ցնմ անուանակոչ զմեր փոքր աշխատութիւն , եթէ յանձն առնուցումք կրել զնոյնս վա յաւիտենական հատուցմանցն :

Գ· ԼՈՒԻՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ·

ԱՆՁԻ ԳԻՏԵՄՔ զի եթէ երկաւոր տաճար չինուածոյս մերոյ քակտեսցի , չինած յոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի , յաւիտենական յերկինս : 2· Եւ ընդ այս տաղտկանք · քանզի զնշանակութիւն երկնից փափագիմք զգենուլ : 3· Միայն թէ յորժամ զգեներացեալքն , ոչ մերկ գտանիցիմք : 4· Քանզի որ եմք ընդ յարկաւս ընդ այսմիկ , տագնապ կամք ծանրացեալք · զի ոչ կամիմք մերկացնուլ , այլ զգոյն 'ի վերայ այսր զգենուլ · զի ընկղմեսցի մահկանացուս 'ի կենաց անտի : 5· Ա յժ որ յաջողէն զմեզ 'ի սոյն՝ տէ ընդ եմ մեզ զառհաւատչեայ հոգւոյն : 6· Ա րդ համարձակիմք յամ ժամ, և գիտեմք եթէ որչափ յամնիմք 'ի մարմնի աստ , օտարանամք 'ի տեէ : 7· Ջի հաւատովք գնամք՝ և ոչ կարծեաց : 8· Ա յժ համարձակիմք , և առաւել կամ հաճնալ եմք՝ ելանել 'ի մարմնոյ եայ աստ , և մատնել առ տէ : 9· Վասն որոյ և առատանամք· զի եթէ յամիցեմք , և եթէ ելանիցեմք , հաճոյ եմք ընդ Նմա : 10· Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աոեանն քրի· զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ , եթէ բարի , և եթէ չար : 11· Իսկ արդ զայն ան գիտելով երկիւղ , զմարդկան ինչ զիմաս հաճնեմք · առ կայն առաջի ոյ յայտնեալ եմք · բայց կամ յուսամ և 'ի ձեր միտս յայտնի լինել : 12· Իբր ոչ եթէ միւսանգամ զանձինս ինչ ընծայեցուանեմք ձեզ · այլ պատճառս տամք ձեզ պարծանաց վա մեր · զի ունիցիք առ այնոսիկ՝ որ առ արտաքս պարծին , և ոչ սրտիւք : 13· Ջի եթէ առանցաք ինչ , այն ոյ է · և եթէ զգաստանամք , այն ձեր է : 14· Ջի սէրն քրի սոխակ զմեզ · քննել զայս՝ զի եթէ մի փոխանակ ամենեցուն մեռաւ , ապառաւելն ամենեքեան մեռեալ եմք : 15· Եւ 'ի վերայ ամենեցուն մեռաւ · զի որ կեն՝ զանձին իցեն , մի անձանց իցեն կենդանք , այլ այնմ որ 'ի վե նոցայն մեռաւ և յարեաւ : 16· Ա յսուհետև մեք ոչ զոք գիտեմք մարմնով · զի թէպէտ և գիտեաք մարմնով զքրի , այլ արդ ոչ և այնպէսկս գիտեմք : 17· Քայլ եթէ ինչ 'ի քրի նոր արարած իցէ · զի հինն անց , և արդ նոր եղեւ : 18· Ա յժ ամ ինչ յոյ , որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր 'ի ձեռն քրի · և եւ մեզ զպաշտօնն հաշտութեան : 19· Եւ քանզի ամ էր , քրիմ աշխարհս հաշտեցուցանել ընդ իւր , և չհամարել նց զմեղս իւրեանց , և եդ 'ի մեզ զբանն հաշտութ : 20· Ա րդ վն քրի պատգամաւորիմք , ոպ և յոյ բարեխօսաբեր մեք· աղաչեմք վն քրի , հաշտեցարուք ընդ ոյ : 21· Ջի զայն որ ոչն գիտէր զմեղս , վն մեր մեղս արար· զի մեք ելիցուք նովաւ արդարութ ոյ :

1· Քանզի գիտեմք՝ զի եթէ երկրաւոր փառաբ չինուածոյս հերոյ ցրուիցի , չինած յոյ ունիմք՝ փառաբ առանց ձեռագործի , յաւիտենական , յերկինս :

Նոյն վարդապետութ յառաջ տանի զբանն , առաւել որթ շաբաթ բացատրելով զընդդհանուր ատացեալսն · առ 'ի ցուցանել թէ քանի՞ իրաւամբք արհամարհելիք են երևելեքս առ հաճմատութ անելուէթիցն , և վն նց ընդրկելի եմ ժամանակեան ընթացութ :

Քանզի գիտեմ՝ ասէ · մեք պատճառեալքս աւետարանին՝ անելոցեալ գնաւել հաւատոց հաւանել եմք , զի եթէ երկրաւոր փառաբ : յօրինակս ինչ ոչ գոյ չէ · բայց ընտիրքն դնեն հաճմատ յանին և այլ թարգմանութ : փոխանակ փառաբին , յոյնն ասէ՝ առն · և փոխանակ չինուածոյ , դնէ ոչինօ · ըստ խորան կի վրան · զոր

զոր մերս ՚ի 4 տան Թարգմանէ՝ յոբ։ ուստի ըստ յունականին այսպէս դնի ա-ռաջին մասն։ * զի եթէ երկրաւոր մեր տուն խորանի քակտեցի ։ Արդ՝ յայտ է նշանակել զայսու զմահկանացու մարդ մինս մեր։ որ ասի տաճար կամ տուն, զի ՚ի նմա բնակէ Հոգիս մեր։ և ասի երբեմն, ոչ միայն զի ՚ի հողոյ կազմէ, ՚ի հող ունի դառնալ, այլև զի ՚ի վճ երկրի կայ ինայ ըստ մահկանացու վիճակին։ ոմն նմին դիմադրեալ տունն ասի չերկինս, զի անդ ժառանգելի է անապա կան վիճակս։ Եւ զի յոյնն կոչէ ՚ՀԾՈՆ, այսու ըստ ոսկեբերանին և ըստ այլոց նշանակի սակաւժամանակեայ բնա կութիւն հոգւոյն ՚ի մարմնի ։ զի վրանն կանգնի ուրեք պահանց հիման վա սա կաւ ուրց ևեթ ։ և ՚ի բառնալ զայն՝ նոյն մահն ամբ։ ՚Ի սոյն միտս բերէ ովհաննէսիոս զիտոխոս ։ իսկ ՚ի լսել նացւոց՝ հերվէոս, լիբանոս, և կարթա սիանոս, և առաւել այնք թովմայ ազ ուիմնացի՝ թէ ՚ի մեկնութենս, և թէ յա տուկ ճառիւ զայս խմաստս առնուն։ Եւ պատճառք նշ են, զի փրկիչն անմահ տան կոչէ զերկնային փառսն։ ասելով։ (յովհ. ժԴ. 2.) * ՚Ի տան հօր իմոյ օթևանք բազումք են ։ Եւ դարձեալ, զի առաքելն չասաց՝ ունելոց մեք զշնաճ յոյ, այլ թէ ոնՒՀ, նշանա կել անմիջաբար զկնի լուծման մարմ նոյն մտանել ՚յայն շնուած ։

Իսկ այլ մեկնիչք՝ տաճար անձեռա դործ իմանան զնոյն մարմինն՝ յարա կանաւթէ փոխել ՚յանապականութէն, որով ասի անձեռագործ ։ զի ըստ այդմ վիճակի ոչ է ՚ի մարդկային ծննդենէ, այլ միայն ՚յայ զօրութէն կազմել, յաւի տենական և երկնաւոր ։ Յայս միտս առնուն ասկեբերան, և այլք յոյնք և լատինք ։ և եսոխոս սինէ՝ առաւել հարազատ լինել դիտաւորուն և կար զի բանից առաքելոյն ։ զի փոքր մի յա ռաջ գյարութէն մարմնոյն ճառեաց, և աստանօր կամի ցուցանել զՅանդեր ձել վարձս հաւատարիմ պաշտօնէից աւետարանին, թէ մարմնոյ անկ իսկ այն, և թէ հոգւոյ, առանց հայելոյ թէ երբ կատարիցի այն՝ զկնի մահնն արդեօք, թէ յետ ժամանակաց ։ Նա ինքն առաքելն զկառաւծին մարմին քաղ կոչէ՝ անձեռագործ խորան ։ (եբրայ. թ ։ 11 ։) ըստ որում ձեռային զօրաւթէ կազմել ՚ի կուսական արգանդին ։

Եւ դարձեալ, այս տեղի ամենևին զա գաբան երևի ըՀմկաւուծն՝ ի ա։ կորնթ ։ ԺԵ ։ ուր գյարութէն մարմնոց խօսէր ։ զի ոչ անդ հողեղէն մարմնոյն դիմա դրէ զերկնաւորն, նոյնպէս ասա երբ կրաւոր տան՝ զերկնաւորն ։ Աղ ա ապականաւն ընդՀմ դնի զանապակա նութէն ։ և ասա նոյնպէ քակտման մար մնոյն՝ զյարութենականութէնն ։ Անդ փոխաբերմամբ զդնելոյ վարի ։ և ասա նոյնպ զկնի ։ զհանուրն երկնից գնդիցն։ զԳՆՈՎՆ ։ Անդ ըստ մարգարէութէնն ընկ լաւ ասէ՝ մահ ՚ի յաղթութէն ։ և ասա նովին բառիւ ։ ընդդէմ մահնամբոյն ՚ի կենաց անդէ ։ Աչքան միաձայնութէնի վկայէ՝

վկայէ՝ զմի իմաստս ունել երկոցունց տեղեացն ։

Իսկ այն զի չասաց՝ ունելոց եմք, այլ ունիմ, ոչ ընդդիմանայ այսմ մեկնութիւն զի ներկայն փոխանակ ապառնւոյ նշանակէ բազում անգամ ։ զի և վասն յարութեն խօսելով՝ ի ս · կորն · ժե · 43 · ներկայ ժամանակաւ դնէ · յառնէ է՞ս օր, յառնէ զորութիւ՛ ։ Լինի զայն՝ զի՝ ի բայն ունիմ զօրութիւն վասին՝ ունիմք պահել կամ պատրաստեալ մեզ ։ Եւն ։ Աչսոքիւք պատճառօք հաստատեալ եւ տեսս զնարաշտութեն երկդ մեկնութեն ։ եւկ առաջինն՝ որ յղիս երանութեն Հոգւոյն յետ լուծման մարմնոյ, առաւելապէս արտայայտի առաքե ՚ի 6 և 8 տան ։

2 · Եւ ընդ այս փաղաքարհ · հանէ զնիս հոմանին երկնից քաջալերէ զնեսն ։

Յղինն և այլ թարգմանիք փոխանակ բայիւն փաղաքարհ, դնեն՝ հառաչեմք · (ոյ ՚ի 4 տան ·) և զպատճառս կանն հանէ դնեն ՚ի սկիզբն ասելով · * Քանզի ըստ այս (կամ վասն այսր) հառաչեմք, զընակուիլ մեր որ յերկինս՝ զգեստ նալ փափաքելով ։ ‖

Կամ առաքեալս ՚ի հառաչանաց արդ պատճառն ցուցանել, թէ զերազանց և բնակութեն յերկինս ակնկալել սպասէն · զի եթէ բնաւորական ցանկութեն մարդոյ չէ վայրապար, և առաւել ցանկութեի շնորհաց աղաչել յարդարս՝ չէ անգործ ։ Արդ ասէ · Ընդ այս փաղաքարհ, կամ հառաչեմք ։ Ընդ որ · ոմանք մեկնեն · ըստ այս երկրաւոր տունն մահ կանացու մարմնոյս հնեմք վասն հանապազորդ թշուառութեանց նոր ։ Ոակերբ բան իմանայ, ըստ այս հառաչեմք՝ զի ոչ զլսովին լուծանի մահկանացու այս տուն՝ առ ՚ի ստանալ զդերազանցագոյնն յերկինս · այս իմաստք անկատար են մերում բնագրիս ։

Բայց այլք առաւել համեմատ յօրդորբանիցն պատճառ հառաչանացն տալ մարին, զի ասաց թէ առանց մերկանալոյ զերկրաւոր բնակարանն չէ մարթ առանալ զերկնաւորն · իսկ այս ծանր թուի ի բնութեն, որ բնաւորապես խորշի ՚ի մահուանէ · ուստի երկուց ցանկութեցն մաքառելով ըստ մեմանս, տան հոգւոյն հառաչել · զի ցանկայ երկնից բնակութեն, և ցանկայ չթողուլ զերկրաւոր տունն զմարմին ։

Ցետ վկայելոյ զարիւն ճշմարիտ պաշտօնէից աւետարանին ի կերս վշտացն, յայտ առնէ և զընտրուե նոցն յամ տեսակս բարեաց, որովք բովանդակի կերպարան առաքելական պաշտօնեիսն: Զերիս ազգս բարեաց ի կիր արկանէ, ցի զբարիս սրսի կի հոգւոյ, զորոց խօսի յայսմ տան. զբարիս բերանոյ և ըզդործոց, զորոց ի յաջորդ տան: Ի սրբութենէ: զայս և զ յաջորդսն իմա ի դարձեական հոլով. և զորութենէ կրնդելի է բայն ընծայեցուածեչ. ցի հաւատարիմ ցուցանելոյ զինքզ լինել պաշտօնեայս նոյ՝ սրբութեչ, գիտութեչ, երկայնմտութեչ, և այլոց: Սրբութենէ իմանան յայն ինչիչ զանպատաուե յանձնայն իրս, ոչ միայն ի մարդ-

մարմնական հեշտանց, այլև ի շահաւսեր ըղձից, արհամարհելով զմարմնաւոր օգուտ ի քարոզուե աւետարանին: Լսին թադմանն և մեկնիչք իմանան զողջախոհութե, այ վկրաժարուն ոչ միայն ի դարշ ցանկութց, այլև ի կարծեաց նց: Այս է տպաւորագոյն կնիք Հմարիտ պաշտօնէին, և կարեւոր ամին, ոմ սերտ ի մարմնի· զոր և վայելչապս դնէ վկին աշխատութե և ճնշմանց մարմնոյ· զի սոքօք յաջողէ սրբութե Հոգւոյն:

Ի գլխ·ե: Ոսկերբան և այլք իմանան զգիտութե ճեպային՝ հակառակ մարդկային և աշխարհական գիտութեան: Այլք զվարդապետաւն և զջանս ուսուցանելոյ· կի զՀմաւն ճեպային զրոց ըստ Ճառին և ըստ նեղբին իմաստից· կի զճանաչութե ըստ ընդհանուր խորհրդոց և մասանց հաւատոյ· կի զնահեմաւն առ ուղիղ պաշտելոյ զաւետարանն· կի գյատակ պարւև Հոգւոյն՝ յիշատակել ի ս·կորն· (ժբ· 8:) Յոր միտս և առցի գիտութե, այնպ կարևոր է ի պաշտօնեայս աւետարանին, ոմ աչք ի մարմնի:

Յերէմեայ·ն: Երկայնմտաւն է դիւրամտե ի ոտնել զրկանաց անխոռվաբար, կի յուսով տևողաւն ի գործ ուարին բարիս· և այս կարևոր առաքելոյն՝ ոմ ոսկր ի մարմնի: Ի ֆաշրե: Քաղցրութե է բարեբարոյ լինել առ ամենեսին բանիւք և շարժմամբք, և սև առ վշտացուցիչս, հակառակ խիստ բարուց· որով ըստ ոմի ամ լիներ առաքելոյ· և այս կարևոր պաշտօնէից, ոմ արիւն ի մարմնի, կամ յօդուածք ոսկրանդամս:

Ի հռմ·ս·ե: Կրկնակի յարմարի այս մանն· ոմանք առնուն իբրև պատճառ նախ ասացելոցն· այ Հոգւովն սբով, և նորա ազդեցութե յաջողի մեզ ունել զսրբաւն, զգիտաւն և զայլսն· այնպես կատարեմք զայսոսիկ՝ զի երևեսցի Հոգւով այ վարիլ մեզ, և ոչ ըստ աշխարհի՝ ոգւով փառասիրաւն, կամ ագահաւն: Ի սոյն միտս թուի առնուլ Լուսաւորչին մերոյ· (Յաճախապահ·մ· գլ· ին· եր· 247· ձեռ·) ուր այսպէս դնէ զբանս· * ի պահս, ի սրբաւն, ի քաղցրաւն, ի բարուն, Հոգւոյն սբոյ յարդարել: Իսկ այլք իմանան զպարգևս Հոգւոյն՝ իբրև յատուկ նշանակ հաւատարմութե պաշտօնէիցն· այ բայ յատացելոցս՝ հաւատարմացուցանեմք զնա զբազոյ պարգևօք Հոգւոյն, մարգարէութե, լեզուօք, սքանչելագործութե· որովք վարիմք յօգուտ եկեղեցւոյ, և ոչ առ ի ցոյս կամ առ հեռաւն իբրև զառաքեալն: Ջերկաքանչիւր իմաստս յիշէ ոսկերբան, և այլք յոյնք և լատինք:

Ի ոբ·ե: Ան·ղ·ե: այ անկղծ և անխարդախ սիրով· ոչ բանիւք լոկովք սիրելով, կի առ մեր օգուտ և ի փառս վաստակելով իբրև զառաքեալն, այլ Հմարիտ փութով և արգելմամբք խնդրելով զփրկուն մարդկան ի փառս այ, Հանդերձ մերով աշխատութե և վշտօք: Աբեր Հմարիտ այնպես կալեւոր է պաշտօնեից աւետարանին՝ ոմ Հոգի ի մարմնի կենդանեաց· զի սա տայ նոցա ուղիղ վարել այլովք առաքինութե և պարգևօք ի շինութե այլոց: Նմին իրի յարմարապես ի միջոցին կարդացաց զայն· այ ի մէջ բարեաց արտին, և ի մէջ բարեացն բերանդ և գործդ, ոմ և յարէ:

7· Ի բան ճշմարտ·ե, ի զբա·ե այ, ի ն ևնոն արքար·ե որ ընդ աջմն և ընդ ահեկեն է:

Յոյնն և այլ Հարդմանք եղակի դնեն· ի բան ճշմարտ·ե· և իմանի Հմարտաւե խօսից և վարդապետաւե: Ջմեր առաքելուես Հաւատարմացուցանեմք ասե՝ մերով Հմարտախօսութե· ոչ միայն ի բանս Հաւատոյ՝ այլ կենց և իցէ խօսս Հմարտաւն է ի լեզուի մերում՝ վկայ անկեղծութե սրտի· ոչ քնաւ ստեմք· ոչ զոք խաբեմք· Հմարտաւե ոչ յուսմբք Հաղուագանեմք· զաւետարանն ուսուցանեմք յայտնի և անկղծ· ի յատակութե նորա ոչ քնաւ խառնեմք զօտար կամ զսուտս իբրև զվարդաստոս բանին այ, զորոց խօսեցաւ վերագոյն: (ը· 17:)

Ի զբա·ե այ: Ջայս մանն ոսկերբան և այլք վերաբերեն յանցելոյն, այ զբանիմք ի վիշտս, կի պայծառանամք ի բարիս զօրութե այ· ի նորս կալ բոզուէն ընկալաք զբարիս, և նովաս հանդիսանամք ի լաւագոյնն: Կի ըստ այ

այլոց՝ յարի՛ ի բաց ՚ի քարոզուե՛լ վասն աւետարանին՝ յորոյ ՚ի քարոզուե՛լ վասն այնմիկ, արդիւնանայ ՚ի զօրութէն այ. ունի զազգեցութիւն ինչ ծածկին առ ՚ի դարձուցանել զոմանս, և այլոյս յամօթ առնել. երեւի ծածկական ինն զօրաւի ՚ի վարդապետուե՛ աւետարանին, ՚էյայ. թաշարել զմոլորեալս և զաշխարհական իմաստուե՛, ՚ի տկարացուցանել զբնութիւնն զինուց և մարդկան, ՚ի խոյտառակել զպատրանս սատանայի, և ՚ի կորնչել զմարդիկ ՚ի հնազանդուե՛ քրիստ։ Ըստ այսմ մտայ ՚ես համեմատ է բանս առ այն՝ զոր վերագոյն ասայ. (ՒՀ.7.) * Ջի առաւելուե՛ զօրութէն խոչ յայ, և ոչ ՚ի մէնջ ։ ‖ և զոր սուրբ ասէ. (Ժ.4.) * Ջէն զինուորուե՛ մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յայ ։ ‖ Ամենք ազանձին առնուն զայս մասն, և մեկնեն ՚ի վե՛ր զօրութեան աքանչելեաց, որոյ հաւատարմութեամբ պաշտօնն առաքելական, ըստ ասացելոյն հոգւոյ. (Ժէ. 18.) * Ջոր ինչ գործեաց քրիստ ինէ ՚ի հնազանդուե՛ հեթանոսաց՝ բանիւք և արդեամբք, զօրութիւ՛ նշանաց և արուեստից ։ ‖ Ալյք ոմանք ըստ յայտորդին յարեն այսպիսի յարմարութ՛. Հաւատարմացուցանեմք զմե՛ք լինել պաշտօնեայս աւետարանին՝ զորաւէն այ, որ տայ մե՛զ ձեռն յարմի և յահեկ՝ առ ՚ի ընտրել զարգարուե՛ն։ Աւետարանական քարոզի սեպհականե՛ ամրանալ ՚ի ձայնին և զերազանց ինն զօրութի՛ իբրև մարթիկ բռնադատ պատասխանել, յարմի և յահեկ։

Վ՚ ջՒՈՒ ԱՐՔԱՆԵ՛։ Նախադրութի՛ն վ՚, եղեալ է փոխանակ ասելոյ ՚ի չՒՈՒ, իմանալի է յոգնական, ոյ դնէ յոյին և այլք. և ըստ յունականին բացատրելի է. ՚ի ձեռն զինուցն զօրաւէն՝ աջականաց և ահեկանաց։ Ջինք աջոյ և ահեկի ոմանք իմանան ըստ երկուց տեսակաց զինուց. յորոց ոմանք են պաշտպանողական՝ պատրաստ պարիլ նոքօք ՚ի վնասուե՛ թշնամւոյն. և այսպիսի՛ է վահանն, որ սովորաբար կրի յահեկ կողմն ։ Իսկ այլք են վնասողական՝ առ ՚ի տարկանել զթշնամին. ոյ աւսեր, նիզակ, ևն. և այսպիսիք սովորաբար կրին յաջակողմն ։ Ըստ այսմ որոշման բացատրելով զնմանաբանութի՛ն՝ ասէն, թէ աջականն զձեն պաշտօնէին քո՛՝ է արդարութիւն, ուղղութի՛, անկեղծութի՛, որով իբրև սաւառնաբար հարկանէ զսմբարշտութի՛ն, զանօրէնութի՛, և զմոլութի՛ն մարդկան ։ Իսկ ահեկի զձեն է պրիտուին, որով իբրև վահանաւ պատուպարէ զարդարութի՛, զՔՀմարտուե՛, և զանմեղութի՛։ Եւ այնպէս առ երկոսին եւս սպառազինէ ՚ձեզ պաշտօնեայս իւր՝

՚ի ՚ՁՆասել և ՚ի պաշտպանել։

Բազումք ՚ի լատին մեկնչաց՝ ՚ձէն արքունի՛ն իմանան առ հասարակ զգործս առաքելութե՛ց, որովք պաշտօնեայն քո՛ ամրանայ յոյնի և յահեկ, ՚ըստ յայմ կողմանց, և առ այսմ դժուարինս։ Ըստ այսմ այլոցն զզօրանդակ քրիստոսեական վարս կոչէ առաքեալն՝ սպառազինութե՛ այ։ (Եփես. ՚ի. 11. 13.)

Ասկայն յոլովք եւս ՚ի յունաց և ՚ի լատինացւոց ՚ձէն իմանան փոխանակ գործոյ. ոյ առ հոգւով. (՚ի. 13,) անդամք մեր կոչին զէն արդարուե՛ կո՛ անկրաւուե՛. ՚ըստ գործի՛ որով կատարի արդարուե՛ կո՛ անկրաւուե՛։ Իսկ աջականն զէն իմանան զյաջողակս և զհնարս ամենս աշխարհի, ոյ և աննկանուելիմանին՝ ձախողակք և տրամտացուիչք։ Եւ իմաստնի կալմին. ընծայեցուցանեմք զմե՛ք իբրև ՚ձշմարիտ պաշտօնեայս այ ՚ի յաջողական և ՚ի ձախողակս, ՚ի հնշտութիւն և ՚ի տրամտութիւն. երկոքեան՚ք և՚ վարիմք իբրև զգործեօք արդարութե՛ն. որում և հանդիպելիցիմք՝ ոչ խոտոր բիմք յուղղուե՛ արդարութե՛ն. եթէ ա խորժելիք պատահիցին, որք սովոր են ամբառնալ զմարդ կո՛ մեղկել, մեք առնումք զայնս նեւթ գոհանե՛, սիրոյ, և խոնարհութե՛ն. իսկ եթէ դժուարիցիմք՝ որք լքեցանել սովորեցան, մեք վարեմք զայնս ՚ի պատճառս համբերութե՛, արիութե՛ն, առ ՚ձեզ ապաւինուե՛։ Ա յանդս ՚ի ներքակակիր դիպուածս՝ նոյնաշխ ընծայեմք յարդարութե՛ն ճանապարհն։ ոյ նա՝ որ ՚ի հակառակաշնուիչ հոգւոց բանեսել, անչեզաբար զոյն դիմ ծովահեացութե՛ն կատարե՛ցե, ոչ ՚ի պարտին ծովիչ սասանելով և ոչ ՚ի խաղալն թուլանալով։ Ջհաւատութե՛ն այսց իմաստից՝ յայտորդ բանք առաքելոյն արտայայտեն։

8. Փառք և անարգութիւն. փչութիւն և դատաստան. էրբեմն մոլորեալ և ճշմարիտ. էրբեմն անձանօթ և ծանօթեալ:

Չհակառակեմ միմեանց մերձ դնել, ոչ զի պայծառապէս ծանիցի անշարժութեան պաշտօնեից աւետարանին՝ ի գործ ուրախութեան դիպուածս· փառաց և անարգութիւն· փառք են ներալանց համարումն մարդկան՝ հանդերձ նմին համեմատել պատճառով· Հակառակ այսմ անարգութիւն է նուաստ համարումն մարդկան՝ հանդերձ արհամարհութիւն· և երկոքին ի միտս առկայեան, մին հաճելի, և միւսն անհաճոյ·

Դիմել տալս և զոր բերեալ կատարին· Գովութիւն և պատասխանի· Յորմէ, և ի նմա լսելին և արթասցին այլովք բանիւք յետս և առաջ դնելոյ ի վաստակս նուաստ և բարեհամբաւութիւն· Բայց ասորին ի միում կարգի և նոքին բանիւ ընդհատեալս· Գովեսցէ ի բարեբան նուաստ անձին և գործոց ուրուք· յորմէ ծնանի և բարեհամբաւութիւն· զի բազմաց լուեալ զգովեստս ուրուք, մեծ համարին զնա· և ի տարածելոյ բարեհամբաւութիւն՝ ծնանի փառասիրութիւն անձինն· ապ փառք ի ներքս փակին զգովեսն և զբարեհամբաւութիւն· Ընդհակառակն՝ պարսաւանք են նուաստ տացուցանել բանիւ զանձն և զգործս այլոց· յորոյ յաճախութենէ ծնանի հասբաս չար զանձնին, և այսմ զհետ գայ անարգութենէ կամ անպատուութեան այնր անձին·

Աստ՝ այսոքիւք ցուցանէ, թէ որպէս կան զինք՝ զորոց ասայ յանցեալ տան, են փառքն և գովութիւն· իսկ ասելիք զինք՝ անարգութիւն և պարսաւանք· և զերկաքանչիւր ներհակ պաշտօնեայք աւետարանին՝ ի կիր առնուն իբրև գործ ձի արդարոյ· Ապ խոստանի են· մերթ թէ փառս ունելիք յոմանց, և թէ ազնարգելիք յայլոց· եթէ կէաք գովեսցին, և կէաք պարսաւիցեն, եթէ բարեհամբաւ իցեմք, և կի վատանուն, եթէ մատելիւր լսիցեն մեզ մարդիկ, և կի անհաւանք լցեն, եթէ ուղղութեամբ հաճոյացաք, և կի անգթանեսցի, քայամ ասի ոչ բնաւ խոտորիմք կամ խափանիմք ի մերմէ առաքելութենէ· ի փառան և յանարգանան միօրինակ փայլեցուցանեմք զլոյս աւետարանին· զիսուն առաւել փառաւոր կացուցանեմք մերով կենցաղավարութիւն· և զգովեսնն արդեամբք իրատացուցանեմք· զանարգանան ի պատիւ փոխարկեմք համբերութիւն, և զպարսաւանան յամօթ առնեմք անատգիւտ վարուք· Եւ այնպէս յերկայնագունց կողմանց արդարեւ աւետարանին հանդիսանայ· և որպէս ասկէբերան ասէ՝ ամենաքաղեստ խնամոտութեն ոչ ի ձեռն հակառակ իրաց յաջողել գործ առաքելական պաշտամանն· վա զի ոչ վիշտք և անարգ զանք պատճառեալ համբերութեամբ՝ շարժեն զտեսօղսն ի լուր բանիւ նոցա, նոյնպէս փառաւորութենէ նոյ և գովեստ զրազում ձգեն յաջողութեան· և նոքին հոգեկին փառքն ոչ, որ է վախճան պաշտամանն աւետարանին·

Էրբեմն մոլորս և ճշմարիտս· Բառդ էրբեմն, ասա և զկնի՝ զերկայնի իրին յայտ առնէ, և ոչ զստուգուի· ոչ առ կարծիս մարդկան, յաչս այլոց՝ իբրև մոլորք և մոլորեցուցիչք եմք· վարդապետք մոլորութեան համարիմք առ հեթանոսս· որպէս և ասէին ՝(գործ ց· ԺԴ· 18·) Ընդհուպ ճշմարտաւէ ասեն, այլ զնմ սատն ՝ Եւ ճշմարիտս· ոչ, և սակայն արդեամբք ճշմարիտք եմք, վարդապետք ճշմարտաւէ ձանաչիմք և հռչակիմք յողջամտաց· ուղղվարդապետաւէ մերում՝ որոյ վա բամբասիմք ի չարասիրաց, զոյս բազումս ունիմք վկայս և ջատագովս·

Ասյսու յաւելուածով բացայայտեաց առաքեալն զգովեստիսն և զպարսաւանան՝ զոր նախ եդ· որպ և հետևի բանիւն բացատրէ զփառան և զանարգութենն· Էրբեմ անձանօթ և ծանօթեալ· Բազմաց, և մանաւանդ հրեից աննշանաք ոմանք համարեալ եմք, իբրև տարաշարշիկք, անանուն, անփառունակ, անտոհմ· Եւ թէ և այսպիսիք էաք, ահա զոյն խոկ է մեզ զինն ի յաջողութեն աւետարանին· զի անշան և ումպէս մարդկամբ զփառաւորս երկրի որատցուս ՝(ա· կորն· ա· 28·) Եւ ծանօթեալք· այ· և սակայն չէ այդպէս· յայտնիք և ծանօթեալք եմք ի միտս բարեսիրաց, որ-

պղծել եմք առ ձեռապաշտս շրջապատ-
ուլեն մեր յիմ կողմանս , անբաւելի քա-
ջութիւնքն , երկիւղածութեն վարուց ,
արդեւնք սքանչելեաց , անհամար մարդ-
կան գաւառումն առ ՅՍ , այս ամ աշ-
խարհածանօթ առնեն զմեզ , թէ ոչք
և ականջիք ամանք եմք · նոյ միայն ան-
ծանօթանամք՝ որք Հաճասչեն ոչ կա-
մին : Սակս պաշտօնեայքն՝ որք զմեզ
աննշանս առեն , ոչ այնպէս խօսելին՝ և
թէ անախտ միտս կրեին · ի նոյ չարակ-
նելոյն իակ վկայեալ ցուցանի, թէ նշա-
նաւորք եմք յաշխարհի ։

9 ։ Եբրե Մակեդոնացիս , և ասեաւկէն
դանի էմ · Եբրե Իւթէլէ , և ոչ
Մակեդոբէլէ ։

Երևիմք իբրև անգերծանելի մեռեալք
առակ մահաբեր վտանգացն , յորս
ըմբռնիմք վն քարոզութեն աւետարա-
նին · յաճախութեն և ծանրութեն վտան-
գաւոր դիպուածոց՝ Հանապազ զմահ
մեր առաջի ուշաց դնել՝ իբրև ի դուրս
հասեալ · մինչ զի կարծիմք բազմաց՝
թէ առ ի մեռանել կամք , և արդէն
մեռեալ եմք · և կի թէ ոչ այլ իմիք ար-
ժանի եմք՝ բայց մեռանելոյ իբրև արք
մահու : Ա յապէս ի քարկոծել առա-
քելոյս ի լիւստրա , Համարեցան զնա
մեռեալ · որոյ վն Հաւատացելքն պա-
տեցան զնաւաս առ ի ազալ · (գործ ·
ԺԴ · 18 ։) Եւ յերուսաղէմ աղաղա-
կեին հրէայք յատենին · բարձ յերկրէ
զայդպիսիդ · չէ պարտ այդպիսւոյդ
կեալ ։ (՚ի՚ · 22 ։) Եւ ի մերկանել
կղզի տեսեալ բարբարոսացն՝ թէ իժ
Հանդուրդ կաղեալ ունի զձեռն առաք-
քելոյս , Համարեցան զնա որդի մահու
և այր սպեան ։ (անդ · ՚ի՚ · 4 ։)

Եւ- ասեաւկէն կենդանի էմ ։ Եւ տա-
կաւն ասկա մինչև ցայժմ կեանք օգնու
կանուխեմք ՅՍ · յայնքան վտանգաց
իբրև ի մահուանէ ապրեալ ձեամք ,
ոչինչ ըՀատ յայնցանէ՝ որ ի կեանս
կոչեցան ի մեռելոյէ ։ Ա յսմ զմաշ
ըն կեանս կրելով , ցուցանիմք արդա-
րև պաշտօնեայք ՅՍ Ճշմարտի · որոյ է
մեռուցանել և կեցուցանել ։ Ոպ մեզ
սինացի բարբարոսքն տեսեալ , թէ ա-
ւազբելը յետ խայթոճածոյ իժին անոը
նաս կայր կենդանի , ասէին՝ ձե ամի է
սա ։ Ա յս բան համառօտաւութէ և ա-
սացելոյն վերադոյն (՚ի՚ · 11 ·) * Քան-
զի միշտ մեր որ կենդանիքս եմք , ի
մահ մատնիմք վն յիսի· զի և կեանքն յիսի
յայտնի լիցին ի մահկանացու մարմնիս
մեր ։ ես անդ զմեկնութէին ։

Իբրև Իւթէլէ ։ Խրատ , և խրատել
ասի ի ՚որ գիրս՝ պատուհասել կի զա-
նել ըմանօթել զանցաւորս առ ի զգաս-
տութէն , և ոչ ի կորուստ ։ Ա յսպէս
Հայր խրատ զորդի առասկակ · (առակ ·
՚ի՚ · 11 ։ Եբրայ · ԺԲ · 6 ։) և դատաւորք
խրատուն զչարագործս · (՚ի՚ · Ղեպ ·
ԺԲ · 11 · 14 ։ զուկ · ԻԲ · 16 ։) Ըստ
այսմ խիստք տեղոյս են · ի պատ-
ճառս բազմապատիկ փորձանաց՝ ան-
ընդունայ , և Տարուճածոց երևիմք խրա-
տել կի պատուհասել նման չարագոր-
ծաց ։ Եւ- ոչ Մահապարտելոյ · և առակայն
անօթատական մահու արձակիմք · ի
ցոյց անմեղութէն մերոյ ապրեցուցա-
նել զմեզ ՅՍ ի վճռոյ մահուան · նո-
քին իակ ասնջիւք մեր ոչ դատեն զմեզ
արժանիս մահու : Ըստր օրինակ դի-
պաւ ի փիլիպպէ , ուր յետ դանակոծ
և բանտարգել առնելոյ զառաքեալսն ՅՍ
չհոգալ , ինքնին զօրագլուխքն ասնջիւք
Տրամայեցին արձակել զնոս յազատու-
թէն · Ա յլև կղղիոս լուսիաս , և փեւ-
սոս դատաւոր Թէպէս ի կապանս ու-
նէին զնոս առաքեալս , բայց յայտնի
վկայեցին զնմանէ՝ ոչ ինչ մահու կամ
կապանաց ունել վնաս · (գործ · ՚ի՚ ·
29 · ԻԵ · 25 ։

Խրատիլ ասնջ խնամն՝ զչարաճախին
ի մարդկանէ , այ ի հեթանոսաց և ի
Հրէից գանակոծ եղել Իբրև չարեաց-
պարտ և խռովիչ խաղաղութէն : Եւ ըս
այսմ զէրեանն ոչ առնուն նմանական ,
այլ յայտնիչ խակութէն · վն զի աբն պա-
ղոս և պաշտօնակիցք իւր խակապատ խրա-
տեցան գանիւք ի հակառակորդաց ։
Իակ այլք՝ զխրատիլն յայ խնամն ըս բա-
նի առմոսն · (ՅՀԷ · 18 ·) * Խրա-
տելով խրատեաց զիս ՅՍ , և ի մահ ոչ
մատնեաց ։ Եւ- յայս միտս Եբրեն պահէ
զնմանական նշանակութէն · վս զի առա-
ջանք և վերջոք պաշտօնէիկ ըս որոմ
յայ տնտեսելք՝ ոչ էին իակապատ նոյ
պատուհաս , այլ առ մարդիկ երևէին
այնպիսի ։

Երկա-

Երկաքանչիւր իմաստք՝ հաւանելի են· բայց առաւել համեմատ անցեալ բանինդն և յաջորդացն՝ ընտրելի թուի ի մանաւ զևրաստիլ՝ ի մարդկանէ· վա՛ղ ի անարգութենէն և պարսաւանքն, մոլար դատիլն, անձանօթ լինելն, և այլքն ոմք, առ մարդիկ չայնին։ Ա՛նձն որոյ իմաստքն են, թէ՝ ի հակառակորդաց մերոց հրկից և հեթանոսաց հարուա՛ծելոյք· և այն հարուա՛ծք համարեին մեզ իբրև խրատ չարագործոց, որ ի՛ բոք չէր այնպա՛ս· զի յանիերաւի տանջիլն՝ չէ խրատ, թէպէտ և հարուա՛ծ ծողքն այնպա՛ս կարծէին։

10· Իբրև թրթռէլոյ, և հանապազ ոտքս էմ· իբրև փանէի, և չբաղա՛մ ձեռագործանէմ· իբրև ուխել ոտնիցէմ, և պա՛մ իրկ ոտնիմ։

Երևիմք արտաքնոց տրտում լինել, վշտացնելո՛ւ, ցաւագինս՝ սակս ձախորդութեց և նեղութեց մարմնոյ· արտաքին դնացք, և սգաւոր կերպարան մեր կարծեցուցանեն՝ թէ տրտմութեն ունիմք։ Եւ հանապազ ոտքս էմ· և սակայն ես հակառակն ոչ միայն տրտում չեմք, այլ միշտ զուարթասիրեալք, ուստի և զնիւթ մաքուր, և զանձկալին միւթ թարութեին· որով զնեղութեին կրելո՛ւ զաւետարանին՝ համարիմք արժանիս ոմ ուրախութե· և ցնծամք յորժամ վիճակի մեզ վշտանալ վա՛ռ ոմ։ Ա՛յն ինչ ուրախութեն հոգւոյ կարի զօրանայ քան զվշտակրութեն մեր· որով պարզաբար ուրախ կուգելի եմք, քան տրտմելոյք։ Բառիս՝ իբրև, յայտ առնէ սաստ, նօր զմարմնական տրտմութենն՝ ներգործել յարտաքին փորձութեց· այլ ոչ զհոգևոր տրտմութենն՝ որով տատանիլ չէ ինաս եղբօրն, կամ՝ զարհամարհել ոմանց։ Եւ թէպէտ երբեմն մարմնական տրտմութե ևս մարթի երկնել՝ ի նմա սակս իւր ինչ՝ կամ այլոց վշտակրութեց, մարմին ունելով աղտյաւոր, որ և՝ ի նա ինքն՝ ի քո՛ եղև, բայց թէեթև գոլով այն և զիւրանալո՛ւ ձևի չարձային միւթերաւթենէն, չէր բաւական պարզաբար անուանակոչել զնա՝ տրտմել։

Իբրև փանէի։ Տնանկ ասի պակասեալն ի գոյից կարևորաց առ կենաս· որով ժղ՝ ի կարօտանէ շրջի Թշուառաբա՛ր։ Իբրև այսպիսի երևիմք ասէ, ամենևին չբաւորք· բայց չէ այդպէս· զի ոչ միայն զպէտս մեր կարեմք հայթայթել, այլ և՛ հակառակին չբաղա՛մ գծացուցանէմ։ Ոմանք ըմ հոգևկան մեծուեց իմանան· ըստ որում պաշտօնեայք աւետարանին իբրև հաշարաւելոք պէսպա՛ս շնորհացն ոյ ձախացուցանեն զհաւատացեալս քաղաղութիք և մատակարարութիք պարգեաց· որպա՛ս և ասէր (ա՛· կորն· ա՛· 5·) *Ձի յամի մեծացարութք դուք նուաւ։ Բայց այլք իմանան՝ ըմ մարմնական ընչից հաղորդութե· զի իբրեանց ջանիւք և յորդորանօք զինչս մեծատանցն առնեին հաստարակաց· ոմ՝ ի մակերեսնացս ևոցն և չաքայեցւոց ժողովեալ զոտս ողորմութեն՝ ընտրի առատապա՛ս պէտս աղքատացն՝ որ յեղէմ։

Չերկոսին իմաստս յիշատակէ ոսկեբերան· և երկրորդս առաւել համեմատ ե գրոյն, անվրէպ պահելով զդիմադրութե· զի անանկուճ իմանի մարմնականն· ապա և մեծացուցանելն ըստ մարմնոյ իմանալի է· և ասէ մեծացուցանել, ոչ եթէ ձախս կացուցանելով զընդունօղսն, այլ առատապա՛ս խնամելով պէտս կարօտութե նոցա։ Ա՛սպէս և վա՛ռ որոյն՝ որք՝ ի փիլիպեցւոց առաքեցան՝ ի պէտս իւր, ասէ (փիլիպ· գ՛· 18·) * Ա՛յլ իմ առեալ զնամ, և առատ ունիմ· ընկալայ՝ և լի եմ։ Ո՛չ միայն յաւետարանական ուսմունս, այլև՝ ի քաղաքական՝ ձշմարիտ մեծուե համարի՝ ունել մարդոյ զբաւականն առանց աւելորդաց։

Յառաւել բացայայտութե արժան է յաւելուլ, թէ՝ երբ պօղոս և պաշտօնակիցք իւր ոչ ձշմարտաբե՛ կարծել լիե նեին անանկը կամ ազատաբ· վա՛ղ զի ըստ քաղաքական կարգի թէև չէին մեծատունք, այլ ունէին արհեստս բաւական՝ ի շահել զպարկաւոր պէտս իւրեանց· այսու օրինակաւ եկաց առաքեալս յաւարտումն քարոզութե՝ ի կորնթոս· (գործ· ի՛զ· 3·) և՝ ի թեսաղոնիկէ· (ա՛ թեսաղ· ի՛· 9· և՛ թեսաղ· բ՛· 8·) այլև յեփեսոս զրնմ ժամանակս· ոմ և առ երիցունս ասէր· (գործ· ե՛· 34·) * Դուք ինքնին գիտէք, զի զպէտս իմ և որոյ և՛ ես կէին՝ պաշտեցին ձեռքս այս·

այս ։ ‖ զոր և առ փիլիպեցիս համաբ
ձակութիւնբ գրէ ։ (ՓՓ. 11։) * Իբր ոչ առ
կարօտութեան ինչ ասեմ. զի ես ուսայ՝
որովք կարեմ բաւական լինել ։ ‖ Եւ
Թռիչ լինձ, Թէ զմեծացուցանելն՝ զոր
աստանօր ասէ, մարթի է իմանալ նաև
ըս գործանոյն՝ զոր իւրովք ձեռագործ
ծովք մատուցանէր այլոց՝ ըս նախայի
շատակեալ բանին առ երիցունս եկե
ասէ ։

Ինքեա ուլիլ ոանիցնէ ։ (յօրինակս ինչ ։
ոանէ, զոմ ինչ ոանիցնէ ։) Տարբերի այս
յանցելոյն ։ զի այն Հայեր՝ի չքաւորու
Թիւ պաշտօնեիցն ըս քաղաքական կար
զի մատեալ ։ իսկ զառաջինսայս իմա
նան մեկնիչք ըս աւետարանական վի
ճակին ։ յորում նաև նոքին իսկ ըս աշ
խարհի մեծատունք՝ զանընչուի յանձն
առնուին ։ ոչ մատեիցոս, բառնաքաո,
և այլք ։ Եւ իմասաքն են ։ վա քեզ և
վա աւետարանին հրաժարել մեր յամ,
և զկամաւոր աղքատուի յանձն առել
ըստ օրինակին քեզ, այնպէս երևի՝ Թէ
չունիմք բնաւ ժամանակաւոր ինչ ։ Տա
մարեալ եմք նման չքաւորաց աշխարհի,
որոց ոչ կարելորք պակասին ։

Ասլ սակաս ոչ ինչ ոանիցնէ ։ Երրակի
իմանի առ մեկնիչս ։ նախ ըս ունակաւե
պիտանեաց ։ իբր ասել ։ յոմ մարթիա
կենցաղ պիտոյից ունիմք զկարևորսն ։
ոչ հանդերձ պակասի մեզ, ոչ կերա
կուր, ոչ բնակութի ։ խնամքն ոչ ոչ մեզ
ուրեք պատրաստեն զլըուսին կարեաց
մերոց ։ մինչ զի որ մեզ պիտոյն է՝ ու
նիմք զոմ ։ Երկրորդ, ունել ասի զոմ
ըս անդորր բաւականաւե ըղձիցն ։ իբր
ասել ։ այնպէս շատացել եմք կարևո
րօքն, մինչ զի ոչինչ այլ երևի պակա
սիլ մեզ ։ որպս Թէ զոմ իրօք ժառան
գեաք ։ զմեր լուսիցն և զամենատա
վայելուչն իրաց՝ հաստատել եմք յար
համարհութենէ նոցա, և ՚ի չցանկալ այլոց
առաւելագունից ։ վա զի որ ՚ի սակա
ւուն գոհ է, ունի զոմ որոց ըղձանայ։
Ասլսիսի միտս ունել հաւատացելոց
Իրատե այլուր (ես. տիմոթ. ըզ. 8.) * Ասլ
ունիմք կերակուր և հանդերձս, և այ
նու շատասցուք ։ ‖

Երրորդ, ունել զոմ իմանի ըս առաքե
լական մատակարարուենն ։ որով իբրև
տեսորք համարել էին ընչից հաւատա

ժէ

ցեալոց ։ և իմասաքն են ։ Եթէ վա աւե
տարանին աղքատասցաք կամաւորաբար,
նոսին աւետարանաւ եղաք ստացօղք
ոչ միայն անձանց հաւատացելոց, այլև
բովանդակ ստացուածոց նոց ։ բացեալ
կան առաջի մեր դրունք նոց և արկեղք։
առ ոսս մեր բերեալ դնեն զինչս իւ
րեանց ։ (գործ. ՓՓ. 35. 37.) ինքեանք
աղաչեն ըզունել մեզ զտուրս ողորմու
Թէ իւրեանց՝ ոչ միայն ՚ի մեր պէտս,
այլև ՚ի նպաստաւորութի այլոց կար
տեալ եղբարց՝ որպափ և կամիցիմք ։ ա
զաչեն, և զանձինս ևս մատուցանեն՝
նման ունն՝ և ապա մեզ ։ (ստորև. ըս. 4. 5։)
Սորին վասն համարձակ իշխանութի
ասեմ առ փիլիմոն ։ (19. 22.) Թէ և
դու զանձն քո ինձ պարտիս ։ և հրա
մայեմ նմ պատրաստել ինձ վանս բնա
կութի ։ Վկայեմ զաղաչասցոց (ՓՓ.
15.) այնչափ յատաջամիտս լինել ՚ի
մեր ընծայատրութի, մինչ զի եթէ հնար
էր՝ զաչս իւրեանց հանելին և տային
մեզ ։ և եթէ յաչս իւրեանց չհնայէին,
զի՝նչ այլ ՚ի գոյիցն զանայինն մեզ։ Ապա
յերաւի՝ Թէ և սակայնաւութի ոչինչ
ունիմք ՚ի ժամանակաւորաց, բայց կիր
առութի և տրամանատրութի ունիմք
զնմ։ և զայսպիսի ախորժական տիրա
զութի նմի՝ ոչ ոք յիշխանաց աշխար
հի կալաւ երբեք ։ Ըստ այսոցիկ իմաս
տից խօսի ոսկեբերան և այլ բազում
մեկնիչք ։ և ՚ի սոյն առնուն զբանն և
սայեակ ։ (կես. 6.) * Ջգօրուի ազգաց
կերիցիք, և մեծութի նց սքանչելի լիս
նիցիք ։ ‖ Ի հայ մեկնութի տեղւոյս,
ասելն զոմ ինչ ունիմք, մեկնի ։ ունիմք
իշխանութի յերկինս և յերկրի, զՀո
գևորս և զմարմնաւորս ։

Առաջին մասամբ բանիս, ուլիլ ոանի
ցնէ, իմաստասիրի երանելին օգոստի
նոս (մեկն. ամի. ժ.) Թէ առաքեալք ու
նէին զուխտ կամաւոր աղքատութի ։
որում մեաբանի և մեծն գրիգոր, (Հաս
է ։ ՚ի վի աւետարանին ։) յասելն, ըզ
ցանկութի սատանայ և Թաղեալ էին
առաքեալք ։ որ յատուկ է աւետար
նական աղքատուի։ Իսկ յերկրորդ մաս
նէն, զոմ ինչ ոանիցնէ, ցուցանի կատա
րուին սէրունական խոստմանին, որով
կամաւ հրաժարէցոյն ՚ի ժամանակաւո
րաց՝ ասաց չափել զՏարբերապատիկին

յայսմ ժամանակի։ (մատթ. ժԹ. 29։)
Ըստ ասացելոցս՝ յերիս հատուածս քննաբանիս՝ էբիոն զնուազական նշանակութիւն ունի· վա՛ղ ի տրամութիւն, և տանկուածութիւն կի՛ աղքատութիւն պաշտօնէից աւետարանին ոչ միայն ինքնին մոքր են և նուազ քան զոր արատքինք կարծէին, այլև համեմատաբե՛ ներկայ կին իւրեանց, յո՛ ուրախութիւնն, և ամի բանականութիւնն՝ կարի՛ նուազեալ են· մինչ զի նմանութիւնի ինչ՝ քան թէ բուն իսկութիւն տրամութիւն և աղքատութիւն ասելի են։

11· Բ Էբիոն՝ դեր բացելեն աս՝ յէվէրբէ բացիր, և՝ էրբոյ դեր ընդոյնէ ելալը։

Զ յարմարութիւն բանիս առ անցեալն՝ այսպէս բացատրեի ոսկեբերան· (Յատ. Ժ՛.) իբր զի յետ ցուցանելոյ առաքե՛ լոյն զՀանդէս վշտաց իւրոց՝ կամի այսուհետև դառնալ՝ի խրատս յանդիմանութե՛ն· և զի այս հնշարնկալ լինիցի առ կորնթացիս, զիւր մտերիմ սիրե՛լուն առաջի դնէ կանխաւ· որոյ նշանակ է՝ համարձակ խօսակիցն լինել և ընտանեբար յայտնել նո՛ զսիրտ իւր։ Այլք այսպէս առնուն զյարմարութիւն· ի նախատացելոցն բազում ինչ և մեծամեծս խօսեցաւ· ի ցոյս հատուածիս պաշտաման իւրոյ· և զի մի՛ կարծեսցի փառասիրութե՛ աղաղաւ, կի պարծե՛նոտզուե՛ վարիլ յայսմ, ցուցանէ՝ թէ առ մտերմութե՛ն և յընտանի խնդակցութե՛ համարձակեալ խօսեցաւ։

Բէբոն՝ դեր· Ցոյնն և այլ թարգմանք եզակի դնեն, բէբոն դեր, էրբ դեր· բայց զի դերանունն՝ դեր յայտ առնէ զբազմացբերանն և զսիրտ, վասն այն մեր թարգմանիչս յաքնական դնե՛ զներկաեան։ Արդ՝ զգերաարական խօսս իւր՝ բէբոն ասէ· վա՛ղ զի դերն է փոխանորդ բերանոյ, և իբր ձայն մարմնացեալ։ Եւ իմաստքն են· թերևս թո՛ւիցի ձեզ ո՛ կորնթացիք, թէ առաւել երկայնեմ զբանս իմ և զյաւարտումն· այո՛ այդպէս է· այդարև սիրելեաւ իմ առ ձեզ՝ բանս զբերան մեր խօսել ե՛ ձեզ՝ի ձեր օգուտ և՝ի խնդութե՛ն· լուել ոչ կարեմք, ոչ ժուժեմք պահել՝ի ներքս՝ զոր զգամք· ոչ յադենամք՝ի խօսելոյ ե՛ ձեզ· զինչ և ասիցեմք, որչափ և ասիցեմք, փոքր է առ մեր ցանկութի՛ն՝ որով ախորժեմք միշտ ընդ ձեզ խօսակցել· մինչ զի այնպա բացել կայ բերան մեր, զի ամփոփիլ ոչ կարէ· իբր լինքնաբերաբար բղխեն բանքս առանց դադարելոյ։ Հաւատովք սիրելուն են՝ անչա զգուշացարութիւնքն· և ե՛ ոսկեբերանին՝ որ ինչ է՝ի մարմնի փարուն ձեռաց և զրկաց, նոյն է՝ի հոգին հաղորդակցութե՛ խօսից։

Կամ դարձե՛ք· առ ձեզ իբրև առ մտերիմ սիրելիս՝ ընտանեբար համարձակի խօսել բերան մեր· ոչինչ՝ի պհսանեացն կամ՝ի փառասրագունչ թագուցա՛ նեմք՝ի ձէնջ· զնմ ինչ զմերս վստահութե՛ յայտնեմք ձեզ իբրև հարազատաց, զոր առ այլս չէշխեմք առնել· վա՛յ մի՛ ինչ զարմանայք՝ եթե ցայս վայր և կի՛ յետ այսր և՛ս լսիցէք՝ի մէնջ զայսպէ՛ս խս։

Ե՛ս՝ էրոս դեր ընդոյնէ՛ելէ՛· ի յոյնն և՛ի լատին չէ ե՛· բայց դոյ յատորին և յարաբացին։ Ընդարձակուե՛ սրտին և պատճառ բացման բերանոյն· և ընդարձակեալ ասէ զսիրտ՝ կամ սիրոյն՝ առ կորնթացիս, և ե՛ այսմ զօրութե՛ կրկնելի է դերանունն՝ ես՝ յէվ, որ կայ յառաջին մասին· և կամ ուրախութե՛ յինքեան։

Ըստ առաջնոյն առեալ ոսկեբերան և այլք՝ բացատրեն այսպէս· Թէպէտ և մարմնով ձնշիմք՝ի պէսպէս անձկութիս, բայց զօրուն սիրոյն և անխիղճ վստահութե՛ն մեր տարածանէ զսիրտ մեր առ՝ի կրել զձեզ· առատուե զձոյն լայնէ զսիրտ մեր· որով ո՛չ բանիւ և ե՛ձ առատանամք՝ի ս՛եր ձեր, այլ և ըղձանօք սրտի, փափաքելով՝ի ծոց մեր ամբա՛ փակել զձեզ ամենեցին՝ ոչ զնարդ և լե՛ սէ, այլ լայնատարր ե՛ արձակութե՛· վա՛ղ զի սիրեցեալն աներկիւղաբար ձեռն՝ի խոտս սրտի սիրոցին՝ ասէ ոսկեբերան· Վա՛յ այսորիկ վստահութե՛ խօսիմք առ ձեզ լի բերանով, և լի՛ սրտի՛· և այն՛չափ զուարճանամք՝ի խօսելն, զի ընդ բերանոյ և սիրտ մեր բերանանայ· և փոխադարձաբե՛ի միմեանս կայանան՝ բերան՝ի սրտի, և սիրտ՝ի բերանի, և դուք յերկոսին։ Ցայս թուի ակնարկել առաքե. (Ե. 3.) * Յառաջ իսկ ասացի՝

ցէք՝ եթէ ՚ի սրտի միտում կայք ‖ : Ըստ
երկրորդին ևս առէք՝ բացատրի նմա
նաբար : Ուրախութիւն որով լցեալ եմք
՚ի մխիթարութիւնէ հոգւոյն սըբոյ, ընդար-
ձակէ՛ անդորրացուցանէ զսիրտս մեր,
և ներքին ինն հեշտութիւնք ընծայեմք ՚ի
պատուիրս զոր ինչ միանգամ գործեալ
եմք ՚ի փառս այ . քանզ գիտելով՝ զի և
դուք ՚ի լսելն խնդայք, և ուրախակից
մեզ լինիք :

12 . Ա՛ինչ նեղիս ՚ի ինէ , քայց երէ ՚ի
գո՛ռոս յեր նեղեցեր :

Ցոյնն և այլ թարգմանք ասեն . ոչ նե-
ղիցիք ՚ի մեզ այլ նեղիցիք ՚ի գործս ձեր:
Ըստ իմաստիցն մեծմական կշռամբուե
է առ կորնթացիս , զոր ասկիբերան և
այլ յոյնք այսպէս բացատրեն : Որով-
հետև ընարակել՝ ունիմք առ ձեզ զսիրտս
մեր սիրով , ոչ ինչ նեղեալ էք դուք ՚ի
մեզ կամ ՚ի հոգիս մեր . այ արձակաբար
վայելէք ՚ի սէր մեր . գումէք մեր առ ձեզ՝
չեն ամփոփել : Այլ՝ ՚ի գո՛ռոս յեր նեղեցէք.
այ ՚ի ձերում սրտի նեղեալ և անձուկ էք
առ մեզ, այնպես զի ոչ տայք մեզ տեղի ըն-
դարձակ : Որպես ՚ի մեր կողմանէ ընարձա-
կեալ եմք առ ձեզ, ընդհակառակն ՚ի ձեր
կողմանէ դուք անձկագոյն էք առ մեզ:
որ է ասել, սիրտ ձեր անձուկ է, սէրդ
ձեր նուազ է առ մեզ . միտում լայնա-
տարր և ամենաբարձրագոյն սիրոյ զնուազսն
և զփոքրն փոխարինէք : Թէ և առա-
ւելագոյնք առ մեզ սիրով, ոչ բնաւ հա-
ւասարիք սիրոյ միտում առ ձեզ . և
այս ձեզ նշանակ, զի ես մինս զձեզ հա-
մօրէն յիմում սրտի կրեմ . իսկ դուք
խրաքանչիւր հազիւ զմի ոք ասնիք ՚ի
սրտի ձերում , մանաւանդ եթէ բնդգդ
չասնիք զիս զմի ՚ի ձերում սրտի՝ որպես
արժանն է :

Ասպէս իմանան բազումք նաև ՚ի լաւ
տինացւոց . և ՚ի սոյն բերեն զասացերն
առաքե. ըստ յոյն բնագրին . (ժբ. 15 :)
* Թէպէտ և յառաւել սիրոյն զձեզ՝ սա-
կաւ սիրիցիմ, ‖ այ ՚ի ձէնջ : Ես յարմարի
բանս առ այնոսիկ ՚ի կորնթացւոց՝ որք
միտել զինի սուտ առաքելոցն, օտարա-
նային յրնատանի սիրոյ սըբոյ ասլին
Ա՛անաւանդ եթէ ՚ի բովանդակ ժողով
կորնթացւոց Տարկանի կշռամբուեին.
վա՛ զի ՚ի ծածկին առաքելս կանեղուին սէ-

բով իմամարկել՝նի՞, և ոչ տեսեալ զնի՞
փոխադարձ սէր հաւասար իւրումն, յէ-
րաւի տրամնջէր: Սիրոյ բնաւռ անյագ է,
և ՚ի սիրելեացն պահանջէ գասանել
զսէր՝ կամ հաւասար ինքեան , և կամ
մեծագոյն և. ևս առ վարուցանէ զնա
սիրով համարին՝ եթէ ոչ համալափ սէ.
րին յայլոց :

Ջսոյն իմաստս մարթի է իմանալ նաև
ըստ միտում բնագրի այսպէս . ոչինչ նե-
ղուեցէք կամ ՚ի մեր կողմանէ : Բայց եթէ՝
այդպիսի նեղուած կամ նուազուած գտաք
նեցկ ՚ի սիրտս ձեր, կամ ՚ի ձեր սէրն առ
մեզ :

Սակայն եսոիտս , և այլք ոմանք առա-
ւել ընտրեն իմանալ զնեղուած կամ զորքիչ
բուեցեք սրտի կորնթացւոց . և համարին
այլաբանուած ինչ առել՝ ՚ի ձնշել կրծոց,
որով դժուարաւ կատարի տուր և առ
ընդոց . որպես և տեսրուեցեք կիրք ձնշելն
զսիրտ , հակառակ ուրախութեանն զոր ձեր
ձակէ : Ասյամ մտաց կարի ՚ի դէպ գայ
մեր բնագիրս , և մեկնի այսպես : Մեր
սիրտս ընարձակել է առ ձեզ սիրով և
զուարթամիտ պաշտամամբ . և եթէ
դուք նեղիք , ոչ ՚ի ինչ նեղիք . այ այդ
տիրուն ձեր , այդ սրտի ձնշումն՝ ոչ ՚ի
ինչ գայ յառաջ , ոչ մեք եմք պատճառ
անձկուած ձերոյ , բայց միայն նեղիք ՚ի
գուրթս ձեր . այ ՚ի պատճառս ներքին
աղետից ձերոց , զոր կրեք յանկարդու-
թեէ պատնկեալ եղբօրն , և այլոց անաս
պաշխար մեղուցելոց : Ո՛չ եթէ մեր
խոտութեան և սատս կշռամբուեն նեղել
զձեզ , այլ ձեր ընտանի խիղճ պէսպէս
անկարգութեց :

13 . Ա՛րդ զնոյն հատուցումն էքե՛ր ընդ որ
ՙ դեղս ասեմ, ընդարձակեցարուք
և դուք :

Սովին կարգաւ ընծեռնու և յոյնն ,
փոխանակ բային ասեմ , դնելով ասէ .
այ * Զնոյն հատուցումն իբրև որդւոց
ասեմ, ընարձակեցարուք և դուք : ‖ սա-
տինն պահէ զերկուս բայսն . այ * Ար-
զնոյն հատուցումն ունելով , իբրև
որդւոց ասեմ, ընդարձակեցարուք և
դուք : ‖ Ասորին մեկնաբանութիւն ըն-
ծեռնու * Բայց արդ իբրև որդւոց
ասեմ, հատուցէք ինձ զհակառիս իմ

որ են առ ձեզ, և ըստակեցէք զսեր ձեր առ իս ։ ‖ Արաբացին * Եւ ձեզ ասեմ, ընտրեմ որդիք իմ էք, տուք ինձ զոյն զայս հատուցումն, և ընդարձակեցարուք և դուք ։ ‖

Տեսանի՛ ի Համմատուն Թարգմանութեցս, զի իմանան զօրութիք զայլ բայ ինչ՝ որում խնդիր առնեն՝ զոյն հաճոյսն ։ լսանին դնե, ասելով, իսկ այլքն հաճոյիչ կի տուն ։ Եւ ըստ այսմ բաղումք զքանն՝ էրէ՛ն որդոց ասէ՛, համարին իբրև խորոցաւ զառանելի այսպիսի կազմութիք ։ Զնոյն հատուցումն ունելով ձեր, կի հատուցանելով, (զայս իբրև որդոց ասեմ,) ընդարձակեցարուք և դուք ։ Ոմանք առանց այլոյ բայի՝ զնոյն հաճոյսն մեկնեն՝ ըստ նմին հատուցման, նոյնի հատուցմամբ, կամ առ՛ի զնոյն հատուցանել ընդարձակեցարուք և դուք, զոր իբրև որդւոց ասեմ ։ Եւ այլք, զնոյն հաճոյսն առնեն խնդիր բային ասէ՛. ըստ զնոյն հատուցումն ասեմ ձեզ իբրև որդւոց, ըստ դնեմ՛ ի վրէ ձեր, պահանջեմ կամ ծանուցանեմ, աւետեմ ձեզ ։ Ցայս երկու իմանալ մատչի և մեր բնագիրս ասելովն՝ զնոյն հաճոյսն էրէ՛ն ընդ որդեակս ասէ՛, ըստ նոյնի հատուցմամբ՝ իբրև զ որդեակս վարիմ, ըստ ընտրեցարուք և դուք ։ կի՛, զնոյն հատուցումն իբրև առ որդեակս ունիմ ասել, կի պահանջել, կամ ակն ունիմ դասանել ևն։

Այս առաբերութիք են ըստ ընդհերգումս Ծոյ . իսկ բան իմաստիցն՝ ազուինացին և ոմանք՝ ի հին լսանինացւոց՝ հաճոյսն իմանալով զերկնային վաստացն, պարզեն այսպէս ։ Արդ՝ զնոյն վարձս և յաղթանակ երկնային արքայսն ունելով ձեր ընդ մեզ, զոր իբրև որդւոց սիրելեաց ասեմ, կամ ըստ որում էք որդիք ըստ ձեզ, ժառանգ յաւիտենական բարեացն . վե այսորիկ ընտրեցարուք և դուք ։ Ըստ արարիք զսիրտս ձեր առձակս և ազատացեալս՝ ազատութիք հոգւոյն սիրէ, որ լինի հատատով քնի, և ոչ ձնդելիս և նեղելիս ծառայութիք օրինացն։ Սակայն օտարանայ այս՝ ի կարգէ բանիցն ։ յորս ընտրեմիս, նեղիչ, և որդի, հայիին առ պօղոս՝ որ հայրական գթութիք ըստարձակեալ էր առ կորնթացիս ։ ուստի և հաճոյսն իմանալի է այն՝ զոր պօղոսի ունէին հատուցանել ։ ոչ ցուցանէ նաև ասորին և արաբացին ։

Եստիոս և այլք ոմանք ընդոյժիլ իմանալով ըստ առատուն խնդուն հոգւոյն, այսպէս բացայայտին ։ Ընձկուածի ձեր և տիրուն ոչ ՚ի մէնջ գործի առ ձեզ, այլ դուք ինքնին նեղէք զսիրտս ձեր սակս զանազան անկարգութեց երևելոց ՚ի միջի ձերում. վայ զնոյն հատուցումն յարակայ ուրախութեն՝ յոր մեք վայելեմք հատատութիմ պաշտամամբ մերով, ձեզ և ս իբրև սիրելի որդւոց աւետատուորիմ, կի առաջի դնեմ, ընդոյժիլեցբուք և դուք ներքին խնդութիք հոգւոյ . եղերութք բաժանողդք հոգևոր ուրախութեն, որ ընդարձակէ զսիրտս ։ Եւ այս յաջողի ձեզ հատանելով զպատճառս տիրուն ձերոց . ուստի ՚ի լինիք

լծակիցք անհատութ, ևն։

Այլ քանզի հատարակաբար յոյն և լատին մեկնիչք զընդարձակութիք սիրոյ իմանան յանցեալ առնեն, ըստ նմին զաւքիկայ բանս պարզեն այսպէս ։ Որովհետև Հայրական սիրով և գթութք ընդարձակեալ է առ ձեզ սիրս մեր, ասպա զնոյն հատուցումն, կի զնոր փոխարբերեն իբրև առ որդիս յուսալով, կամ իբրև յորդւոց պահանջելով ասեմ, ընդարձակեցարուք և դուք որդիական սիրով առ մեզ . իբրև ծնողք ձեր հատատարեցջիք՝ զփոխադարձ սէրն հատուցանելով, և առատամիտ յօժարութիք հնազանդելով խրատուց իմոց . լայնեցէք զսիրտ ձեր առ՚ի ընդունել զմեզ, և զխրատս մեր ։ Զնոյն փոխարէն պահանջեմ, և ոչ աւելի ինչ . զի թէպէտև հայր եմ ձեր՝ յորմէ է ակիզբն սիրոյ առորդի, բայց ՚ի հատուցումն զնոյն չափ սիրոյ ևթէ խնդրեմ։ Գնեղցիկ ասէ ոս կեբերան . (Հառ . ժը·) ոչ հաւատար է՝ նախ սիրել, և ապա սիրիլ . զի թէ և զհամակչռ չափ սիրոյ փոխատրիցէ սիրեցեալն , ասկաւին յաղթի այնու՝ զի յետնորդ դասու ՚ի սիրել ։ Բայց զայդ չհդոմ ասել առաքեալս . ինձ շատ է՝ զի դեթ յիմ սիրոյս ընդոստուցեալք , զնշանակ փոխադարձ սիրելութեն հատատցանիցէք ։ Եւ զի ցուցցէ՝ թէ իրաւացի է այս պահանջումն, և թելեւաբեռն , յաւելու զկուշումն որ դիւաբեր նոցա . զի ոչինչ այնպէս արդա-

լսդատ է՝ ոճ որդւոյ սիրել զնօր, և հնազանդել։ և հայր ոք չկարէր լեր լել ինչ խնդիր առնել յորդւոյ՝ քան զսիրոյ և զհնազանդութենէ ։

Արդ՝ երբեմն այսպիսի գործակատ յոր դորանաք զարհուրեալ զմտերմութենէ կորն թեացւոց , սկսանի արկանել զբանս խրատուցն յԱբրահամէ սրտից նոյ ։

14. Եւ ի լինել նմա անհաւատից . առնէ զի նշ հարբերութիւն է երե բոյ ընդ անօրէնութենէ . և կամ զի հասա տարութիւն է լոյսի ընդ խաւար ։

՝ի մէջ առնու զիւրատական բանքս , յայտ առնել ըս ոսկեբերանին՝ լեհ՝ ի խնդրել զարհուրելոյն կորնթացւոց առ ինքն՝ ոչ վս իւր ինչ խօսի , այլ խնամ տանի օգտի նոյ . զի ընտանենացուսլ առ Աշմարիտ պաշտօնեայս աւետարանին , հեռի լինիցս յանհաւատից և՝ ի մոլար առաքելոց . իբր ասել . վս այն յորդ բեմ գձեզ ընդարձակիլ առ մեզ , զի մի բաժանորդք լինիցիք անհաւատից ։

Փոխանակ բառին լծակից , յոյնն ասէ էդԵօչԷՈՒՆԷՈՒ . և է փոխաբերութեն առեալ՝ կամ՝ ի լծոյ եզանց , և կամ՝ ի լծակէ կշռոց ։ Ըստ առաջնոյն առեալ բազում լաթարմանք և մեկնիչք , իմա նան՝ մի ըլ նովին լծոյ միաբանիլ ընդ անհաւատից . մի լինել նոյ մասնակից կամ հաղորդակից , ոչ դնել և առորին ։ Յայս միտս՝ ի կիր առնու զխորհրդա կան իմաստս հրամանին մովսեսի . (ը օրին . իը . 10) * Մի՛ վարեսցես զեզ և զեզն՝ ի միասին ։ ‖

Ըստ երկդին առեալ , առաւել բնորէն ոմանք իմանալ զոյն բառն՝ հակամ տաւել , կամ անհաւատարութեն և հա կումն լծակին՝ ի մի կողմն . զի առ յոյնս կշիռ՝ որոյ մի լաւել հակի՝ ի միւս կողմն , կոչի էդԵօչԷՈՒ . Ցայս նշանակութեն ակնարկեն բանք ոսկե բերանին , և հաստատեն լեհոփիլակ տոս . որում ձայնակից համարի արա բասիոն յասելն . * Մի՛ լծցին կշիռք ձեր հակեալք առ անհաւատս ։ ‖ Եւ ըստ այսմ իմաստքն յարմարին . մի առաւել խոնարհիցիք կամ միտիցէք ՝ի կողմն ան հաւատից , քան Աշմարիտ պաշտօնեիցն քեր ։

Յիմաստս բանին մատուցեալ , լծակ ցութենէն ըստնհաւատս՝ լեհ՝ հաղորդակ ցութենէ իմասցի՝ և լեհ միաւնն , չէ ար դելեալ ըս անլսատ բնակակցութենէ , կամ ըս վաճառակցութենէ , կամ ըս սեղանակ ցութենէ ըստնն . այլ միայն ըստ այսմ՝ որ վնաս ինչ հոգւոյ էբիւր բերէ ։ Լատինք ոմանք անհաւատս իմանալով զաստա ռաքեալսն , որք հրէական սխոխէ զօ րենս մովսէսի առաւել հաստատել ջա նային քան զհաւատս քրի , համարին խրատել բանիւն՝ զի զգուշանայցեն՝ ի միաբանութենէ այնպիսեաց ։ Հայ մեկ նութենին բացատրելով զանհաւատն ա սէ , մի լինել բաժանորդ այսոցիկ՝ որք քրնեն զհաւատոյսն , այլ այնոցիկ որք հաւատան ։ Հերոնիմոս՝ ոչիրք ևս ըհդեմ յովինի . գլ . է . և թուղթի առ գերու կիա . յիշս միասլուծե . համար 2 .) և այլք ՝ի լատինացւոց՝ իմանան արգե լուլ այսու զամուսնական լծակցութենէ հաւատացելոց ըս անհաւատից , որ ՝ի մէջ մարդկային ընկերութենէ է հաղոր դակցութենէ կարի անձուկ և ներքին . ըս նմին առաւելագոյն բերէ զմտանգ կոր ծամման ՝ի մեզս և յանհաւատութենէ ։ Բայց յաղագս այսր արգելման տես ՝ի մեկն . եւ . կորնթ . է . 39 ։

Ա յսորիկ ըստմանեալ և կոչնակի իմաստք են բնաբանիս . այլ սովորաբար մեկնիչք հաստարին արգելուլ առաքելոյն զայնպիսի հաղորդակցութենէ ըս անհաւատս , որ կամ ինքնին , և կամ ըս պարա գայիցն զուցանէ մասնակցիլ հաւատա ցելոյն ՝ի կրօնս և ՝ի վարս անհաւա տից . վայ ամբողջ և ուղղակի իմաստքն են ։ Կռնեցեալքդ դուք ՝ի հաղորդուե նոյ և սրբութենէ նոյ , զդոյշ լերուք չու նել ըս անհաւատս զայնպիսի կապ ըս տեղութենէ , և մերձաւորութենէ , որով միտիցէք ՝ի նոյ սուտ կրօնս և յանկար գունս , կամ երևիցիք հաւանք և ձեռն տուք չարեաց նոյ . մի հակառակ սրբու թենէ աւետարանին՝ խոտորիցիք ՝ի հե թանոսական ուսմունս և ՝ի գործս . ձեր խորհուրդք և կենցաղք ամենևին այլազգի իցեն յայնցանէ , որք զՀմա րիտ հաւատս խոստանին , կամ ուրանան ։ Ջայս միտս յայտ առնեն յաջորդ բանք առաքելոյն , որովք ցուցանէ զանպատ շաճութենէ այնր լծակցութենէ . և այսմ զհետ գայ կողմնակի , զի ելեկ ամաւ նու-

նուելին ը անհաւատա, կի սեղանակ_
ցութիւն ը նա, կի այլ ինչ հրեական և
հելենասական ուսմանն կի սովորու_
թիւ ունիցի զնոսանգ յարելոյ ի սուտ
կրօնս և ի վարս անհաւատից, զգու_
շանայցեն յայնպիսի հաղորդակցուե։
Քանզի չի՞նչ հաղորդութիւ է արդարու_
Հնդեքումբք պատշաճաւոր ընդարձակե
զանուեցութեան ասացեալ լծակցութեանն,
դիմադրելով միմեանց զամենևին ներ_
հակեալն։ և որպ ոսկերերան ասէ,
փոխանակ անձանց՝ զնոյն իսկ զիրան
հակառակս բաղդատե առ միմեանս,
զի երևեսցի անբաւ անջրպետութիւն նոյ_
ա՛ զի առաւել ը դիմամարտք են ար_
դարութիւ և անօրինութիւ, քան արդարն
և անօրէնն. զայն խա և ա՛ յաջոր_
դացն ։ Եթ զիւրաքանչիւր պատշաճ
հարցական եղանակաւ առաջի դնէ իբր
զարմացմամբ՝ առ ի ցուցանել զայս_
նի անհնարութիւն իրացն։

Արդ՝ առաջին պատշաճ անտեղուն
առեալ է ի վիճակէ հաւատացելոյն և
անհաւատին ը սրբութիւ։ Արդարու
և անօրէնութիւ ոմանք իմանան ի թանձ
բացեալն · ը արդար՝ որ է հաւատա_
ցեալն, և անօրէնն՝ որ է անհաւատն ։
Բայց լաւ եւս սովորաբար իմանի ի վե_
բացեալն, ոչ նոքա ասացաք · ը, զի՞նչ
միանակցութիւ կարէ ունել արդարու_
թիւն, առ որ կոչեցի է հաւատացեալն,
ը անօրէնութիւ յորում պատի անհա_
ւատն · միթէ հնար իցէ լծորդել զսրբ_
բութիւ և զուղղութիւ ը անսրբութիւ և
ը թիւրութիւ · չշմարիտ ենծպատշաճութիւն՝
որ է իրաւունք ոյ, զնարդ հաղորդե_
ցի ը մոլար կրօնս՝ որ անհրաւուեցի է
առ ած ։ Ցայտ է թէ եղծանի այս ար_
դարութի, եթէ ը անօրէնութի խառ_
նեսցի ։ Ապա առ այսպէս հաւատացեալն՝
որ յարդարութի կոչեցեալ է, չկարէ
առանց եղծանելոյ հաղորդիլ ը անհա_
ւատին, որոյ կեանք անօրէնութի է ։
Ջայս եզրակացութի լուծեալն Թեոդո_
սիոս և ի յաջորդն, մինչև յետ վճա_
րելոյ զբռվանդակ ձեռնարկութեան՝
եզրակացանել ապա ի 17 տուն · Վէ
որոյ ելլէ՛ ի ինոյ նոցա · և ը ծարձակ եւս ի
հետեւեալ գլուխն ։

Կամ չի՞նչ հաւասարութի է լոյս։ Լոյս
և խաւար ոմանք իմանան զյատուկ
զգալին, և համարին ձեռնարկութե ի
յարացուցէ · ոյ ոչ լոյս անհնար է թէ
միաբանիցի ընդ խաւարի, այլ անդէն
եղծանի ի տապանել խաւարին, նոյն_
պէս անմարթ է հաւատացելոյն՝ որ
լոյս կոչի, միաբանիլ ը անհաւատին՝
որ ի խաւարի կայ ։ Այլք փոխաբե_
րութե ը լոյս իմանան զճշմարտութե ուղ_
տարին, և խաւար զմոլորութե ան_
հաւատից · և լինի երկրորդ պատշաճ
առեալ յանմանութե վիճակի հաւա_
տացելոյն և անհաւատին՝ ըստ նմանո_
թեցն · իբր ասել ։ Ջի՞նչ ընկերութե
մարթ է լինել ճշմարիտ աւետարանին
ը առասպելս անհաւատից · միթէ ճըշ_
մարտութիւն կարիցի՞ ընտանենալ առ
ստութե · ոչ բնաւ երբեք ։ Ապա հա_
ւատացելոյն՝ որ ճշմարտութե է աշա_
կերտ, չէ օրէն և պատշաճ ը ստապա_
տիր անհաւատն կցորդիլ ։

15· Լո՞ չմ չի՞նչ փոքանո՞րի է տէր ընդ
բէլիաբոյ · կամ չի՞նչ բաժին կայ
հաւապատելոյն ընդ անհաւատին ։

Միթէ ինչ՞ հնար ասել՝ միաբանութե
կի համակամութե լինել ը բելիա_
րայ ։ Ջայս եբրայական բառ՝ որ ը ել
բոնիմոսի՝ թարգմանի լծընկէց, ապրա_
տամբ, և ը այլոց՝ անհամբոյր, անպի_
տանականի, բազում յոյն օրինակք
գրեն պէլիաո · յորմէ և մերն գնէ բէլիա_
ա · իսկ այլ օրինակք գրեն պէլիալ ոյ
և լատինն ։ Ըստ նշանակութե բա_
ոին՝ ոմանք իմանան ասա զնմ մարդ
անօրէն՝ որ ապատամբ է յոյ, և բա_
ցատրեն այսպէս · զի՞նչ կցորդութե ու_
նի քա ը մարդոյ անօրինի կի ապատամ
բի յոյ · ապա և ոչ աշակերտաց քո
արժան է միաբանիլ ը անհաւատս ։
Բայց սովորաբար ծարք և մեկնիչք բէլ
ւոր զատանայ իմանան, որ առաջին
ապատամբն է յոյ և առաջնորդ չարու_
թե · և այս ընտրելի ևս է իբրև առա_
ւել յայտնիչ դիմամարտութենն, որով
կազմի երրորդ պատշաճ. չհաղորդելոյ
հաւատացելոյն ը անհաւատին՝ առնել
յանբաւ տարակացութե զլեալ երկո_
ցունց · Եթ իմատաբն են · զնարդ մարթ
իցէ քո՝ որ դուրս է հաւատացելոյն,
վարդապետ ճշմարտութե, և ամ սըբ_
բութե պատշաճ, միաբանիլ ի՞նչք ը
սա_

սատանայի՝ որ անհաւատիցն է գլուխ, հայր ամէ սուտ լեզուէ. ապա քէն ամ իրաք անհնարին։ Ապա և անդամոց քոյ՝ պարտ է անբուռ հեռաւորութիւք խոյս տալ ի կցորդութիւք անդամոց սատանայի՝ յանհաւատից ։ Աղէ առնէ ասկէբերան, թէ չատաց չէք միաբանութէ այնոցիկ որք քոյ, և այնոցիկ՝ որք սատանայի, այլ ուղղակի՝ քոյ և սատանայի, որք թէպէտ և թամձաբացեալ անուանաք են՝ և զանձն նշանակեն, բայց իբրև զվերացել անուանսն սատակադրեաս յայտ առնեն զդիմամարտութիւնէ երկոցունցն ։

Կամ ինչ բաքէն կայ հաւաքացելոյն։ Բազումք ի մէկնչաց քաքէն խմանան զկցորդութիւնէ կամ զմանակցութիւնէ յիրս ինչ, ըստ յառաջն նշանակութեանն։ (ը. օրին. ԺԲ. 27. ԺԸ. 1 ։ ը. Թագ. ե. 1 ։ գործ. ը. 21։) և զնմաստսն պարզեն. զինչ կցորդութիւնէ արժան էսկ ունել հաւատացելոյն ընդ անհաւատին ։ Եւ քանզի ըստ այսմ մտաց լինի բանս նոյն իսկ առաջարկութեանն ցուցանելի՝ և ոչ այլ ցուցմանն, կուռնելիոս մէկինչ հաւատքն՝ թէ սա բացատրուի է երից այլ ցելոցն, իբր ասել. չէ օրէն հաւատացելոյն բաժանակից լինել ը անհաւատին, ոյն և ոչ արդարութէ ը անօրէ նութէ, ոչ լուսոյ ընդ խաւարի, և ոչ քոյ ը սատանայի։ Խայց ըստ այդմ որոշման նուաղի թիւ պատճառացս, զոր և ինքն կուռնելիոս հաշուէ հինգ, և ասկայն միայն չորք ։

Այլք համարին ուրոյն պատճառ, առեալ ի նոցունց իսկ անուանցն հաւատոցէալ և անհաւատ, որք զանմիաբան դիմադրութէ միմեանց ինքեանն ի ձայնէն գուշակեն, իբր ասել. այնչափ անմիաբանելի է հաւատացեալ ը անհաւատի, ոյն հաւատոք ը անհաւատուէ. ապա ոչ իւիք հաւատարել արժան է ձեզ ընդ անհաւատս ։

Երկրորդ եղանակս առաւել հաւանելի է. բայց անօսրագոյն էս երեի մեզ նուէթէ ասկէբերանին, որ քաքէն իմանայ սատզմարձն կիմ գյաղթանակն, և կապմի չորրորդ պատճառ առեալ ի հաւատացմանցն, որ անկ են հաւատացելոյն և անհաւատին։ Իբր ասել. միթէ ինչ քնաս ակնկալութէ պակի կամ հաւատացման վարձուց հաւատացելոյն ը անհաւատին. քանի՞ այլասեռական կ հաւատացումն հաւատացելոյն ի հաւատացմանէ անտի՝ որ անկ է անհաւատին. միթէ հաւատացել և անհաւատ կարիցի՞ն զնոյն մասն ունել յաձ. ոչ ամենևին. զի բաժին հաւատացելոյն ձա է ամ բարութ ը երկնից. իսկ անհաւատին բաժին լինէն այրեցեալ (յայտ. ին. 8։) Ապա ոյն ը վախճանին հեռի են ի միմեանց հաւատացեալն և անհաւատն, նոյնպես ը գործոց պարտին գլխովին անկցորդ լինել։

16. Կամ ինչ նմանութէ է փաքարէ այ՝ ձ հինոց։ Աղաչէն գոչ փաքար այ հինոցաց ես. ոյ ասաց ձա, ի բնէ ցայց ի նա, և գնացէ ի նա. և եղեց նա ձա, և նոչա եղիցին իմ ծաղովեորդ ։

Հինգերորդ վերջին պատճառ չհաղորդելոյ հաւատացելոյն ը անհաւատին, առեալ ինուիրմանէ անտի՝ որում կընքեալ են երկաքանչիւր յիւրմանց կրօնի ։ Վասն զի հաւատացեալն ի ձեռն մկրտութէ արքայագործեալ է տաճար այ. իսկ անհաւատն է մեհեան սատանայի. արդ երկոցունց ինչ զինչ յարմարութէ կայ առ միմեանս ։

Ջինչ նմանութէ է փոխանակ բառին նմանութէ, յորմէ ասէ պնեումբոխս, այ տաճարէ, հաւանուէ, ոյ և զբայն սորա հաւանիլ հարգմանէ մերս. (ելից. իզ. 1.) Ուստի աստանօր նմանութէն իմանի համակամութէ, կամ յանձնառուէ առ ի նմանիլ այլում։ Տաճարի այ՝ հինոց (յոմանս, և հինոյ, կի հինոյ ։) Ա և հեռն բազում ուրէք նշանակէ առ մեզ՝ տաճար կոյց կի կառաւսն, և երբեմն կուռք, կամ պատկեր կոյց. որպէս ի հռոմ. (ը. 22.) * Որ զարշին ի միջ հինոյց ։ Ի բնաբանիս յորմէ և լսոմինն ը այժմու օրինակաց ընթեռնուն՝ կուռք. և համաձայնի արաբացին ։ Բայց յայլ լատին օրինակս կայ գրեալ եթօլիա, այ կառաւսոյ. և կասկածին ոմանք՝ թէ նաև ի յոյն օրինակս փոխանակ գրելոյ եթօլիէն, այ կառաւսոյ, մտեալ ինչ եթօլն, կոյց. և այսմ միաբանի ասորին, դնելով՝ ընդ տաճարի դիմաց ։

Արդ՝ փոխանակ կոյց առեալ զմիհեաննն,

հեանն, իմաստքն էն։ Մինչեւ տաճարն կանգնեալ ՚ի պաշտօն Տմարտին ոյ՝ յանձն առնուցու միաբանել ընդ կուռս, յորս պաշտի սատանայ · իսկ օրէն ՚ի սրբազան տաճարի ոյ՝ զետեղել և յաղթել զպատկերս սուտ աստուածոց · այնչափ հակառակ է այդ, մինչ զի դա դարեր այնուհետեւ ՚ի լինելոյ տաճար ոյ ։ Ապա սոյն օրինակաւ անարժանս գործէք, և պղծէք զձեզ, խոտորելով ՚ի հաղորդութենէ անհաւատից, յորս մե-

ծարի սատանայ ։

Իսկ փոխանակ կռատան իմանալով ըզմեհեանն, (որով առաւել յայտնի դնմադրութենն առ տաճարն ոյ,) այսպէս յարմարին իմաստքն։ Մինչեւ կայցէ ինչ համանմանութենէ կամ կցորդութենէ ոյ տաճարին և տան կռոց · այնչափ անկցորդ են առ միմեանս, որչափ ասէ, պաշտութենէ և դիւապաշտութենէ։ Ապա և ձեզ տաճարացելոց ոյ՝ անմարթ է ունել մասն ընդ անհաւատս, որք սա-

տանայի բնակարան են ։

Աղաչէն զձեզ պաճառ ոյ ։ Յոյնն և այլ Թարգմանք պատճառականաւ ասեն, ղէ դուք ։ Հաւատացելոցդ գործ շնորհ մկրտութենէ, և ամ պարգեւօք Հոգւոյն սէրն եղայրք տուն ոյ, յորոց յանձինս պաշտի ամէն իրրեւ ՚ի սեպհական տաճարի ։ Եղական դնէ պաճառ · վասն զի իւրաքանչիւր հաւատացեալ ինքնին առանձինն լինի տաճար ոյ · և ամենքեան առ հասարակ կացուցանէն զնի տաճար ուր եկեղեցի ։ Յաւելուածով ասէ, տաճար ոյ ՚ի ՆՓԱՀԱՆ, յորոշումն կոց՝ որք զմեռելոսին ոչնս երևեցուցանէին ։ Զբան տաճարին ոյ յատաջագոյն և ընծայեաց առաքեալս ՚ի տ. կորն · ՟ը· 16· ուր տեսաք զնմատան ընտրեալ բանիւ · անդ ասատկաբէ ինն ասէր · * Ոչ դիտէք եթէ տաճար եք ոյ ։ Իսկ ասս մեղմագոյն յիշելով, փութայ վկայութենէ գրոց հաստատել և բացայայտել զայն, զի մի պատճառ ինչ կարծիցի՝ առ մարդասհատութենէ ասացեալ։

Ոչ ասաց ։ (յոմանս, ոչ և ասաց ։) Լատինն ներկայ ժամանակ դնէ, ասէ · բայց յոյնն և արաբացին, ասաց ։ Նա՝ վկնսկ վկայութենէ ոյ ցուցանեմ լինել ձեզ տաճար նր ։ Կամ, ոչ ՚ի շինուած ՀԷ

արտաքոյս՝ ասաց ոճ և եղեւն, նոյնպէս ՚ի հոգևոր տաճարաշինութենս՝ ոչ եթէ ձեր արժանաւորութենէդ ներգործ-

ձեաց ինչ, այլ ոյ ասէն ։

Բնութեայ ՚ն։ Ցայլև այլ դիրս կայ այս վկայութ · ոյ զևս։ (իր. 12·) * Եւ գնացից ՚ի ձեզ, և եղեց ձեր ոճ · և դուք եղիջիք ինձ ժողովուրդ ։ ‖ Եւ դարձեալ եզեկիէլ · (լէ · 26· 27·) * Եւ դից զսրբութիւն իմ ՚ի միջ դոցա յաւիտեան · և եղիցի բնակութ իմ ՚ի դոսա, և եղեց դոցա ոճ, և դոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ ։ ‖ Սոյնպէս կայ և երեմ. (լ· 22· լու · 1·) Աչսպիսի բանք առ տեղեան ասացեալք ՚ի մարմնաւորն իրէն, զնատարուն արդեանց լիով ցուցանելն ՚ի նորս իրէն · զոր արտայայտ առատօրօ առաքեալս, սակաւ ինչ այլայլութիւք դիմացն և բառիւք, այլ զնմատն ամբողջ պահելով։ Բնութեայ ասէ ՚ն։ ընդրհօք իմովք հանդերձեալ ՚ի հոգիս նոցա իբրև ՚ի բնակարանի · և տաց նոյ պաշտել զնա յանձինս իւրեանց իբրև ՚ի տաճարի · այնպս զի ինքեանք լինցին ինձ տաճար՝ և պաշտօնեայ մինչ-

դամայն ։

Եւ գնացէք ՚ն։ Յունաց սովորական օրինակն չունի ՚ն։, բայց այլ Թարգմանք ընդհանուն · և արաբացին մեկնաբար դնէ, ՚ի խոնդ։ Գնալ իմանի զդնալ, կամ ձեմել · և յայտ առնէ՝ թէ հաւատացեալն ոչ միայն լոկ բնակաբան է ոյ, այլ և ձեմարան։ Զգնացից ասէ, շրջելոյ ՚ի հոգիս հաւատացելոց, մերթ կալով նոցա յնմի, յնմ կոդմանց պատապարելով զնոս իբրև պահպան ։ Ոչ ՚ի զբօսարանի շրջելոյ ընդ նմ զորութենէս հոգւոց նոյ, հաւատովք անցեալ ընդ միտս նոցա, և ՚ի մտայ ՚ի կամն աղդմամբ յուսոյ և սիրոյ, և ՚ի կամաց յայլ կարդուհս նոյ հոգեկանս և մարմնական ներգործութիք բաժնս զան առաքինութենէց · աղօթք նոյ իբրև խունկ անուշից, և պարգևք շնորհաց՝ իբրև սրբազան անօթք ոսկեղինք՝ աւետել զուարճալի արասցեն ինձ զանձինս նոյ քան զընտրել տաճարն առոյմանի ։ Եւ դարձեալ · զգնացից ՚ի նոյ յայտնութիք խորհրդոց, զնայեցողութենէ մտաց նոցա ամբառնալով ՚ի բարձրադդնան, և օր ըստ օրէ ՚ի լուսադդն բարձրս

քիան յառաջեցուցանելով զձնացս նոցա· աղդումն շնորհաց իմոց աշեցուսցէ զնա յընթացս ածս պաշտօնեաւ· այսպէս գնացից ՚ի նա, գնացուցանելով զնա ՚ի զօրութիւնէ ՚ի զօրութիւնէ։

Եւ եղեց նոցա ։ Ըստ արարչութեան՝ համաբնի արարածոց գոլով ած, յատուկ պաշտամունք և անուանակոչութիւնք եղեց առանձինն ած հաւատացելոց։ Եւ նա եղիցին իմ ժողովուրդ (՚ի տակաւս, ձեզ ժողովուրդ ։) նոքա հաւատացելքն որոշեցէք յայլ մարդկանէ՝ լինելոցին և ծանիցին լինել սեպհական ժողովուրդ, նուիրելք յիմ պաշտօն յատուկ օրինօք։

Երկրաբանչիւր հաւատացած բնաբանիւս բազմօրինակ ունի ղյարմարութիւն։ Նախ զերկայնին մասն ևս առ ընտրութիւն այդ առանելով այսպէս։ Ես ինքնին կացուցից զնա ած հաւատացելոց, և զնա ընկալայց լինել ժողովուրդ սեպհական։ Երկրորդ զերկայնին ևս մասն առ ընտրութիւն հաւատացելոց իմանալով այսպէս։ Ես և զնոցա ընտրեալ և ծանուցեալ ՚ի հաւատացելոց յատուկ ած նոյ, և նոքա նոյնպէս լինել ժողովուրդ սեպհական։ Երրորդ, զառաջին մասն առ ած, և զերկրորդն առ հաւատացելսն։ Այլ, ես ասց նոցա զնա ած իւրեանց, և նոքա փոխարէն ընծայեացեն զինքեանս լինել իբրև ժողովուրդ։ Չորրորդ, զառաջին մասն առ հաւատացեալս իմաստասիրել, և զերկրորդն առ ած, այլ, ես ՚ի հաւատացելոց ընտրեցայց ած իւրեանց, և զնա ընկալայց լինել ժողովուրդ սեպհական։

Ամենայն ասացեալ իմաստքս ըստ ճըշմարտութեան չունին ինչ արատ, յորժամ զընտրեալ հաւատացելոց իմանայցեմք յաջողեալ ՚ի շնորհացն այդ։ Այլ զի առ կատարումն իրացն երկոքինն ևս զոյզ ընթանան, այլ ընտրելն այդ զհաւատասցեալսն՝ իւր ժողովուրդ, և ընտրելս հաւատացելոց զած իւրեանց յատուկ։ Բայց քանզի ըստ կարգի իրացն՝ նախ և այդ ընտրութիւնն, և նոյն՝ պատճառ ընտրութեանն հաւատացելոց, նմին իրի հաւանելն ևս և առաջին եղանակն։ Այլ, ես ինքն յիմիմ հաճառեալ կացից հաւատացելոց ած յատուկ պաշտամամբ։ և զնա առից ինձ ժողովուրդ ընտրեալ ՚ի մէջ մարդկան։ սիրեցից զնա, խնամեցից, պաշտպան կացից նմա իբրև իմում ժառանգութեան։ Այս իմաստք առաւել հարազատ են տեղւոյս։ զի բովանդակ մարգարէական բանն ունի զհատատութիւն բարերարութեանն այդ առ ժողովուրդն։ ուստի զայն ասէ՝ զոր ինքն ած առնել ևս նմա է։

17 · Ա ած որդ եղէ՛ ՚ի Գիլոյ նոյ, և Գիլ՝ նեղութ ասէ Գր, և ՚ի պիղծ ի Գրչենայ։

Եզրակացութիւն է անցելոյ բանին, և դրեթէ բովանդակ պատճառաբանութիւնն՝ սկսեալ ՚ի 14 տանէ, զոր և կաղմ ի դարձել մարդարէական բանիւ գերծոց, առ ՚ի ցուցանել ՚ի օրինս առաջարկութեան, նոյնպէս և եզրակացութեանն ՚ի գրոց հաստատել են անստեղծ։ Տաճար գոլով ձեր ասէ իմանալի՝ այդ բնակութեան սրբեալ և կնքեալ, անմոռանալի խառնակ նիւթոց, զիարդ առ անհաւատս՝ որ տաճար են դիւոց, ներքինեք մուտս տալ։

Վէ որդ եղէ՛ ՚ի Գիլոյ Նոյ։ Ցեսայեայ է բանս։ (Ծէ։ 11։) ուր ըստ եօթանասնից ասէ։ * ՚Ի քաց կացէք, ՚ի քաց կացէք, ելէք այտի, և ՚ի պիղծս մի մերձենայք։ ելէք ՚ի միջոյ նոցա, մեկնեցարուք՝ որ բարձեալ բերէք զսպաս տան։ ‖ Ըստ ճառին իսրայելեանց ՚ի բաբելոնէ, և ՚ի նորա անմաքրութեան։ զոր առաքեալս համաուսուելով, առ նմա հաւատացեալս տալ բածանել ըստ բարոյական սեռսն, կամ իբրև ՚ի նմանութ։ վասն զի մարգարէն յերանելի միջոցէ՝ առաւել զնոյն օտարանալն ՚ի բաբելոնական պղծութենէ ակնարկէր, և ըստ նմանութ առաքեալս մեծ և իրաւամբք զնոյն պահանջէ ՚ի նոր ժողովրդենէս։

Աւե Գր։ Այս չէք ՚ի կարգի անդ յիշատակեալ բանին եսայեայ։ բայց զի ՚ի նոյն գլուխ տակաւ կրկնի, այսր փոխադրեաց առաքեալն, ցուցանել ՚ի դիմաց այդ ի Տրամանին։ Բայց յորժամ նակ ասկեբերանին դնի զինչ բանին, և ես ընկալայ չէիւ։ Իսկ ՚ի Տայ մեկնումն, զինչ բանին, ՚ի պիղծս ի Գրչենայ։ Այս ՚ի յոյնն և յայլ Թարգմանս եզակաս դնի։ այլ ՚ի պիղծ մի մերձենայք։ բայց ըստ մեացն բազմաւորական է։ ուստի

և ոսկեբերան՝ ի բնաբանին եղական եղեալ, ի մեկնելն յոբնական դնէ։ Պիղծ իմանի՝ թէ անձն անմաքուր կի անհաւատն, և թէ գործ աղտեղի. և արդելու ոչ միայն զգործելն, այլ և զմերձենալն յանմաքուրս։ Եւ այս ևս մանէ իասացուցն մովսէսէ՝ ի պատ. ձառս դադանայ, և աբիբոնի (Թուոց. ժ. 26.) * Եւ խօսեցաւ ընդ Ժողովրդեանն և ասէ, մեկնեցարուք՝ ի վրանաց խստասրտացդ այդոցիկ, և մի մերձենայցէք յինչ՝ ի դոցա. զի մի կորնչիցիք ընդ ամենայն մեղս դոցա։ ||

Արդ՝ ի բնաբանին՝ ելանել՝ ի միջոյ անձ հաւատից, և մեկնիլ հեռանալ, ոչ լի մանի պարզաբար ըստ մարմնոյ բնակուն և կենցաղավարուն. ապա թէ ոչ՝ պարտ էր և յաշխարհէն իսկ ելանել, ոյժ ասէ ինքն յառաջինն Թղթին. (Ե. 10։) Ա յլ իմանի՝ մաօք և սրտիւ և գործովք այնպէս օտարանալ՝ ի նոցանէ, որպէս թէ չտեսանիցին զնա, և կայցեն՝ ի հեռաւոր երկրի. զի զմիմ իբրև բացատրուի է յաւելուածն, ՝ ի պէտս ի դէյենոյ։ Վա՜յ իմասաքն են. տաճար հոգևոր էք դուք ո՞ հաւատացեալք, ձեռաբնակ և ձեռաձեմ, ընտրեալք ժողովուրդ սեպհական. ապա պարտիք՝ ի ժողովոյ անհաւատիցն խորշել ըստ կարի, մի ընտաներնոյ, մի անմաքուր բանիկ և գործ ծոց նոյ զհետ երթալ, ՝ի պղծուեցոյս ոչ միայն անշուշտ մնալ, այլ և փախչել և դարչել։ Եւ եթէ մարմնաւոր կը ցորդութիւն ըստ նմ վտանգ ինչ չարի բերիցէ, զայն ևս Թողուլ՝ ի բաց։ Ա յսու օրինակաւ իրաւաբանէր և մովսէս՝ ի պատուիրելն հրեից զդոյզ լինել՝ ի դարշութենցն հեթանոսաց, ասելով՝ զի ժողովուրդ ըստ ես դու ըստ սյ։ (ըստ. օրին. Ե. 6։ ժդ. 2. 21։ իսկ. 18։)

18 · Ա՜ ես ընկալոյց զյէէ · և ես եղէց յէէ՝ ի հայր. և դո՜ս էղէլէ յոսա էէր՝ և՝ ի դոսէր, ասէ տէր ամենակալ։

Զակիզբն բնաբանիս, Եւ ես ընկալոյց զյէէ, յանցեալ տունն յարէ յոյին, ասըբին և ապաքացին, միայն լսոհինն ասա ընծեռնու։ ՝ի հրաժարել ձեր ասէ՝ ՝ի հաղորդութենէ պղծոցն՝ ես ինքն ընկալոյց զձեզ. մի երկնչիցիք՝ թէ ելանել լով՝ ի նոյ ընկերուէ՝ մնայնակ և ամայի մնայցէք, անխնամ և կարօտեալ. այլ ընկալայց զձեզ յիմ ընտանութի և՝ ի բազմութի. իբրև զորդիս փախուցեալս՝ ի թշնամեաց՝ պնդեցից՝ ի դիրկս իմ յոբրախուէ իմ մուծից, ըստ խնամովք իմովք փակեցից։ Ա յս է առաջին խոստումն առ հրաժարելն՝ ի պղծութենէ անհաւատից, ՝ ըստ ընտանենալ առ ամենաբարն ինծ։ Ա յս ժամ չիք յայտնապէս՝ ի բանն եսայեայ, այլ համարին ոմանք հայել՝ ի 12 համար նախայիշատակել ծիք զրկիսոյն, յասելն * Առաջի ձեր ոչ ինքնին գնասցէ, և ոչ Ժողովէն զձեզ ինծ իսբրայելի ։ Յայլ մարգարէս կայ այսմ նման. որպես եզեկիէլ. (Ե. 34.) * Եւ հանից զձեզ յազգաց, և ընկալայց զձեզ յաշխարհաց։ || Եւ զինի. 39. * Նախ՝ ի բաց ընկեցէք զիւրաքանչիւր զգնացս իւր. և ապա թէ լսիցէք ինձ... ՝ի վը լերինն բարձու. իբրև ծառայելոցն ինձ... և անդ ընկալայց զձեզ։ ||

Եւ ես եղէց յէէ՝ ի հայր։ Ա յս միւս խոստումն որդեգրութենէն ոյ, որ տիրապետ հայի՝ ի Ժողովուրդ նորոյ կտակին։ Ա՛նպէս ընկալայց զձեզ ասէ՝ յիմ ընտանութի, զի ես ձեռ անչափ և ամենաբաւական՝ իմով բարեգթութի՝ եղէց ձեզ որոշելոցդ՝ ի խառնակուէ անհաւատից՝ հայր սրբարար ծննդեամբ շնորհաց, որով դուք հաղորդակիցք էմում ձեռնէն բնուէս, եղէլէ՝ էէյոոա էէր՝ և՝ ի դոսէր։ Ա՛յնոյ համանմանք ձեռային բնուէս, և ժառանգ բարեացն իմոց, ոյ առ մարդիկ՝ զաւակք նոյ արու և էգ միապէս հաղորդին բնուէ հօրն, և ժառանգեն զինչս նր։ Առ ձեռային որդիութենէն չիք խոթք արուի և իգի. ուստի ոոոէր և դոսէր ասելն ոչ ելեէ առ ձեռ ցուցանէ ունել զայն զանազանութի, այլ նշանակէ՝ թէ հաւատարած յարուաց և յիւրաց մարդկան ընդունի ձեռ իւր որդեգիրս շնորհօք. և լռելեայն ակնարկէ և ս, թէ՝ ի կատարեալ ժառանգութենն ոյ, որ լինելոց է՝ ի փառաւոր յարութի մարմնոց, պահէ անկոբուստ որոշումն արտաքին և իդական տեսակի։ Ագուինացին ըստ աստէճանի շնորհացն բացատրէ զայս որոշումն. ոյ ուստերս ասել զկատարելն առաքել նութ, և դստերս՝ զանկատարան։

Աէ տէր ամենակալ։ Զայս առաքելն յիւրմէ

մէ յաւելու, ՚ի դիմաց այ կազմելով զասացեալն. և ամենայն ազգ՝ զի մի ոք ընդ կատարումն խոստմանն երկբայեսցի։ Բայց խնդրի առ. մեկնիչս, Թէ յոր գրոց առեալ է բանս. զի չիբրեւ ուրեք յայտնապէս. միւնչև համարել ոմանց, Թէ առեալ իցէ ՚ի հերքական ինչ երգոց, կամ ՚ի մարգարէական գրուածոց, որք պակասեցան ՚ի միջոյ։ Ապուհնայ ցին հայեցուցանէ ՚ի բանն՝ որ միւս առ զոմանի ասացեալ, (ԲՐ. Թագ. Ե. 14.)

խեալ ի անուրբ զեռնովք, տեսիլ էր
յառաջ քան զդիտել խորհրդոյն· իսկ
ծանուցեալ ապա՝ թէ զի չեՙմ անուռցն
չխորշել ակնարկէ, յայտնութէն կոչե-
ցաւ· (գործ· Ժ· 11· 17· 20· 28·)
Ապա ըստ բացատրութէնս համարին
ոմանք, թէ ամ յայտնութէ է և տե-
սիլ, կամ ունի զնոյն· այլ ոչ անդրա-
դարձութէ՝ ամ տեսիլ է յայտնութէ:
Իսկ աստանօր զերկոսին և ՚ծորդեաց
առաքեալս, առ՝ի նշանակել՝ թէ զամ
երևեալս առ յոյ ծանեաս կատարե-
լապես· զոր միանգամ տեսանէր՝ ըստ
խորհրդոյն և ձանաչէր: Սակայն ըզ-
դու-

գուշաւոր ևս Թուխի չասել ընկերացս, ասէս, Թէ ամ յայտնութեի իցէ տեսիլ. վիշ զի բազում ինչ ծանօթութիք լինին յայլ ի միտս, կի ձայնիւ առանց իրիք երևման. յորս գոյ յայտնութի, այլ ոչ տեսիլ. ոչ բարբառն եկեալ յերկնից առ քա մերձ յաւուրս չարչարացն, յորում լինէր յայտնութի փառացն այլ: (Յովհ. ժիբ. 28:) Լսի գութ արդ զոր խոստացաւ առաքեալն՝ զտեսիլսն և զայտնութիսն եղեալս առ ինքն:

2. Գնէջմ այր ի Թ՚ռ յաւօթ ամն զբրեք. ամաան ամ. էին մարմամբ՝ ու գիջեմ, և էին առանց մարմնոյ՝ ու գիջեմ, ած գիք. յականէջնէ ընդ երկնից զայնոսիկ ընդ երրորդ երկինս:

Եւ առ ի՛նչ արդեօք վիսխուն դիմացն. զի վիշ անձին խոստանայր ասել, և զայլմ ձառել սկսանի: Այնինչ հաւաստի է՝ զի յայտնութիքն զորս ինչէ, իւրում անձինն պարգևեացան. որպէս ի 7 ամին հետևեցուցանի՝ Թէ առ ի չհպարտանալոյ յայտնութիքն դեղ տրուեաւ նմա խայթ մարմնոյն. և այն զի արատաւոյ ելանէր դիտաւորութեն բանիցն, որ է ջատագովութի անձինն, եթէ զայլոյ ուրուք արժանաւորութիս ի ներքս բերէր: Այլ այս է դիմափոխութեի սեպհական խոնարհ հոգւոցն, ոմի ոք պօղոսն էր՝ աշակերտեալ քրիստոսի, և ոչ դեմոսթենեանց. զի ուր ուրեք ըզնուաստս խօսի, ոչ հրաժարէ և զիւր դէմն ի միջ խառնել. իսկ ի բարձրագոյնսն՝ որ իւրում անձինն յատուկ են, զայլոյ դէմս զգենու. կամելով ցուցանել, Թէ այնչափ առեցօղ է փառաց՝ և օտար ի պատուասիրութի, մինչ զի ուր հարկ իրացն առիթել յայտնել զվեհաւորս ինչ անձինն, գրեթէ յանձնէ իւրմէ օտարանայ, յիւրմէ իսկ Թաքուցանելով. և ըստ որումն ասի՝ Նաև զբրի իրաւունս՝ հնազի չդիտել աջոյն զոր ինչ գործէ կամ հրէ ձախոյն: Ջայս զնր զդուշաւորութի Թէ լաւ ևս տեսանեմք ի քննել զիւրաքանչիւր տան բնաբանիս:

Գնէջմ այր ի Թ՚ռ: Բառն Թ՚ռ սովորաբար իմանի ի վիշ առնն, այլ ճանաչեմ զայր ոմն հաւատացեալ, յօդեալ ի քո հաւատովք և կրօնիւք: Ոմանք հայեցուցանեն ի բայս յանդգնեալ. այլ քրիստոս, կամ պարգևօքն քրիստոսեաւ կեալ յերկինս, և ոչ դիւնական ներգործութի, ոչ սիմոն մոգն: Ջերկանքսիւր եղանակս վարէ օգոստինոս ի բանս իւր: (յաղագս Ծննդ. ըստ գրոյն. դիրք ժիբ. Տիմ 8. 12:) Այլք ոմանք յարեն ի բայս գնէջմ. այլ ի քո միայն և վիշ պատաց նր ասեմ գիտել զայնպիսի այր, և ոչ առ պատասխանի մարդկան: Կամ, Թէ և վերագոյն ամբարձեալ նորա քան զվեհական մարդկան, ոչ զայլ գերազանցութի նկատեմ ի նմա՝ բայց զքրիստ լինելն. կի գիտեմ ի քրիստ, այլ վկայութիք քրիստոսի գիտեմ, զի յայտնակատցաւ ևն:

Յաւօթ ամն զբրեքսաան ամ: Այս մասն կարէ հայել կամ ի ամ, կի առ գնէջմն. իբրև Թէ՝ որ ի քրիստոս հաւատացեալ է չորեքտասան ամաւ յառաջ. կամ Թէ ես գիտեմ, Ճանաչեմ յառաջ քան զամս չորեքտասան: Սակայն հաստատակաց միտք վարդապետաց և մեկնչաց իմանան ի վիշ յայտնակալեցոյն. չորեքտասան ամք են ասէ՝ յորմէ հետէ շնորհեցաւ նմա այն յայտնակալութի: Յորոյ վիշ ասեն միաբան ոսկեբերան (աստ. Ճա. իվ.) և ամբրոսիոս. (բացատր. սվմ. լիբ. Տիմ 40.) Թէ ոչ վայրապար Ճշդրտաբանէ ժամանակ իրացն, ցուցանել Թէ զայնքան յերկար ժամանակ Թաքուն պահելով, կարօղ էր լռել և այժմ. և չաւեր իսկ բնաւ Թէ ոչ առաջնկայ իրքն ստկպէին: Յաւելու ոսկեբերան, յաւանչ արժանացեալ գոլով այնպիսում յայտնութի, տայ իմանալ լռելեայն՝ Թէ քանի՛ ևս բարձրագունից եղև ընդունակ յետ այնքան ամաց: Յաւելու և ամբրոսիոս՝ ի միտ առնուլ այսու զանպարծութի առաքելոյս. զի եթէ երիտասարդ գոլով՝ ոչ պարծեցաւ յայնոսիկ, այժմ ի ծերութեանն պարծիցի՞

արդեօք:

Ինչանակել Թուոյ ամացս միայ իմաստասիրել, Թէ յորում ժամանակի զիպաւ այս յաւիշատակութի պօղոսի: Ոմանք յառաջնոցն՝ ըստ որս և ադոմի նացին՝ համարեցան դիպեալ ի ճանաչ պարտին գամասկոս, յորում երևեցաւ նմա քո փայլակնացայտ աչարկութի, և կի մանաւանդ յերից աւուրն կողոպ

նէ՛ ի դամասկոս, յորս անսուաղ աղօ-
թիւք պարապեցաւ յայն ։ (գործ · Թ ·
3 · 9 · 11 ։) Ջսոյն կարծիս առնու և
նաբեկացին ՛ի մկն · երգ · եր · 155 ։
Սակայն Թող զայլ դժուարութիւնս՝ ոչ
ատանի այդմ նաև ընդունելի ժամանա-
կագրութի՛ն գործոց առաքելոյս ։ Վա՛ղ
ըս քննեալ հաշուի՛ դարձումն նէ՛ ի քա՛
եղև. իբրև յամին 35 · իսկ գրութի՛ երկդ
Թղթոյս առ կորնթացիս՝ յամին իբր 56 ·
յորոց հանեալ զորութքատասան՝ մնան
ամք 42 · յորմէ երևի՛ եղեալ յարիչոտա-
կութի՛ն իբրև. եօթն կի՛ ուրեմն ամք զնի՛
դարձին առ քա՛ ։ Եւ դայ դիալի այս
յայն ժամանակ, յորում առաքեալս
չոքաւ յանտիոքայ յերկեմ՛ քառնաբայ՝
առ՛ ի տանել զառաս աղքատացն · և
անտի դարձեալ յանտիոք, յորոյմանէ
Հոգւոյն սրբ կարգեցան յառաքելութի՛ն
հեթանոսաց · որոյ վա՛ կացին յաղօթս
և՛ ի պահս, և զձեռնադրութի՛ն ընկալ-
ան ։ (գործ · ԺԳ ·) Վա՛յ սովորական
կարծիք մեկնչաց հաստատուն, Թէ կամ
՛ի ճանապարհորդութի՛ն յերկեմ, և կի՛
յանտիոք՛ ի պաղատանան պարզևեցաւ
Նմա այս ձերազանց յայտնութի՛ն ։ Եւ
այն եղև, զի մի՛ նուաղագոյն ՛ք զրուն
առաքեալն մնայցէ, ասէ ոսկեբերան ։
Կամ ըս այլոց, ՛ի նոր առաքելուն կար-
դեալ նո՛ ոչ միայն հրեից, այլև հեթա-
նոսաց անհնազանդ, ՛ի վեր եւս քան զը-
մովսէս՛ ի բարձանց երկնից ընդունելցի
զանդիկուն ՛ի ծայնոյն, ոչ նա զորի-
նայն ՛ի սենեկական լերին ։

Երէ մտրեալ, ու գ՛ եմ ։ Ոչ դիտեմ, և
ոչ հաւաստի ասել կարեմ, արդեօք ոճ-
գական փոխադրութի՛ մարմնոյ եղև յա-
փշտակեալ, ոչ փիլիպպոսի դիպաւ, կի՛
ամբակումայ · (գործ · ը· 39· 40։ Դան·
ժԷ· 35· 38։) ԵՒ երէ առանց մտրեալ · կի՛
Թէ առանց ունելոյ զմարմինն · զոր ոս
կեբերան և այլք բազումք խմանան ,
իբրև Թէ անջատելով Հոգւոյն ՛ի մարմ
նոյ առ ժամանակեայ մահուամբ ։ Իսկ
այլք խմանան՝ առանց ՛ի կիր առնելոյ
զզգայութի՛ն մարմնոյ, առանց ուշ ու-
նելոյ մարմնոյն՝ Թէպետ և միաւորեալ
կայր ը նմա Հոգին · ոչ եղեկիէլի եղև՝
յափշտակիլ Հոգւով յերկեմ և տեսա-
նել զանդ զործեալսն · (Եզեկ · ը· 3։)
Ըստ երկուց մտաց եւս իմանի ասելն

նաբեկացւոյն (՛ի մեկն. երգոց. եր. 101.)
զպղոտս արտաքոյ մարմնոյն առեալ ։

Արդ՝ առ երկոսին եւս յարեն՝ ոչ գ՛եօ ։
նշանակել՝ Թէ ոչ զմարմնով վերա-
ռաւն հաւաստի դիտեմ, և ոչ առանց
մարմնոյն · ըծ գ՛եօ ։ Այս ոչ է երդմը-
նական իբրև զասացեալն վերագոյն
(ժԱ· 11·) * Իբրու Թէ ոչ սերիցեմ
զեղ · զայն ևս դիտե ։ ‖ Այլ զամե-
նևին անհաւաստութի՛ իւր կամի յայտ
առնել, Թէ արբ՛ւսի և խորհիմ և ջա-
նամ առաւել, ոչ կարեմ · ևս մեայն զի-
տելի է հաւաստի ։ Այլազգ առնու
մեծն աթանաս զայս չդիտել առաքե-
լոյն · որպես Թէ դիտէր նա զնարդ յա-
փշտակեցաւ, բայց սակս խորհրդոյ ինչ
ձեւանայ ոչ դիտել · որպես եղիսէ դիտէր
ապաքէն զվերանալ եղեալի , այլ ոչ
յայտներ որդւոց մարգարէից իբրև անդ
դէտ ։ Այսպէս իմանայ աթանաս առ
՛ի ցուցանել զնոյն իմաստս բանին քո՛,
և ոչ որդի գիտէ ։ (բան ը՛· ընդդէմ
արիանոսաց · հմր· 47·) Սակայն ոչ է
բնաւանի իմաստ բնաբանիս ։

Թէրեւս զարմանալի ոմանց Թուիցի
այս անդիտութի՛ առաքելոյն ։ Վա՛ զի
եթէ մարմնով էր յափշտակութի՛ն, չէր
մարթ անդիտանալ զայդ · զի զոյր յայն
ժամ աչօք տեսանել զքա՛, և ականջօք
լսել զձայնն, և բերանով խօսել ։ Իսկ
եթէ զայսոսիկ ներգործութի՛ոչ գի-
տեր քնաւ , յայտ է Թէ առանց մարմ
նոյ վերառեալ էր անդր ։ Սակայն Թէ-
րի է ձեռնարկութի՛ · վա՛ զի գոյ և մի
ջոց ընդ երկու եղանակաւ, որով Հոգի
Թէ՛և ՛ի մարմնի բնակեալ, ոչ ուշ ունի
մարմնոյ ներգործութի՛ն, մանաւանդ
յորժամ՝ ՛ի մի ինչ զգայութի՛ կարի պա-
րապեալ լիցի ՛ը որում յոլովակի և մեզ
պատահէ ։ Որչափ և առաւել՝ յոր-
ժամ՝ ՛ի Հոգւոյն տեսողութիս զբաղեալ
լիցին միտք, մինչ զի զանզգայութի՛ն և
բերել լուսոյ , կերակրոյ , ժամանակի,
և շօշափելի իրաց ։ Այսա յիմնայինն և
յանծառ գիտութի՛ն յափշտակել՝ առա-
քելոյն , զիարդ որ զերևելն շուրջ գործ-
ն՛ին ՛ի մարմնի՛ միտ գնել մարթ էր ։
Նմին իրի խորհրդով ասէ՝ ու գ՛եօ՛ն , յո՛
ընկղմեալ Հոգւով գլխովին յիմնայնոյն
Հայեցողութի՛ն, ոչ քնաւ ՛ի մարմնոյն
Հանգամանս ուշ ունել կարողացաւ ։

Քան

ՔանզԻ Հոգի դեռ յաղցաւոր մարմնի
դոլով, չէ կարող էշխել գլխովին համ-
բիւն ներդործեաց նմ· և՝ ի զօրանալն
առ մի ներդործեալն, ի միւսն տկա-
րանայ· որում Հակառակն պատահէ՝ ի
փառաւորեալ մարմին։

Արդ՝ Թէպէտ զոր ինքն առաքել անդէ
տանայր, մեզ ոչ՝ ի դէպ է Տարցաքննել
սակայն առաւել Տանապական Համա-
բիւն է, Թէ Հոգի նմ ոչ բաժանեցաւ
իրապէս՝ ի մարմնոյն, այլ միայն ըստ զ-
գայական ներդործելոցն խափանե-
ցաւ։ Վասն զի իրական բաժանումն Հոգ-
ւոյ՝ մահ է տիրապէս· և Տարկ լինէր
ասել՝ Թէ առաքեալն յայնմ յաիշատ
կուԹէ մեռանել, և ապա դարձեալ կենդ
դանացաւ· և Եթէ այլ յաիշատակումն
Համարիցիմք՝ զոր զինի ասէ եղեալ՝ ի
դրախտն, ահա կրկին մահ, և կրկին
յարուԹ· որ ոչ միայն արտաքոյ է կար-
գի նախանձամաԹենն այլ, այլև օտար
՝ի պարզևէ յաիշատակումէն· զոր գերք
սովոր են կոչել առանց նշանակելոյ
ժամ յաիշատակեցելոյն։

Յոխտանէալ գայԹակղութիւնք չեղբարք երէ-
նէ։ Աչսպէս Հարազատ օրինակք մեք-
բան գրեն, չեղբարք երկնէ, և ոչ չեբեր
երկինս։ (՝ի մէ օրին· յոխտանէլ··· գիր·)
Յուանականն ընկճեռնու, էօս գոխտա-
ռոռանո· զորմէ ազդ առնէ մերս եղեռնիկ
վարդապետ (գլ· Ե· եր· 238·) երկդիմի
գոլ առ՝ ի նշանակել՝ չեբերբ երկինս, և,
չեբերբն երկնի· և զերկինս զայս առաւել
քնարեբ, ըստ որում իմացան և Թարգմա-
նիչքն մեր· զոր և մեկնէ եղեռնիկ, Թէ՝ ի
մանն ինչ երրորդ՝ ի բաղում մասանց
երկնի յաիշատակեցաւ պօղոս։ Եւ այսմ
Համաձայնի ասորին դնելով, * Մինչև
չեբերորդ մասն երկնի։ ‖ ըստ որում ասէ
և՝ ի վարդապետութէն Լուսաւորչին·
(Ագաթանգ· եր· 316·) Իսկ Թէ ոք
մասն իմանիցի, այսպէս խորհի եղեռնիկ·
ակնբ յառաջմանն՝ որ ե երկինն հրեղէն,
և եջ չերկրորդն, որ ե հաստատուն
աստեղաց, և Տակ չերբորդ յօդ, որ՝ ի
դրոց երկին կոչի։ Եւ ըստ այսմ յաիշատ
կիլ չերբորդ մասն երկնից՝ իմանալ յաիշատա
կիլ՝ ի վեր յօդս· քանզի և զաստղեաց
ասորև՝ յաիշատակիլ՝ ի դրախտն, նոյն
Համարի ըստ առաջնոյն· և դրախտ առ-
նու զեդեմականն՝ որ չերկրի եր, և ոչ
չերկինս։

Ասկայն լատինն և արաբացին զյուն-
կանն Թարգմանեն՝ չերբորդ երկինն· և ըստ
մտացն միանայ ընդ առաջնոյն· զի զա-
սելն, չերրորդ երկնի, չէ Տարկ առնուլ՝
չերրորդ մասն՝ ի մասանց երկնից, այլ
չերկրի՝ ի կարգի երկնից· և զայս ոչ
Հաշուել՝ ի վերուստ՝ ի խոնարհ, ըստ
որում առնէ եղնիկ, այլ՝ ի ստորև՝ ի
վեր, ոչ իմանան սովորաբար մեկնիչքն։
Աստղ և շարականն երգէ, * Վերամ
բարձել՝ ի չերրակի խորանս երկնից։ ‖
և դարձեալ, * Աճառելի դրախտին ա-
ռեն տեսող, և երրորդ երկնից։ ‖ (ուր
բազում գրչագիրք դնեն՝ երբորդ, բայց
վրիպակ Թուի։)

Թողեալ՝ ի ժամուս զփոխաբերական
կի զխորհրդական իմաստս՝ զոր ասաւ-
գեն վարդապետք՝ ի վի երրորդ երկնի,
ըստ Ճառին իմաստքն խնդրելի են՝ ի ծա-
նօԹութէ անտի՝ զոր կորնԹացիք կա-
րօղ էին ունել չայնժամ ըստ ասանդելոյ
գրոց· զի ոչ է Տաւանելի Թէ առաքեալս
՝ի պատմելն զառաջինայ չայտնութէնս՝ ի
կիր առել իցէ զլեզու անսովոր՝ ի գրոց,
և անչայտ առ կորնԹացիս, մանաւանդ
պարունակօղ այնպիսի նշանակութ՝ որ
չետոյ ուրեմն խորհրդաբերեալ է՝ ի
քննողաց։ Արդ՝ ի սովորութէն արբա-
զան գրչաց, և առ հրէայս՝ որք ան-
ծանօԹ էին եօԹնեակ կի տասնեակ կա-
մարաց հելլէն ասողքանչից, երեք
երկինք միայն զատանին։ Աւաջին՝ օդ,
ղէն կի ամպղէն, չորում և Թռչունք
երկնից ասին· զորմէ և ասացաւ (Ծննդ·
Է· 11·) * Սահանք երկնից բացան։ ‖
Երկրէն՝ աստղալից, Տաստատուն աստ-
ղեալ՝ ի գրոց· (Ծննդ· ա· 14·) Երբորդն՝
հրեղէն կոչեցեալ, աՀռոս այր, և քնա-
կարան հրեշտակաց· որ և առաւելու-
Թէ երկինք երկնից ասի։

Ապա ըստ այսմ ընտելական սովորութէն՝
չաւիշտակիլ մինչև չերբորդ երկնից, կամ
չեղբ երկինս՝ ըստ Ճառին իմանի վերա-
ռուին Հոգւոյ մինչև չաՀռոն այր, ՝ի
կցորդութէ հրեշտակաց, ուր Հոգիք
արդարոցն կատարելոց Տանդչէին առ
ած։ Այլ Թէ որոց ծանօԹութէ ած ու
Թեանն տեղիկացաւ անտանօր, քննել
Թողումք՝ ի չորրորդ մասն։

Յառաջիկայս այն լեցի մեզ քննելիս մէ-
ծաւ

ծաւ հիացմամբ, թէ զնարդ ածայինս պողոս արժանացեալ այնպիսի գերօրէն նակ բարձրանալ ոչ թողու ի բաց զնոր ցանկալի նուաստութեին · զոր և Տամա ձայն ասկէ բերանին՝ մանրամասն նկա տէ երանելին ամբողջապատ։ Քանզի Տարկ գոլով նմա յուշ ածել զմեծամեծսն ոյ յինքն ներգործել, սուեղծանէ՝ ոմն բա նիս կարդ է ասել, զայլ միւս ոմն զատ յիւրմէ · զոր ինչ նոքա է, բարձրացուցա նէ · և զոր իւրն է՝ նուաստացուցանէ։ Գիտեմ ասէ՝ զի այնպիսի այր Տաճախա ցեալ քոյ, չորեքտասան ամեայ յատաջ յափշտակեցաւ յերրորդ երկինս · և անդէն վաղվաղակի զնոր անդիտութեին խոտանութեան մինձամեծ և երկիցս · եթէ մարմնով, ոչ գիտեմ · և եթէ առանց մարմնոյ, ոչ գիտեմ · առաւել պարծե լով չէ այս անդիտութեի, քան ընդ այն գիտութեի, ասէ ամբրանիս · զի զայդ Տնորհն միայն Տաւանէսցէ · և խոստո վանեացի զայն որ սիրոյն է, ուրանա լով զայն՝ որ գիտելոյն է։ Ջայն այր ցուցանէ ծանօթ մեծամեծ խորհրդոցն երկնից, իսկ զինքն անգէտ փոքուն արե մէ՝ եթէ մարմնով արդեօք, կի առանց մարմնոյ · որով և կողմնակի ակնարկէ, եթէ արդարև արժանացաւ ինքն բարձ բացուանից տեսութեին, բայց զնորքս զայս ոչ կարաց գիտել · և թէպէտ Տարկ էրացն ոչ պահանջէր ասել զայս, ասէ, կայն Տարկ խոնարհումն իւրոյ ետ կրկին ասել · Եւ միով բանիւ, ձևացաւ լոկ վկայ եղելոցն՝ քան անձամբ տեսօղ և վայելօղ։ Ջայն չափաւորութեի պահէ և ի յայտնութիւն ։

3· Ա՛ր գիտէ զդնդիսի այր · եթէ Տարբ Նուվ, և եթէ առանց մարմնոյ՝ ալ գիտ ե՛ս, աՀ գիտե ։

Ջնոյն բանս նուիրն օրինակաւ երկրորդ զէ, մտադիւր խոստովանելով զոր ոչն գիտէր, ոչ զի արժանաՀաւատ լինիցի յայնս՝ զոր ասէ գիտել։ Ուր ասէն գնդիսի այր, նշանակէ՝ զայր մի ի ե՛ս, զոր ասաց յանցելումն ։

4· Ո՛ յ յափշտակեցաւ ի դրախտ, և լը սաւ բանս անճառս, զոր ո՛չ է պարտ մարդոյ խօսել։

Դրախտ առաքինոր իմացան ոմանք ի նախնեաց զերկրաւորն, կամ զեդեմա կանն, ըստ որում Տամարեցաւ եպիփան ի թէՀէմ առ յովՀաննէս Տայրապետ եՀէմ · և եղիկ նոյնպէս կարծէ ի գլխ Տ։ Սակայն այն կարծիք՝ որ Տամարեր Հեն դրախտն եդեմական միայ անեղծ զբաղում դարս նաև զկնի ջրՀեղեղին, վաղու և խափանեցաւ, վա ոչ ունէ լոյ և ոչ մի ինչ Տիմն Տատատուն ի նը դրոց, և յարժանաՀաւատս աւանդու Հեի · և զի յայդ պահպանուհեի Տարկ էր գնել՝ Հեի Տանապազորդ աբանելիս բազումս առնել ևս · զոր չէ արժան ասել առանց իրաւացի պատճառաց ։

Ա՛յլ քանզի գրեթէ նշանակէ զտեղի ան տատախտ և զուարճալի արարեալ ի զբօսանս մարդկան, սովորեցեր եղև դրոց՝ և ի խաս իսկ նմանութ դրախտ կոչել զնմ վայր զուարճալի · ոյ և վե իշխանին սերոսի ասէ եղեկիէլ · (իԷ· 13·) * Ի դրախտս դրախտին ոյ եղեր ։ Նմանին նմանութ ասացաւ առ աթա կողմանս աւազանին · (զուկ· իզ· 43·) * Ա՛յսօր Ես իմս ի դրախտին ։ Եւ յայտն· ի· 7· * Տաց նմա ուտել ի փայ ոէն կենաց, որ է ի միջ դրախտին ոյ։ Վա որով յայտ վայրն և գրեթէ իմա նի՝ տեղի Տոգևորական և ՀաՀական ըն մայլմանց, անդորրական և անախտ · որում օրինակ էր եդեմականն ։ Ա՛նդր յափշտակել, լուծ ասէ բան անճառս։ Լսել ոչ մարմնական իմանի՝ արտաքին ականջօք · զի բան այդմ դիտացեալ էր արդեօք՝ Թէ մարմնով յափշտակեցաւ անդր · այլ նշանակի՝ իմանալի լսելուն միտք կամ Տոգւով · այ յատակ և բացա յայտ Տանապարհս, որ ի միտս կոչի ոե սութեի և լսելութեի։ Բան մարթի է իմա նալ Թէ զնմանալի խօսս, և Թէ զնրն յայտնել խօսիք · և զայն՝ անճառ ասէ, երբ զի կամ պարզապար անճառելի էր բանիւ առ մարդիկ, և կի ոչ պատշաճ էր զնոսին և ամենեցուն յայտնել ։

Ա՛յժմ բացատրութեի է յայտնդրն · զոր ոչ է պարտ մարդոյ խօսել։ Ցերկուս եղաք նակս առեալ է ոչ պարտն · մի՝ երբեմն չկարելի առ ի խօսել · և միւս՝ ոչ պատշաճ չէ, ոչ օրէն · Նոյնպէս բանն մարդոյ՝ երկդիմի է առ ի կապելոյ չէ պարտն, ոյ ոչ կարելի կի պատշաճ մարդոյ՝ զի խօսեցի · և կի չէ խօսէն · ոյ · ոչ կարելի կամ

կի պատշաճ խօսել առ մարդիկ : Ջայս ամ եղանակ յայտ առնեն վրիպեաք , և յարմարին ըստ իւրաքանչիւր մեկ նուիրեան անձառ բանիցն , զոր ասաց Նախ :

Եթէ սոքօք իմանամք զգաղտնի խորհուրդս ածուածին , արդարև ոչ պտղը սի կարելի էր պարզաբար խօսել , և ոչ առ այլ մարդ հնար էր բացայայտել · վասն զի ՚ի վեր գոլով քան զհասանելին մասց , ՚ի վեր են և քան զբանս · ուստի իմաստքն են : Լուծելքն անտանօթ ՚ի դրախտին՝ այնքան են և այնպիսիք , զի չէ հնար մարդկային բանիւք բացայայտել , կամ այլոց իմանալ · մեծութի իրացն անցանէ քան զընդունակութիւն խօսից : Զայս միտս առնուն բազումք զառաջնոցն , որ և Եղիսէ զՏ· առ · քան զի անպատում է , և ՚ի վեր քան զմիտս և զնչոզս մարդկան , թէպէտև տեսի , չկարեմ պատմել · թէպէտ և լռէայ , չեմ բաւական ճառել : Նոյնպէս և Նաբղկա ցին · (մկն· երգ· 102·) Եթէ չկարէ բնբռել մարմնեղէնն ընդհանրական զհարչտութիւն ·

Իսկ եթէ անձառ բանիւք իմանամք զայլ խորհուրդս հաւատոյ , զդերանոնց ճանաչումն գերբնական ճշմարտութեանց , զգիտուն իրացն՝ որք ՏԿին ՚ի ներկայ և յապագայ վճռակ եկեղեցւոյ , և զայլս այսպիսիս , ըստ այսմ ոչ պարտն նշանակէ առաւել՝ ոչ պատշաճ և օրէն խօսել զնոսին , կամ ամենեցուն հրատարակել · վասն զի գաղտնութիւն իրացն ինքնին պահանջէ զդուռն լեզուի · և ոչ ամենեքին լսողք բաւական են իմանալ , և ուղիղ ՚ի վերայ կալ ասացելոցն · մանաւանդ և ՁԱսածին իսկ բազում , և ոչ անկ էր ամենեցուն գիտել զոչ պատշաճն ինքեանց · այլև զի նմին իսկ առաքելոյ զդուշացեալ էր՝ չպատմել զնմա մեծ յայտնութեան , զի մի վատնգ ինչ փառասիրութեամբ ինքեան լինիցի : Սակս այսպիսի պատճառաց նա ինքն քա՛ ոչ գնամ ինչ յայտներ աշակերտացն · բազում ինչ յայտներ պատրաստական և ՁՄանանեայ · և ՚ի վերջին ընթերցին արձակաբար իսկ ասաց · * Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ , այլ ոչ կարէք հանդուրժել այժմիկ : ‖ (Յովհ· ժԶ· 12·) Եւ ՚ի հարցանել նմ՝ յետ յարու թենն զժամանակ փառաւոր գալստեան նո՛ , եւս պատասխանի · * Ո՛չ ե՛ ձեզ գիտել զժամս և զժամանակս : ‖ (Գործ· ա· 7·)

Ապա ըՁ այսոցիկ առեալ զՏնաբանս՝ խնամոքն են : Ընկալել ծանօթութիւնքն թէ և ճառելիք էին մասամբ ինչ , սակայն ոչ պատշաճ է , և ոչ ընդունել խօսել զայնս առ ձեզ այժմ , կամ առ այլս ամենեսին · ոչ ամենեցուն , և ոչ վաղվաղակի արժան է յայտնել · ոչ կարևոր է , և ոչ օգտակար ՚ի փրկութի՝ պատմել զայնս ում և իցէ մարդոյ : Զայս միտս առ ըՁունակութի լսողացն առնու մեծն դրիգոր զոչ պատուն. (՚ի գիրս բարոյականաց · դիրք ԺԷ · գլ · լա·) Եւ յառաջ քՁնա ամբրոսիոս (ՍՏԿն· սնդմ · լՂ· ·) ըՁարձակ և հասուստ · * Չիարդ ոչ պարտ ասել՝ մարդ զոյ խօսել , եթէ մարդոյ արժան եղև լսել : Ո՛չ նմա որ լուաւն՝ անպատեհ է խօսել , այլ այնոց լսողաց , որոց պակաս տեղի , ժամանակ , և արժանաւորութի · յերկինս լուաւ , վասն այն ոչ արժան յերկրի խօսել · որովհետև զոյ և յերկրի այդ խոր , զի երգՀէն ՚ի միում գաւառի՝ ոչ երգի յայլումն , ըՁ սաղմ · ՃՂՀ· 4· Չիարդ օրՀնեացուք զօրհնութիւնս ՏՆ յերկիր օտար : Հրեայք ոչ երգէին յերկրի գերութե , զոր սովորել էին ՚ի հայրենի երկրին : Ապա գերութե է , և այն ազատութե · ուստի այդոս այժմ յերկինս քարոզել զայն՝ զոր նախ յերկրի չկարէր քարոզել · ու առ կատարեալն արժան է խօսել զնոր-

Հուրդս խնամոցութե : ‖

Զայսմ տեղոյ ցուցանէ օգոստինոս (մկն · յովՀ· ճՃ· · ղՂ· ·) այլև թեոփիլ լակտոս և ովկումենիոս զսուտ գրոցն , որ մակագրեալ էր Զ՝ոհաննէի զոչոխ · վասն զի զոր ոչն էր պարտ խօսել , զայն և գրէր իսկ ոչ :

Ապա ասիցէ ոք · ԸՀր ապա յայտնացան նմա անձառ բանքն , մինչ ոչ էր մարթի կի պատշաճ խօսել զնոյնս առ այլ մարդ : Պատասխանեմք , զոչոսի իբրև մտերիմ սիրելոյ , իբրև հաւատարիմ պաշտօնէի և ըՁհանուր քարոզչի , այլև իբրև բազմաց վշտացելոյ վասն քնի՝ անկ էր գիտել զբազում գաղտնիս Զ՝ , Թէև չկարէր զնոսին , և ամենեցուն հրա-

հրաժարակել։ Ըստ այնմ բարեկամ թագաւորի զրաւեալ ծածուկս ներսէհեան լսէ՝ ինձանէ՝ առանց կարօղ լինելոյ խօսել առ ծառայսն · զոր և ասէր առ աշակերտսն , Թէ ձեզ իբրև բարեկամաց ծանուցի զնմ լուծլեան ի հօրէ իմմէ ։ (յով. ժե · 15։) Եթէ վաղ դապետի մարդկային դիտուց ի դէպ է մակագուծ լինել ամ մասանց դիտութեան , Թէև ոչ զնմն ի լսելիս աշակերտսդ տայ հեղուցու , որչափ և այնչափ կան վարդապետի աւետարանին արժան էր տեղեակ լինել ձեռային Ճշմարտութեանց առ ի կարելոյ անմոլորապես ուսուցանել զպիտանիսն ըստ տանելոյ նորահաւատ մարդկանն ։ Եւ որ անդադար ի վիշտս և ի հալածանս զին, ոՀորեալ էր քան , կարօտ էր երկնային Ճաշակաց առ ի սփոփումն գտանելոյ ի վաստակս իւրում ։

Սակայն ոչ արժան իսկ է կարծել , Թէ առաքեալն լուեաց զլխովին զնմ բանսն ընկալեալս ի յաչխատութենէ իւրում · մանաւանդ հաւանելի է՝ Թէ ըմ մասին և անկատարապէս ինչ ինչ յայնցանէ ելեղող զրոյեալ ի Թուղթս իւր , Թէ պէտ և ոչ այնչափ պայծառ ծանօթութիբ , որչափ ինքն իմացեալ էր և իմմ նայր։ Յաղագս գաւազն հրեշտակաց զորոց անուանս յիշատակէ առ կողոսացիս , (ա · 16 ·) համարի մեծն զրէ դոր (ի վր եղեկիէլի · դերք ա · գլ · ը ·) Թէ ծանեալ առաքեալն ի յաչխատակիլ իւրում յերրորդ երկինս. զոյն ասէ և Թէոդորետոս ։ Գաղտնածայն ծուկ ինդիրքն յաղագս ընտրութեան և կոչման հեթանոսաց , յղիցս սկզբնական մեղաց , յղիցս խորհրդոց նորոյ օրինացն՝ որ յառակս հնոյն ծածկեալ կային , յղիցս ծայրագոյն անտեսութեան բանին մարմնացելոյ , յղիցս հանդերձելոյ յարութեան և հաստուցմանց , այս ամ ասեմ , զորոց առ հոմմայեցիս , առ երթայեցիս , և առ այլ ևկէղեցիս վարդապետ , պահանջէն զլոյս իմն երկնային՝ պայծառագոյն քան զսովորական յայտնութենէ հաւատոյ ։

Ի բովանդակութենէ առաջիկայ մեկնութեանցս՝ մնայ ինդրել նախ , Թէ այն յայտնութիւնն՝ որ եղև առաքելոյն ի յաչխատակիլն յերրորդ երկինս , և որ ի դրախտն՝ իցէ՞ն արդեօք մի և նոյն , և Թէ այլևայլ ։ Երկրորդ , որից ծանօթութենէ տեղեկացաւ յայնմ յաչխատակութենէ ։

Յաղագս առաջնոյն՝ ոմանք ի հարցն անորոշաբար վարին ասելով , Թէ յերկրին երկինս յաչխատակեցաւ , և ի դրախտն ածաւ , առանց բացատրելոյ նմին իցն արդեօք , և ի նմին ժամանակի , Թէ այլևայլ ։ (Ամբրոսիոս · դերք է · յոհ · հաւատոյ · գլ · ժէ։ Աթանաս. ջաւադով · յղիցս վախստեան խրոյ · հմր · 20։ Բարսեղ · ճռ. յղիցս մխիթարութենէ ի վիշտս ։)

Օգոստինոս երկբայութենէ խօսի , բայց առաւել յօժարի նոյն համարել զերկրորդն ասելով · ոչ համաձայ հաստատեմ արդեօք յերրորդ երկինս իցէ դրախտն, Թէ նախ յերրորդ երկինս , և անտի ի դրախտն ։ Այն դրախտ կամ յերկինս , և կամ այլուրեք՝ յոր զկնի յաչխատակեցաւ · Թէ ոչ՝ նոյն մի ինչ այլևայլ անուամբք կոչեցեալ , ուր են հոդիք երանելեացն ։ (ի վր ծննդ · ըե դրոյն · գերք ժբ · հմր 65 · 66 · 97 ։) Ասկեբերան ի կարգի մեկնութենս (ճռ. իվ ·) միանգամայն դնելով զսուսանն 2, 3 , 4 , 5 , ի վր ածէ՝ Թէ առաքեալն բազումս ունելով յայտնութիւս , ասաց զնի ի բաղմոց դնէ · գերք Թէ ի դրախտին էր՝ և Թէ յերրորդ երկինս · բայց զնոյնսին ոչ յայտնի վիճաց ևն ։ Այս բանք նորա ցուցանեն՝ մի և նոյն համարել , Թէպէտ եւ սխալ ոմանք ասեն , Թէ մի կոչէ զերկինս՝ ոչ իբրև նոյնս , այլ միաւորելով , ոՀ Թէ նախ յերրորդ երկինս յաչխատակեալ , և անտի ի դրախտն ։ Եւ արդարև նա ինքն ասկեբերան խօսելով ի Ճառ. ի · առ. Հոգովարդն անտիոքայ , յետ ասելոյն՝ յերրորդ երկինս յաչխատակեալ , և ի դրախտն առեալ , բաղմաւորական ձայնիւ ի վր ածէ , զի մի մեծուբ այսոցիկ յայտնութենէց չպարտանայցէ , տաւաւ նմա խոյլ մարմնոյ։ Աթանէնացին , լերանաս , կայետանոս և այլք ի յետնոց առաւել ընտրեցին նոյն համարել զերկոսին՝ այլևայլ անուամբ ծանուցեալ · իբր զի երկինս կոչել ըստ իմացական զորութենէն՝ որով յաչխատակեցաւ ի Ճանաչել զհորհուրդ

դրա բարձրագոյնս , և զնոյն դրախտ՝ ըստ բաղձողականին ՚ի Ճաշակել զանհամեմատ քաղցրութենին · զի երեխա փափկանալ և բերկրանաց է նշանակիչ · ՚ի սոյն կարծիս հակամիտեալ եւսեբիոսի , ցուցանէ այսոքիւք պատճառաբանելով · Նախ՝ զի վճռ յարիշտակունէն ՚ի դրախտն զժամանակ ինչ ոչ նշանակէ առաքելն , ոչ վճռ առաջնոյն ասաց՝ եղեալ յառաջքան զերրեքտասան ամ : Երկրորդ , ըստ հակառակն՝ անդ ոչ յիշեաց զինչ լուաւ կամ եառս յերրորդ երկինս : Ապա յայտ է՝ թէ Թողու ամբողջանալ միոյն ՚ի միւս մասնէն , ցուցանելով թէ երկոքեան ՚ի նմին ժամանակի եղեն , և զնոյնս ծանեալ · որով և մի յայտնութեան բացակատարի : Վճռ զկապակցութեան բանիցն այսոցիկ յարմարէ եւսեբիոս· Գիտեմ զայր մի ՚ի քրիստոս ըստ ամ յարիշտակէ մինչ յերրորդ երկինս , զիտեմ ասեմ՝ զայնպիսի այր յարիշտակէ ՚ի դրախտն , ուր լուաւ բանս անճառս նէ :

Սակայն այլոց վարդապետաց առաւել հաւանելի թուի՝ զանազան յայտնութիւնս ասել : Ամբրոսեան և պեղագեան մեկնիչք զատանէն զերկոսին : Բայց ՚ի բանէ ոսկեբերանին՝ զոր վերագոյն յիշեցաք , նա ինքն մեծն գրիգոր՝ ուրեք ուրեք անորոշաբար յիշելով , (՚ի գիրս բարոյ · գլուխ ը · գլ · իե · և գիրք ժէ · գլ · լա ·) ապա յայտնապէս զատանի ասելով · Յերրորդ երկինս յարիշտակեալ , և դարձեալ ՚ի դրախտն յարիշտակեալ · (Անդ · գիրք ժը · գլ · ի ·) և յեղանակ բանիցն ցուցանէ՝ համանալ զյարիշտակումն յերկինս ՚ի տես քան առ Ճանապարհին դամասկեայ :

Այս կարծիք հաստատագոյն մեզ թուի , մանր համարելով ՚ի բուն բանս առաքելոյն : Նախ՝ զի ոչ վճռ յարիշտակուելն յերրորդ երկինս բացայայտեալ թէ առնէ , մարմնով արդեօք էրև , թէ առանց մարմնոյ՝ ես ոչ գիտեմ , ոչ գիտէ , նովին օրինակաւ զնոյնս ասել նմին կրկնէ վճռ յարիշտակութենէն ՚ի դրախտն : Եւ եթէ մի և նոյն յայտնութիւն էր , վայրապար լինէր գլուխն այս կրկնութեան : Երկրորդ , ոչ ՚ի դէպ գայր դարձեալ զնոյն զմի եղանակ յայտնութիւն փոփոխեալ անուամբք երկին և դրախտի պատմագրեալ ՚ի միում վայրի , որ զանայսոյսութիւն ծանուցանէր առ ընթերցօղս : Երրորդ , ՚ի սկզբանն բազմատրական խոստմամբ ասաց՝ գալ ՚ի գեհենս և յարուցանել · և անհամանելի թուի՝ թէ յանկնդրութիւն շարժելով զփափաքուածն ընթերցողաց , միով և եւեթ յայտնութիւնբ կնքեցէ զբանն · այլ զոր նէ երկոքեանբ պնդոյ էր հաստատել զատագրելն երբև երկու վկայիւք :

Այսոցիկ պատճառաց որք զրախանք են և ՚ի բուն կարէ բանիցն առնելք , անփոյթ արարել եւսեբիոս , զվերջինն եւեթ համարի դիւրաւ լուծանել , թէ բազմաբաթ ասի յայտնութիւնք , վճռ բազմութիւն յայտնել խորհրդոյն : Սակայն այդպիսի լուծմամբ և ոչ ըստ ինքն մնայ բանի եւսեբիոս · վճռ զի փոքր մի յառաջ պնդէր՝ թէ մի տեսութիւն են երկոքեին վճռ լինելոյն ՚ի նմին ժամանակի , և առնոյն տեսել իրս · և զիարդ ապա նոյն տեսեալ իրքն փոխին զնոյն մի տեսութիւն ՚ի բազում յայտնութիւնս : Եւ դարձեալ , նա ինքն ստորև ոչ հաւանի ասել՝ թէ յայնմ յարիշտակութէ տեսեալ իցէ առաքելոյն զէութիւն այ , և առ այս պատճառ առնու զբազմատրական ասելն էանս անճառս · իսկ էութիւն այ միև պարզ է՝ ասէ : Իսկ արդ՝ եթէ անճայնն էութենն որ անբաւ դիտելեաց է բովանդակիչ , չմարթի ասել բազմաբար անճառ բանս , առ իմ՞ արդեօք բազում յայտնել իրք կարիցին բազմացուցանել զմի յայտնութիւնն : Այլ սակայն ուղղակի հերքելով զևւեծուծիդ , ոչ ուշադիր եղև եւսեբիոս , թէ միութիւնն կամ ներքոյ բազմութենէն ոչ ՚ի նիւթական թուոյ առարկայիցն կշռելի է , այլ ՚ի ժամանակէն · ապաքէն սովորաբար միով հայեցմամբ աչօք բազում զանազան առարկայս տեսանեմք · և սակայն տեսութիւն միասանեմք · Եւ սակայն զնոյն զմի առարկայ յայլևայլ ժամանակ տեսեալ , բազում տեսութիւն ասի՝ և ոչ մի : Ջի բանն փարատի՝ որ և յայտնութիւն ինչ էր , ասեն զերբ երկու լինել · վճռ զիւտ առաջնոյն զարթուցեալ , միւսանգամ եմուտ ՚ի քուն , և եառս զերկրորդն · ընդ հասուցեալ ժամանակի քնոյն՝ երկու

արար զերազան : Ապա եթէ ի բազ-
մուէ տեսիլ իրացն արժան էր Թումէլ ,
յերեսաքանչիւր նուագի պատերասել ,
չորեքտասան երազս· վա՛ղ ի ելեվին ելեվին
Թումով ելին Տասկըն , և երինգըն :
Իսկ այն պատճառ՝ որով մի յայտնու-
Թիւն լինել ցուցանէ եստիոս , են լոկ
բացատականք՝ անդրօք ի հետեւեցու-
ցանել իբր զի ասէ յառաջնումն ոչ գնէ
առաքեալն Թէ զինչ ետես , և ոչ յեր
կրորդումն՝ Թէ երբ ետես : Լռելն զայդ-
պիսի հանդամանս կարէ զայլ բազում
պատճառս ունել այլ յեղելոցն արժան
է ինդրել զդիտաւորութէն առաքելոյն·
ապա Թէ ոչ՝ ոչ զժամանակ յայտնու-
Թինն լռեաց յերկրորդումն , նոյնպես ոչ
պիտոյ էր զվիւն կրկնել , մարմնով ար-
դեօք յափշտակեցաւ , Թէ առանց մարմ-
նոյ : Այլ ասեմք , Թէ լռեաց ասա
ժամանակին , Թերևս զի ոչ յիշէր որ-
շաբար՝ երբ եղեալ էր · իսկ յառաջ-
նումն զանց արար գնել զտեսեալն և
զլուծեալս , վա՛ղ զի անուն երրորդ երկ-
նից ինքնին յայտ առնէր զարձրալոյն
և զնձայնին իրաց տեղեկութէն : Բայց
գրեթէ անուն երկդիմի գոլով՝ ի նշա-
նակել զանարձանի վայր փափկութէից՝
կամ հոգեկանաց , կի մարմնականաց ,
պատշաճ Տամարեցաւ յաբեղալ զան-
Տառ բանիցն լսելութէի , ոմն զի չիմա-
նալիս անդր Ձգեսցէ զմիտս ընթերցո-
ղաց :

Մատիցո՛ւք յերկդ խնդիրն , Թէ զինչ
Տանեցմութէիք պարգևեցան առաքելոյն
ի յափշտակել նո՛ր յերրորդ երկինս , և
ի դրախտն : Նախ ք զտեսութէի խրն-
դրոյն՝ զորոշումն անուանցն արժան է
Տայցել զերրորդ երկնից, և զդրախտին :
Ասացաք ի սկզբան բնաբանիս՝ Թէ
գրեալ ոչ իմանի երկրաւոր կի եղեմա-
կանն , այլ տեղի հոգևոր զոմարձու-
Թեց · զոր վարդապետք սովորաբար
ուրոյն յերրորդ երկնից յիշեն՝ իբրև
այլ տեղի յայնմանէ · ոմն ի նոսիայի-
շատակեալ բանս նո՛ր : Կրտիոս վկայէ՝
հրէական վարդապետաց այսպէս որո-
շել զերկոսին · իբր զի դրախտ ասեն
զտեղի Տանդստեան հոգւոցն արդարոց
զինի մահուն · իսկ երկինս՝ զտեղի փա-
ռաց նո՛ր յետ յարութէն : Մ՛եք չունիմք
ուսուեք Տաստատել , Թէ յայս միտս
արդեօք իմացաւ առաքեալս , և ոչ Տա-
ւանեցուցանել , Թէ այլևայլ տեղիք է-
ցեն · վա՛ղ զի նոյն մի տեղի կարէ այլև-
այլ անուանս Տանդիպել , երկինք՝ ասկս
բաձրութէնն և անմատչելին գոլով ի
մարդկանէ , և դրախտ՝ ասկս զուարճա-
Տալի վայելչութէնն որ ի նմա : Յայն ի
մի տեղի մարթի էր նմ վերառնուլ զառա-
քեալն յայլևայլ նուագս , և յայտնել
նմա զոր ինչ կամէրն :

Իսկ զանուն երրորդ երկնից ոմանք ի
վարդապետաց փոխաբերեցին ի նմա-
նական իմաստս : Ամբրոսիոս բարոյ-
ապէս նկատեալ , ի նոյն իսկ ի մարդն
զանազանէ երբեակ երկինս ըստ ախոր-
ժակացն , այ մարմնական , շնչաւոր , և
հոգեղէն : Եթէ յայս երրորդ երկինս
յափշտակիս ասէ՝ տեսանել զՏառա-
գայթ հոգևոր շնորՏացն , զի շնչա-
ւոր մարդ ոչ զիտէ զՏոգւոյն , այնպէս
յափշտակիս ասա ի դրախտն առանց
վտանգաց ախտից եւն : (Գիրք յղ ·
դրախտին · գլ · ժե · էմ · 53 :)

Ստեղն օգուտսինոս առաւել անօսրելով
զբանն , երեք երկնիւք այլաբանէ զե-
րիս տեսութէիս , կի Տանապհումնս · այ
զմարմնական՝ որով զգայիքս Տանապհեն,
զՏոգևորական՝ որով Տոգեղէն կամ
իմանալի իրք ըմբռնին, և զիմացական
որով ետծայինք իմանին : Եւ ահա ասէ
յայս տեսութէի վերառել եղև պօղոս ·
իսկ Թէ զինչ ետես , յետ ասկաւուց
տեսանելոյ զկարծիս նո՛ր : (Ի վիճնդ·
ըն գրոյն· գիրք ժբ · էմ · 59 · 67 :)
Ջսոյն իմաստս ըստձակելով ազուի-
նացւոյն (ի մեկ · ԹղԹայս ·) երկին
իմանայ զբարձրութէի մարդկային Տա-
նգման ի վեր քան զսովորականն . և
երեք՝ ըստ երբեակ Տանապհմանց , մարմնա-
կան , երևակայական , և իմացական :
Եթէ աչօք տեսանէ ինչ արտաքոյ բնա-
կան կարողութէն , ոմն բաղտասար ե-
տես զձեռն՝ որ գրէր յորմ տաՃարին ,
ասի յափշտակիլ յառաջին երկինն :
Յորժամ երևակայութէ՛ վերանայ Տա-
նգայել ինչ ոչ յառաջն մտածեալ , կի
յանձուսա միայն ցուցեալ , ոմն տեսիլ
կոչեցին եղեալ պետրոսի ի զարմաց-
մանն , ասի յափշտակիլ յերկրորդ եր-
կինն : Իսկ մտօք ըմբռնելով զիմանա-
լիս և զբնութէիս իրաց առանց զգալի
եղեալ

Երեսակայմանց, ասէ յաւիշտակիվ յերբ բորդ երկինս. և ահա այս շնորհեցաւ սքեայն պօղոսի։

Ա յլազգ և ա յարմարէ ազուիհնացին, երբեակ երկինս իմանալով զերիս հրեշտականական քահանայապետութիւնս. յորոց յերրորդին յաւիշտակեցաւ պօղոս՝ ըստնելով զանաղօտ ճանաչութիւն ետնու թենն. ոչ վերին քահանայապետութենն անըմիջապար յետնուէն անտի առնու զնուաւորութենն։

Ա յլ տակայն ոչ կանխեցաք ասացաք ի մէկնուէ 2 տանն, այսպիսի խնատոք օտարնան ի բնական մտաց գրոյն. և անյայտ էին ի տոլորուէ այնր ժամանակի կորնթացւոց։ Ա՛յ միալ արժան է յայնմ զոր յիշեցաք անդ, երէ երկինս ասել զՏրեղէնն, բնականարան կարդել հրեշտակաց և սքց. ըստ որում ոչ միայն այլ վերդպետք, այլ օգուտներս ինքնին և ազուիհնացին զայս համարին բնական նշանակութեի գրոյն։

Ապա տեսցո՛ք՝ թէ զինչ ինչ յայտնեցաւ սքեայն պօղոսի յայնմ երանաւէտ կայանի։ Ա՛ռնայն վերդապետք և մեկնիչք միաբանին ասել, թէ յայնմ բարձրագոյն տեղոյն բովանդակ խորհուրդք հաւատոյ պայծառագոյնս ծանուցանի առաքելոյն. ետնպէին կատարելութիք, սքեայ Երէութենն խորհուրդ, մարդեղութենն, վերկագործութիք, նահապետմանութիք շնորհաց և փառաց, և այլն ամ որ ի մեծուէ եր կնային հաւատոյմանցն հային, յաւէտագոյն ճանաչմամբ գոյացան նմա, քան զոր մարթ էր ճանաչել ի սովորական յայտնութիք հաւատոց, կի երկարաժամանակեայ ուսմամբ։ Յաւելուն և՝ ետնուցեի նէ զգեղեցիկ կարգաւորութիք հրեշտակաց, և զփառս նց, զորս տեսուէ եկեղեցոյ, և զպէսպի անցս՝ որ հանդերձեալ էին անցանել ընդ նա. դուք նաև զփառս՝ որ պահեալ էին առաքելոյն ի պատկումն առաքելական վաստակոց նէ. թէպէտ զայն և՝ զոր ինչ միանգամ կամեցաւ հաղորդել նմա աննախանձ լոյսն ետնպին։ Յայսմ մտի չիք ընդիմութիք առ վարդապետս։

Բայց խնդիր է վերճաբանել, արդեօք վերճակեցաւ նմա դէմյանդիման տեսութիք ճանալել զէութենն սց անաղօտ, այնպէս որպէս խոստացեալ է արդարոցն կատարելոց։ Ա յսմ խնդրոյ նախագրեալ սքն օգուտներս՝ հաստատէ առաջել զստորագասական կողմն, թէ արդարեւ ցուցաւ առաքելոյն հաւատի ետնուքենն լուսով փառաց՝ և ոչ հաւատոյ։ Զայս ասացեալ ի վերն ծննդոց ըստ գրոյն. (գիրք ժբ. հմր 59. 65. 66. 67։) Ա յլև ի թէլեն ճսէ. գրէ առ պաւլինոս. հմր. 31. ուր ջանայ ցուցանել զնոյն կարծիս ի բանից ինչ սքեայ ամբրոսիոսի։ Եւ թէպէտ ոմանք համարին՝ թէ յայլ գրուածս իւր արարեալ զկնի. փոխեալ եցէ, կի ըստ երկբայութիք թողեալ զայն կարծիս, սակայ տեսանեմք զի հաւատարիմ հետևողն թողամս առաքինացի անշուշտ զնոյն կարծիս կալաւ. յամ գիրս իւր. և այն տրամածեցաւ ի դպրոցս ետնաբանից մինչև ի դարն ժբ։

Յետ այնր ետնաբանք և մեկնիչք ի մէջ առեալ երկուստեք զբանս առաջին վարդապետացդ, կարի երկբայելի ասացին զինդիրս, և յաւէտ ի բացատականն կոյս հաւանեցան. Վ՛ք զի հարքն որք ուսուցանեն՝ թէ ոչ ումեք ի մահկանացու կեանս շնորհել է պայծառ տեսութիք էութենն այ, յայնմի և արձակաբար խօսին. որպ ոսկեբերան, գրիգոր ետնաբան, կիւրեղ աղեքսանդրացի, ամբրոսիոս, մեծն գրիգոր. և այլք։ Իսկ որք նպաստաւորք երևին ստորագասական կողմանն, անորոշ ասեն՝ երբ այն որ զհաւատով ճանաչումն կարեն նշանակել, քան թէ զդէմյանդիման տեսութիք։ Մի յայնցանէ երանելին հերոնիմոս այսպէս խօսի ի մեկն. ամովսայ. (գիրք է. գլ. թ.) սքեայ պօղոս ի ստորագասոյդ յաւիշտակեալ ի բարձրագոյնն, հռոմէացի սքեայ և որդւոյն հասանէր առ հայր, և լսէր զբանս անճառս սքեայ երրորդութենն, զորս մարդկան լսել ոչ պատշաճ է։ Ձայնակից այսմ նարեկացին ասէ (ի մեկն. երդոց. եր. 155.) թէ զառաջին պատուական դիտութիք երրորդութենն ընկալաւ ի մերձենալն ի դամասկոս։ Եւ յառաջ քան զայս ասացեալ էր (եր. 101.) մարդկային բնութիք զատանդոյն ոչ կարէ տեսանել կի իմանալ որչափ յայմ ի կեանս է. յաղագս այսոիկ

սորիկ զպօղոս արտաքոյ մարմնոյն առեալ, յերրորդ երկինս տարել, անդ եցոյց զանճառելին ։ Ցայս առակս և զշարականին երգելն ։ * Որ զերազոյն քերովբէից վերամբարձել ՚ի յերրակի խոռանս երկնից ։ ։ ։ երրորդութեանն արժանաւորելով տեսչական աշխ պօղոս ։ ‖ Արդ՝ այսոքիկ և նման բանք ոչ հարկաւ ցուցանեն, թէ ըստ նախկին երևս նեալ հոգւոցն լեալ լոկ տեսութիւնն սէր երկրութեան, կամ այլոց անճառելեացն ոյք դէմ յանդիման ոչ էն յինքեան, կամ ըստ լեզուի դպրոցաց խօսելով, ՚ի բանն ասելն ։ այլ մարթ է իմանալ և ՚ի վերնամանն որ արտաքոյ բանին, տեսչական դիտութիւն, և զերազոյն լուսով հաւատոյ ։ Ասէ զի ոչ յերանական ճաշակման աստիճանք են յուրեք կամ երբեմն, նոյնպես ՚ի հաւատոյ ճանաչման դանազանաբար ըմբռնին խորհուրդքն յայտնեալք ։ և է բարձրագոյն եղանակ՝ զոր առաւել արժանաւորացն շնորհէ ասել ։

Եւ քան զի յայս խնդիր չէք բաջայայտ վկայութիւն յայլ տեղեաց գրոց, ոչ միայն բան աւանդութեան հարց, և ոչ հանապատ խորհուրդ կարծիք այլոց վարդապետաց, նման իբրև ասելոյն կամ առ երբ կաքանչիւր կողին տարաձայնացին, ոմն պնտավիոս և բերրէի, և կամ ՚ի բացայայտականն՝ քան ՚ի ստորատական կողին ճանրացան, և առաւել մեկնիչք առաջի բանիցս կոչեցեալ, եւ տարբեր այլք ։ Ապաքէն իբրև ասելոյն խնդիր յօժարիմ թողուլ զայս ՚ի ճառս ասելոց ։ բայց հարկ մեկնութեան պատճառի ընտրութեանն առնել հարապատ իմաստից ։ Ոչ զայն խնդրեմք, թէ իցէ արդեօք հնարաւոր՝ զի մարդ արդար ՚ի մահկանացու կենաս դառնալ, արժանասցի դէմ յանդիման վայելմանն այլ յառաջ ձեռն ինչ արատնութեան ։ վա զի յայսմ չիք դիմադրութիւն հայեցեալ ՚ի բացարձակ կարողութեան այլ ։ Եւ ոչ դարձեալ հնարաւորութեամբ ՚ի

որում հաւատք ի լսելոյ են. (հռոմ. Ժ. 17.) Եւ դարձեալ, ոչ ասէր բազմաբան բանս անշառս, այլ միաւորական. վա՛ղ ղի էուն ձեռային մի պարզ բան է:

Անզօր են և այս պատճառք: Առաքինին, զի ի լմնաւոր ներդործութեիս և առ հոգեղէն Հանապետիս՝ նոյն է տեսանել և լսել. միաքն միամիտ ընդ զուտզի աչաց և ականջաց. և իքն ծանուցեալք օրինակին ի լոյս և ի ձայն. ուստի և առ միմեանս ասին երկոքեան. ըստ այնմ (յայտն. ա. 12.) * Եւ դարձայ տեսանել զձայնն՝ որ խօսէր ընդ իս: ‖ Եւս առաւել առ ձեռ Հշմարտել է այս, որ գերազանցութ ամէն է, ամէն լուր է, ամէն բան է: Զինչ այլ պայծառագոյն և ամենահայեցաց քան զՀանապետն՝ որում ինքն ձեռ մերկապարանոց գիտէ զնմա. և սակայն ոչ միայն ի տեսողութեի, այլև ի լսելութ այլաբանի ի գրոց. որպա և յիշէս հոգւոյն սկզբ ասաց ցերն (յովհ. Ժէ. 13.) * Ջոր լսէ ցե, խօսիցի: ‖ Ապա եթէ անօսրել և ևս կամիցիմք, զդէմյանդիման Հանապետն ցոյ կոչեմ տեսողութ սակս պայծառութեն, բայց է և լսելութէն վա՛ռ յիցոյ յայտնութէնն գերբնական լուսով և ոչ բնականաւ: Թող զայն՝ զի ի լսելոյ ասել զՀապետն՝ իմանի ըստ սկսմանն, ի քարոզութէ այլոց ուսանելով զՀապետն. բայց ներքին Հապետութէ Հապետոց ի տեսութէ առակեալ է բազում ուրեք. ըստ այնմ (երբայ. Ժ. 13.) * Ըստ Հապետոց մեռան ամենեքին սոքա, և չեն ընկալեալ զաւետխոսն, այլ ի հեռուստ տեսին զնա, և ցնծացան: ‖

Երկիր պատճառն ոչինչ ըՀատ անզօր է. վա՛ղ ի միում ամենապարզ էութէն ոչ անբաւ են գիտելիք, թող թէ բազմք. ուստի թէև զայն միայն յայտնապէս տեսել էր առաքելոյն, կարօղ էր առանց առաւելսխոսութէ ասել բազմագոյն բանս լուել: Թող զի բաց ի դէմյանդիման տեսութէն՝ ունէր Հաւանել և զայլ ինչ բազում յաղագս ոչ և արարածոց հետել գիտութէ: Ապա յայտ եղև՝ թէ չկայ ինչ ի բանս առաքելոյն, որ անՀաւանելի ցուցանիցէ զնծային երանական տեսութէնն:

Բեր քննեցուք և զերկիրն, թէ կայցէ ինչ այնպիսի՝ որ զայն Հաստատիցէ: Երիս ինչ միայն ընթեռնումք, ըստ յաղաւէլ, երբորդ երկիր, կի՛ երեխ, և բանս անշառս: և ահա ոչ մի յայտգանէ տիրապես ի ներքս փակէ զդէմյանդիման տեսութէնն: Յափշտակելն ցուցանէ միայն զվերատումն հոգւոյն ի Հանապետութէն ինչ արտաքոյ բնական կարգութէնն. բայց ոչ տաՀմանէ՝ թէ յորոց և յորպիսի Հանապետութէն. ուստի և մաքադարձական յայտնութէնց և տեսլեանց մերօրինակ պատշաճի: Երբորդ երկիր և երեխ բնացաք տալաքէն զերկրէնն տե՛ղ հրեշտակաց և հոգւոց արդարոց, ուր յաւիտենական միանգամայն երկիցս: Ալ թէ զինչ անտանօր յայտնեցաւ նմա, տեղին ոչ է բաւական ի վկայել այսմ: Նոցին իսկ հրեշտակաց և հոգւոցն կատարելոց բազում ինչ յայտնին անտանօր արտաքոյ երանական տեսութէնն, թէ զնոյ՝ և թէ զայլոց իրաց: Իսկ անշառս ասել զբանսն յայտնեալս, տիրապէս պատշաճի նաև գործոցն այդ, և ամենիմաստ կարգացոյն՝ որով վարի ի բնական և ի գերբնական նախախնամութէն իւրում. տես զոր ի մեկնութէնն ասացաք: Ըստ այսմ վերագոյն (թ. 15.) զպարգևսն այդ կոչեաց անպտուղ. քանզի ըստ արեկացոյն, անբաւականդ կելոյն՝ և բարերարելն է անՀաւանելի:

(բան. խդ.)

Թերևս տարակուսանս ոք ընդէմ բերիցէ, զինչ պէտք էին՝ յերանելեացն օթևան վերանալուս կամ զպզոտս, եթէ ոչ եղոյց նմա զդէմս իւր պայծառ տեսութէ: Պատասխանեմք. վա՛ղ զի նաև յայտնութէ այլոց խորհրդոցն՝ այնու օրինակաւ՝ որով ցուցաւ ձեռայոյ առաքելոյս, ոչ էր սովորական՝ այլ սեպհական այնմ երանեալ գաւառի, իբրև Հաշակ ինն նախաղգացիկ՝ ամենահամ տեղանոյ արքայութէն: Եւ է իսկ այդ սովորութէն, ի բարձրադոյն յայտնութէնս՝ առնել և տեղւոյ ընտրութէն. որպէս ի Հինսն յանապատ Հաներ, և ի լերինս՝ ի սինա, և ի քորէբ առ ի մալ մարգարէիցն զերբաքանչիւր յայտնութէնսն: Եւ ինորս նմանաբար ի թաբորականն յօրինակ երկինց՝ արտափայլեաց քո զփառս մարմնոյն. և սիրելին յով-

յովհաննէս՝ ի հրաշալի տեսիլս Իւրոյ էութ յերկինս շրջիլ, քան յերկրի ։ Յայտ և՝ ի ներհակէն է, զի հրեշտակք մեր պահապանք յերկրի գոլով առ մեզ, ասին յերկինս տեսանել զերեսս Յօր. (մատթ. ԺԸ. 10.) իբրզի այնմ երանել զի տեսանէին՝ յատուկ տեսարան երկնից են ։

Ա յսքան յանեցաք ի քննուել բնաբան նիցս՝ ոչ ի յօժարուէ, այլ զի ծածկել մեր առաքեալս զիւր յայտնուխն կալ ըմ անյայտաբար պատմեաց ։

5· Ա ՚ան այնպէսոյն պարծէցայց · այլ զնային ինչ ու պարծէցայց, ԷՅՅ ԻՒՐ ՚ի փշարուխս ։

Ահա վա՛ տյնպիսի մարդոյ՝ զոր ես զի տեմ ասէ՝ արժանացել երկնաւոր յայտնութեաց, պարծէցայց, արժան է՝ և կալ բոզ էի պարծել, զնո՛ վտեմական առաքելութիւս և զնշանագործուխս հոչակ կելով։ Եթէ այլ ոք է՝ որ յաւիշտակեցուսն, քեզ ընդ է պարծել, հարցանէ ասկէբերան · ապա ուրեմն զու ինքն ես յաւիշտակեալն ։ Պատասխանէ պօղոս · այլ վա՛ նմին ինչ ու պարծէցայց · զինէն կի յիմ դէմս ոչ իւ՛ըք բնաւ պարծել կալ միմ, ոչ՝ ի միտ ինչ՝ և ոչ՝ ի փոքր · բայց եթէ չարի իրացն պահանջիցէ, ՚ի տ՚ւ ըստ՚ն, ՚ի վերչսս, ՚ի տառապանս իմ կամիմ պարծել · ուր յորմն, և ըմ նմա լսարինն և արաքացին ներդործուխք դնեն՝ չ՚ · զոր միոր և ասորին զօրուխք իմանան ։ Տ՚ւօրն՚ն սնոմանի զվիշտսն զնեքքին և զարտաքին · վա՛ զի ՃՆշէն զմարդ, և յայտնեն զնո՛ բնաւոր անկատուխն · նոյնպա՛ս առ այլս զկրօնն եր և եւցուցանեն անզօր և արհամարհ · է՛ զի և զբարուց տկարուխ յերևան ածէն՝ անհամբերուխք, տրտնջմամբ, և անդէպ տխրուխք ։

Ա՛զդ յայտնսկի ասէ՝ բնաբեմ պարծել, և ոչ յայլ մեծագործուխս, կմ յաձնս տեսուխս · վա՛ զի առքա՛ տկարուխքս ոչ բերեն յիս շարժուխն անափառուխ, այլ Թողուն՝ ի ցածուն Ճանապհսն անձնս · և զայլադկոտս իմ ոչ այնչափ՝ ի նախանձ զրգռեն · իսկ բարեմտացն առաւելապէս օգտեն, Համեմատելով զիմ վշտակրուխս ընդ այնմ, զոր Հակառակորդք իմ առնեն կամ կրեն ։ տես և Ժե. 30 ։

Ոչ բազում անգամ ասացաք, այլոյ և այլոյ անձին կերպարանս ձևացուցանէ յայտնսկի բանս ։ Մեծամեծ յայտնուխք, և մեծամեծ վշտակրուխք՝ ևն Հանդամանք կարի տարաղոյզ առ միմեանս, մինչ զի զանազանից դիմաց են ցուցանկան ։ Եւ զի առաքեալս ոչ այլով սահմանաւ Ճանապէ զնոքս, բայց այսու՝ * Պօղոս՝ նախ Հալածօղ, և ապա Հալածեալ վա՛ քոյ, ‖ նմին իրի՝ ի փոխաւորս և՝ ի պանծալի իրս երևիլ այլ ումն զատուցեալ լիւրմ · ոչ տւրանայ՝ թէ չէմ ես այն · բայց և Հատատակ ոչ թէ նոյն եմ։ Ա՛յս է ամենաորշեալ Հնարս Հաղթել նո՛ և ոչ բանիս՝ ի դէպ է կարծել, մի յանձառ ուսմանց անոթ՝ զոր լսեալ յերկնաձեմ դպրանոցին ։

6· (ի էրէ և ՚ս՚ղէմ պարծել, ո՛ չէիցէ ՚ անչմա՛ · ՚ամէն զարթօն ասէմ · այլ անհայեմ գ՚ոցէ ոչ համարիցի ինչ ասել ի ՚ամ զոր պ՚ւսուիցէ ինչ, ՚մ լսէիցէ ինչ նէն ։

Թէպէտև կամիցիմ և պարծել զինէն յայն իրս՝ որք արդոյք են առ ՚ած, և շքեղ առ մարդիկ, Թէպայս և կամիցիմ դէմս պատուել զմեծամեծ յայտնուխքս և տեսիլս, ո՛ չ եղէց անչմա՛ · ոչ լինիմ մեծաբանող, ոչ ընդվայրաբան, ոչ ստուսց · ոչ ոք կարէր զնս անմտուխ դատաստանաւ պարտաւորել, Թէ և առ երեսս անմտանալ Թուխի ոմանց ։ Եւ ըէր · ՚ամէն զարթօն ասէմ · ըս յաւնին, զշշմարտուխն ։ Ջայն որ Ճշմարիտն է և ստոյգ՝ ասէմ զանձնէս · Ճշմարիտս ոչ միայն ըս արդեանց զործոյն, այլ և ըս իրաւացի պատճառին · զարդարն խոսիմ, և արդարուխք խօսիմ · զոր իրօք եղեալ է յիս՝ պատմեմ · և զայն՝ առ՝ ի խափանել զզրպարտանս սուտ առաքելոց, յորմէ տուգանս կրէ ձեր եկեղեցիդ ։ Ա՛յսպէս երկուստեք իմանալի է խօսել զարդարն, ՚ը՛ արդար՝ Թէ ըէրին, և Թէ ըս պատճառին · որով անպարտ կացուցանէ ՚ի կարծեաց անմտուխն ։ Ապա Թէ ոչ՝ եՀէ ոք ասիցէ զանձնէ զՇշմարիտ գովուխն՝ բայց առանց օրէ նաւոր պատճառի, ոչ գլխովին ազատ Ինայ յանմտուխ · տակաւին անպարծ համարի, Թէև ոչ ստապարծ ։

Ա՛ւ

Այլ ոմեքայէմ· Սակայն խնայեմ ՚ի ձեզ և չիս, խնայեմ ՚ի քանս իմ, զգուշասայ, հրաժարեմ ՚ի փառասոր յիշմանց զանձնէ իմմէ, թէպէտ և ունիկ ասել բազումս ՚ի պարծանս իմ· երկնելովդ ուրեք ոք ՚ի ձէնջ կամ յայլոց՝ համարէիցէ չիս, (՚ի մի օրինս համարէիցէ ինչ չիս·) կարծիցէ զինէն աւելի քան զայն՝ զոր գործով տեսանէ չիս, կի քան զոր լսէ ՚ի բանից իմոց· Լասինն դնէ, համարիցէ չիս· բայց այլքն՝ չիս, կամ զինէն· Իսկ յաջորդն գէոմէիչէ չիս·, յայլ թարգմանս ՚չիս·

Երկիւղն՝ որոյ վերայ զգուշանայր յայտնապէս գրէլ զանձնէն զմեծագործսդ զերազանցութիւնս ետծապարգեւս, այն էր՝ զի մի ոք կարծիցէ զնա ետծարուել ոմն, երկնաբազաքացի, առաւելել քան ըզմահկանացու բնութիւնս պայմանն· Լիւսացոյցի ժողովուրդք ՚ի տեսանելն միայն զվազվազել ՚ի ծնէ կաղին՝ բանիւ պօզոսի, անդէն և ինքեանք սկսան ոտիւք արշաւել, և լեզուօքն կաղալ, թէ ետծոմն է սա՝ նմանել մարդկան· (Գործ· ԺԴ· 10·)՝Կղին և մէլիտինոյ բարբարոսքն տեսեալ, թէ անվնաս ՚ի խայթ ուճաձոյ իժին կայր առաքեալն, կարծիս ետծոմէն խորհէին զնմանէ· (Գործ· ԻԸ· 6·) Եւ զի՝նչ արդեօք ոչ կասկածելի էր համարիլ զնմանէ նորահաստատ մարդկանն, կամ այլոց հեթանոսաց, եթէ լսէին՝ թէ յերկինս յափշտակեցաւ, ըստ հրեշտակս պարեզի, զդաղտնիս ետծոմէթեն և զնորհուրդս մարդկան ծանեայ, և զայլս այսպիսիս· Ապա ըստ այսմ մեկ նուէն՝ որ սովորականն է, աւելի հաստատել քան զտեսեալն՝ է կարծել զնա դեր ՚ի վերոյ մարդկայնոսս, և ոչ տկար ոք և կարևոր, ըստ որում տեսանիւր· կի ոչ ըստ օրինի առաքինեացն ծառայ ոյ, այլ հրեշտակական իմն վերամուծիք պատուել· Եւ համարիլ աւելի քան զտեաքն, համանի ըստ պանծալի իրացն՝ զոր պատմէ, ոյն թէ այլ աւելի մեծամեծս կարծել զնմանէ՝ քան զոր ինքն ասէ·

Ոմանք այսպէս բացատրեն զյետինն մասն· զգուշանամ, և ոչ կամիմ թէ ոք այլով իւիք, կամ այլազգ դատիցէ զինէն, քան թէ յայտնանէ՝ զոր տեսանէ գործել ինձ, կամ լսէ ուսուցանել· այժմու իմ գործք և վարդապետութիւնք՝ շատ են առ ՚ի տալ վկայութիւն անձինս· զանցեալսն և զփառասորս ըստ լուսաբերն ծանկել ախորժեմ·

7· Ա՛ն զի ոչ տեսեալ՝ յայտնութեանն հոյակապացոյց, զոմանս ինչ խայն մարդ նոյ՝ հրեշտակ տեսեն՝ կոչել զնա՝ հրեշտակապետ·

Աղաղակէ առաքեալն ոսկեբերան· զինչ է զոր լսեմս, նա որ առ աչերն քոյն ոչ զերկնից արքայութիւն՝ և ոչ զգեհենական գրերն ինչ, մինչ զպատիւ ամբոխին համարեալոյ ինչ էր· մինչ զի վտանգ կայցէ նմա հպարտանալոյ, և հանապազորդ առնէի պէտս ունիցէ· Կից նմին և ես աղաղակեմ, զինչ իցէ տեսիլս այլակերպական· փոքր մի յառաջ յերորդ երկինս ըստ հրեշտակական զեզոպարութիւնն փառաւորի պօղոս, և այժմ ՚ի տասան հրեշտակ կոփանս ըստունի· Արդարև սքանչելիք են այս ոչ նախախնամական սիրոյն և զօրութենն· ոյզ զի զոր բարձրացոյցն պարզևօք ՚ի վեր քան զմարդ, խոնարհեցուցանէ շնորհօք իւրովք զմարդ· Եւ սոյն են սքանչելիք անկեղծ խոնարհուն մերոյ առաքելոյս· որ յառաջն զերկնային յայտնութենէն վայելմունս յայլոյ դէմս պատմաբաներ· իսկ զիւր դէմս յայնժամ ՚ի մէջ բերէ, յորժամ մարգկային կրից և տկարութենէ նշանակ առնիցեր կան· Վկայէ կողմնակի՝ թէ ինքն է որ երկնաւոր տեսութենէն հաղորդեցաւ, բայց զոյդ նմին՝ թէ հաղորդ է և մարդկաբար կրից, և տառապայի յանդուգնն յարձակմանց· և գործէ յայսմ ըստ օրենակի աշխարհական յաղթողաց· յորոց ՚էյաղթական կառն մանեսեցի կանգնեալ ՚ի թիկանց, յետ գոչիւն ժողովրդեան՝ կեցցէ, ինքն կրկնէր, յիշեա զի մարդ ես· (որպէս վկայէ հերոնիմոս· Թէ՚լե· լթ· առ պաւլա վ՚ս մահտան պլեսիլլոյ· հմր· 2·) Իսկ մեր առաքեալս յաւէտ քան զոյն՝ ինքնին լինի մոռնեսիկ բարազօղ իւրոյ ակարութենէն և հասարակական կրից· զի ելցի այնչափ նախանձելի ՚ի խոնարհութենէն, որ չափ սքանչելի ՚ի բարձրութենէն· Քրիստոս նեսցուք արդ զիմաստան·

Եւ զի՝նչ է առաքեալն· Մեր ընաքանչանք

ամենևին համաձայն է յուսականին· իսկ լսողին ընթեռնու· * Ջի մի՛ մեծամէ՛ք յայտնութեանցն զիս ամբառնայցե ։ ‖ Փոփոս զայն ընթերցօ՛ածն այսպէս մեկնէ· զի մի՛ վա՛ռ առաւելու՛ թեն յայտնութեանցն բարձրացեալ եղէց ՚ի մարդկանէ, այլ զերազոյն փառս ընդ ծայնացն ինձ մարդկի ։ Բայց յիրաւի չհաւանի այսմ թէ՝ոխերկակոս և այլ մեկնիչք· վասն զի զաղտնի յայտնու՛ թիք աներևակ առ մարդկի՝ ոչ տային պատճառս մեծացուցանելոյ նոցա զանաւքեան ։

Այլ հասարակաց իմաստքն են· ոմի զի մի գերազանցու՛թիք յաձախ և երկնային յայտնութենցն, զոր ես սակաւուք մէ այն յիշեցի, լիցի ինձ անափարիկ· զի մի յայտ պատճառէ ուռոյց հպարտու՛ թեն յիս ծնանիցի, փո՛ռս ինչ խոյս մաբ՛նոյ· լսելոյն յաւելու ՚ի յոյ, զոր ունի ա՛ռքին և արաբացին՝ քաց ՚ի յաւնէն ։ Իսայն ասի փոխանակ խայթոցի կամ խթանի, որ խայթէ զմարմին, և ասնջիք ցաւով ։ Այսպիսի խայթոց ինձ փո՛ռս ասէ, ոչ ՚ի սատանայէ, և ոչ ՚ի ներքին ախտից ապստամբելոց ՚ի հոգւոյ, այլ յայր երբու ՚ի թոյլ առնողէ և ՚ի տանեսողէ այնց փորձանաց ՚ի պահպանութի առաքելոյն· սատանայ խայթեր զմարմին նո՛, այլ ած էր՝ որ խայթմանն ներէր, և զվատնզ հպարտուն արդելոյր· ոմի զի յիւրում խոնարհու՛ թեն ձեալով զոզոս, առ ոտն կոխեսցէ զխայթիչն ։

Հրեշտա՛ակ սատա՛ն ։ Այսպէս ուղղական դնէ և յոյնն· զի սատա՛ն բառ երբայեցական՝ անհոգոլով է· և յուղղական հոլով առեալ ասա, լինի ածական, այ հրեշտակ հակառակող, հրեշտակ չար և փորձող· և ՚ի սոյն միտս դնի (ՃՃ. թագաւ· ԺԱ· 14·) * Եւ յարոյց ած սատան առղմանի՝ զադեր· ‖ որ այլուր (ՃՃ· Ա՛նոց· իե՛· 1·) ասի՝ բանասարկու· ։ Իսկ այլ թարգմանք ՚ի սեռականն առեալ դնեն՝ հրեշտակ սատանայի, այ պաշտօնեայ սադայելի ։ Ըստ իմաստոյն, այս կամ է բացայայտիչ խայթոցին, այ կամ է բացայայտիչ ինձ իբրև հրեշտակ տանջող· և կամ նշանակի իբրև գործօղ խայթմանն· այ խայթ մարմնոյ ներգործեալ ՚ի չար հրեշտա-

կէ, կամ ՚ի պաշտօնէէ սատանայի ։ Կո՛էէ՛էս, կամ յատկապէս, արատաքին ցաւովք տանջելով, և կի՛նամուտ՛թ՛, անարդական վշտօք տառապեցուցանել· զի կոփումն կարի անարդ է ՚ի մարդկային հարուածս ։ (տես ՚ի ՃՃ· կորն· ՚ի· 11·) Ադդ՝ այս էին կամք և գործ տանջող հրեշտակին· իսկ յայդ դէ տեալ արդիւնք, դէ՛ հպարբոշոյց ։ Այս յայժմու օրինակ լսոնիացուց պակասի· բայց դոյ ՚ի յոյնն, յատորին և յաբարացին· և ոչ աւելորդ է կամ օտար յոճոյ առաքելոյս, որ զնման բանս՝ ամենայնի ՚ինո՛ստացուցանել զանձն՝ ոչ դանդաղի կրկնել և երեքկնել ։ Եւ զերկոսին այսպէս մարթէ գ որոշել, զի ՚ի սկզբան ասէ՛ն՝ ոմի զի մի հպարտացուսցէ յայտնութի՛ն, յայս առնէ զդիտաւորութեն վշտացն· իսկ ՚ի կատարածիս՝ ցուցանի զարդիւնն· որմի թէ կամեցաւ ած՝ զի մի հպարտանայ ցեմ, և յայն սակս ինձ էոյ դնի՛ական փորձանացն, որով և պահեցայ ՚ի հրպարտութե՛ն ։

Մեծ ուսումն է այս՝ կարի սարսափելի ամ երկիւղած մտաց· Պօղոս՝ առաքինութե՛ն յերկինս, վաստակօք առաքելականօք ձոխացեալ, հոգւոյն պարգեւօք նշանաւոր, երկնաւոր խորհրդացն արդէն տեսօղ, մարդկային փառաց ատեցօղ, ոչ ապատ էր տակաւին ՚ի փոշեաց հպարտութե՛ն, այլև ՚ի վտանգի և՝ թէ ըմբռնեսցի արդեօք ՚ի նոյն· մինչ զի դառն դեղոյ խայթմանն կարօտ տեալ լինէր՝ առ ՚ի պահելոյ ՚ի մահացուս խայթոցէն անձնասպանութե՛ն ։ Ո՞՛ ՚ի մեզ իշխէր ասել զայս զնմանէ, թէ ոչ նա ինքն առանց ամաչելոյ խոստովանէր, ասէ օգոստինոս· (՚ի վերայ սաղմ· ծը· բան ը՛· չմի՛ 5·) Այսքան քնաւորեալ է ՚ի մարդկային տկարութե՛ն հոգի հպարտութե՛ն, որ ոչ էլանէ ՚ի մարդոյ՝ բայց եթէ մահուամբ· և ոչ անձնասպանի՝ բայց կոփածոք և անարդելո՛թ ։

Տեսանելի է յայսմ վայրի՝ զինչ խոյն իցէ, կի՛ հրեշտա՛ սատա՛ն ։ Ցայս է ընդհանրապէս, թէ իմանի ցաւինչ կի՛ վիշտս՝ հնարին ներգործեալ յազգմանէ սատանայի· բայց թէ որ տեսակ վշտաց, խնդիր է տարցաքննե՛լ յառաջնոց վարդ՝

դասեւտաց անտէ: Մենձն օգոստինոս ուրեք խոստովանի չգիտել. (դիրք յղ. բնաւթէ և շնորհաց. գլ. իէ.) բայց այլուր յիշատակէ զՀաւանականն: Ի համար արկեալ մեր զայլևայլ կարծիս, ընտրեսցուք զառաւել հարազատն: Արդ նախ՝ բազումք յառաջեալ իմա նան զոկարութիւն մարմնոյ և զցաւագա բութիւն, կամ ըստ հանրապէս, և կամ առանձին՝ ոմանք զցաւ գլխոյ, ոմանք՝ զա կանջոց, ոմանք՝ զսրտիմս աղեաց կամ որովայնի, և այսոքիկ հաստատուն և մշտատեւք, որոյք իբրև՝ ի գլուխն կոփել լիներ ընձայիս առաքելն: Այս պէս համարի երանոս (դիրք է. յղ՝ս հերձ. գլ. ջ.) Օգոստինոս (մեկն. առն. գլ. ջը. տիր. 13. և ՃՀ. տիր. 6.) ուր և ասէ՝ ցաւովք մարմնոյ նեղեալ, որք բազում անգամ՝ ի սաստանայէ լինին, որպէս՝ ի յոբ: Ի սոյն միտս և ներսէս շնորհալի ասէ՝ ի Թղթին առ վշտացեալս յեղեսեայ քաղաքի, թէ տկարութիւն մարմնոյն պղտոյն ոչ բժշկեցաւ մինչև ցվախճան: Զսոյն իմաստս յիշեն գրէթէ ամ հին մեկնիչք, բայց անհատա նին. մանաւանդ ոսկեբերան տակա ռակի կրկին պատճառօք. մի զի անպա տեհ ինն է ասել՝ զպղտոց պղշնեցօղն սա տանայլի՝ տալ ընդ իշխանութիւն սատա նայի առ՝ ի տանջանս մարմնոյ: Եւ միւս՝ զի այնպիսի հանապազորդ ախ տակրութիւն արդել առնէր աւետարա նական վաստակոցն:

Երկիր, նա ինքն ոսկեբերան և այլք բազումք իմանան զայնոսիկ փորձանս, և զնոքովքն շարժելն՝ ի թշնամանց աւետարանին՝ ըստ գրոգռելոյ առաքելոյ զարբանեակս իւր. որպիսիք էին աղեք տանդրոս դարբին, հիմենոս, փիղե տոս, սուտ առաքեալք, հրեայք և հե թանոսք: Հակառակութիւն սոցա և տա ռապանք՝ խափան արկանելով յառա ջադիմութիւն աւետարանին, իբրև խայ թոցովք ոմանք տանջէին զառաքելն: Ասպէս իմանայ ոսկեբերան՝ ի մկ նութիւնս, և յայլ դիրս իւր: (Ճառ ըս. առ. Ժողովուրդն անտիոքայ: Ա՛ռ տուա դիրքիոս. դիրք ըս: Թղթի է. առ. ոլիմ պիադաս:) Ի սոյն միտս հիլարիոս (Ճառ ի վերայ ՃՀ՟.) ասէ, անդադար վշտօք ևս ըստ ժամանակի: Ղամանաքար առնուն և մեր վարդապետք: (Յաճախապատմ. եր. 174: Սարգիս. եր. 649. 829:) Եւ ցուցանեն զայս ի յայտորդացն (9. 10.) ուր զայն խայթ մարմնոյ կոչէ տկարութիւն, և ասէին՝ Թշնամանս, վիշտս, հալածանս, նեղութիւս վասն քոյ: Ալ թէ որչափ յարմարութեամբ ունիցի քննեսցուք զկին:

Երիդ, տակաւ ոմանք իմանան զար տաքին Տարաճառս մարմնոյ՝ ի կատա զութեն դիւթին գործելոյ. որոյ յաղագս սըկսի Աստուած ընտրեռնութեամբ, և այլոց սըկ հանդիպելոյ: Զայս միտս ցուցա նել ջանան՝ ի բուն նշանակութեն բա ռիցն. իբր զի խայթ մարմնոյ ասէ, և չըս դեւ. որք զի Ճառին նշանակեն զկոկծե ցուցիչ ցաւս մարմնոյ՝ որ՝ ի գանիչ լի նին. և չիք պատճառ ասեն՝ օտարա նալ՝ ի գրոյն. զի այս ոչ առաքելական մեծութեն պղտոյն, և ոչ սրբութեն նո՛ տկաւակ ենչ է. զի ահա համարձա կութեն տուաւ սատանայի մերձենալ ոչ միայն՝ ի մարմին յոբայ, այլ և նմին քան՝ ի փորձութեն: Ալ թէ յարմար է ասել դիտաւորութեն այդ, այսպիսի անարդ ցաւովք նուաստել զՊաւղոս տա թիւն:

Սակայն վայրապար կարծեն՝ թէ դիրն նպաստեսցե այսմ մեկնութեն. զի առ վորութեն է առաքելոյն՝ փոխարերու թեամբ վարել զայսպիսի բառս. ոյք խայ թոց մահու ասէ զմեղս. (ա. կորն. ժե. 56.) և կռափաղարէլ զարտաքին թշնա մանս. (անդ. ը. 11.) Ըստ դիտաւո րութեն՝ արդարև յարմար է՝ ի խոնար հեցուցանել զմարդ. բայց չունին ցու ցանել թէ յարմարագոյն քան զայդ ոչ կայցէ. այլ խնդրելի էր և յարմարու թեն առ առաքելական իշխանութեն, զոր ունէր յայ զօրանալ՝ ի վէր դիւաց, և ոչ թէ՝ ի նոցանէ բռնութիւն կրել. յոբայ ոչ շնորհեալ էր այս իշխանու թեամբ. և ցաւք մարմնոյ նո՛ գործեցան՝ ի դիւէն՝ ի ձեռն բնական պատճառաց, և ոչ երեւելի բռնագործութեամբ գանից. և ս առաւել՝ ի մարմին քան մերձեցաւ նա ըստ տեղւոյ փոխադրութեն լեռն. որ կարի տարբեր է՝ ի գանակոծ հարուա հարուածէ: Գարտ էր յայլոյ կողմանէ

'ի միտ առնուլ զմեծագոյն անյարմարութենէն · զի այնպիսի արատաբին հարուճածք դիւականք ոչ 'ի ծածուկ միայն 'ի հաւատացեալոց · մանաւանդ զի բատ կարծելոյ ոսկեբերանին և օգոստինոս և այլոց 'ի երկար ժամանակս տեւեաց այս վիշտ առաքելոյն · և ուր միայր յարդ նորա յաչս աշակերտացն 'ի տեսանել զիւրեանց վարդապետ տանջել յայր դիւական գաւազանաւն՝ իբրև մանուկ տաճկակ, և ծառայ դժնեաբարոյ ։

Զարթուր, այլք ոմանք խմացան զանաս զան փորձութենէս հոգւոյ 'ի տատանեալ ազդեալ · այլ զնայեցուն կասկածոտ խղճի մտաց, որ իբրև վուշ հարկանի 'ի սերտ · կամ զհրապարակս ընդդէմ ձեռագրին անտեսութեն, և գործոց նր, կասկածս, տապակուսանս 'ի վերս արարութեն, կամ աղօթմութեն այլ · կամ, զանկարծ լքուին հոգւոյ, և վերկիւղ տատիկ 'ի չիշտատակ անցելոց մեղաց, և զայս այսպիսիս · որով կարեվեր խոցոտի մարդ, և հոգին Քաջնու յինչ քեան՝ առանց կարելոյ հայել 'ի բարձր բութեն իւր ։

Սակայն զայսպիսի տատապանս՝ որք յաւէտ խայխեք են հոգւոյ, և ոչ մարմնոյ, ոյ պահանջել բնաբանս, չգիտեմ զիարդ յարմար դասին դոքա առաքելական սպատաւորութեն, և խնամալուծեն եկեղեցեաց յորս անդադար պարապեր սքեն պօղոս ։ Եւ զարձեալ, տատ ննդատարձև իմատութեն, որով զնմ խորհուրդս տատանալի քակեր, ('ի վեր· ժ· 4·) այդպիսի փորձութեք Թումէին իբրև բզզուսին ճանճից, և ոչ Թէ խայխոցք վշտացուցիչք 'ի հառաչանս և 'ի խռովութեն տրտի ։

տամատոյց ինչ է ոսկեբերան միւսում
կարծեաց. վէ զի նա ասէ պարզաբար,
ոչ էջ քեզ՝ ի խորս՝ քան զոր խոնարհ-
դոյն ոչ է, նոյնպէ եւ՝ ի վեր՝ քան զոր
ոչ բարձրադոյն. որում խմանի՝ ԹԷ չէջ
այլ բարձրագոյն տեղի արժանաւոր, և
ոչ ԹԷ սպառին անդ երկինք, և ըստ մեայ
արտաքոյ։

Իսկ ԹԷ առ արժանաւորուԹԷի փառաց
քեզի ոչ օժանդակ ինչ է՝ զետեղել զնա
՝ի կորնԹեա երկնից, աւելորդ իսկ ԼԸ-
ուի խօսս առնել, ԹողԼԹէ վիճել։ Վէ
զի ըստ դրուԹդ՝ քս ոչ այլով իւիք մեայր
՝ի տեղւոջ՝ բայց ոսիւք միայն. իսկ
մարմին նորս ողջոյն կայր՝ ի գերատարգի-
քանզի արտաքոյ կորնԹեաց երկնից
չէք այլ տարածուԹէ իրական վայրաց,
այլ անգոյ միջոց երևակայեալ՝ի մէնջ,
զոր մակամտածեալ միջոց ասեմք՝ ի

դպրոցս։ Վէ որոյ հետևէր՝ յանտեղ-
ւոջ կալ քեզի, և յունայնուԹեան անդ
երևեցուցանել զմտաս իւր, և՝ ի կիր
առնուլ զիշխանուԹէն, չդիտեմ՝ ումմ,
և յոյր վէ։ Փառք են առն ԹադաւորԼ՝
՝ի պատուականագոյն մասին ոտուԹէ
իւրոյ հաստատել իւր աԹոռ, և ոչ ԹԷ

արտաքոյ սահմանաց իւրոց։

Տեսցուք արդ զյետին մասն։ Էի լոյԹ
զմմ։ Ոմանք զմ խմանան զնմ զսահմա-
նեալսն և զդրեալսն վէ քեզ։ զնմ որ
ինչ՝ ի փրկուԹէ մարդկան և յիւր պաշ-
տոն անկ էր։ ոչ կատարեաց գյարչա-
բանսն և զմահ, և զԹաղուսին ըստ գրե-
լոցն՝ ի փրկուԹէ մարդկան, նոյնպէս
յարեաւ և վերամբարձաւ յերկինս վէ-
րին, զի և այսոքիկ զրեալ էին, և կար-
դեալ՝ ի փրկուԹէ մարդկան։ Կամ ըստ
Հերոնիմոսի, ամբարձաւ՝ի վերինս՝ ոչ
միայն զի զօրէնս և զմարդարէս ընու-
ցու, կատարեացէ, այլև զգաղտնի ան-
տեսուԹեան յերկինս, զոր ինքն գիտէ
ըստ։ Այլք զմ առնուն՝ ի վերայ ան-
ձանց։ ըստ ոչ զի ընուցու առաստուԹէ,
պարզևաբ զնմ անդամս եկեղեցւոյ,
զնմ ազգ մարդկան, զբոլոր մարմին
եկեղեցւոյ՝ որ յերկրի և որ յերկինս,

զՀատատացեալսն և զընտրեալս։

Աւսոքիկ խմասաբ բարեբաբ են, բայց
ըստ հետևման և երկդ համարելի. իսկ
առաջին և Հարազատ՝ զմ՝ ի վէ տե-
ղւոյ առնուն սովորաբար. վէ զի՝ ի
կարդի բանիցս կ՚ցանել և ելանել ասաց,
խորբ և երկինք, որք զտեղւոյ յայս
առնեն։ Ապա ասել կամի. ոչ յերկրի
շրջեցաւ քեզ, և՝ ի խորս էջ, նոյնպէս
՝ի բարձունս երկնից վերաստուեաց, ոչ
զի զնմ տեղի ընուցու իւրով կարողու-
ԹԷ, և փառաբ, և յայտնի ցուցիչք
մեծավայելչուԹեն իւրոյ։ իւրով անձամբ
երևեցաւ յնմ տեղի սոորին և վերին,
հանդիսացուցանել ըստ ուրեք զնորու-
ԹԷ իւր, որպ այր Թաղաւոր անձամբ
շրջի՝ ի սահմանս ոտուԹեան՝ զոր յայ-
ՀմուԹԷ ստանայ։ Այսմ մտայ զՀետ
գայ, ընուլ կի կատարել քեզի զնմ զմ
նի ասմանելոյն, և մանաւանդ ընուլ
զնմ արարած մանաւանդ զանաւորսն,
որք յիւրաքանչիւր տեղիս կայրն. և ոչ
ելից զկենդանի մարդիկ երկրի լուսա-
ւոր քարողուԹէ և աքանչելիւօք և բազ-
մա-

մազան երախտեօք, նոյնպէս ելից զորս յանդունդս ստորինս արգելլեալս, զարդար Տոգիս երանաւէտ փառօք և մխիթարութիւք, իսկ զապստամբան և ըզդեւս՝ աշարհութիւք, խայտառակութիւք, և պատժոզական դատաստանաւք։ Ըստ նմին ապա և յերկինս ելեալ բազմեցաւ, զի և զանդ եղէրեան զընտրեալս և զերիւշտակս ընդացս վայելչութիւք փառացն, ի կերր արկեալ առ ամենեսին զմեծաւորական զերծմանութիւն և ըզդհրամանատարութիւն։

11. Լ՚ՈՒ ԵՒ ՎՃԱՌ ԱՌԱՒԵԼՈՒԼ, ՈՒ-ՄԱՆ ՄԱՐԳԱՐԷՈՒ, ՎՃԱՌ ԱՒԵՏԲԱՆԵԼՈՒ, ՎՃԱՌ ՀՎՃՄՈՒ Ե ՎԵՐԱԴԱՐՁԱՒ։

Զերկոսին անցեալ առնուն յայտնաբանեաց առաքեալ, զինչ զօրութիւն իցէ ելանելոյն քան յերկինս. և այժմ դառնայ բացատրել, զինչ պարգեւս առաւացոյց ի մարդիկ, որ էր երկդ մասն 8 ամաւ։ ԼՈՒ ԵՒ (՝ի մի օրէն. չիք և.) Աղգումն ունի նա ասելն. այ նա քան, որ յաղթօղ եղեալ բռնութիւն սատանայի, թագաւորաբար ընկալաւ զիշխանութիւն յերկինս և յերկրի, և առ ամենեսին հանդիսացոյց զիւրն ներութիւն, սկսաւ ապա կարգաւորել՝ որպէս օրէն է թագաւորի անցելոյ յանձնաժողովել, զգործակալս և զպաշտօնեայս ներքեւ եկեղեցւոյ. զայն պատուիրս և զպաշտամանց որոշմունս սահմանել և բաժանել, զորս ճանաչէր կարևորս ի բարիոք անտեսութիւն եկեղեցական թագաւորութեան։ Արդ՝ նա այնպիսին կացոյց ըմանս առաքելս, իբրև առաջին իշխանս արքայութիւն եկեղեցւոյ, անընդմիջաբար ընտրելոս ի քէն, ի տարածանել զնոր օրէնս աւետարանին և ամ ազգս, կարդել եկեղեցիս, և պաշտօնեայս նոյ ըս պիտոյիցն, սահմանել զուղիղ աւանդս հաւատոց և վարուց, և զընդհանրական օրինադրութիւնս։ Իսմանին այսու առաւելագոյ երկոտասանիցն դասք. որք թէպէտ յառաջ քան զչարութեան ընտրեցան ի քէն ի քարոզութիւն, բայց աստուածոր ասի՝ յետ ելանելոյն յերկինս կարգելը, վասն զի յայնժամ ընկալան զլրումն առաքելական իշխանութիւնն, և զառաւելութիւն պարգեւից կարևորաց ի նոյն, և յայնժամ յայտնաւեսիլ ընտնելոյն հոգւոյն սրբոյ սփոփեցան յընկերանուր տիեզերս՝ յաշակերտել զամս ազգս ընտրելոյն քոյ։ Սակայն ընտնելոյ անուամբ առաքելոյ իմանին յերկրի կարգի այնոքիկ, որք ի կոչմանէն ոչ առաքելական իշխանութիւն բաժանորդք լինին յեկեղեցւոյ, թէպէտ և ոչ ամ լրութիւք. որպէս են եպիսկոպոսունք յիւրաքանչիւր վիճակի։

Զհետս տեսչութեան։ Նորոյ եկեղեցւոյ մարգարէք են յայտնիչք գաղտնի իմաստից գրոց ի լուսաւորութենէն ոյ, ծանուցօղք գաղտնեաց սրտի, և գուշակօղք հանդերձելոց կամ անյայտ իրաց. ոմանք ագաբոսն, և այլք յիշատակիցք ի գործսն. (Ժամ. 27. Ժիզ. 1. իսա. 8.) Երևելիքն էին սոքա զինի առաքելոց. բայց պարգևնոյ ոչ առ ամենեսին մըշտատև պահիւր։

Զհետս աւետարանչի։ Ոմանք իմացան զգրօղս աւետարանական պատմութիւն կամ վարդապետութիւն։ Սակայն թէև այնպիսիք ևս ի կարգմանէն քոյ ունէին զաւետարանագրութիւնն պարգև, ոչ զայնցանէ խօսի բանս. այլ որոց յատուկ պաշտօն էր՝ քարոզել զհաւատս յայլ և այլ կողմանս. որպիսի ոք փիլիպպոս սարկաւագն էր. (Գործ. իսա. 8.) այլև սաւլիաննոս, տիմոթէոս, տիտոս, շիղա, մարկոս, և այլք։ Սոքա օգնիչք էին առաքելոց, ընկերք կամ պաշտօնեայք, ի հրամանէ նոյ ընծայելով յիւրաքանչիւր տեղիս։ Չնա ինքն գիմոթէոս սովին անուամբ իբրև։ * Զգործս աւետարանչի գործեաւ։ (բ. տիմ. ե. 5.)

Զհետս հովիւն և վերադիտողս։ Զայսոսիկ ոչ ոմանք իբրև զառաջինն. որոյ վա ոմանք համարին նոյն, այլև այլ անուամբ նշանակեալ, հովիւ վասն հոգաբարձութեան ժողովրդոց, և վերադիտող վասն ուսուցանելոյն։ Սակայն այլք լաւ ևս գտանին զանազանել ըզպաշտամունսն, թէպէտ և բազում անգամ ի միում անձին գտանիցին։ Զի յատկաբար իմանին վերակացուք իւրաքանչիւր ժողովրդոյ ի կառավարել, ի խնամել զհոգևորական պետս նոյ, ի մատակարարել զիարդութիւնս որոյ եպիսկոպոս, և երիցունք. յորս պա-

հանջէ և դիտութեի բաւական՝ ի կատարումն պաշտաման իւրեանց ։ Իսկ Վերջագոյն նշանակէ տիրապէս զուսուցօղ ածային բանին, զմանաւանդ պաշտօնեայ՝ քարոզօղ և ջատագով վարդապետութեան հաւատոց էգիմ հերետիկոսաց ։ Պատահէ երբեմն՝ զի որ Տովիճն է, նոյն և վարդապետ, որպէս հերոնիմոս, եփրեմ ասորի, և այլք ։ Ի՛ և Տովիճ ոմանց, և վարդապետ այլոց ։ զոր օրինակ Յովհան ոսկեբերան Տովիճ էր ածոցն կոստանդնուպօլսի՝ և ոչ անտիոքայ, կամ աղեքսանդրու ։ սակայն վարդապետ է առ ըՀանուր եկեղեցի ։ Այս պէս որոշումն է պարզելի Տովճութեի, և վարդապետութեի ։

Այլ յայգագս այսոցիկ պարզեւաց և պաշտամանց՝ ընդարձակագոյն ունիմք յառաջին կորնթացոցին (ԺԲ ։ ԺԱ ։ ԺԲ ։) ուր և տեսանի կարճ նշ՝ և զանազանութեի ։ Թէպէտ և ի պարզեւառուսն յոլովակի համանգամայն գտանին ոմանք, և կի բաղումք յայնցանէ ։ որպէս մերս Պօղոս՝ առաքեալ էր, և մարգարէ, և աւետաւրանիչ, և Տովիճ, և վարդապետ ։ Այլ զի բազմագոյն ևս գոլով քՀաձիք պարզեւացն ՝ ոչ զրօվանդակն՝ այլ զոմանս ևեթ յիշատակեաց սատա՝ նօր ։ վա՛ զի սոքա են երևելիքն ՝ի պարգեւս՝ կարևորագոյնք, և մշանջենաւորք յեկեղեցւոջ ։ ընդ որով և այլք իմանին՝ պիտանեալ ըՀ ժամանակին, և ոչ միշտ տեւողականք ։ որպէ լեզուացն շնորՀ, թարգմանութեի, և այլք ։ Եւ զոր ասա քՀի ընծայեաց զմատակարաբութեի այսոցիկ պարզեւաց, այլուր վերագրեալ ևս Տօր, և կամ Տոգւոյն սբ՝ ։ (ա ։ կորն ։ ԺԲ ։ 11 ։ 28 ։ Գործ ։ ե ։ 28 ։) Յորմէ իմաստասիրեն վարդապետք զնծութեի որգւոյն էգիմ արիս՝ պետք զնծութեի որգւոյն էգիմ Տօր և Տոգւոյն ներգործել զայսպիսի ազդմունս պարզեւաց ։ Սակայն պատշաճի սա քՀի նաև իբրև մարդոյ, ըՀ իշխանութեի զոր առացաւ յայ Տօրէ՝ կայցուցանել պաշտօնեայս ՝ի վե՛ եկեղեցւոյ իբրև զլուխ՝ մարմնոյ, առաւելապոյն իրաւամբք՝ քան զոր ՝ի ձեռն մովսեսի կացուցանէր ած ՝ի վե՛ հնոյ ժողովրդեանն՝ ցեղապետս, և զօրագլուխս, դատաւորս, դպիրս, և զայլս ընդ նոքօք պաշտօնեայս ։

12 ։ Ի հաստատութի սբ՝, ՝ի գործ պատման, ՝ի չնՀաճախ մարդոյն ։

Յայտ առնէ բանիւս, Թէ այլ և այլ պարգեւացն յիշատակելոց՝ նոյն զիտաւորութեի է առ յայ, և նոյն նպատակ ջանից պարտ լինել առողոց զպարգեւն ։ որով զանազանութեի նշ՝ Ժողովի ՝ի միութիւն ։ Ջայսոսիկ պաշտօնեայս կարգեաց ասէ, որոշեաց քՀ յՀ կեղեցւոյ իւրում, ՝ի հաստատութի սբ՝, ՝ի կատարելութեի կամ ՝ի նորոգութեի հաւատացելոց ։ ոչ զի արդէն հաւատացեալքն պնդեսցին և աՀեցցին ՝ի հաւատս և ՝ի գիտութեի աւետարանին ։ զի քրիստոնեայք յիւրաքանչիւր կարգի կատարեալք լինիցին արքութեի՛, առ միանս կապեցին հաւատովք և սիրով ։ և որք խախտեալ լինչ իցեն, անդրէն ՝ի տեղւոջ հաստատեսցին՝ իբրև զանդամս լուծեալս ձեռամբ բժշկի ։ Կարգեաց զնոյն պարգեւս և զպարգեւառուսն ՝ի գործ պաշտաման, առ ՝ի գործել յիւրաքանչիւր պաշտաման, քաջութեամբ և անվեհերապաղ տանել զպատասխանութեի, մինչանց նպատաստուր լինել ՝ի կատարումն գործոյ իւրաքանչիւր ։ Այլև ՝ի չնՀաճախ մարդոյն ։ ՝ի յաջողումն և ՝ի յառաջադիմութեի եկեղեցւոյ, որ մարմին է քՀի ։ ոչ զի նոցին ապաստանութեի՛ հաւատացեալքն առաւել և յարմարեսցին ՝ի շինել զեկեղեցի՝ առ աւետացանելով զայլս ։ և շինուածն Տզեւոր օր ըՀ օրէ բարձրանայցէ յաւելուածով ՝նոր հաւատացելոց ։ և այնպէ բազմութի՛ն առաւելապոյն կատարելութի՛ զարգանայցէ Ժողովուրդն քՀի ։

Ըստ մեկնութեի՛ երբեմն պիտանութեի և նպատակ պարգեւաց նշանակի ։ առաջինն՝ պաՀպանութեի և սընդութեի արդէն հաւատացելոց ։ Երկրդ ՝, անձամբ րոյնի աշխատութեի պաշտօնեիցն ։ Երի՛, աՀեցուն և կատարելութեի բոլոր եկեղեցւոյ՝ դարձմամբ անհատից ։

Ոմանք այլազգ կարծեն զբանս, յորմ՝

մարելով այսպէս։ Որոշեցան կիտուման այս պարգեւք առ՝ ի հաստատել զհաւատացեալս գործովք սպասաւորութեան պաշտօնէից. որով կատարեսցի և առաւելուցու շինուածք եկեղեցւոյ։ Կամ. զի իւրաքանչիւրոք խնամով պարապեսցի ի գործ պաշտամանն իւրոյ՝ ի հաստատութեան և յառաջադիմութեան հաւատացելոց. և այն՝ ոչ զի բովանդակ լրումն եկեղեցւոյ լինի՝ զի կատարել և անելիքն ևս մնասցէ։ Ըստ այսմ տեսութեան՝ առաջինն գործն պաշտաման, և պատուէր հաստատութեան հաւատացելոց. որում զհետ գայ բովանդակ եկեղեցականս շինուածոյ զբարելութեան։ Մի՛ ևն այսոքիկ եղանակք ըստ ղէմս մտայն. իբրզի զանազանութեան կամ անհաւատարութեանն կայ միայն ի պարգևս անդ. քանզի յայլսն ևս նոյնութեանն զուգահաւասար։ Նոյն է սկիզբն և բաշխիչ պարգևացն՝ ըստ նոյն պարգևառուքն՝ ըստ մասին արժանաւորութեան, զի ոչ յանձանց ունին. նոյն պատիւք ամենեցուն, ըստ գործել առանց դատարկութեան, և ոչ թէ մեծարել. և այն՝ ծառայաբար իբրև պաշտօն յանձնեալ, և ոչ ինքնիշխանաբար։ նոյն ամենեցուն ունի կէս նպատակի՝ իւրաքանչիւր պարգև, և առաքեալն, և պաշտօնակալութեն եկեղեցական ոչ յայլ կարգեալ է՝ բայց ի շինութեն և ի սրբութեն անդամոց եկեղեցւոյ, որով և մարմնոյն բովանդակ պահի կատարելութեն և վայելչութեն։ Եթէ յայս ի վար արկանիցն ամենեքին զյօժողութեն ընկալեալ յոյն, այնպէս վաստակի առաքեալն՝ ոչ մարդարէն. այնպէս հաւատաւոր մարգարէն՝ որպէս աւետարանիչն. այնպէս շինիչ հովիտն՝ ոչ վարդապետն. որով այլև այլ պաշտամունք մի ըստ միոյ կարգելոյ՝ գործակցաբար ի մի կատարած գլխաւորին։ Եւ ուր այնուհետև գրիւռ անմիաբանութեան՝ կամ նախանձու, կամ անհաշտութեան՝ ի պատճառս պարգևացն ազգիազգաց, որք յայսքան բազմապատկի իրաւանց զմիութեն պահել իրատրին. և ահա այս էր դիտաւորութեն բանիցս, ըստ որում կանխեցաք ի տան։

13. Այնուհետև առինչեան ի Ղաբանորէ հաւատոյ և գիտութեն որդւոյն Յ, յոյր խոստացեալ ի լոյթ հասանի խոստման տէր։

Առաւելապէս բացայայտել՝ մանաւանդ զվերջին պիտանութեն պարգևացն, և թէ պաշտօնեայք իւրաքանչիւր՝ զիարդ և ցօրվայր պարտին ի կիր առնուլ զպարգևն ընկալեալս. որով տայ՝ ի միտ առնուլ, թէ այն պաշտամունք թէև ոչ են մշտնջենականք, սակայն ցորչափ կան՝ միշտ ի գործել կարդեալ են։ Պարտ է ասել՝ այնպէս անձանձրոյթ և խնամով պարապիլ ետնատուր պարգեւօքն ի հաստատութեն և ի շինուածն մարմնոյ եկեղեցւոյ, զի առանց դադարելոյ գործք պաշտամանցն կատարեսցին, ինչ-որ հաւատոյ անհնարին և անդադար ևս ըստ այլոց անկատարից դասէ՝ ոչ միայն վն չափաւորութեն, այլ ցուցանել՝ թէ կատարելոյն ևս հնարէ՝ և արժան յառաւելագոյնն վերաբերիլ։ Եւ զամենեցունց յիշատակէ, ազդուին տալով պաշտօնէից՝ հոգս տանել անխըրբար ետ անդամոց եկեղեցւոյ, և ոչ ալառանօք կիմ անհոգաբար վարիլ առ այս ոք, կիմ առ այն։ Ջոյն հաւատոյ, յորմէ դնէ ձգանդէօնն. զոր լսելովն և ամենք ի մարդմանէն, ըստ աջելոցուք. և մեկնեն, մինչև ամենեքին ընթարեալք՝ որք ցրուեալ կան յաշխարհի, կիմ ըստ այլև այլ շաւիղս գոտնին, չհակդիտոյ ըստ աւուց ելանելոցն մեռանոց՝ ի մի կատարած։ Ասկայն յոյն մեկնիչք հասանել իմանան ասանօր, զոր և ովկոմենիոս գեկուցանէ. և արտաքոյն նոյնպէս դնէ ասս, ոչ և ետ ի մարդմանէ այլոյր ասեն՝ հասանել։ (Գործ. ժԱ. 1։)

Ի Ղաբանորէ հաւատոյ, և գիտութեն։ Յոյն պարզաբար ասէ. ի Ղաբանէ հաւատոյ և գիտութեն, կամ ծանօթութեն։ Բայց ի մեր լաւ օրինակս ինչ դնի, ի Ղաբանորէ հաւատոյ, և ի գիտութեան կիմ, ի գիտութեան. որ չէ օտար յիմաստից մեկնչացն, և արտաքոյն իսկ զատանէ ասելով. * մինչև հասանիցեմք ամենեքեան միութեն հաւատոյ, և գիտութեն որդւոյն ոյ։ Ըստ կարգի շարադրութեան՝ ոմանք ըստ միոյ արտաքոյ-

ոյն

ւոյն զասելն 'ի Ֆաբիանոսէ, բացատրեն՝ մեսրանութիւնք, և եղր Տասանելոյն դնեն՝ յայր խոստել։ այլ ամենեքին զմի հաւատս ունելով կամ միաձայն հաւատովքն Տասանիցեմք 'ի լինել այր կատարեալ։ Սակայն ըստ մտաց յունին Տարազատեալ է՝ եղր Տասանելոյն դնել զմիաբանութիւնն, ըստ որում և ոսկեբերան բացայայտել։ այլ մինչև ամենեքին Տասանիցեմք 'ի կոյրդութիւնն նոյն հաւատոյ։ մինչև ամենեքին հրէայք և հեթանոսք, ոսկերք և կարօղք միով հաւատովք կատարելապէս յօդիցեմք, և 'ի Յանօգնութիւն խորհրդոյն քան պայծառապէս հրաՏանդիցեմք։

Այսոքիկ ասացան առ 'ի պարդել ըղկարդութիւն բանիս։ սակայն քննելի են ևներքին իմաստք ողջոյն ընդբանիս։ զոր երկոքի աւանդեն վարդապետք։ Առաջինք 'ի լսոխնացեալ առնուն ըղբանս 'ի վր կատարելութիւնն Տանդերձ լոցն, և այն՝ կամ ըստ փառաւոր յարութեան մարմնոյ, և կամ ըստ հոգևոր և իմանալի կատարելութենէ հոգւոյն։ Ըստ առաջնոյն իմանան։ այս պարդեաց կիրառութիւնն կացցէ յեկեղեցւոջ, մինչև ամենեքին ընտրելոքն միաբան հաւատովք և գիտութ քովն կազմելոք, ստացցեմք 'ի յարութիւն անդ. զպարական կատարելութիւնն, ըստ չափոյ Տասակի մարմնոյն քովն, և ըստ փառաւորել ձրիցն որ 'ի կատարեալ մարմինն քովն նախատրաստեցան։ Եւ յայտ մեկնութիւ յառաջ եկն հաւատացեալ կարծիք 'ի վերս Տասակի յարուցելոյն, թէ ամենեքին ոչ միայն չափահաս վախճանելոք, այլև մանկտանք և ծերք 'ի մեղկային Տասակ կենդանացին՝ իբր երևնամեայք կամ աւելի և ըստ Տասակի մարմնոյն քովն։ Եղև և այլոց ոմանց կարծել յաղագս կանանց՝ այրական մարմնով յառնելոյ, սակս աւելոյ բնաբանից, յոր խոստեցաք։ Սակայն աւասանօր այլ ոչ դիմաբաժանեն առ էդն, այլ առ անկատարն Տասակաւ կամ առ տղայն։ իսկ վերյիշեալ կարծեացդ՝ տես 'ի ԲՓ. կորն. Ե. 10։

Երկիր իմաստք այլոց ըստ հոգևոր կատարելութենէ Տանդերձելոյն՝ այսպէս բացատրին։ Ցայն իսկ կարդեցան պաշտամունքդ, զի պարապեսցին 'ի շինութենէ եկեղեցւոյ, մինչև ընտրեալք ամենեքին կապեալք 'ի մի Տաւատս, և յաւաջեալք 'ի գիտութենին քան, լինիցիմք յերկինս յայր կատարեալ 'ի գիտութենէ և 'ի փառս, ըստ չափոյ կատարման քան, ոչ քո լրացել է յինքեան։ կամ ոչ պատանիք լրութենէն քան։ զի անդ յերկինս՝ բոլոր եկեղեցի լինիցի ամէն անհերձ ըստ օրինակի մարդոյն քան, ոչ անդամ ինչ պատասուր, և ոչ կատարելութենէ ինչ նուազել։ Այսոցիկ իմաստից յարմարական է ասացեալն 'ի ԲՓ. կորն. (Ժէ. 9. 10.) ուր զայժմու փոքրիշատ դնէ առ մեր Տամեմատ առ Տանդերձեալն՝ իբրև զոյացութենէ առ Տասակ այրական։

Սակայն զկարագատութենէ իմաստիցն խնդրելով, արդի մեկնիչք նախամեծարն դնեն զմիկնութենէ ոսկեբերանին և այլոց յունաց, իմանալով զընտրեալսն 'ի վեր այժմու հոգևոր կատարելութենէ հաւատացելոց, և մարմնոյ եկեղեցւոյ. յորոյ 'ի շինութենէ կարդեալ են պաշտօնեայքն ամենեքին։ Զորոյ մխոց առանձ դէ նուն. Տերտիմոս 'ի Տեղեխս. և առաւելապէս Տասանի ըստ այս՝ քան ըստ առաջինն՝ օգտաբերս։ (գիրք Բ'Ը. յԳԷ քաղաքին ՅԹ. գլ. Ժբ.) զոր և ազոբինա ցինչիրէ յերկինսում ասելոյ։ Զայս պատՏանիցէ ընտանի կարգ բանից առաքելոյն։ վս զի յայտնապէս դնէ նպատակ պաշտամանցն՝ զՏաւանել ամենեցունն 'ի միութենէ Տաւատոյ, որ այժմու վիճակիս է անկատար՝ ուր Տաւատովք գնամք, խոկ 'ի Տանդերձեալսն ոչ Տաւատք՝ այլ տեսութիւնն է։ Այլև Փիլոխենի որպէս ւոյն ևս ոչ դերանականն նշանակէ, այլ զոր վերադոյն յոլովակի ասաց՝ զՅոհութենէ աստուածական ումանց, զոր և աղօթիէր ունել եկեսացւոյ. (ԱՏ. 17. ՊՀ. 4. 9. 10. 18. 19։) Նաև այրականն կատարելութենէն՝ զոր ասէ ասա, անդէն վաղվաղակի 'ի յաջորդ տան ըստ դէմ դնէ զդաղայական անՏատատութենէն, զի մի յայսմՏետ իսկ ևս տղայք ասելով. որալ յայտ է՝ թէ զայժմու Տատատուն տեղեկութենէ Տաւատոցն իմանայ այրական Տատկութն, Տամեմատ գրելոցն առ կորնթացիս և առ եբրայեցիս, տղայս ասելով զանկատարն 'ի Տաւատս, և 'ի չափ Տասելոյ զկա-

զկատարելագոյնն՝ կարօղս հաստա-
տուն վարդապետութեամբ ։ (ա. կոր. ՟ի.
2։ Եբր. Ե. 12. 13. 14։)

Ապա ըստ այսմ մտայ նկատեացուք
զընդհանուս կարգաւորութեամբ ։ Ցայն
վայր կամբ են քեզ վաստակել պաշտօ-
նէից աւետարանին, և այնպես պարտին
դործել, և դործակից միմեանց լինել՝ի
տեսչութեան հաստատելոց, մինչև ան-
նչեան, յոր ձեզ իւրաքանչիւր ի նոցանէ,
և ձեզ համօրէն Ժողովն, հասանիցեմք
ի միաբանութիւն հաւատոյ, ունիցիմք
զնոյն զմի հաւատս, զնոյն խորհիցեմք
և խօսիցիմք յաղագս հաւատալեացն՝
առանց օտարաձայն և անհաստատուա-
մանց ։ յօդիցիմք ամենեքեան անորոշելի
շաղկապաւ, որ է միութեն հաւատոյն։
Բայց ոչ այս բաւական է ։ այլ զկնա
միաձայն խոստովանութեանն, յատաջել
և իւրաքանչիւր ըստ անցիսիր ընդունալ
կուն և վիճակի՝ի միութեն գիտոյ, կի
՝է գիտոյին քեզ, ՝ի կատարելագոյն տե-
ղեկուե դործոց և վարդապետուե քեզ։
ոչ միայն հաւատալ զնորհուրդս աւե-
տարանին, այլև ՝ի ծանօթութեն նոցա
համառալ, որում լծորդ է վաստուն սի-
րոյ և ընտանութեն առ քեզ։

Եւ այսու ամենեքին լինիցիմք յայր ֆ-
գոբէալ, հետ զկնեակ զարգանալոյցեմք ՝ի
կատարելուե հոգևորական հասակին ։
զաճումն գիտուեն քեզ և սիրոյն մինչ
նորոգիցեմք ՝ի մեզ և յայլս ։ որով կա-
տարի նոր մարդն ըստ ոյ ։ որով ոչ միայն
իւրաքանչիւր առանձին, այլ բովանդ-
դակ գումար հաւատացելոց ունիցի
զկատարելութեն և զամբողջութիւն, և
զհաստատութեն իբրև զմի այր կատա-
րեալ հասակաւ ։ Ի լեռ հասնի ֆոթբ-
համն ջեր, կամ ըստ յունին, լրման քեզ։
Կատարումն քեզ կամ ներգործութիւն
նշանակէ, այն՝ որով ընու կի կատարի
զնկեղեցի շնորհօք, և իմանի ասել ։
կատարել լինիցիմք Ժողևոր հաւատաց
ըն չափու և ըն եղանակի այնր լրման ,
որով կամի քո ձոխացուցանել զհաւա-
տացեալս ։ Եւ կի նշանակէ կրաւորա-
բար, ըն այն կատարումն՝ որով քո լրա-
ցեալ է յինքեան, կի լրանայ կամի յան-
դամս իւր ։ Ըստ առաջնոյն՝ կատարե-
լութեին որ ՝ի քո, լինի նախատիպ գա-
զափար մերում ։ ըն այնպես զարգանայ
ցնկբ ՝ի հոգևոր հասակ դիտութեն և
սիրոյ, ոյն քո յինքեան կատարեալ էր՝
ոչ ըն մարմնոյ և ևթե անտարտ կազմու-
թեբ, այլև ըն բանաւոր աձեւութեին,
որով զարգանայր մինչ իմաստութեբ և
շնորհօք յիմնայինն և ՝ի մարդկայինս,
և ան զևս զկատարելագոյնս ներ-
գործելով ։ (Դ ուկ. ՟ի. 52։)

Իսկ ըն լրմանն՝ որ յանդամս, նկատի
քո իբրև զլուս խորհրդական՝ միացել
ըն իւրաքանչիւր հաւատացելոյ, և ընդ
բոլոր եկեղեցւոյ ։ և հասակ նորահաս
մարդ՝ չափ հոգևորական վիճակի հա-
ւատացելոցն ։ Ա յս իմաստք կարի հա-
մեմատ են անցելոց բանից առաքելոյս,
յորս ասէ զքն բնակել՝ի մեզ հոգւով,
և ևթե եկեղեցի՝ լրումն է քեզ ։ (ա. 23.
՟ի. 17.) և այլոյր նմանաբար ասէ՝ նկա-
րել քեզ ՝ի մարդն իբրև նորածին , և
հաւատացելոց զգենուլ սիրտբ զքն ,
և այլս առյսպիսիս ։ (Գաղատ. ՟ի. 27.
՟ի. 19։) Արդ՝ ըն այսմ ներքին միուե
առ սակաս սակաս կերպարանի քո յան-
դամս , և ունի ՝ի նա զանազան հասակս
և աճումն, մանկութեի, և պատանուե,
և կատարեալ արբունս , ըն որում յա-
ւելս կի նուազ յատաջեն անդամք իւր
՝ի հոգևոր դիտութեին ոյ , կամ ոմանք
ակար , և ոմանք զօրաւոր են ՝ի կեանս
աւետարանին ։ և կի ըն որում առաւե-
լուն կի նուազին անդամքն ըն բազմու-
թեի ։ Ի սոյն միտս ասաց և սկսիցին
յաչխանհեա վս քո ։ * Նմա պարտ է
աձել, և ինձ մեմանալ ։ ‖ (Յովհ. ՟ի.
30։)

Ապա համառօտ տեսուեի քնաբանիս
ասել կամի ։ Յայնմհետ տուեալ են պար-
գևքն քոյի, և ընդունօղք պարգևացն
ցայն վայր պարտին ջանալ ՝ի շինուեին
հաւատացելոց, մինչև ամենեքին նոքա
ևթե առանձինն՝ և ևթե ըն ժողովրդն՝
կապացին ՝ի մի հաւատս , և ՝ի մի գի-
տուեին խորհրդոյն քոյ ։ յորում և
քան զևս զարգանալով կատարելագոյն
ծանօթութեի և հաստատութեբ , լինիք
ցին այր կատարեալ ըն Ժողևոր և ևձ-
ային կենացս , որ է չափն կատարելու-
թեի քոյ յանդամս իւր , որով և ինքն քո
առնու զլրումն այնր կենաց՝ որով կեայ
յանդամս իւրաքանչիւր , և ՝ի համօրէն
մարմինն յեկեղեցի ։ Վո՞ր որոյ ոչ պաշ-

տօնելայքն, և ոչ հաւատացեալքն պարտին շատանալ այնու, զի ծնանին մեր ուսուցիչ, և մնանին կանխամբ առաջին ուսմանց հաւատոց, կի յոգեալ են ի մարմին եկեղեցւոյ, կամ այսոքա, և այլք քան մարդկի յարեցան ի քո· այլ պէտ ասի ի յառաջադէմն փափաքել ըմ հաւատոց և ըմ գիտուն, ինքեանց դիմել ի կատարելագոյնն, և զայլս ծնանել և զարգացուցանել ի քո· ապա թէ ոչ անկատար և թերի ուսումն, որպէս և անշոգուածէն պաշտօնէից՝ զվտանգ փափուածէն ծնանի իբրև մանկան անհատատի։

14. Ո՛չ ջոյս ինչ ես ձեզ խոչ ընդոտ և փաթանգ յամ հոգոյ վարդապետութեան, խոնարհութեամբ ի խոնարհութիւն։

Տեղւոյ ասէ զանկատարան ի գիտուածէն հաւատոց, որք գիւրափոխք լինին և գիւրորսալիք ի պատրանս այլոց, իբրև զանկանուն գիւրավնասուածս մարմնով, և անհատատաս խորհրդովք։ Կատարելութիք են տղայական հասակի՝ անմեղութիւն, պարզութիւն, և քաղցրութիւն։ և յայսոսիկ տղայանալ խրատէ քո և առաքելն։ (Ա տիմ. ժ. 2։ եւ. Կորն. ժ. 20։) Բայց ներելութիք են այնոցա հասակի՝ ոտիւութիւն, թեթեւութիւն մտաց և բարուց, դիւրավնասուածէն ի պատրողական բանից կի գործոց· և յայսցանէ զգուշացուցանէ՝ մի տղայանալ· որում դէղ նախապատգեստ՝ չարի է ասել արիանալ պաշտօնէիցն յանդգնալ մտակարարութեան առելոց պարգեւացն, և հաւատացելոցն փութալ միշտ յաճուն գիտուածէն միաբան հաւատոց։

Ջի՛ ջոյս ինչ ես ձեզ· զի մի ոմն յառաջն ի հնէիցն ասուածէ, կի ի տրեւութեն, կի, զի մի ոմն յառաջն ի սկզբան դարձի մերոյ՝ էաք տղայք դիւրափոխք, անկատարք ի գաւել և յընդրել գՀշմարիտն և զսուտն, նդունիմ յետ այսր ձեայցեմք· զի մի ըմ օրինակի մանկանց՝ որոց դատաստան յետղուկ է, լինիցիմք խոռվեալ, իբրև ալեօք ծփելք, և փաթանգել, յայլ և այլ կարծիս կամ ուսմունս, յամ հոգոյ վարդապետութեն· յոր և ինչ վարդապետութեն, որ իբրև հողմ շնչէ, և տատանեցուցանէ զմիտս յերկբայելի մտածութեիս յաղագս հաւատոց քոյ։ Ջանկատար և զղեւուածս վարժ մարդ օրինակէ ի մանկոյկ անհատատաս, որում պակասիցի զնակ, և կի զնկալար, և ի բաղխել Հողմոց՝ այսր անդր տատուածելիցէ յալեացն յուզելոց· և չէք նմա այլ ինչ ակնկալել, բայց խորտակումն կի ընկղմութեն։ Այնպէս այլ նորուածն ի հաւատս՝ և անդատ տիարակ ի վարդապետեն, անդիտացել ընթել՝ որ ուսուածն Հշմարիտ իցէ, և որ սուտ, յինչ և իցէ մոլորանուն վարդապետութեն իբրև հողմով ի՛ւրեք տրոդ յանկշտակի, անկայուն ծնալով ի վէմն Հշմարտութեն։

Խոնարհ մարդն։ Փոխանակ բառին խոնարհ յոյնն ասէ, տէրէ՛ն, այ քունայ, խաղ նաւարուց, և փոխաբերմամբ խաղ դատութեն, նենգութեն, պատրանք· վասն այն մեր Թարգմանիչն եղ՝ խոնարհ· և նուիրն մոգք առնուն ատորին և արուեսցին, որպէս և մեկնիչք բացատրեն· քանզի սովոր են քաւեխաղացք խաղ դատել զքաւէս յորժամ անհմտատ խաղացողաց Հանդիպին։ Ապրդ՝ խաբեուն մարդկան ասէ զնոքա ի զպատրողական ուսմունս փիլիսոփայից, Հրեաստաց, և աղանդաւոր քրիստոնէից, յորոց դիւրաւ ըմբռնի կի խոռվի անհատատն յուսմունս հաւատոյ։ Ա յսորիկ բացատրութիք է յաջորդն, խոնարհութիք ի խոնարհն մոլորեալ։ Էն ասէ՝ բազմաք, որք պատրողական բանիւք Հնոքրին խաբել, զանազան հաւանական փաստս մերկնայեն, և իբրև արհեստ ունին զնենգութեն առ որս ուղղ զպարտիս։ Փոքր էր ինձս նոյ, եթէ ար ծանեայ վասն, կի փառաց և անուան աղաչաւ քանային ազակերտել զայլս· բայց ամ փոյթ նոյ յայն բնրի, զի խոնարհելով խոտորելոցն ի Հշմարտութեն ամ խորհմանկութեն նոյ ունի իւր նպատակ զմոլորեալքն ողջախոհ հաւատացելոց· կարկառուն բանս կազմակերպեն, մերթ զայս՝ և մերթ զայն վարդապետեն, զյայսմ տուն Հշմարտեն, և զյայսմ Հշմարիտն տեն, ծաղր առնեն, ջղայրտեն զպաշտօնեայս աւետարանին· և միով բանիւ, զամ գոյն կերպարանին՝ ոչ զի Հանապազ Հշմարտութեն, այլ զի զՀանապազոյն մոլորեցուս

ցուսցէն ի ձշմարտութէնէ անտի :

Աստի քաջայայտ է, թէ Տէրն ի վերայ կայ աշակերտացն ի տղայական անկատար ուսմանց յառաջանալ յայրական հմտութէնէ, և վարդապետաց զնոյն հոգալ առանց դանդաղելոյ : Իսկ այն՝ զի յառաջին դէնն ասաց, զի մի էջնէ տըղայք դիւրաշարժք յամ վարդապետութէնէ, ոչ եթէ առաքեալն զերծուկ անձնէ կատածէր՝ անկանիլ պատրանօք ի մոլորութէնէ, ըստ կարծելոյ ոմանց՝ զորս յիշատակէ Տերտիլիոս, այլ զի յանցնէր ասան ընդհանուր զամենեցունց ասաց՝ հասանել ի կատարելութէնէ հասուցոց և զիւրեալ քէնի, զնոյն դէմս պահելով և յայտ տան :

15 · Ոչ ձշմարտաբանէ սէրով, ածեցուսցուք ի նա զամենայն, որ է գլուխ տ :

Ինաբանս համեմատ յոյնին յարմարեալ է, բայց ի բայէն ածեցուսցուք, որ ի յոյնն չէզոքական դնի ածեցուսցուք, ըստ որում զրէ և մի Տայ օրինակ · բայց մեր Թարգմանս եդ ներգործական ածեցուսցուք վըռ Տայցականին զմ · որ նորին պէս կայ ի յոյնին · և կարգումն շաբդրութէնէն այսպէս պարզելի է · Ապ ձշմարտեալք սիրով ածեցուսցուք զնմ ի նա ի քէ, որ է գլուխ : Ոմանք զբառն սիրով յարեալ կարծեն յածեցուսցուք, ըստ որում շարայարի ի յաջորդ տան · առ կայն ևս Թարգմանք ընթեռնուն կից առաջին բային :

Ձշմարտութէ, ըստ ոմանց իմանի, ի չբշմարտութէնէ կալով, պահելով զշմարիտ ուսմանն Տառասոց : Բայց այլք լաւ եւս իմանան զշմարտութէն ներհակ խոտրամանկութէնէ՝ զոր նախ ասաց · և է մատաքն կապին : Ջգուշանալով մեր ի տղայական թերհամոզութէնէ, կալ, ցուցք յանձինս զպարզմտութէնն և զանխարդախութէնն · անկղծ միամտութէ կալով ի Տառասան ուսանելով, և ի սէրն առ Տէր և առ միմեանս, ածեցուսցուք զմեզ, զոր ինչ միանգամ ընկալաք զսերմանս ճշմարտութէ, զդիտութէ, ըստ պարզևս, զչնորհս, զնոսին ջանայիցէմք ածեցուցանել ի նա ինքն ի քէ, զորու թէքն քէի, ըստ նմանութէնէն քէի, ըստ կատարելութէնէն քէի, որ գլուխ է մեր, և բովանդակ մարմնոյ եկեղեցւոյ · որ է գաղափար, և պատճառ մերոյ հոգևոր բական ածմանն : Ըստ մեկնուածս վերին ինչ զնկուցանէ առաքեալն · ի՛ զանենգ պահպանութէ Տառասոց, զսերն, և զամենայն յերկաքանչիւրսն և յայլսն ամ · ի սուտ սահմանի կատարելութէ քրիստոնէական Տասակին, որով պատկեր կատարմանն քոյ կերպարանի ի մեզ · զի վը այսր իսկ յաւել զձև զգլուխն, ցուցանել թէ ոչ միայն պատճառ է նա աղեցուցիչ, այլ և կէս նպատակի եկեղեցական միութեն, յոր ակնառոյց լինելով պարտիմք յառաջանալ ի գլուխն և ի սէրն : Ըստ բացատրեալ մասացս ընթեռնուն և առարին դնելով ·

* Ապ լեմք ձշմարիտք կի Տառասալ ըմբք ի սէրն, որպէս զի որ ինչ մեր է՝ ածեսցէ ի քէ, որ է գլուխ : ‖ Ոմանք իմաստիւք բացայայտէ և արաբացին : Հանդերձ այսու մարթի է ոչ Տայ բնաբանս առնուլ յատուկ ի վը պաշտնէիցն, իբր Տակառակ խորամանկ մոլորեցուցչացն դնելով զնոսին, ՝ի · Ապ մեք պաշտնեայքս՝ ըստ իւրաքանչիւր պարգևի անկեղծաբար վարելով ճշմարիտ սիրովն, չանայցեմք զարգացուցանել զմմ անդամս ի նա ինքն ի քէ, որ գլուխ է բովանդակ մարմնոյն ևն : Ջսահել յումեքանչին՝ դա ֆնեբա, ՝ի զմմ, ոմանք Տամարին եգեալ փոխանակ առելոյ՝ ըսա ան · ուսոի յառինն դնէ՝ յումի, և մեկնին, ածեսցուք յմմ գլուխս, կի յմմի որ ինչ մեր է, յմմ պարգևս և ի գործս բարիս, յմմ կազմանէ և ամ ամմամբք · կամ յմմ անդամս : Իմաստք նոյն միասն և ի մերում բնագրի, թէև Տոլոյն Տայցական պատի-

16 · Ասպ ամ մարինն յօդելե պարզեսցէ ամ խոշտիսօ պարբերբք, ըստ ազեցուք, լուծով ըստ խոտան էնր մասին, զամոն մարնոյ գործն ի վինաց անյին երոյ սերով :

Ամենևին զոյզ յուսականին ընթեռնոյ բնաբանս · և ուր Տամեմատ սովորական օրինակին ընթեռնուս մերս, ըստ իւրաքանչիւր մասին, յոյնն, Հասս, այլք դնեն՝ ապրանց, զի բազում օրինակք և մեկնիչք ասեն Հնաս · Թէպէտ և նոյն միտք են՝ եթէ մասն ասիցի, և եթէ անդամ : Ապլև ՝ի յետին մասն, ՝ի մի-

նաֆ անյին խոյ, յոյնն պարզաբար ասէ՝ ի շինուած իւր։

Յաղագս ամբողջ տնաւնէ մտացն՝ կան, խաւ վկայեաց ասկիբեան, անյայտա բար տալ զնմատան՝ այնու զի կամ ցաւ զնմ մնանդամայն ասէլ։ Որմանց տարակուսելի Լծումեցաւ, Թէ զնարդ քեան օրինակեցելոյ ի գլուխ՝ ընծայէ զայն ազդեցուհս մարմնոյ, որք ի սրբ տէ առաւելապէս յաձախագոյն։ Սա կայն դիւրաւ գտանելն գլուծումն. զի ըս այլաբանեալ նշանակութեն՝ նոյն է ի քո ազդեցուէ գլխոյ և սրտի. սիրտ՝ ազբիւր արեան և անդադար հիւթոց՝ ոչ փոքր օրինակ դնա, քան Թէ գլուխ աղբիւր կենդանական ոգւոց. բայց առաւել գլխոյ նմանութեք բացատրին ներգործութեք քեան առ. եկեղեցի՝ ոչ միայն սակս զերամբարձութեն նորա, որպէս գլուխ ի մարմնի, այլև սակս կենդանական և իմանալի ազդմանցն, ոից և անգամքն և բովանդակ մարմնին կենդանի է բանաւոր. քրն և ի մարդ կային մարմնիս՝ ամ կենդանական և զգայուն ազդմանց սկիզբն է գլուխն, ի ձեռն ջղաց ի խելապատակ անտի մասաղելոց ըմ մարմնին ողջոյն։

Տեսցուք արդ զնիտան։ Ոսոխ ամ մարդն. յորմէ գլխոյ՝ ցի ի քեն իբրև յազբերէ հոգեւոր ազդմանց, բովանդակ խորհրդական մարմնին եկեղեցի, չբեռն, կատարելեալ իւրաքանչիւր հաւատացեալ իբրև անդամօք, և պաշտօնեալ, ըս պատրաստ դասուս որուհետեան իւրաքանչիւրոցն յարմարեալ, ունելով ոչ միայն զկատարելութեի, այլև զպատրաստական դիրս մասանցն առ միմեանս և առ զբ լուխն։ ամ խաղալօտ պարբերութիւն։ Սակ զայնք իմանին յօդք մարմնոյ, որովք առ միմեանս կապին և շարժին առանց զանանելոյ մասուցնէն ամ միաձայնք և փոքունք. և նոքա ջիլք, աձառք, և երակք։ Իսկ պարբերութի, (որ ի սակաւ օրինակս զրի՝ պարբերութի,) ոչ նշանակէ սաս զանազանութեի, կամ այլևայլութեի, այլ նգնալ ի փոխանակ յանդակին էիւնչ բէնչ՝ ցի բաշխուին, առչուի, մասաս կարարութեի, որով մի ինչ յայլմէ յայլ տարաբերի, կամ անցեալ մասնաւորի։ Եւ զի ի մարմնի յօդքն կամ ջիլք են անցք, ըս որս հիւթք և ոդիք բաշխին յիւրաքանչիւր մասն, ցի այն ասին՝ խողովակ պարբերութի. ցի յօդակապք՝ որովք ամ կենդանական շունչ կամ ոգի սփռուի տարածի յիւրաքանչիւր մասն։ Իսկ ի խորհրդական մարմնի՝ այն յօդք իմանին այլևայլ պարգևք և պաշտօնք, և խորհուրդք, որովք անդամք եկեղեցւոյ կապակցք յիրեարս՝ բաժանորդ լինին զանազան նուիրութեն քեան, շնորհացն, դիւռնէն, սիրոյն, և խաղաղութեն։

Ըստ ոչխարոյ։ Հաշխուն կամ մասնաւորուհի կենդանական ոգւոյն, ցի շնորհ հաց լինի յազդմանէ գլխոյն, ազդուցական զօրութեքն քեն սփռին պարգևքն. որ ոչ կամի անդործ Լծորալ, այլ ազդեցուցանել զշնորհսն։ Իսկ ոչ խատնիութեան, այլ յաւել, յաւէտ կի նուազ, այսու կի այնու նշանակաւ, ըստ խոստ տանէր մոսն, ըս հանդամանաց և սիմ ազից իւրաքանչիւր անդամոց, քան որում պատշաճ է գործոյ և ազնուաւ Լծեան իւրաքանչիւր մասին մարմնոյ, որով պահին և զօրանան, և կատարին զիւրեանց ազդումն։ Ի բնական մարմնի ոչ նոյն ազդումն է ի ձեռն և յոտս, որ ինչ յայս կի յականոյս. զայլ կենդանական ոգիս պահանջին փա փուկ մասունք քան զպնդակազմն. նոյնպես ի բարոյական մարմնի եկեղեցւոյ՝ այլ ազդումն շնորհաց անկանի ժողովրդեան, և այլ վերակացուհաց, և սոցա զարձեալ այլևայլ ըս իւրաքանչիւր մասինն։

Չաճուն մարոյ գործէ։ ցի ամ մարմինն այսպէս բարեկարգեալ, և ազդումն ընկալեալ ըս պատշաճի իւրաքանչիւր մասին, գործէ կամ առնու զաճումն իւր։ Ասյսպես որ բոյին գործէ՝ իմանի մարդին. որ ասս կրկին սակս ընդ միջ անկանելոյ բաղում բառից. և քան կարի ասելի էր, գործէ զիւր գյասուն աճուն. և գործէ՝ ասէ՝ կամ փոխանակ ընտնելոյ զաճումն, և կի զի Լիպես ի գլխոյ անտի է աճելական ներգործութեի, բայց և մարմնին իւրով մասամբ կենդանականաօք ինքնաբարվասական յաճուն և ի մնուդ։ Նոյնպես ի խորհրդական մարմնի ընդ ազդեցութ գլխոյն քրի՝ գործեն իւրաքանչիւր անդամք զնոգևորական աճումն զիւրանց,

բանից, և զնկեղեցւոյ։

Ի չնաչ անչէ խոյ. (ամանք, է չնչ ոճաճ.) այ մարմինն ի շինուիլն իւր յատուկ գործէ, վաստակ. ոչ զի զնւր ինքն հաստացէ ի կատարելուիլն իւր։ Ապա է վախճան բովանդակ ազգմանցն և աձելուիլեն՝ ոչ մարմնոյ բնականի, նոյնպէս խորհրդականին. իբր զի իւրաքանչիւր անդամոց անարատ պահպանուի ոչ սոսկ վն իւր է, այլ յօդուած և ի լրումն բոլորի մարմնոյն. որ և յաջողէ սիրոյ յօդակապուիչ առ միմեանս. որով իւրաքանչիւր անդամ մեայ յետրում կայի, և գործէ զնւր անկատարն, և անարժէ զբարիս անդամակցի իւրոյ։ Ոսկր խոտեալ ի տեղւոջէ ոչ միայն զնւր առողջուիլն չպահէ, այլև զյօդակից ոսկր կի զայլ մասն արգելու, խանգարէ, և զմարմինն ողջոյն վշտացուցանէ։

Արդ՝ մով բանիւս կամեցայ առաքեալ բովանդակ համառօտել զօրէնսին, և զարմարուիլեն նր առ օրինս կեալն, յերկասին զոյդ և հաւասար ցուցանելով զհանդամանս իրացն։ Զկազմ ուած բնական մարդկային մարմնոյ եդառաջի իբրև բժշկական իմն բնախօսուիլէ, և լռելեայն ենթող իմանալ, թէ նոյն կազմուիլեն և կարգումն, և ազգմունք, և գիտաւորուիլեն սահմանեալ կան յայր ի խորհրդական մարմնի եկեղեցւոյ։

17 · Ա՛ԷՐ զայս ասեմ և ոխիմ ի չր, զի Ա և այլ չնչ զնոյն օրինակ գնաս, որպես և այլ հեթանոսք գնան՝ ունայնութեամբ խորհրդոց։

Զկարատականն՝ զոր եդ ի սկիզբն գրքոյս՝ գնալ արժանի քնական կոչմանն, և ըստ ինքեանց առ վայր մի, այժմ վերստին առնու. յառաջն աւանդեալ զյանձնառականսն՝ զնոնարհուելեն և զայլսն, որք անկատարք էին կոչմանն. իսկ առաջ զհրաժարելեան խրատէ ի բաց հատանել։ Ասէ զայս ասեմ։ Ապա է՝ զոր ըստ կանոնն էի ասել, և այժմ ասեմ ձեզ։ Վերագոյն ազաչանաց ձեռս կարգեցաց զնոքեսան. իսկ այժմ առաւել սնոցա դոյնս իբրև հրամանաւ։ Ոխիմ՝ ի չր։ Ձորոն և այլ գնան, վկայեմ կի վկայութեի գնեմ. որպէ և մեր թարգմանս գնէ ի խօսսն առ երիցունս եկեսոսի. (գործ. ը. 26.) այլև ի բ. տիմոթ. գ. 1. Եւ իմանի ասել. յայսոսիկս իբրև առաջ չի վկայից ազգ առնեմ ի ձեռն ձեռ կի քոնի. կամ ըստ ոսկերբերանին և այլոց, վկայ ասացելոցս կացուցանեմ զքեզ. իբր զի ոչ լռեցի՝ ոչ զանգիտեցի ասել ձեզ զոր արժանն է։ Զսոյն միտս տայ և ոխիմ ասելն, այ իբրև ուխիւք հաստատեմ զասացեալս։

Մի՞ Ասի չէ զնոյն օրինակ գնալ։ (մի օրին. զնոյն օրինակ.) Ապա է՝ զոր վկայուիլեք քոնի առանգեմ ձեզ, զի մի այլ ևս ի քրիստոնէական կոչմանս՝ կենցաղավարիցիք այնու օրինակաւ, ոչ Ա այլ հեթանոսք։ Լսելին միայն չունի այլ, համամիտ աղեքսանդրեան օրինակին։ Կարող էր ասել, թէ ոչ և գնայիքդ յառաջ, զոր և լռելեայն ակնարկէ ասելովն Ա Ասա. բայց յայտնի չասաց՝ առ ի չծանրացուցանելոյ զբանն. մանաւանդ թէ լաւ համարեցաւ՝ յայլ հեթանոսս զբերկեալս ի լուսոյ աւետարանին՝ ցուցանել իբրև ի պատկերի զայլանդակուելիւն առաջնոց գնացից նոցա։ Ա՛յն տարաղ վարուց և գործոց՝ զոր յայլ անհաւատս տեսանէք ասէ, լինիցի ձեզ ոչ հետևողութ պատճառ, այլ երկիւղի և զղջմանց. զի գնան ոսկերաւորեք մեռոց էրեմից։ Միտս ասէ զնախապատուիմսն մարդոյ՝ զիմացականն, յորոյ ի խանգարել բովանդակ կարողութեանց և ախորժակաց եղծուածն հասանէ։ Եւ ոսկերաւորեք է մտաց խոտորել նր յուղիղ կանոնաց ի խորհելն զերս, ի կամիլն, և յընտրելն. զոր և առ հռովմայեցիս ասաց՝ նանրանալ ի խորհուրդս իւրեանց։ (ա. 21.)

Արդ՝ հեթանոսք օտարացեալք յանձային օրինաց, ունին անձանց օրէնս զհաճոյս իւրեանց. ի մեռոմ և ի սուտ իրս յարին իբրև ի վայելուչս և ի ճշմարիտս. յիմ կենցաղական իրս՝ որք առ ճշմարիտ երջանկութեի ոչինչ են պիտանացուս, հեշտանան և հանգիստ խնդրեն. զմարմնականքս որք միայն ի մարդկային ծառայութեի արքանեկեն, նոքա կամ ի պաշտօն առնուն, և կի ի վայելուչն. և ոչ այս ամ ընդունայն են և անցաւորք բնութեք, նոյնպս ունայն և խորհուրդ նր, և զմայլուածն իբրև ծուխ վաղ

վաճանել՝ ի հողմոյ։

18. Արդ խոտորեալ են սերտ խոնեանց,
և օտարացեալ են ի կենաց ամբ
ոյ, վե փշոտն են որ ի նոտս, վե խո-
տոնէ որոյ խոնեանց։

Կարի ողորմելի ձևացուցանէ զկերպա-
րանս հնձանատական վիճակին։ Որոյ
ասէ՝ խոտորեալ են սերտ։ ըստ յունին՝ խա-
ւարել զ խորհրդով կամ մոռս։ Իբրև խա-
ւար լծանձրամած պաշարել է զհաս նոցա
աղբ ի աղբի մոլորեալ, և ուսումն առաք-
ելական։ խորհին և դաւանն, և կամին՝
իբրև ի խոր մեծան գործելով։ անլոյս
են գլխովին յուղիղ ճանապարհն ճշմարիտ
հրոյ, և ի բնաւորական ուղղութիւնս
իսկ խորհրդեն, զբարին ընդ չար, և
զչար ըստ բարւոյ շփոթել լով իբրև զդնա-
ցօղս ի մառախլի։ Եւ օտարացեալ են։
Որովհետև խաւարազգացք են և խա-
ւարասէրք, չեք նոցա ընտանութիւն առ
կենանն՝ որ ըստ այ, որ գլխովին լոյս է։
զի զնոյն միաբանութիւն լուսոյ ընդ խա-
ւարի։ Յայսոյ կենաց կամ ի կենցաղս
վարուիլ՝ զոր ասէ սահմանեաց, և հրա-
մայէ մարդոյ, այնչափ անձանօթ են,
մինչ զի օտարազգի շուրջ իմն թուին
նոցա։ Աճապարանօք, և բարեկրօնու-
թեամբ որով ասէ կեայ ի մեզ և մեք յամ,
նոր կեանքն ըստ մտաց և պահանջից, անարա-
տութեան հոգւոյ, այսոքիկ իմանին կենդա-
նի։ յորոց անչափ օտարացել էին հե-
թանոսք, որոյ մերձաւորք էին սա-
մարեացիան վարուց։

Վասն փշոտնեին որ է ի նոս։ (մի օրին ։
փշոտնեին ։ բայց վրիպակ է ։) Կրկին
պատճառս տայ խաւարելոյ հեթանո-
սացն, և օտարանալոյն յածաճկանէ կե-
նաց։ Առաջին է՝ փշոտնեան ոչ միայն
չշմարտին այ, զոր կամ անգիտանային
բնաւ, կամ ոչ ըստ արժանւոյն գիտէին,
այլև ուսիւղ կանոնաց վարուց։ Եթէ
ոմանք յհմտանան նոցա ծանեան և ուսու-
ցին զուղղութիւնս վարուց, ոչ միայն
սակաւք էին, այլև գիտութիւն նոցա ի
հայեցուած մտացն և եթէ արդելոյ
ամուր էր առ ի գործ։ իսկ հասարակ
բազմութիւն նոցա, զորոց առաւել ճառէ
բնաբանս, ի հեթանոս ոգիսառն գնայ-
ին։ զոր և ասէ ի նոս, այ որ հասարա-

կաբար տիրեալ էր ի մեզ նոցա։ կամ իբրև
բնական արմատացեալ էր ի նոս։ կամ ըստ
ոմանց՝ ի նոսս իսկ էր ոգիսառնալոյն
պատճառս, և ոչ եթէ չէր հոգւացեալ
այ առաջորդել նոցա ի կարևոր գիտու-
թիւնն։

Վասն խոտորեալ սրտից։ (մի օրին ։ խոռ-
ոնէ, վրիպակաբ ։) Ոմանք զլոյնն ի ծո-
ւածս ընտրեն դնել խաւարութիւն, իբրև
սեպհական տիտղոս։ բայց սովորա-
բար ամ ի թարգմանիչ՝ խոռոնէ առնուն։
և զի կամաւոր է այն, ի ներքս փակէ
զխաւարութիւն։ Աւյս երկիւղ պատ-
ճառ է խաւարային օտարութեան հեթա-
նոսաց՝ չար քան զառաջինն, և մեղ-
նաւանգ պատճառ նորա, որքան չար է
անկարգութիւնն տեսանելոյ քան զլոկ
անտեսութիւն։ Այբա հեթանոսաց, յո
իմանալի մանն նոցա, միաբ և ախորժակք,
այնպես բնացեալ էր ի ճաշակ առա-
քինութեան և չշմարտութեան, ոչ ասք կայք
ի վայելուչն լուսոյ։ ամ ախորք ապակա-
նիչք հոգւոյ զնդալ էին ի սիրտս նոցա, իբր
թե հիւանդ կուրացուցիչք աչաց։ որոյ
դադարս անկարօդք էին բնաւ ի տեսու-
թիւն իմանալի բարեաց, ըստ իմաստնոյն։
(Ե. 21։) * կուրացոյց զնոս չարութիւն
իւրեանց։ ‖ Արդ որ այսպես կուրացել
է, յայտ է թէ ոգեաս միայ զանազան
գունոց, և վայելչութեանց լուսոյ։ սոյնպես
և հեթանոսք ուղիղ վարուց, և ամա-
ծանօթանէին։

19. Արդ զանոնք խոնեանց ջրոյն հաճն,
և մոռնչին զանկիս փիղոնեն, ի
գործս ամ պղծոնեն ախտոնեն։

Ջի մի կարծիցի՝ թէ տգիտութիւն ան-
նելով հեթանոսաց և կուրութիւն, անդ
մեղադրելիք իցեն, առաջի գնէ զպատ-
ճառս կուրութեան նոցա զլարդս այլան-
դակութիւնս։ զի որ չարեաց է սիրող,
առեցօղ լուսոյ է։ (Յովհ. Գ. 20։) Որ
զանոնք խոնեանց ջրոյն հաճն։ Յոյնն
փոխանակ այսր զի բառ ևթէ ունի,
որ ըստ սովորական օրինակին գրի ածել-
ցէ՞ոք, և նշանակէ՝ թմրելոք, անըզ-
գայելոք, ոչ կարելոյն ի ցրտից, որք
ոչ առնուն ի գայութիւն ցաւոց։ և մեկ-
նեն բազումք, թէ հեթանոսք ըստ
կշռի՞ք գլխովին յամ մեղ յերկար ա-
ւրութիւն անզգայք եղեն ի չարն, ոչ

խաղք խղճի, ոչ երկիւղ պատուհասի զգային բնաւ, անշարժ լ'ելս ատեն շաւանաց : Սակայն ամ թարգմանք այժմ ընդհանուն՝ յուսահատելք, անյոյսք. և հին վարդապետք՝ երանուս, Եպիփան, օգոստինոս և այլք նոյնպես յիշատակին. որոյ վս համարին բազումք ընդ հերձմամբ՝ թէ յայլ հին օրէնսն գրէ իցէ ասելն «Եւ յուսացեն հատելք. որոց անշուշտ վկայէ մէր թարգմանիչն՝ այլև այլ բազումք բացատրելով զյոյսն. և համեմատի այս վերոգրեալ ասացելոյն վս երեսացուց՝ մինչ հնդհանուքն էին, թէ * Յոյս ինչ ոչ ունիցէք : ‖ (ը. 12:) Իսկ ոսկեբերան զերկաքանչիւր խմատս ակնարկէ ի բանս իւր :

Արդ՝ այսր ընդերցուածոյ խմատքն են. հնդհանուք առանց հատատոց՝ ոչ մի ինչ յոյս ունէին հանդերձելոց բարեաց. ոչ զայ առ բարեգործսն զնոսա առանն Ճանալէին, և ոչ զապառնալիս պատուհասի առ մեղանչականս. վս որոյ չկայր նոցն ոչ ակնկալութիւն վարձուց, և ոչ երկիւղ տանջանաց : Գալ կանելք յայսպիսի յատոյ և յերկիւղ, ոչ և բարեպաշտուն հոգս տանէին, այլ աներկիւղ և անպատկառ մոռնէին զնոսին. (երկու օրինս յաւելուն, ի բեռոյ :) Ա յս բան է՝ զոր խմատուն զրէ վս անուղղայ խորհողացն. * Ո՛չ ծանեան զնորհաւրդս ոյ, և ոչ վարձուց ակնկալան սրբոցն է, և ոչ ընդ բնին զպատիւ ոգւոց անարատից : ‖ (խմատս. ը. 22:) Մ՚ոռնէլ զանձինս յայս առանն զնոյ կամաւոր բերանն'ի չարիսն, և մինչ ամայն զնորանալ չարեացն'ի վր նոյ : Եւ առանն զինքեանս առանց ամենայ, և առանց հայելոյ'ի պատիւ բազնատ բնութեանս, գնալոն՝ աղտոտ ցանկութեանն մարմնոյ. կամաւ ը ծառայ ուն զազրալի ախտից զերեցան, անառալով ամ շարժմանց նոցա, իբրև զոր զնընկից եղեալ ը ոտիւք թշնամւոց : Ա յլազգ է մանկէն այ զայսպիսիս'ի կարիս անարդուն, զոր ասէ'ի Տաւիմ. (ա. 24. 26.) զի այն խմանի՝ թոյլ տալ կամաց նոցա :

Ի դէպ ամ պ՚ղ-ն է : Եւ առն զինքեանս'ի ձեռս մարմնական ախտից՝ ի զործել զամ ազգ անմաքուր խառնակուլթենց, և ամ օրինական՝ որով հնար է աղտեղել զերազնագին ոչ միայն ներքնատ բարքերնէալք'ի ցաւս ցանկութեան, այլև արտաքնատ բերեալք յամ զործս անմաքուրս, որչափ կարող էին կատարել. ոչ առնէին բնաւ խոր այսմ կամ այնմ զաղտագործուլթենէ. ամեն իրրև զործ օրինաւոր սահմանեալ էր նոցա : Պ՚ղ-ն՝ խմանի զանկութեան անարժան զործ կամ խառնակուլթիւն բնական կամ անբնական՝ արտաքոյ օրինաւոր սահմանուլթենէ. ոսկեբերան յաւելու՝ զամ անժուժկալուլթենէ, զնախանձ, և զայլ անկարգ ցանկութիւնս :

Ա՚ճա-ն է : Ո՚մանք յատուկ զցանկութիւն ընչից իմանան, կամ զարձանաթիրու-թեն, որով զերեալ էին հնդհանուք ոչ միայն առ'ի մեծանալ, և անիրաւել յիւիս օտարին, այլև'ի կատարել զնմարմնոյ ցանկութիւնս, արուց կամ իգաց մատնելով զմարմինս'ի գարշ խառնակուլթիւն այլոց սակս վարձուց և կալանաց : Սակայն բազումք իմանան ընդհանուր զանչափ ցանկութիւն ասելն, ընչից, պատուոյ, որկորոյ, հեշտութենց. և զերկաքանչիւր միտս ցուցանեն բանք ոսկեբերանին : Եւ զոր ասա յոյնն դնէ՝ ἡ ἐπιθυμία, 'ի ա՚. թեսաղ. գ՚. 6. նոր-բին բայն դնի, ուր մերս՝ ջրնել թերթ-մանէ : * Մ՚ի զանցանել և զրկել յերկիւդ յայրմիկ զեղբայր իւր : ‖ Վասն որոյ ասատնոր և աճապարն իմանի սակս բարբար՝ անչափութիւն աղտեղի զորձոցն. և ցուցանէ՝ ոչ միայն անխտրաբար յամ տեսակս բերել հնդհանասաց, այլև անչափապարբ բազմագան սիրոյ ժամուք, ոչ մի ինչ կոպար կամ արդել դնելով առփանացն, ոչ յամաչանացնել ինայելով և ոչ յանամաւթն, ոչ'ի ժամանակ և ոչ'ի տեղի, մի զրիով կանացելաք առաւելով'ի նորանոր աղտեզազործուլթիս, որպ թէ'ի շահավաճառս ինչ ջանալով : Ջայսպիսի անմաքուր յայրատուլթիս հնդհանուց ը արձակագոյն Ճառէ առաքելս առ հռովմայեցիս. (գլ. ա՚.) իսկ ասատնոր համառօտ յուշ ածէ՝ ցուցանել մինչն, թէ կամաւորաբար մատնին'ի գարշուլթիս մարմնոյ, և այն՝ ամենապատուական զործովք, և այն՝ անչափաբար մոլեգնուլթէ, և զի հնդհանասաց ընտ-

նէ

Եւ պատճառ կուրութեանն հոգւոց նոցա, որով չարի էր անդիտանալ նոյն գլուխ վիճի զվայելուչ կենաց՝ ոչ միայն ըստ այլ, այլև ըստ մարդոյ բանաւորի։

20· Այլ դուք ոչ այսպէս ուսարարէք զՔրիստոս։

Առ զարհուրելի պատկեր հեթանոսական վարուց՝ զբիւռոնէականն ի դէմ ի չարիսն, ոչ զի յատուկսն զգուշացեալք, զերկիւղ անարատաւորաբար պահեսցեն։ Դուք ասէ՝ ոչ այսպէս ուսարարէք զՔրիստոս և զվարդապետութենէ քումմէ։ Ձեր այժմու ուսումն կարի օտար և հակառակ է հեթանոսացն ուսմանց և վարուց՝ ի հատատոյզ ձեր՝ ի քո, փարատեցաւ ի մտաց և ի սրտից ձերոց խաւարն ագիտութեան և կուրութենէ ոչ և այնպէս ճանաչէք, կի ախտաժէք զմարմնականքս՝ ոչ հեթանոսք գարշանս և զարհուրանս բերէք առ նոյ հրամանս և գնացս յետ ուսանելոյ զմարդուր օրէնս քոյ։ Քանզի հեթանոսութեանս ասելն՝ ոչ այսպէս ուսայք, զներհական միտս յայտ առնէ՝ փոխանակ ասելոյ, հակառակ այսոցիկ ուսայք։ չէք բնաւ հաղորդութեանն ձերոյ ուսմանդ ըստ հեթանոսականացն։ որում գոհ գայ Թէ և վարք ձեր լինելոց են առնելին այլազգի ի նոցայոցն։

Ոմանք որոշումն առնելով ընդհեռնուն։ Այլ դուք ոչ այպէս։ ըստ նմին ոմոյ որ ի զուկ։ ին։ 26· ցի ոչ պարտիք այնպէս դնալ ըստ հեթանոսացն սովորութեանն։ ոչ արժան է ձեզ նմանել նոցա։ վասն զի ուսայք զքո, մարդեալ էք ի դպրոց քոյն, ի հրամանս աւետարանին դաստիարակեալք։ Սակայն օրինակք առանց խորոյկի ընդհեռնուն։

21· Թէպէտև լսեալ ինձանէ, և ուսեալ որպէս է ճշմարտութիւնն յիս։

Փոխանակ շաղկապին Ըէպէտև, յորմէ դնէ, սակայն եթէ լուեալք զնա։ զոր ոսկերերան և այլք ոչ երկմտութեամբ հաստատեցին նշանակիչ այլ մանաւանդ առաջնոյն։ զի չէր մարթի երկբայել առաքելոյն՝ Թէ լուեալ էր արդէօք եւթէ ասացաց զբան։ ուստի ինձանի՝ արդարև, յիբրեւ լուեալք։ և ի սոյն միտս առ մեզ դնէ՝ Ըէպէտև։ (զորմէ տես ա. կորն։ ա. 26։ բ. 1։) Այլև շաղկապն էնէ՝ ոչ յայտ ուրեք զտարակուսանս յայտ առնէ։ յոր ապացոյց առնու ոսկերերան զբան ք։ Թեսաղ։ (ա. 6։) *Եթէ պարտ է առաջի ձեր հատուցու նել նեղչացն ձերոց նեղութենէ։ (տես և Հռոմ։ ը։ 9։ կորնթ։ ա. 22։)

Իսկ հերձնիմա, ոմիկումնիոս, և այլք ամենք՝ երկմտելոյ համարին զբանս, իբրև երկիւղ արկանել և ի զգաստութեան շարժել զնփեսացիս։ և զի Թերևս ամենք ի նոցանէ խոտորելոյք էին ի բանս սուտ առաքելոց։ Բայց ըստ այժմ մտաց հարկ է զշարադրեալն իմանալ ըստ ներբին լսելութենէ և հաւատոյ, ոչ եթէ յիրաւի ընկալեալ էք և պահէք զվարդապետութիւն քոյն։ Առաջին իմաստքն առաւել հարազատ Թուին, և ասել կամի։ դուք ոչ այդպիսիս ինչ ուսայք ի հաւատս քոյ։ այլ յիրաւի լուեալք զքոյ ձեզ աւետարանեալ, ի քարոզելոյ մեր ընկալեալք զվարդապետութենի քոյ, և նովաս ասայ, կի ըստ նմին ի նմա, ըստ նոյ ազդելոյն ի սիրտս ձեր ծանեալք, վարժեցեալք զուղիղ կրօնս, այնպէս ուրդ է ճշմարտութիւն յեր, կի ըստ յանկնի ի յա։ Ի լսել ձեր զբան քարոզութենանն քոյն, փարատեցաւ ի սրտից ձերոց խաւարն հեթանոսական՝ ներքնատ ուսուցանելոյն զձեզ։ փոխանակ ունայնաբանի մտաց ձերոց՝ քոյ ճշմարտութեին ծանեալ ի սիրտս ձեր։ Ախտակս զճշմարիտ և զանխարդախ ուսումն վարդապետացդ, ոմն ճշմարտութենէ քոյ վայել է, ոմն քո բանիւք և գործով ճշմարտեաց աւանդեալ մեզ։ Ըստ բացատրութենէ ճշմարտութեան իմանի՝ ուղղութեի, արդարութեի, սնահաճ Հանապարհ կենաց, իբրև հաստատ հանգամանութեն՝ զոր ի հեթանոսս ասայ տիրեալ։

Կամ։ ուսայք քոյ լուսատորելոյն, և ի նա յարելով միտութենէն, Թէ որպես ճշմարտութենէ է քոյ կամ ի քո։ ոչինչ ոգիտութենէ ի նմա, ոչինչ մոլորութենի, ոչինչ անարդարութեի, այլ Համակ առաքելութենէ և արդարութեի։ կամ։ ուսեալ դնասցիք, Թէ զիարդ ճշմարիտ է Հաստատարհն կեցոյ ի քո, որ և որպիսի է ճշմարտութենի օրինացն քոյն, յորմէ Հաս-

տաւոեալ կայ անուտս քրիստոնէութեան։ Կամ, ուսայք այնպէս, որպէ՛ Յանաչեն Աշխարհս դաւանողքն քո՛ւ. այնպէս անօսխալ ուսայք, որպէս Աշխարհս անսուտելի է ի քո՛, այնպէս ուղղ՝ որպէ՛ Համեմատ է Աշխարհս աւանդեցին քո՛ւն։ Այսորիկ են այլև այլ եղանակք բազմա. Թողում զոր յատաջ բերի հերքելոյ, Աշխարհս ի քո՛ իմանալով զբանն ՅԱծ բնակեալ ի մարդն քո՛։ Կի՛ դարձեալ, Աշխարհս օրինացն և մարգարէից ՝՚ի քո՛ միայն կատարեալ, ըստ բանին յովՀ. (ես. 17.) * Ընորհքն և Աշխարհս ի Հեռն յիսի քո՛ի եղեն։ ‖

Սակայն այսպիսի իմաստք ոչ են տուչ. ասոյս. այլ յայլորդօքն բացատրէ առաքեալ, որ է Աշխարհս քո՛ի։

22. Ի բաց վերինալ ի յինէ զսա առաջի՛ն փեսացեցն վմարդն հին՝ զպաղխանեսն ցանկութիւնս խաբեութիւն։

Այս է՝ զոր ուսայքն և յանձն առեք ըստ Աշխարհս վարդապետութեանն քո՛ի, ի բաց վերինալ ի յինէ, Թէ պարտիք գլխովին օտարացուցանել ի Հէնէ, զսա առաջի՛ն փեսացեցն վմարդն հին։ Փոխադրութի՛ կայ սոստ շարամանութեանն, փոխանակ ասելոյ՝ մերկանալ զհին մարդն՝ որ ըստ առաջին գնացելոյն, զայն մարդն՝ որոյ գոյութեան ստեղծանի և իմայեալ լինի ըստ առաջնում Հեր կենցաղավարութեանն ի ժամանակի հեթանոսութե՛ն. ինչ՚ դեռ անդրադք ի կենաց անտի ոյ՝ վարքիք յիսի անմաքրութեա՛ կուրօրէն և աներկիւղ։

Այսմ՛ի վերհերք զրացատրութեանն, զպաղխանեսն ցանկութեան խաբեութեն, կի՛ ըստ ունին՝ մոլորութեան։ Յօրինակ ինչ եզական գրի ցանկութե՛. բայց այլք յոքանսն ունին՝ միանձայն այլոց Թարգմանութեց։ Հնութեն անուն՝ ինքնին զապականութե՛ յայս առնէ իբրև արդեն եղեալ կամ լինելոց. վասն որոյ հին ասի մարդն՝ սակս կրելոյն զնոցունն ի Հեռն անարժան ցանկութեանց, որք բնութի՛ն ապականելիք, անցաւորք, և ապականարարք այսմ ար զհետ եթ՚ Թայ նոցա։ Եւ ապականութի իմանի այն՝ ար զմիտս և զախորժակս խանգարքե՛, այլև յեղծումն ամեի զմարդ ըստ բնական բարեաց՝ և ըստ գերբնականացն, ի կորուստ պատճառ, հանդիսանան, և երկնանութե՛ այժմս և հանդերձելոյն։ Զայսպիսի ցանկութե՛ս կոչ խաբեութե՛, վասն զի յառաջ գան ի մոլորեալ և ի խաբեալ մտայ՚ քան Թէ ի տարտութե՛. միանդամայն ինքնին խաբեականք են, և ի բազում պատրանս արկեալ Թակարդին զգանկատեն։ Երեւին իբրև իրաւամբք շարժիլ, և ախրատութե՛ ի գլխովին ի նա՛. կարծին միտցականք, հեշտացուցիչք, փառասէրք. և սակայն բնբրած զանմտանս կրեն, զատ ինքնին ծնանին՝ ոչ ասր զգեց, ի յեսին անարգութե՛ արկանեն զհետևողս իւրեանց։ Այս է պատրողական ունայնութե՛ն նց հակառակ աւետարանական Աշխարհս։

Առաջք Թէ ըստ առաջին փեսացեցն՝ հայի առ մարդն հին. բայց եթէ կամիցի ոք յարել առ Քրիստոս, և այնպէս պահին իմաստքն. ՚ի. պարտիք ի բաց դնել՝ որպ՚ եդիք արդէն զառաջին վարս ձեր հեթանոսականս՝ նաև զհին մարդն բռլորովին. ոչ հրաժարեցաք ի հեթանոսական անմաքուր գործոց և ուսմանց, նոյնպէս հրաժարել ամենևին յոր և իցէ անարժան յօժարութենց և գործոց։ Կամ այսպէս. պարտիք Թողուլ ոչ բնաւ՚ կի՛ ի պատշաճականսն՝ այլ ըստ առաջին անկարգ գնացեցն ձերոց՝ զհին մարդն ևն։

Յաղագս անուանակոչուն մարդոյ՝ հին և նոր, կի՛ մարիաւոր, և հոգեւոր, խօսեցեալ եմք այլուր քան զաւետարանին. (Հռոմ. գ. 6. և 22. ես. կորնթ. ը. 14.) իբրզի հին մարդ ասի ապականութե՛ն և անկարգութե՛ն բնութե՛ն Թողեալ յատաջին միոյց անտի, կամ մանաւանդ նոյն ինքն մարդն անկեալ ընդ նովին ապականութե՛. ոչ և ըՀակառակն՝ նոր մարդ իմանի նորոգութիւն շնորՀոց քո՛ի, կամ մարդն մտեալ յայն նորոգութիւն։ Երկոքին այս վերնակք՝ ապականութե՛ և նորոգութե՛ զայնպիսի այլակերպութե՛ մտածին՝ ի բնութես, մինչդի զնի և զնոյն մարդ ըստ երկու բանեցին իբրև այլաւեսս՝ ի միմեանց, զանուն և եւե պահեալ, և ըստ իսկութե՛ն տարբերեալ։ Ջնոր մարդն իբրև գոյակ ինչ ածային Աշխարհս՝ ի յայնորդ տան։

ման· իսկ զհինն աստանօր սատրա-
դրական սահմանաւ նկարագրէ՝ ի բրև
հրեշ ինչ անբնական, մանաւանդ հի-
ւաղ դժոխական զայն ցուցանելով։
Ա՜ղ զի Տէր անուանէ զայն, որ նշա-
նակիչ է բանաւորի՝ մասնորի, և նմա
Ճարով վարեցելոյ· բայց յաւելեալ ըզ-
տարբերութիւնն, ապուճանել չանդ-
խոչեն, վկայէ զնա վաղվաղակոյս
քան զանվիտ անասունս լինել, ոչ բա-
նիւ կառավարեալ, և ոչ առողջ ղ-ա-
ւելի, այլ զատութեամբ միշտ կապեալ
յապականագործ ցանկութիւնս, յորոց
առնուլ հանապազ, և զոհաբերանալ
կարծէ·խաբել խաբի,և բարեկամաբար
դիրկս արկանել· ապականեալ խանդա-
րի, և Տեառնէ նորաստեղծ կենաս ստա-
նալ։ Ա՜ղ որոյ մարդ է, և ոչ մարդ· ըզ
արտաքին կերպարանացն՝ և ըզ համա-
բերելոյ ցանկասիրին՝ մարդ է· բայց ըստ
մարդկապէս յատկութեանցն բնաբնեն-
լով, ոչ մարդ է, և ոչ անբան զգայուն,
այլ նորանշան այլանդակինչ՝ անուանեցե
առ յոյն։ Կնքին իրի ազդ առնել առա-
քեալս, յամ փութով՝ի բաց մերկանալ
զսա իբրև զայլանդակ զարհուրատե-
սակ՝ առանց հայելոյ՝ի մարդակերպ
տեսիլ նորա։

Իսկ թէ զինչ իմանի մերկանալ, և ըզ-
նորն զգենուլ մարդ, յայտնի ըստ
դատողաբար ուսուցանի։ Ա՜ռ որ սպի
առնէն մեկնիչք ոմանք, թէ այլաբա-
նութ մերկանալոյ և զգենուլոյ ասկարկ
զսովորութեէ մերսութեէն, յորում՝ի
բաց եդեալ լինիցէն հին հանգերձք, և
յետ ելանելոյ յաւազանէն՝ նորս զգե-
ցուցանէին, յորինակ թողուլոյ զառաջին
վարս անկարգս, և՝ի լաւագոյնն փո-
փոխելոյ։

23· Ա՜ռ նորոգել հոգւոյն Տեառ յերդ։
24· Եւ զգենուլ զնոր մարդն,
որ ըստ Աստուծոյ ստեղծաւ՝ արդարու-
թեամբ և սրբութեամբ ճշմարտութեան։

Բնաբանութ ասէ զառաջագրեալսն
նախանձն· ուր յառինն և այլ չմարդ ամանք
հրամայական զնոցն զգայարանս, նորոգելոց-
րոյս, զգեցարուս։ Իսկ յաներևոյթն եղեալ
նոցա առնէն՝ իմանի ըստ անցեալ առն, ըստ
ուսայք քրիստոնեայ նր, թէ նորոգիլ պարտ է, զգենուլ զնոր մարդն
ասէ։ Ա՜ռ Ճշմարիտ քրիստոնէութեէ չէ
բաւական, թէ մերկանայցէք զհին
մարդն, հրաժարեալ միայն՝ի մեղաց և
յապականարար ախտից, և կայցէք
մերկ անժածկոյթ՝ի բարեգործական
վերարկուէ· այլ պիտոյ է և նորոգել հոգ-
ւոյն Տեառ յերդ։ Հոգի ոմանք իմանան
զհոգին սբ իբրև առնիչ հոգևական նո-
րոգութեէն· ըստ նորոգիլ ձեզ հոգւոյն
սրբ՝ի հեղեալ ևի բնակեալ՝ի միտս ձեր,
այնու նորոգիչ զորութեամբ շնորհաց՝
որով հոգին սբ ծնաւ զձեզ ըստ ներքին
մարդոյն։

Բայց սովորաբար իմանի հոգի մարդ-
դոյ, բանական մասին, իբր ասել·
նորոգիլ հոգւովն՝ որ է միտքն ձեր, ըստ
խմացական մասին առնուլ զփոփո-
խութիւն՝ի բարին· որալ որդուին դնի՝ի
ղազարական հոգւոյ կամ՝ի շնորհն· և
յայտ առնէ զՀանդամանս և զպէտս
քրիստական նորոգմանն, թէ ոչ սահմանի
այն ըստ մարմնոյ և արտաքին գնացիցն
ևեթ, այլ առաքինն և գլխաւոր՝ի մտան
իշխանական պարտ է մատուցանել ըզ-
բժշկութիւնն, ուստի և ախտքն ակսան,
ուր կայ և սկիզբն գլխաւորացն և գլխաւո-
ցութեան քան· զի մի կարծիցի ըստ մոլորեալ
ոմանց, թէ վերին մասն բանական ոչ
տիրեցաւ յապականի զանկուէ· զի այնմ
ասի նորոգիլ որ չնացեալ է։ Այսպէս մեզ
առնուն ասկզբնական, օ դատնինաս· (գիրք Ժէ· յղէս Երիւս-
զլ· Ժէ·) և այլ մեկնիչք· Համաձայն
առացելոյն առ Տհովմ. (Ժէ·14·) *Ն՜ա
րոգեցարուք՝ի նորոգութիւն մտաց։
Այսմ ներքին մասուր նորոգմանն ըզ-
հետս գնալ և ուղղութեէ արտաքին առ-
բաղաւ կենաց, և պայծառանալ՝ի գործս
անդ՝ որպ առաղջութեէ՝ի դէմս արտա-
փայլել։

Բացայայտէ ապա զնորոգութեն առա-
ջելս, և զգենուլ զնոր մարդն։ Ոմանք ըզ
հերձուածոսն՝ նոր մարդ ղբս իմանան առ
ատուածս· ըստ որում այլուր ևս ասի՝ զգե-
նուլ ղբս։ (Հռոմ. Ժէ. 14· Գալատ.
գ. 27·) Ա՜ղ զի՝ի նմա ամ ինչ նոր է՝
ասէ հերձուածս, յղութեէն, ծնունդն,
մանկութիւն, կենցաղքն, վարդապետու-
թեէն, մահն, կենդանութեէն, փառա-
ւոր վերելքն· և այս նոր մարդս քրիս-
տոս հաւաքէալէ, ասծոյէն զորութիւ արա-
բեալ

բեալ է լինել Աշխարհս որդի այ, յորում խակուԹիՀ բովանդակի ամ արդարուԹիՀ և սրբուԹիՀ : Ա յսոքիկ ըս Հերանիմ ըս · իսկ ըս ադուԹիացեալն՝ նոր մարդ է քս Հակառակ Հնոյն ադամայ · որ ստեղծեալն է յարդանդէ կուսին՝ ոչ մարմնաւորաբար , այլ շունչ ըս , ևծայրին Հոգւոյն ներդործուԹիՀ , կի՛ ի դէմս շնորՀ Հայ և լուսաւորել , առ՝ ի լինել արդար և սուրբ :

Ա յս խմատոք վայելչաբար ասացեալ են , բայց ոչ այնչափ Հարազատապէ առ բնաբանս · ապաքէն լսելիք՝ ի բերանոյ առաքելոյս՝ կոչել զԱ երկրորդ մարդ՝ ըՀդեմ առաջնոյն · (ա· Կոր· Ժէ· 47·) Բայց նոր մարդ՝ ոչ ուրեք յայտնապէս · մանաւանդ առ տեղեսաւորդիմադրուԹեան առնէ՝ ոչ առ Հինն ադամ , այլ առ Հին մարդն մեռեալ և ցանկուԹիՀ : Ա յլ սա վարաբար մեկնիչք ըս ասկեբերանին՝ նոր մարդ իմանան զներՀական անցելոյն , որ զնոր կեանս մարդոյ , զկեանն ըս նորոգ շնորՀաց , կի զնոյն մարդն՝ ի ՀնուԹիՀ մեռեալ վերածեալ՝ ի նորոգուԹիՀ ուղիղ վարուց · զի ըս ասկեբերանին՝ Հնացեալն ասի նորոգումն · և զի մի կարծեսցի՝ զայլևայլ մարդ՝ ի ներբս մուծանել , զոր նախ Հին ասաց , նմին տայ և զնոր բոզիչն · նոյն ևնիթակայ գոլով փաթաՀանի է՝ ի պատահան ևեՀ՝ ըստ առաքինուԹ , կի ըս ախատորուԹ : Եւ զԻ զեցիկ յաւելու ասկեբերան , Թէ մարդն ոչ Հանապէ առանց ներդործուԹեաց · նմին իբրև այսոքիկ ոչինչ ընդՀատ քան զներուԹիՀն բացատանաւ ցանկն զմարդ լինել բաբե կի չար · ըս չարուԹիՀն՝ Հին կոչի , և ըս առաքինուԹ՝ նոր : Ի սոյն միտս Հայի և վերադոյն ասացեալն · (ըՀ· 15·) * Զի վերկոսին Հաստատեալ ցի ինքեամբ՝ ի մի նոր մարդ : Եւ նոյն է առեալ , նոր արարած : (ըՀ· կոր· Ե· 17: Գալատ· ի: 15:)

Աոդ՝ զԱենոս՝ ըստ մարդն ոչ այլ ինչ է , բայց յախտաւոր վարուց փոխիլ յա նախա կեանս ևծայաշատե · և զի այս կատարի կերպարանակցելիքն ըս քսի , գՀետ գայ՝ զի որ զդևնաս զնոր մարդ , զդևնաս զնա ինքն զայ · ուստի ըս ներ քին իմաստիցն՝ կի ըս գործոյն լծորդեն երկոքին ասացուածքս : Իսկ նոր մարդս շատ այ Հոգեբոյս է , այ առեղծեալ , արարչագործեալ , ոչ և վերջ գոյն · (ըՀ· 10· 15·) զոր ադուԹիացին առնու ըս նախկին արարչուԹեն · այ՝ ի սկզբանն առեղծած Հոգին՝ ի կեանս շնորՀաց առ՝ ի լինել արդար և սրբ · Բայց սովարական իմաստքն են ըստ երկրորդ արարչականն քսիւ · որով մարդ յայ կամպն և՝ ի շնորՀաց , կի ըստ այ օրինացն , ՛ի պատակեր և՝ ի նմանուԹ այ ստեղծագործի նորոգ ծննդեամբ աւազանին , սրբաբար և սբՀ : Ա յսք քիկ կամ զվախման և զգործ ստեղծմանն նշանակեն , այ առ՝ ի կեալ արդարուԹիՀ և սրբուՀ · և կի զպատճառ և զեղանակ ստեղծմանն · այ՝ ի ձեռն աչ դարուԹիՀ և սրբուԹ արարչագործեալ՝ ի նոր կեանս · զի ըս ասկեբերանին՝ վերածումն է յոչ գոլոյ՝ ի գոլ առաքինուԹիՀ :

Իսկ որ՝ ի մերս դնի՝ պտուղ լոյսոյ , ՝ի սովորական յոյնն , և յարաբացին ասի, պտուղ հոգւոյն · բայց կասկածելի է՝ ի նման բանէն առ գաղատացիս մտեալ այսր վրիպակաւ գրչաց · վասն զի յանցեալն ոչ զհոգւոյն էին բանքն , այլ զլուսոյ · և այսպէ ընձեռնուն լսանինն , ասարին , և աղեքսանդրեան օրինակն · և Թէպէտ՝ ի բնաբանի ասկեբերանին՝ հոգւոյն կայ գրեալ , բայց ինքն՝ իմիկ նեղն՝ պտուղս լուսոյ ասէ ։

Աբդ՝ ասէ առաքեալս , գործք լուսաւորս վիճակին՝ որք հարազատաբար՝ ի նմանել բղխեն , ամ բարութի է , հաստատ տեալ կան յամ քաղցրութէի , և՝ ի բարերարութէի , հակառակ բարկութէի, դառնութէի , և նմանեաց ։ և արդարութի , արդարադործութէի առ ընկերս , հակառակ ազահութէի , գողութէի և նմանեաց ։ և ճշմարտութի , անկեղծ և ուղիղ դնացիւք , հակառակ սուտութէի , խաբէութէի , կամ պատիր հեշտութէից , ծաղրածութէից և նմանեաց ։ Սաքա յերեսին են գործք խաւարի անհաւատութէի , բայց անպտուղք , ոմն կոչէ՝ ի յայ ջորդն ։ Վայելչաբար համատասեաց պտուղս հոգևոր լուսոյն՝ ընդ նմանութէ զգալոյն · վ՚ր զի և նիւթականս լոյս քաղցր է յերևմանն , արդար՝ ի տալ զիւրաքանչիւր պէտս երկրայնոց , որք շիչ և յայտնօղ ամ իրաց ոմն են ։ Բառն ամ իմանի առ երեսին և՝ ընդ ոսկերք բանին · զի ոչ է յատուկ գործ լուսաւոր կենաց՝ ի մուն կամ՝ ի մուսուն պահել զբարութէի և զայլսն · այլ ամ ուրեք և առ ամենեսին լինել քաղցր , արդար , և ճշմարիտ · նման իւր ելնէ հաւատացեալն պահպանիցի միավ իմիք , թէ և՝ ի լոյս է ընդ վիճակին , բայց ոչ իրրև որդի լուսոյ դնայ ։

Ոմանք զբառն ճշմարտութէ վերաբերեն առ այլ երկուսն , իբրև թէ ճշմարիտ բարութէի և արդարութէի , որ անկն զձիւթ և ընդ այ , հաճելմատ ասացելոյն՝ ի վերոյ · (՟ի · 24·) * Արդարութէ և արբուեթէի ճշմարտութենէն ։ ‖ Սակայն ամ մեկնիչք զատանեն , և յարմարումն բանիս տարբեր է՝ ի յատացչութեալ ասացուածոյն ։

ԼՅ։ Ի ՅՅՐՐԴ ԼՒՒՒՔ ՈՂՈՐՁԵՔ ԳՈՐ-
ԾՈՅՆ ԽՈՒՍՒՔ , ՈՒՐ ՄԱՆԱՒԱՆՔ
ՅՈՂՈՎՈՒՐԴՆԵՑԻՔ ։

Ի փորձոյ առնել կացեալ ձեր ընտրու-
թեան գործոցն՝ որք ի լուսոյ են , և
որք ի խաւարէն , ի ՅՅՐՐԴ ԼՒՒՒՔ ։ (ալ
օրինակս ՅՅՐՐԴ ։) մի քնաւ հաղորդիցիք
անպտղութեան գործոցն անպտուղ
գործոցն՝ որ յատուկ են խաւարի , ի
խաւարէ ծնանին , և ի խաւարի գոր-
ծին ։ Արգելու հաղորդել գործոցն
այնոցիկ , յորս ոչ քնաւ մերձենալ ար-
ժան է ։ բայց ընդ գործօղսն պատա-
հէ ուրեք հաղորդ լինել կամ ի հար-
կէ իմեք , և կիմնաև ի պետանութէ ,
որպս լոյս առ տիրամ ի ցամաքեցուցա-
նել , կամ բժիշկ առ հիւանդ ի դարմա-
նել : Գործ խաւարի են՝ զորս վերագոյն
թուեցաք ։ (Ո. 25. և աստ. 3. 4.) և առ
գալատացիս (Ե. 19.) գործս մարմնոյ
ասէ ։ Եւ ըստ յատկութեանցն ստորագրէ
զամ գործ մեզանչական ։ և ասէ խաւա-
րէ , զի յատաջ գայ յանգիտութենէն ոյ և
ճշմարիտ ուղղութենէ , ազդել ի ստուտ
նայէ՝ որ իշխան է խաւարի ։ գործի ծած-
կապէս ըստ կարի պատրաստակել ի բար-
ւոյխնքէ , և զմիտս գործոցացն մերձաց-
նել ի ճանաչումն ճշմարտին և ուղղին ։
Անպտղութեան ասէ՝ հակառակ պտղաբեր
գործոցն լուսոյ ։ (ի 9 տան ։) բայց ոչ
ըստ պակասութենէ ևեթ իմանի , ոչ թէ
ոչ մի ինչ հետևոյթ ունին առ ըստ և առ
մարդ բանաւոր , այլև ըստ ներհակու-
թեան , այն ինքնակար , կարօտական իբրև զար-
մատ թերանալոյ ։ Գործք անպտուղք
ոչ գոյ պտուղ բերեն , բայց յայժմուս
զամենի խայտառականաց , և յաւիտեան
զմահ մշանջենաւոր ըստ բանին առ
Հռովմայեցիս ։ (Ո. 21։)

ԼՀ։ ՓՈՐՁԵՑԷՔ ԳԻՆԻ Է ՀՈՃՈՅ ՔՆ ։

Ընտրուիք են գնացք լուսաւոր կենաց ,
և ոչ անգիտաբար կիմ ըստ հանդիպման ։
մի այն զքննելն պահանջէ ։ փորձեցէք ։
յորմէ ըստուելոյն դնէ՝ ետրնելով ։ այ
իբրև զորդիս լուսոյ գնացէք , փորձէ-
լով ևն։ Աւաջին գործ է լուսոյ՝ որս-
շահ ասէ իրաց , ընտրուիք առնել գու-
նոց , վասնզի կենդանի գտանել ի յայս
հանել զնծած կենաց ։ Արդ զորով ձեր
ասէ՝ ընդունօղք լուսոյն հաւատոց ,
պարտիք խնամով և տեղեկութիք քննել ,
և գտանել զոր ըստ իրաց , կամ տեսանիք ,
թէ զբարին՝ և թէ զչարն ։ կշռեցէք՝
զոր ուսուցանին և գործեն տոագան
խնամտութիք՝ առ այն զոր աւետարա-
նին աշակերտք բարոզեն և առնեն ։ և
տեսանիցէք , թէ ինչ է հաճոյ քն , որն
յերկուց հաճոյական է քնի՝ յոր հա-
ւատացիք ։ որ գործ , որ ճանապարհ ,
որ ուսուին ուղիղ է կիմ ճշմարիտ՝ ընտ-
նելի առ նծ ։ Զոր մերս ասէ , հաճոյ
քն , նոյնպես ունին այլ թարգմանք ,
միայն լատինն ընդ ։

ՓՈՐՁԵ մարթի է առնուլ՝ ոչ միայն ըստ
խնդական քննուն առ ի գիտել զուղ-
զութի կամ զնժիւրութի իւրաքանչիւր
գործոց և ուսմանց , այլև ըստ գործնա-
կանին՝ արդեամբք տեսանելով զորո-
շումն իւրաքանչիւր ճանապարհի ։ իբր
ասէ ։ եթէ ի ձև զ յայլ զիտրձ առնէ
էք մարմնական այսոից , և կամ ըստ հա-
կառակն՝ հոգևոր վարուց , այգու տե-
ղեկասջիք թէ որն է արժանի այ , և
առ քս առաջնորդօղ ։ Եւ յայսմ ամի
նմանութիցէք , ոմն բերէ ներոնիմոս , առն
լսմայափոխի՝ որ զքրանն փորձել քննէ
ոչ միայն ասլ , այլև ձայնիւ և կշռովք
և փորձաքարիւ , առ ի որոշելոյ զգ-
սուսն ի ՃշմարտէՆ ։ Մարթի է գրձ ,
զփորձելն իմանալ ըստ բարւոյ մասին ,
ոյ քննել և ընտրել թէ զինչ առաւել
հաճոյ է ոմն յիւրաքանչիւր բարի գործ՝
առ ի կատարել զաւագոյնն , հաճո-
մատ բանին առ Հռովմ. (Ժբ. 2.)
* Զինչ են կամքն ոյ՝ բարին , և հա-
ճոյն , և կատարեալն ։ ‖

արհամարհել, խայտառակել զայնպիսի գործս, որում գՀետ գայ նոյնիմբ յանդիմանել և զգործօղն։ Կրկնակի կալ տարի այս յանդիմանուն. մի՝ գործով լուսաւորօք՝ որք հակառակ են ախտաւոր գործոց. զի լոյս իւրով ծագմամբն յանդիմանէ զխաւար. և ըստ այսմ ամ որք բարեգործք յանդիմանիչք են լարեաց և գործօղաց նոյ առանց խօսելոյ. զի անդնման գործք իւրեանց լոկ տեսուածքն ծանրանան՝ ի վե՛ր այլոց՝ ըստ խոստովանելոյ նոցին իակ ամբարշտաց։ (իմաստ. ը. 14. 15. 16.) Երկիր, Նաև բանիւք խայտառակել օրէն է բազում անգամ ըզՀիւրուն սխալս գործոց, յորժամ դէպն բերէ խրատել զյանցաւորն, կամ յորժամ ի խաւարասէր մարդոց գայ Հակզուելի գործի պարզամտաց. կամ Հիւրընկեր սրտիւք ծաղր առնեն զանձ պաշտուածի։ Ըստ երկաքանչիւր իմաստս յիշեն մեկնիչք ըստ սկզբերանին, որ ասէ՝ Հէ՝ ի չանդիմանալ առաքինուն՝ չարք ոչ կարեն Հարձակել, այլ ի գնել Հրապոյր լուսաւորին ամենայնքն, և գործս չկարէ մանանել. խրատել բանիւ և վարուք՝ է յանդիմանուելի կատարեալ. ոչ ոք է՝ որ Հաքաւցանէ զանազիւս վարս։

12. Ոչ է ոք ի ձեզ՝ որ ինչ գործէ ի չարս, այլ և խօսել ոչ կարէ։

Օրինակք ինչ գրեն, որ ի ձեզ ինչ. այլ. և խօսել չէ՛, կամ ասել չէ՛։ Յունաց կանն և այլք յոգնակի ասեն, զծառուկ գործեցեալսն ի նոցանէ՝ աղտեղի է և ասելն։

Ըստ իմաստիցն ակնարկէ զորդիան ան. Հաւանուն, զորոց նախ ասաց, և ըզգուշացոյց չլինել նոցին մասնակից. (6. 7.) և ապա զգուշացոյց ի կցորդուել գործ ոց նոյ, որք խաւարայիքն են. և առաջ ջիկայիւս ասյ զպատճառն։ Անկասկած զգուշալի են գործք նոյ ասել, մինչ զի զոր ի ծածուկ գործեն ի մէջ իւրեանց, նաև ի բերան առնուն գարշելի է, և ղանելիս պղծէ. ապա օրըստ և գործ ծոյ կատարելիս։ Այլ իակ է պատճառ, զի և ինքեանք դիտելով զգարշելիսն իրացն, Հնարին անյայտաբար գործել զորոնեն կամ զոչ իշէր, և կամ զմիայնուել։ Ըստ մարմնական զգուշագործուհան յայտ առնէ, որք սովորել էին ի նեՀանոսայլև ի մէջ սխմնեան աղանդաւորաց. ոմանք Համարին նշանակել և զկախարդական ներգործութիւնս յաճախելոյ յԵփեսոս։ (Գործ. ԺԹ. 19։)

Ասլազգ և տեսանի յարմարուն բանիս, իբրև պատճառս տալով՝ Թէ Հարկ է լուսաւոր դնացիս յանդիմանել զախտաւոր վարս։ Վա՛յ զի յայն սակս մանկանցն յայնպիսիս՝ ի ծածուկ գործենն, զի և խօսելն անգամ ամօթալի է և զզուելի, Թող Թէ Համարձակ երևիլն։ Իսկ եԹէ Հակառակ վարուք սրբութեան ոչ յանդիմանեսցին, այնու Հետև ազատագործ իշխեն գործել զաղտեզագոյնս ամօթն է՝ որ տայ նոցա Թաքուցանել զգարշելին ըստ վարագուրս դիշերոյ. ի բառնալ ամօթոյն՝ ամ ժամ և տեղի լինի նոցա գործարան զաղտութեց. ոչ լոյս արևուս է՝ որ Հալածէ զխաւարային գործս, այլ լոյս Համեստութեն և ամ պատշուճեն։

13. Այլ ամենայն ինչ յանդիմանելոյ՝ ի լուսոյ յայտնի լինի. զի ամ ինչ որ յայտնի է, լոյս է։

Ասացուածս միօրինակ պատշաճի՝ Թէ զգալի լուսոյ, և Թէ Հոգևարքն կամ լուսաւոր վարուց. և ըստ երկաքանչիւր ևղանակի՝ դիտաւորութիւնն իմաստիցն յայն Հայի, Թէ անբարի վարուց սեպհական է ծածկիլն կամ գաղտնութենէն. զոր Հարկ է մերկանալ յանդիմանելոյ առաքինակիցն քաղաքավարութեն։

Այլ ամ ինչ, Թէ Նեւթական զգալի, և Թէ մարդկային գործ, յանդիմանել՝ ի լուսոյ, յիմնէն ընկալեալ ղլոյս զգալի, կամ զիմանալի զանձպաշտուն, յայտնի լինի, յերևան ելանէ, ոչ ևս կարէ Թաքուն մնալ, երևի օրալիսն է՝ ոգևոյ կամ գևղեցիկ, բարի կամ յոռի։ Լաւինացոց ընԹերցուածն զբառն ի լուսոյ յաբեր ի բայս յայտնի լինի. և ոմանք զայն քնարելի Համարին, քան Թէ յարել՝ ի յանդիմանել։ Իբրև Թէ՝ որ ինչ միանգամ յանդիմանեալ ցուցանի, ի լուսոյ ուսնի զյայտնիին։ Սակայն այլ Հարցմանք ասասրին և աւաքացին, նաև օրէնակ ազանիացոյն ընԹեռնուն՝ յանդիմանել ի լուսոյ. որում Համաձայնի և մեկնուԹի Հերձնիմասի. և յերկոսին նոյն իմաստք են. վա՛ղ ոչ կարէ ինչ յայտ-

յայտնիլ՝ ի լուսոյ՝ եթէ ոչ յանդիմանեալ ի լուսոյ անտի ։

Զի եմ ինչ որ յոյժ է ։ Կրկնութեամբն յայտնագոյն առնէ զասացեալն . եմ ինչ՝ եթէ նիւթական՝ և եթէ մարդկային , յորժամ յայտնի է , ոչ ևս մնայ խաւար կամ ծածուկ անեղեակ . այլ լոյս է , ի լոյս գայ , լուսաւոր լինի , պայծառ և ակներև ։ Արդ՝ ընդհանուր ասացուածովս յայտ առնէ առաքեալ , թէ զոր օրինակ զգալի լուսոյ բնութի՝ ինքնին երևելի լինել , և զայլս երևել յայտանել , և ընդ հակառակն՝ խաւար ինքն աներևելի և այլոց թաքուցօղ , նոյնպէս յիմանականին՝ Հոգւոյ տուեալ և ուղղութի վարուց ինքնին յայտներևակ են , ոչ բնաւ խնդրեն զինքեանս , և զայլն ամ ինքեանք ի յայտ բերեն . և ըստ հակառակս՝ ապականութի , մոլորութի և ի թիւրութի վարուց՝ իբրև խաւարայինք ոմանք միշտ զծածկութի սիրեն , թաքչին ըստ կերպարանաց իրաւանց , կամ բաղադրեալ , կամ օգտակարուն . և ի պակասիլ այնոցիկ՝ խնդրեն զանյայտութի տեղոյ կամ ժամանակի ։ Այսմին իրի ի ծանդեալ լուսոյ Հոգւոյն ամբիծ վարդապետութի և ծածկաշատութի , յանդիմանեալ երևիս ապականութի և անկարգութի գործոց . յայտնի լինի՝ թէ զնարդ անմտական է ապականն , և ազտեղի կամ անարժան գործոն . և այնպէս որ անյայտութիցն նախ խաւար էր , յայտնութեամբն լինի լոյս , ըստ յայտնատեսիլ ծանուցեալ որպիսի էն , և ոչ թէ ապականն կամ ազտեղին լինին Հոգւմբրա , կամ անարդ ։ Այսպէս իմանի բանս՝ յորժամ առնուցուիմք ի վերս մոլար ուսման , կամ ախտաւոր վարուց ։

Իսկ ի վերս անճանչ առեալ , ոսկերբան , հերոնիմոս և այլք զայսպիսի կազմին իմաստս Աստուածային խաւարային ուսմունք և գործք անհատանիցն կըշտամբելոք լուսով բանին այդ , կամ յորդւոցն լուսոյ , և ի լուսափայլ վարուց նոցա , յայտնեալ ցուցանին լինել թիւր և ազտեղի . և որ այսպէս յայտնի լինին , լոյս են , ըստ փոխին ի լուսազգնութ , յանդիմանութիւնն առ ապականեալ պատրաստին , ինքեանս դառնան՝ Հանապազ լով զմոլորութին Հանապարհն իւրեանց ։ Եւ Հեթանոս ոչ ամենեքին այնպիսիք

արդեամբք գան յաղիղն , բայց ի կազմանէ որդւոցն լուսոյ դնի յանդիմանն նոյ Հրաւէն առաջնորդական . յայտնութեի ախտին՝ է նոյ սկիզբն ուղղութեի , ըստ բանի սկզբն պետրոսի՝ ի խրատուին զկնայս հնազանդել արանց իւրեանց . * Զի եթէ իցեն նոքա ապաստամբք ի բանէ անտի , յաղագս կանանց դնացից՝ և առանց բանին իսկ շահեսցին , դիտել երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս ։ (ա . Պետ . գ . 1 . 2 ։) Հեթանոս և իրօք ոչ յաջողիցէ ամենեցուն շահիլ ։

Կամ , ըստ այսմ մտաց առնէ՝ լոյս է , իմանի յոմանց . այս յայտնին՝ լուսոյ գործէ է . ոչ այլով իւիք խաչատակիչ կամ ի տես գայ Հիւրութեի անհատանիցն , բայց լուսով ծածկաշատութեի . Իսկ այլք ի վերս որդւոցն լուսոյ կամ Հատացելոց յարմարին զբանս . Այլ գոլով ձեր որդիք լուսոյ ծածկաշատութեի , չանիք տարակուսիլ ըստ խաւարային Հանապարհն . այլ գիւրաւ ամ ինչ յանդիմանեալ ձեզ՝ ի լուսոյ Հաւատոց յայտնապէս երևիլ ուղիղն և Հիւրն . և ի ձեռս ձեր է՝ այլ շնորհաքն ըստ քաջայայտ և լուսաւոր Հանապարհն գնալ ։

14 . Ա ան որ ի սէր արի ոչ ննջէիք , զի կռնչէիք ի գիւղս , և լուսոյ ոչ էիք ։

Խնդրելի ևղև առ ամ մեկնիչս , յորմէ գրոյ վկայութիւն բերէ առաքեալն : Ոմանք համարեցան ի Տարազատ ինչ կանոնական գրոց բերել , որ կորուսեալ իցէ այժմ . զայս չիշէ և սարգիս մեկնիչ : (երես . 821 :) Այլք ասեն , յանհարազատ գրոց առնուլ , ոչ երբեմն ի փիլիսոփայից և բերէ ասացուածս . կամ ըստ չիշելոյ եպիփանու՝ ի հին մարգարէութենէ ինչ եղիայի , կամ յայլայլ գրոց երևփայի : Ոմանք առ Հեթոդիոսոսի կարծեցին՝ նորոյ ուրուսն քրիստոնեայ մարգարէն կամ տաղմոսղն լինել վկայութեի . և Հերոնիմոս պատմէ ասասանօր , իւր իսկ լուեալ չէ կնղեցւոջ քարոզել մերոյ ուրուք , Թէ քո կախեալ ի խաչին ի գողգոթա՝ մասց առ ադամ անասնօր Թաղեալն , որ որ ննջիսդ ադամ ևն . Ըստ որ ունկնդրելն զհաւանական ցուցին նշանս . բայց ևս՝ ասէ Հերոնիմոս , ի գաւառսն

ընթերցողաց թողում զընտրութիւնն. միայն զի ոչ յարմարի ասէ՝ ընդ իմաստս տեղւոյս։ Ցիշատակէ հայ մեկնութիւն թղթոյս զկարծիս ոմանց, զի ասէին՝ առ հեթանոսս լեալ նման ինչ բանի, թէ արի ննջեցեալդ, և լուսատու լեալի քեզ աստղիկ ոմն. զոր առաքեալս փոխանակ յարմարէ ի քո։ Եղեն և այլք՝ ի հրէից սովորութենէ ասել նմա, նաբանութենէ. զի ի գլուխ քառաքական տարւոյն գոյմամբ փառոյ քարոզ կար դայր ի զգաստացուցանել զժողովուրդն, արի որ ննջեցող, ելբուր ի սկըսումն նորոյ ամին նորոգել զգործս իւր եանց։ Այս ամ կարծիք ընդ մասին անդ հաստատաք են, և ընդ մասին անընդունելիք։

Վասն որոյ այլք զառն ասէ, ոչ համարին նշանակիչ վկայութեան այլոյ ումեք, այլ թէ լոյսն ծնդիսութիւն, կամ մարդն նովատ լուսաւորել ունի ասել առ խաւարեալն, արի որ ննջեցող ևն. ելբուր թէ ինքն առաքեալ գնէ ի բեւեռան որդւոցն լուսոյ այսպէս խրատել զմոլորեալսն։ Եւ համարին նման ասացեցելումն առ եբրայ. (ժԲ. 5.) ուր զմիութիւնն ծնդայնի ելբուրն անձնաւոր ձևակերպել, տայ նմա խօսել. * Եւ մոռացարուք զմիութիւնն՝ որ ընդ ձեզ ելբուր ընդորդեակս խօսի. որդեակ իմ մի լքաներ ևն։

Իսկ այլք յարմարին այսպէս. ասէ ծն կամ հողին ձեր ինև, իմով բերանով, ընդ ոճոյ մարդաբեխցն՝ որք զերբանց դուշակութիւն ընծայէին ոչ, այսպէս ասէ ձեր։ Ջայս եղանակ յիշատակէ և հնբրնմոռ. և մարթ է ի սոյն պատշաճս ձեցուցանել զգրեալն ի ա. տիմոթ. գ. 1. * Ալ հողին ձեր յայտնապէս ասէ, թէ ի ժամանակս յետին բակեսցին ոմանք ի հաւատոցն, ևն։

Ակայն ընտանեզոյն է ոճոյ առաքելոյն՝ վկայութիւն համարել զերանգանս, ոչ յանդայս զրոց, կամ յօտար սովորութենէ, այլ ի բանից մարգարէից զմի կամ զբազմամբ յարմարելով իւրումառաջարկութիւնն ընդ իմաստից և ոչ ընդ բանից. քանզի և առաջիկայ բանս ի յաճախութիւն յորդորանաց է՝ քան թէ ի հաստատուել զիւրն վարդապետութիւն։ Նմին իրի բազում մեկնիչք հաւանին՝ յետայետ բանիցն կազմել զիմաստան. որպէս այն (ԹԲ. 2.) * Որ բնակեալ ես յաշխարհի և ի տուներս մահու՝ լոյս ծագեսցէ ձեզ։ ‖ կամ այն (իդ. 19.) * Յարիցէն մեռեալք, և կանգնեսցին որ ի գերեզմանս։ ‖ Եւ զարձեալ, աստուածաբան առ եղէմ. (կ. 1. 2.) * Լուսատուաց լուսատուից եղէմ, զի հասեալ է լոյս քո։ ‖ Եւն։ Արդ յայսցանէ և ինմանեայց կարէր առաքեալն քաղել զառաջիկայ բնաբանս, և իբր ասէր, ի սոյն յարմարին ասացուածքն մարգարէին։

Ալ տեսցուք զդիսաւորութեի բանին. կամի այսու ցուցանել՝ թէ փոխեցեալքն ի խաւարէ անդիսութենէ յանդիսութեանն լոյս՝ ոչ միայն ինքեանք պարտին զնացս վարել լուսաւորս, այլև չեւս լուսաւորելոցն լինել յանդիմանիչ դործովք և բանիւք. արիք նոցն արժան է զգաստացուցանել ըստ թմբրելոյս, և կենդանեացն ընդ կարի ձեռն տալ մեռելոց։ Վասն որոյ, ոյ վեր այսպիսի փութայ ի զգաստանալ և ի զգաստացուցանել, ասէ ծն բանիւք մարգարէին՝ այսու մտօք, կամ որպէս քո վանդակաւն այս է. արի որ ննջեսդ, զարթիր ննջեցեալդ և թմրեալդ քնով մեղաց. և յանդնդոց դերեզման, ի վեր կաց ի միջոյ մեռելոցն հոգւով. կամ կենդանացիր ի մահճանեդ։

Եւ լուսաւորէ քեզ։ Այսպէս ընթեռնուն սովորաբար օրինակք մեր, և վարդապետք. ուստի մանաւանդ գրչի եղ ասելն, լուսաւորէսցէ զքեզ քո, կամ ցի թեղեալս համաձայնել յումեքանչին, որ դնէ լուսաւորել։ Քեզ թմրելոյդ և մեռելոյդ լուսաւոտ լինելոց է քո լոյսն ճշմարիտ. շնորհօք իւրովք փառաւորեսցէ ի քէն զանդիսութիւն և զանխտա մահացուցիչս հոգւոյ. ոմն զի մօք լուսաւորել արթնական զգաստութիւք ընթեռնայոցս ի նորոգութենէ հոգևոր կենաց. և քոյով կենդանական գործովք լինելոցիս այլոց ևս խրատիչ և առաջնորդ։ Ջայս բան յորդորական իմանալի է՝ ոչ միայն առ անհաւատս կամ մոլորեալ մարդիկ, այլև առ հաւատացեալս մեղաւոր. երկոցունց ևս զգաստութիւն պիտոյ է, և ի մեռելութենէ վերականգնութիւն։ Ոչ ընդեմ է զնոյն մարդ

մարդ կոչել՝ ննջեցեալ և մեռեալ. վա՛յ զի կեաս ՚ի մեղս և յանհաւատութե՛ն նման է քնոյ և մահու. զի անպիտան առնէ զմարդ ՚ի գործս բարիս՝ երբեմն զգնեհած, և պատրաստական առ ՚ի չարս գործել երբեմն զմեռեալ զարշահոտ: Ա յայդս խորհրդածէ ոսկերբերան. իսկ այլք զատանեն, ննջեցեալ իմանալով զհաւատացեալն որ հաւատովք ՚ի կեանս է, այլ առ բարեգործութի՛ն անզգայ. իսկ մեռեալ իմանան զանհաւատն անմա՛ն ՚ի կենաց և ՚ի գործոց բարեաց:

15. Տեսջի՛ որպես ճշմարիտ գնայեր. ո՛չ էրբե՛ր անխոտոր, այլ էրբե՛ր խոտորեա՛ր:

Կոչեցելոցն ՚ի լոյս՝ յերեսաց զանանելն ցուցանէ: Տեսջի՛ր, լսողին յաւելու եղերաբ, համեմատ աղեքսանդրեան օրինակին. բայց յայլս չի՛ր. բացէ՛ք աչ՛ զաչս ձեր, ՚ի կի՛ր արկէք զլոյս գիտութե՛ն, նայեցարուք՝ քննեցէ՛ք և զնայդ ճշմարիտ գնայեր, ո՛ր զգուշանա, խնամով, ամ ճշդով վարիցէ՛ք յամ գործս ձեր, մանաւանդ ՚ի մէջ անհաւատից և մոլորելոց: Ջոր և բացատրէ յաւե՛ լո՛ւածովս, զ էրբե՛ր անխոտոր. մի անմըտաբար վարիցէ՛ք երբե՛ւ տգէտս և անքննո՛ղս, այլ խոհական մտածութի՛ւ, ոմ իմաստնոց արժան է վարել կամ գործել: Դուք պարտական զոլով վարաւել զոգեփոխութիւն այլոց յանձայնան, և առաւել չպարիք կուրօրէն ընթանալ ՚ի ձերում կենդանավարութե՛ն: Լատինացւոց օրինակն ՚ի յաջորդ տան ընթերնու զառաքեալն, այլ էրբե՛ր խոտորեա՛ր. բայց մեր օրինակն, և յունաց և արաբացւոցն զտանեն:

16. Գնեցէ՛ք ժամանակ, չի ասորիա՛ն լարուրե՛ն են:

Ըստ սովորական սկիզբութե՛ն ժամանակ իմանի ասէ կենաց, կամ աշխարհի. և իմաստո՛ւն են: Իմաստուն ձեր երևեսցի երբե՛ւ շահախնդիր և արհեստ վաճառականի, որ ամ ջանի՛ և անխնայ աշխատութե՛ն որոնէ ստանալ զվաճառաղնի՛: Ժամանակ կենաց չէ մեր սեպհական, և ինքն անկայուն է և արագ ընթաց, բայց պատուական առ ՚ի շահել նուաւա զերջանիկ յաւիտենական: Վա՛յ որոյ պարապիք գնել զայն՝ անառնելով զմարմնոյ հանգիստս, զդրութե՛ս, զնչս, զչհշտութե՛ս, և զամ որ ինչ մարմնական է: Լու այս է առաւել հոգալի, վա՛յ զի ասորիա լարուրե՛ն են. կամ ըս յուներն՝ աւուրք չարք են: Աւուրք կենացս՝ յապականութե՛ն կամ ՚ի չարուե՛ մարդկան՝ վտանգաւորք եղեն. ամ ինչ ջանայ յաչխատել զպատուական ժամանակն, և չարեաց առնել գործոնեայ. բարեկամք և թշնամիք, հոգք մարմնոյ և ընչից, դատարկութիւն և զբաղումն սիրոյ խանգարեն զպիտանութե՛ն ժամանակին. ներքոյ անկեալ կայ բիւր վտանգաց, փորձութե՛ց, գայթակղութե՛ց, և պատրանաց: Դոյնն իրի անտես արարեալ զայլովքն ամ՛ն, ժամանակի կենացս ևեթ պարտիք պահ գնել երբեմն զատացուածոյ, և ՚ի կիր առնուլ ՚ի վաստակս բարեգործութե՛ն. որով ՚ի չարէն փոխարկէք ՚ի բարի, և յանցաւորե՛ն յանանցն և ՚ի բազմարդիւն:

Կամ ըս հերոնիմոսի, գնել զժամանակ՝ իմանի, զամ որ ՚ի ժամանակի կենացս պատուհա՛ն տեսակաւորել ՚ի ծառայութիւն կոչման մերոյ. յո՛ մի բնաւ ըստ պէսպէս ժամանակաց և իրաց թուլատնալ կի՛ խախտիլ ՚ի կարգաց ձեռնպաշտութե՛ն. ՚ի չալածանս, ՚ի վիշտս, ՚ի հանդստեան, ՚ի յաջողուածս և ՚ի ձախողակս, և յայլ և այլ փոփոխութս ընթացս աշխարհի, զամ ժամանակացն պէտսվե՛ւ առնել մի ժամանակ՝ նուիրել ձեռնպաշտութե՛. ոմ յոր երանելին զբաղումն ժամանակ՝ և զիրարձուց առ ձեռնպաշտութե՛ն ստացուա ծառայ: Եւ սքանչելին յայտնի նահատակ՝ ոչ ՚ի նահանձէ եղբարցն պղտիտելով, ոչ ծառայութե՛ն, ոչ հաստկին մատաղութե՛, ոչ տիկնոջն հրապուրանօք, ոչ ազատղութե՛ք բանին, ոչ եգիպտական ճոխութե՛ն. զայնքան ժամանակաց խորուս ՚ի մի ժամանակ բարեպաշտութե՛ն գրաւեաց:

Այլք բազումք ըս ոսկերբերանին մեկնեն ՚ի վե՛ր ժամանակի առաջին հաւատացելոցն, որոց ՚ի վե՛ր կային բազմադիմի վիշտք և չալածանք ՚ի հեթանոսաց անտի և ՚ի հրէից. և իմաստքն նուազ անտի և ՚ի հրէից. և իմաստքն կազմին: Ջգուշացարուք առաջիկայ ժամանակիս, զանացարուք իմաստութե՛

թէ գնել զխաղաղութիւն. իբրև խոհեմ վաճառական հայեցարուք ի հանգամանս ժամանակիս, և այնպէս վարեցարուք։ Ա՛ը զի չար են աւուրքս ի պատճառս թշնամեաց հաւատոյ, և յապահպանդոյն անօրէնութեց և որդայթ թից. ժողովուրդք և թագաւորք պատերազմ ամն ընդ ձեզ՝ և ի տունս իսկ առանձնականս մարտ գրգռի վն հաւատոց քոյ։ Ապա մի ձերով անզգուշութիւք տայցէք պատճառս թշնամուեց և խռովութեց. հակառակութիւն նոյ լեզի միայն ի պատճառս հաւատոց, և մի այլոց գործոց աղագաւ. այլ մանաւանդ ցուցցէք նոյ պատիւ և հնազանդութ, և դուք մի խնդրէք պատիւս կի իշխանութիք կի վրէժս. տարայք ամ վչտաց ի նոցանէ, լառնիք յանձն առեալ զտուգանս և զարհամարհանս, միայն զի զնձպաշտուն անխռով պահիցէք։ Ա՛յս է ընկերբարին՝ գնել զժամանակս. ոչ յորժամ գազմտել ի տուն ուրուք՝ սպանանել կամիցէ զտանուցն. և նա կամաւ տայցէ զնմ ինչսն առ ի զանձն ապրեցուցանելոյ, ասելմ՝ թէ գնեաց զկեանսն։

Ջսոյն իմաստս հաստատեն բազումք ի նմանն բանսն առ կողմանց. (ճ. 5.)

* Իմաստութիք գնասջիք առ արտաքինսն, գնոյ առեալ զժամանակս։ Յաւելուն և ոմանք, ծանձկասս զպատեհութին ասել, կի զդիպող ժամիցայ. զի յանկարծ չէ՛ս զայն նշանակէ տիրութս. և գնել զայնպիսի ժամանակ իմանան՝ որոնել, կի սպասել դէպ ժամանակի առ ի խրատել զմոլորեալն, կի առ ի ցուցանել զշնմարտութիւն հաւատոց. մի անխմաստաբար արկանել զանձն ի փորձուն, կի յանդիմանել զայ չիք ակնկալութեց օգտի. լուսիք և զգուշեալ ժամ խնդրել. զի հակառակորդաց գոլով աւուրք, մի խռովութեց վայրապար պատճառս տայցեն, համեմատ ևրունական զգուշութեն, մի արկանել զմարգարիտն առաջի խոզաց։

(Մ՚ատթ. է. 6։)

17. Ա՚ման այսորիկ ի լինիս անիգ, այլ խոցաբար չէնչ՚ոմն են ինձ։

Ձօրինակ ինչ, վ՚ այսորիկ։ Վէրսինն հեռևեցուցանելով կրկնէ զսաւցեալն. վասն այնորիկ՝ զի աւուրք ժամանակիս լի են վտանգօք, մի լինիք անմիտք, անզգայք ի գնացս ձեր յայմ. մի անմտաբար վարիցիք ժամանակաւս՝ անգործ դատարկութիք անցուցանելով, և կի ոչ ընտրելով զդէպն և զպիտանին յիւրաքանչիւր ժամանակի։ Ա՚յլ խոցաբոս, քննեցէք, տեղեկանալով խմանալ ջանասրիք, չէնչ ինձ են ինձ. զինչ կայ մի ի ձէնջ ձեռ, զինչ հրամայէ քո առնել կի զգուշանալ. որ հաճոյ էցէ այ յիւրաքանչիւր ժամանակի։ Ջի բազում ինչ ինքնին բարի, ոչ միշտ օգտակար է ըստ ներկայ իրացն, ուստի և ոչ յայնժամ հաճոյ այ. այլ ըստ կատարմանն խնդրելն է՝ արդեօք ատ կի այժմ իցէ՞ն կամք այ կի քո՞ւ այսպէս վարել։ Բնաքանս ունի եդաք, է ըստ բազում օրինակաց. մի կի երկու միայն դրեն, զինչ են ինձ. Ուր լսելին և ատրին ըստ աղբեսանդրեան օրինակին դնեն, այ. բայց սովորական յոյնն և արաբացին, ինձ։

18. Ա՚ր ինքեանց վերադարձ. յորոմ չէչ՚ոմն է այլ համառօտիք լռեալ բոռ հոգով։

Խրատեաց վերադարձ՚ն՝ մի կցորդիլ խաւարային գործոց անհաւատութեն. յորոց զամենս յանձնանել յիշատակիսլ, և կամելով ի միտս գոյոլս ծանուցանել, արդելու այժմ զարբեցութեն՝ զմայր և զդաւեակ բազմից ախտից. զի ոչ միայն ազատեղի ցանկանց է զրգռիչ, այլև զաղտութեան, խեղկատակութեի, բարկութց, հայհոյանաց, կռուոյ, յանդգնութեի, և նմին իսկ անմտութի՝ զոր անմիջաբար յառաջ պահպարակեաց։

Եր ինքեանց վերադարձ՚ն։ Ջանչափութեի զինուոյ արգելու, և ոչ զպարկեշտ կիրս առնութեին. մի ասէ՝ առ արբեցութեի վարիցիք զինուով, ընդ որով խմանին և այլ արբեցուցիչ բմպելիք՝ ցգբի, օղի, և՚ն։ զդ՚ոչ լիրուք զի ի տունս ձեր և ի ժողովս մի լինիցին զինարբունք, կի անկարգ անդանակցութք արբեցողաց։ Թերևս ակնարկէ ի հնվեանոսական խրախճանս՝ արարեալ ի տօնս կուռ նոյ, և մանաւանդ սպանդարամեռին. յորս առանց խնայելոյ արբեցմանց թերի հաճարիւր խրախճանութեին. և եթէ առ քրիս-

քրիստոնեայն և զորձեին նոյնօրէնակ անկարգութիւք, այսու բաժանորդ հեթանոսաց լինիին ի նախատինս ձեռ պաշտաւնէութեան։ Գիտիք սակաւ յառաջագոյնս զգուշացականն նաև զհիւանդ Ժողովրդեանդ յարբեցութենն ախտ։ (Առակ. ե. 1. իբ. 20. 21. 29. 30. 31։) Եւ իմաստունք հեթանոսաց ոչ փորք պարտաւանս ի վր դնեն այմ, իբրև անարժան մարդոյ բանաւորի։ Ապա որչափ և զգուշալի է առն քրիստոնէի՝ հրաբերելոյ յանձային սեղանակցութենէ. որոց առաւելեան շնորհք և իմաստութ, առաքելոյն ի նոցանէ պահանջի զպաստաւութենէն զարդ։

Յորմէ զէ՞ որ է։ Յարաբերականէ յորմէ, ցուցանէ կամ զգիւրէ, որ ոչ ըստ բնութեն՝ այլ յանչափ կիրառուած նիւթ լինի զեղխութեէ, ըստ բանին (Առակ. ե. 1.) * Աղտաւոր է գինի։ ‖ Եւ կի՛ցայ ցանկ զամբողջ բանն, յո՛ զարբենաքն գինով. յայնպիսի արբեցութենէ կամ յանչափ սովորութենէ գինոյ փակի իբր. սաղին յարդանդի՝ չէ՞ որ։ Փոխան այսր յոյնն ասէ ասօրքա՛, և մերթարդմանիչք այլոյր անաւանի դնեն. (Ղուկ. ժե. 13։) Ըստ մեկնչաց իմանի ըստ ընտրութ անչափութենէ ի ծախս, և ի ցնծմունս, ըստ բարակութենէ անժուժկալ յոմէ հեշտալիս մարթոյ, և մանաւանդ ի մերձաւորս որովայնին. զի անդամք որք դրացի են տեղեաւ, դրացի են և ախտիւք։ (Տես Հռոմ. ժգ. 13։)

Բայց զի մի պատճառանս դնիցեն զէ նեմոլք, թէ յոյրախութենէն մարդկան տուաւ գինի, և ի գեղ ցաւագնոտաց, մաուցանէ նոցա զայլ բաժակ և զայլ գինի զուարթութեար։ Այլ մանաւանդ եթէ զուարթանալ կամիք, մոռանալ զցաւս, զօրն անցուցանել ըստ խրախճանական, լցարուս հոգւով, ուր լսարին միայն յաւելու, սբեղ, յորմէ և ոսկան եմոյն յիւր ապաւիրն. բայց հետ բանիմոս ինքնին ազդ առնէ՝ առանց յաւելուածոյ լինել. և սովորաբար նշանակել զհոգի բարի։ Աստ՝ ասէ առաքեալս. և ես իսկ կամիմ, թէ ալ բնայցէք, բայց արեցուէ՝ որ քրիստոնէի վայելչական իցէ. որդիք խաւարի լինիան զգալի դինուով, որում ըզհետ գայ անմոռութեի, ցաւուն, յանդգնութ, պղծուէ. և տեղի տայ բանն, ամօթ, երկիւղ, բարեկրօնութեի։ Իսկ դուք որդիք լուսոյ լցարուք յերկնից Թափեալ գինով հոգւոյն սբ. երկնաւոր ընարհացն ջերմութեբ զուարճացարուք, որ զՀոմարիտ իմաստութիւնն ծնանի, և զնմ բարեյարդարուն։ Այն հոգի արբեցուսցէ զձեզ, որ և զժողովեալն ի վերնատան յաւուր պենտեկոստէին. որում անձաշակ գոլով հրեիցն բազմութիւն, զնոր արբեցութենէն միայն տեսանէին զաշակերտացն՝ առանց գիտելոյ թէ յումէ իցէ արգնօք։ (Գործ. ը. 15. 16։) Ջանացաք նէ ապա զեղանակ հոգևոր արբեցութեան։

19. Կասէ՝ ի սէրս ձեր սաղմոսաւ և օրհներգիւ և երգովք հոգեւորօք, երգել և սաղմոս ասել ի սիրտս ձեր Տեառն։

Զոր ինչ ի մարմնական արբեցուէ առնեն մարդիկ առ ի ցնծութեի, որ այն ինքն են՝ զրուցատրել, երգել, նուագել, խաղալ, գնոյս ցուցանէ գերազանց և օրինակաւ լինել ի հոգևոր արբեցութենէն։ Փոխան աշխարհական զրուցաց և երգոց, խօսել ի սէրս ձեր. փոխանակ բառիցն ի սէրս ձեր, յորմէ ասէ, էասէս. զոր այլք թարգմանեն՝ ձեզ ինքեանց, և իմաւան, ի մէջ ձերընդ միմեանս, ոչ միայն յեկեղեցական խմբմունս, այլ և յառանձին տունս՝ զուարճալի կենցաղակցութենի ձեր եղիցի սաղմոսիւք նոցն։

Բայց ազուիներգին և այլք ոմանք՝ զասելն, ձեզ ինքեանց, իմաւան՝ ի ձեզ ինքեանս, ներքին և մտաւոր իսօսակցութեամբ զուարճանալ և զայս միտս յայտնաբար բացատրէ մեր Թարգմանըընդ որ վայրապար խղճէ եաստոս՝ թէ յանկական նշանակէ, մխիթարց, առ իրեարս. այլ մանաւանդ ի բազում տեղիս նշանակէ՝ ինքեան, կի՛ ինքն, իբր են. ուստի Թարգմանիչ մեր զանազան բառիւք վարի դնելով, յանձինս ձեր, կի՛ իբր, կի՛ ընդ միասս, ի մօի իւրում են (Ա՛տոմ. ը. 9. ը. 34. Ե. 3. 23։) Եւ առանց հեռանալոյ ի նիզեայս, փոխանակ այնր յանկանի վերադրոյն (ա. 9. 10.) եդ՝ Նովա, ի նոյն, զոր ամ Թարգմանք և մեկնիչք իմանան, ինքեան, ի նոյն

նոյն ինքն։ Ուղղա՛պա ապա ՚ի տեղւոջս առե՛ք ՚ի տէրս ։ յո՛ դուք ինքնին խրատաքանչիւր՝ առանց հնչման ձայնի կամ ըստ ինձ խօսել և զուարճանալ սաղմոսիւք , հոգևառաւ ուրախութեամբ , կամ ընդ

և արժանաւոր գործովք հնար է, և իրաւացի. քանզի և բարերարութիւք այդ առ ձեզ՝ ոչ սահմանին ժամանակաւ կամ տեղեաւ։ Ի վերոյ ահռչակ. Ըստ ամանդ՝ վա՜յ մարդկան. բայց տուր բաբար իմաի՝ վա՜յ եմ ելթախտաց բնաքանացն, և գերբնականաց, ոչ միայն վա՜յ որոց գիտեմքն, այլև բազմացն որք անյայտ են մեզ. գոհանալ ոչ միայն ըստ բարեաց եղելոց մերոց անձանց, այլև ընկերացն և եմ մարդկան։ Իսկ առանձնաբար գոհանալ ի վե՜ր եմի, ևթէ հաճելիք իցեն, և ևթէ արամալիք. գիտելով ևթէ նաև ձախողակք աշխարհի մարմնականք կմ հոգեկանք՝ յայ գԼծուէն մատակարարին յօգուտ ընարելոց, և յոլովակի առաւել քան զյաջողուածս. մինչ զի յաւելու ոսկեբերան, ևթէ վա՜յ տանջա նաց դնէնին իսկ պարտիմք գոհանալ զի սանձք են արտ մերոյ երկիւղ տանջանացն առ՝ ի խորչելոյ ի մեղաց։ Այս ևթէ ոչ՝ ի բարեյաջողութիւս գոհանալ ձայնս արձակել՝ չէ մեծ ինչ և զարմանալի, և ոչ ճշմարիտ երախտագիտուե ցոյցք. զի և անհատաւթ և մեզաւորի հասարակաց է այդ։ Իսկ յաւելն է քրիստոնէի՝ ոչ միայն յաղագաւե վշտաց գոհանալ, այլ առաւել՝ ի գալ վշտացն։

(տես Հռոմ. Ե. 3։)

Իսկ առ ո՞ լինելոց է գոհանալն, հօր և ո՞յ. որական հոյով եդեալ է ըստ նին, փոխանակ ասելոյ՝ գհօրէ և զոյ, ոմն դնի՝ ի բան կողոպատչին. Թէպէտ ուրեք առ մեզ և առական հոյով դնի այսպիսի բայից. որպէս գՀ։ Լինել, առ փարպեցւոյն. (եր. 306.) * Գու այժմու՝ ի միջ պարծէիր գոհ լեր։ ‖ սոյնպէս ասեմք, շնորհ ունել ոյ, և՝ Յայնն և այլք յետ և յառաջ գրեն. ի՛ ոյ և հօր։ Գոհացարուք ասէ՝ վա՜յ եմի առ սկզբ. բնապատճառն համօրէն բարերարու. թեց, որ նա ինքն է ած, տուիչ բնա. կան բարեաց ստեղծմամբն, պահպա. նողուեթ, և նախախնամուեթ, և մեզ հաւր է ըստ գերբնական բարեաց ընարու. թեն, փրկագործուեթ, որդեդրուե, և երկնային փառաց։ Եթէ մտադիւր՝ ի համար բերել կամիցիք զնմ՝ զոյ երախ. տիսն ըստ իւրաքանչիւր տեսակի և եղա. նակի, որ ինչ առ ձեզ գործեցեալ, և որ ինչ առ այլս, ոչ ժամանակք բաւեն՝ և ոչ յաւետեանք՝ առ՝ ի զարժանին մատուցանել գոհութեիս. վնկ անսահ. մանաբար ասացի՝ յամ ձամ գոհանալ։ Այլ ոյզ զի հաճոյական ոյ լինիցի գոհութեի ձեր, արարիք զայն յաճախ ձի ի բոյ յոյ ոչ, ոյ՝ ի ձեռն քոյ, իբրև քե. բանով և՝ ի գիմաց քոյ. վա՜յ զի ոյզ նո. վաս ընդունելմբ զարիսն զնմ, նոյնպա զարիտաւր գոհութեն նուաս առաքելոց եմբառնած. փոքրն այն և անհատասար երախտագիտութեի մեր՝ յարժանացա քոյ արդոյ ընծայի առաջի ոյ հօր։

21 • Նազանէ լերուս գիմանց երկիւղին ։

Սկսանի առանձել զնրատս անտեսա. կան բարեկարգութե, և նախ զնազանդութեն առ մեմանս, որ այնպէս կա. րևոր է ընկերական մարմնոյ՝ որպ. հանգ որմոց։ Նազանէ լերուս գիմանց։ Բազում ըստ ոսկեբերանին և Տերտնի. մոսի՝ ընդհանրական առնուն զբանս՝ նաև առ գլխաւորս։ Ամենեքին դուք չանացարուք կատարել զկամս միմեանց. ևթէ հաւասարի, և ևթէ փոքրագունէ քան զձեզ՝ տեղի տալ մի խորչիցիք. ա. ռանց դիմադարձուե և հակառակուե վարելոյիք ըստ միմեանս՝ յորում կարգի կմ ասոիճանի և իցէք։ Յարժամ այսպէս փոխադարձ լինիցի կամակատարութեի ձեր, ոչ և ս է հպատակութեի կամ ծա. ռայութեի, այլ ըստհակառակն՝ այնպէս ծառայս առանայ իւրաքանչիւրոք, որ. չափ ընկերս ունի։ Տե՜ս և զբան գա. զատ. (Ե. 13.) * Սիրով ծառայեցէք միմեանց ։ ‖ Ա՜յսու օրինս տայ հրա. մայողաց և իշխեցելոց, նոցա՝ զի պա. հիցեն զբաղդրութեի առ. Նպատակս, զգիջողուե և զնոնարհութեի. և առցա՝ զի ունիցին զանհածուե, զհպատակուե և զհամբերութեի. որով իւրաքանչիւր ըստ իւրում պատշաճի հնազանդ լինի այլոյ։

Իսկ այլ միկինչ իմանան իսկել յա. տուկ առ ներքոյ անկեալս. ոյ զի իւ. րաքանչիւր հնազանդեալ ևթէ՝ ի բնա. կան կարգի, ևթէ՝ ի քաղաքական, և ևթէ յեկեղեցական՝ ամրողջ և տաւ. տարմեթէ պահիցէ հնազանդութեի առ գլխաւոր իւր։ Ջայս անորոշաբար պատուիրել՝ ի զանազան կարգս դասք.

ձուցանէ զնորատն, կանանց և արանց, ծառայից և տերանց, որդւոց և հարց, մինչև ՚ի 9 տուն յաջորդ գլխոյն։

Երէխոէնէն ՀՃ։ (մի օրին· յերէխոէն ՀՃ։) Բաղում օրինակք յունաց, որպ և ոգ կէբերան, այլև արաբացին դնեն՝ ՅՈ. և սոյնպ կայ ՚ի Հայ օրինակս ինչ։ Բայց այլք յոյնք, լատինն և ասորին ասեն՝ ՀՃ։ Հնազանդութի՛ն ձեր առ միմեանս՝ լինիցի ոչ առ ակամէ, ակամայ, վա՛ ա մեծոյ կի՛ շահուց մարմնականաց· այլ ՚ի սրտէ՝ վա՛ երկիւղին քա՛ի, զերկիւղ նո՛ ունելով առաջի աչաց, զի մի անհաճոյ լինիցիք քա՛ի՝ որ կամի և հրամայէ հնազանդիլ միմեանց ։ Եւ քանզի այս երկիւղ ՚ի ներքս փակէ զաչերն, նոյն էր ասել՝ սիրովն քա՛ի, ոպ և ասորին դնէ։ Ըստ մեկնութե՛ան՝ երկիւղն քա՛ի յառաջ բերի իբրև շարժիչ հնազանդութե՛ն· բայց իմանի և իբրև տանման կի՛ երփ· ա՛ հնազանդիլ միմեանց յարժանաւոր իրս, և ոչ յարգելեալն ՚ի քա՛է· ան՛ ասլ միմեանց առանց կորուսանելոյ զերկիւղն քա՛ի կի՛ ոյ· յայնս միայն՝ որք ո՛ կամաց նո՛ ին, այլ ոչ ընդ էդէմ նմա։

22։ Կանայք իւրեանց արանց հնազանդ լե՛ զի՛ն իբրե՛ տե։

Նախ ՚ի կանայս արկանէ զկապ հնազանդութե՛ն· վա՛ զի մի մարմին գոլով ո՛ առն, իբրև հաւատարակատուի՛ք դանրանան զվատահութի՛ն բերել առ արս իւրեանց· որպ ՚ի վտանգի կայ ոչ միայն անուանական և քաղաքական խաղաղութե՛ն, այլ առաւել և քրիստոնէականն։ Վա՛ զոյ ասէ առաքեալս· Թէպէտ ամենեցուն օրինադրեմ զհնազանդութե՛ն առ իրեարս, բայց յատկաբար կանանց իբրև առաւել զգուշալի ազգ առնեմ, զի իւրեանց արանց հնազանդ լինի՛ն։ Ա՛յս պէս յերրորդ դէմն ընծեռնու զվերջ առնդրեան օրինակն, և լատինն· իսկ սովորական օրինակ յունաց, այլև ասորին և արաբացին յերկրորդ դէմն ասեն, հնազանդ լերուք։ Եւ ներանկիմս ծա՛ նուցանէ, Թէ յոյն օրինակք իւրոյ ժամանակին ոչ ունէին ասա զբայ, այլ զօրութի՛ն կրկնէին զանցեալ ասեն· զի՛ հնազանդի՛ք միմեանց երկիւղն քա՛ի, կանայք իւրեանց արանց են։ Թէպէտ յայսմ պատճառէ կամեցե՛լ ետոյ բա-

յայայտել, ոմանք եդին յերկրորդ դէմն, և այլք՝ յերրորդն։

Իբրե՛ տե։ Հերանիմոս և այլք ոմանք իմանան, հնազանդիլ արանց՝ ոպ Թէ ներ իւրեանց իցեն, զնառայական հպատակութե՛ն ցուցանել առ արս իւրեանց· ոպ սառա զարբշահամ ներ իւր կոչէր· և հրամանն այ առ եւայ պատուիրէր՝ Ը՛ ներուե՛ն առն լինել։ (Ծննդ· ՟Ը· 16· ժը· 12։) Սակայն առաւել քան կարգն բանիցս՝ այլք սովորաբար իմանան, հնազանդիլ իբրև ՚ին քա՛ի, իբրև Թէ քա՛ն ծառայութի՛ն ը՛ որպէս ասէ ոսկե բերան· ուստի ասորին բացատրէ, ոպ ՚ին մերում· և նոյն մտօք արաբացին դնէ, որպս հնազանդ էք ՚ին։ Ասորև նոցունց իսկ ծառայից պատուիրելով զհնազանդութի՛ն առ տեառս, ինքնին առաքեալս բացայայտէ՝ իբրև քա՛ի և ՚ին հնազանդիլ և ոչ մարդկան։ (՟Ը· 6· 7·) ապա և առաւել կանանց հնազանդութե՛ն առ իւրեանց արս՝ նոյն ի՛ մասաք պատշաճին։ Ապա ասել կամի· հնազանդիլ զոր ՚ի կանանց պահանջ ՚ի՛ առ արս իւրեանց, ոչ պարտի լինել ՚ի սիրոյ միայն, կի՛ երկիւղ, կամ առ ՚ի հաճոյանալ նոցն և զերծանց խրնդրեալ ՚ի ձեռս բերել, այլ ՚ի սիրոյ և ՚ի հնազանդութե՛ն զոր պարտապան են ունել առ քո՛ ներ մեր· ոպ Թէ նոքին քա՛ի հնազանդին, որ օրինադրեաց՝ զի կին հպատակ կացցէ առնն՝ իբրև իւրում փոխանորդի ըստ անուանական կենաց։ Կամ, իբրև քա՛ի ՚ին հնազանդիլ յարժանաւոր իրս ը՛ հաճոյից քա՛ի, և ոչ ՚ի մեղանչականս և յանվայելուչս՝ զոր քա՛ արգելու։

Զչնամանեկան ներքոյ անկումն և զվերհնազանդութե՛ն կնոջ առ այր իւր՝ անդրադարձ յարարչութե՛ն կարդեաց ՅԵ՛, ոչ միայն ը՛ բնաւիր կատարելութե՛ն աղեղնաձգին առնելով զարուն քան զեղն, այլև ՚ի կողէն ադամայ կազմելով զնա, և առ նա ածելով իբրև առ գլխաւոր։ (Ծննդ· ՟Ը· 22·) Իսկ յետ յանցաւորութե՛ն առաւել և իբրև պատիժ օրինադրեցաւ կնոջ՝ նաև յակամայս ընդունելութե՛ն առն կալ· (՟Ը· 16·) և նոյն պատճառ յայլ ազգս քաղաքական օրենսդրութե՛ն՝ որպէս ՚ի Հրէից Մովսէս օրինադիր ։ (Ելից· ԻԱ· 20· 21։) Ա՛յլ առաքեալս օրենսդիր ՚ի Հրէսմագոյնն վերա-

քերել զբնական և զմարդկային օրէնս, հրամայէ կնոջ հպատակ կալ առնն՝ բարձրագոյն պատճառի աղագաւ, յոր ի այրն է իբրև պատկեր և փոխանորդ քրիստոնէական պատկաւն երևել ցուցանելն նոքա զքնի անմեկնելի միաւորութիւնն ընդ եկեղեցւոյ. նմին իրի զայն հնազանդութիւն ողջախոհ և մտերիմ պարտաւանէ և կինն մատուցանել առ այր իւր, զոր եկեղեցի մատուցանէ քրիստոս։ Այսպիսի պատճառ գլխովին անծանօթ էր իմաստասիրաց, և քաղաքական օրէնսդրաց զոր առաքեալն ի կարգի մեկնաբանէ։

23 · Ո՛ այր է գլուխ կնոջ, որպես և ինքն է գլուխ եկեղեցւոյ, և ինքն է Փրկիչ մարմնոյ։

Զգերազանցութենէ և գիշխանութենէ առն առ կին իւր ցուցանէ համեմատութիւնք քրիստոս առ եկեղեցի։ Զի այր է գլուխ կնոջ։ Այլոն ոչ միայն քան բնական առաւելութենէ գերազանցէ քան զկին՝ որպէս գլուխն ի վրէ բոլոր մարմնոյ, այլև ըստ նմանութենն առ քրիստոս և որպես և քրիստոս է գլուխ եկեղեցւոյ։ Խոստովանութենէ է ըստ նմանութենէ կան բանի և եթէ, յոր ըստ գերակայութենէ և հրամանատարութենէ, և ոչ քան ամ ձշդրիտ հանգամանաց։ Որպէս քրիստոս գերագոյն քան զեկեղեցի կառավարէ զնա, պահպանէ, կարգս տայ և նպաստաւորէ զնա եկեղեցւոյ. զնա միայն սիրէ և յինքն միացուցանէ, և ոչ զօտարս ցնայլս ի նմանէ, այնպէս այրն գերագոյ քան զկինն՝ կարգեալ է ի գործս նել զկին իւր, խնամ տանել նմա յոգուտ եկեղեցւոյ զնա միայն սիրել և ոչ զօտարս՝ քան ամուսնական սիրելութենէ։

Եւ ինքն է Փրկիչ մարմնոյ։ Լաւագոյն միայն յատկութեամբ ընծեռնու, ինքն՝ փրկիչ մարմնոյ նորա։ Որպէս ի յոյն մեկնաց իմանան ի վերն առն։ Քի ինքն այրն է պահպանիչ, առաքինորդ կնոջն՝ որպես գլուխ բնական մարմնոյ։ Բայց լաւ և ըստ կարգի առ քի խմանի. Քի ինքն քի ոչ միայն իշխան է եկեղեցւոյ, այլև յնմին խնամակալ փրկութենէ նի իբրև ի բարձր մարմնոյ. ոչ և զվերջ իւրք զանցառնէ՝ որ ինչ ի կեանս և յուղղութենէ եկեղեցւոյ կարևոր է, և պետանի։ Ասյժմ գիտ գայ, առնն և իբրև ի պարտեաց հոգ ունել ամ բարեաց կնոջն, արձիւն կալ միշտ ի պէտս կնոջն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Արդ՝ եթէ այսպիսի նմանութենէ պահ է այր և ըստ կին իւր, որպիսի է քրիստոս և եկեղեցի, ինքնին հետևի զի կին կալ մեցով իւրոյ լաւութենն՝ մատուցանել հնազանդացն առնն, զոր և եղբակացուցանէ ի յաջորդ տան. նդնշէ այրն սէր բազում խնամ տարցի կնոջ իւրում, ոչ ըստ ձարձակ իմաստասիրէ ի 25 տանէ և անդր։ Ասյլոյն և ասաց առաքեալն, առն գլուխ լինել կնոջն՝ մտածել առաւել ըստ բնական գերազանցութենէ արուէ քան զնդն ի քաղաքական կարգի. տես ի ա. կորն. ժա. 3։

24 · Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի քրիստոսի, նոյնպես և կանայք իրեանց արանց յամի։

Շաղկապն այլ, յոմանց իմանի՝ սակայն, իբր ասել. արքն խնամակալութ են կանայ իւրեանց, սակայն եթէ ոչ եկեղեցին հնազանդի քրիստոս, նդնշէ լիցին և կանայք՝ արանց իւրեանց։ Իսկ այլք սովորաբար իմանան իբրև հետևողական. զի բանս՝ անցելոյն եղբակացուէ է։ Որովհետև ըստ ասացելոյս՝ այր գլուխ է և պահապան կնոջ իւրում, ոչ քի եկեղեցւոյ, ուրեմն ոչ եկեղեցին հնազանդ լինի, միշտ հնազանդել է քրիստոս, ոչ բնաւ անցանել զհրամանաւոր նր, զնա երթայ առաքնորդութենէ քրիստոս, միշտ զնմանէ կախել, և արտաքոյ նր ոչ ձանաչէ զայլ ոք սիրելի և իշխելոյ իւր, նորին պէս կանայք ամուսնացեալք հնազանդ լինելոց են իւրեանց արանց. օրինաւոր ամուսնացեալ իւրեանց, առ նա միայն ուղնելով զսէրն և զհնազանդութենէ, և ոչ առ այլ օտար. զնա երթալով հաձոյից նոյ և հրամանաց, յոմ, զի յայնմ ամի՝ որ անկ է այրական իշխանութենէն ի տնտեսական իրս. յայն ամ գործս՝ զոր այրն իրաւամբք պահանջէ, և կինն կարող է կատարել։ Բառդ յոմ, լուծ լեալն իմանի յանցեալ մասին և. զի արդարև եկեղեցի յամի անվրէպ անձայ կամացն քրիստոս. և թէպէտ ամանք

յանդամոց եկեղեցւոյ եւս կան մեզօք ի Ճշմարիտ հնազանդուէ անտի, սա կայն մարմինն ըստ գլխաւոր և կենդանի անդամոց՝ որք են արդարք, ոչ բնաւ մեկնի ի կամաց քոյ։

Հնազանդուի կանանց առ արս՝ յոմն պահանջելով, չիք վճանդ թիւրելոյ զբանս՝ թէ չինչ և իցէ կամս արանց՝ յանարժանան և ի չնաւակարս պարսիցին անսալ. ալ զի ոչ միայն յառաջնում իսկ չափ առմանեաց ասելով, երէ՞ չէ՞ ոչ, կի իբրև ճն, այլև պատճառն գլխոյ, և օրինակ հնազանդուեն եկեղեցւոյ՝ զոր ի բնաբանիս առաքին դնէ, ընդդէմ ծանուցանէն ի վայելուչն և յօգուտակարսն առնել զհնազանդութեան. ապա թէ ոչ՝ եթէ զդժնդակս և զչնաւակարս հրամայիցէ այրն, ոչ ևս լինի պըտուղ, այլ գլխաւոր. և եթէ զանմաքուրս, ոչ է այր, այլ սիրահար։

25 · [illegible] ՝ երէցէ՛ չնաւոյս չէր, ոչ ե՛ս երէցոց չնէիցի, և չունի ի՛ս մաքրոյ վճռ նորա։

Առ արս դարձուցանէ զխրատսն, ի բաց հատանել ի նոցանէ զախտաւորսն, միանգամայն զբռնաւորական իշխեցողուէ ի վի կանանց։ Ազբ, որք մուտ կատարելագոյն էք քան զկանայս, նոյնպիսիք լինելոց էք և առաքինուք։ Սերէցէ՛, չասեմ հնազանդեցարո՛ք, բայց ոչ եթէ՝ հրամայեցէք, իշխեցէք. այլ սիրեցէք չնաւոյս չէր, զներն միայն՝ և ոչ զօտարս՝ իբրև ամուսին. կամ, զներն՝ որք ի վի ընտանուեն բնաւ կրկին կապով ամուսնուն կցորդք ձեր են՝ իբրև մարմնակիցք. որով առաւել սիրոյ արժանիք։ Թերևս ոմանց առ լորդ ինն թուիցի այս օրինադրուեն, իբր ընդաբոյս գոլով սիրոյ առն առ իւրն լծակից։ Սակայն ոչ միայն փորձն վկայէ չանցանել ժամանակի թառամ մել այնր սիրոյ, և յոմանս խափան շքանիլ, կի փոխիլ ի տաղտկուն և յատելութեն, այլև զի առաքեալս զայլ գեղ բաղդն սեր պահանջէ քան թէ զմարմնական։

Ոգ ե՛ս երէցոց չնէիցի։ Ասի պատ. կառելի օրինակ սիրոյ քրիստոնեայ ամուսնաց՝ այնպիսի սիրել արանց զկնայս իւրեանց, զի իցէ անկեղծաւոր, ասատիկ, հաստատուն, ողջախոհ, անխառն յոմէ անպատշաճ կրից ցանկութեն և իշխեցողութեն. սէր ունել համբերող, շահեցուցիչ, վստահակար։ Վճռ զի այսպիսի օրինակաւ սիրեաց քո զեկեղեցի։ Այս սէր ոչ միայն արատաբեր զբարաբար վարել զիւրեանց կանայս ի ցանկութես և ի դատապարտութեն, այլև ի ներքս փակէ զնոհական զիջուն ի հաճոյս կանանց պատշաճաւորս. զի լեհ և ոչ են հպատակք կանանցն, բայց իբրև սիրոզք արժան է անսալ իրաւացի կի անվնաս կամաց նոցա. Ճշմարիտ սէր ոչ հրաժարէ հաճեցուցանել նաև զվայրագոյնն, թող լեհ զհատասարն ընկերութեն։

Ե՛ս չնէի՛ իս մաքուր։ Ջհաւ սիրոյն ծանուցանէ այստ. իբր զի քո այնպիսի սիրեաց զնկեղեցի, մինչև վճ նի զիւր անձն ետ յամ վիշտս և ի մահ իսկ։ Սոյնպ սէր արանց առ կանայս՝ լինելոց է վշտակիր. ոչ միայն պիտոյից նոյ խնամ ունել, այլ և ի նեղութեն նոյ և ի փորձանս՝ յանձն առնուլ զնմա հոգս հանդերձ չարչարանօք։ Ոչ դժուարին և ծանր լինիցի այս, եթէ կանայքն բարեբարոյք իցեն և կամակք յնմին առարս իւրեանց։ Բայց զինչ, եթէ անզգամ իցէ կինն, խռովարար, արհամարհոտ, և այլովք ախտիւք դժուարամանելի։ Տակաւին չէ պարտ ասել՝ հանանել ի նմանէ զսէրն և զնմանատուրբուեն. զի և քո առելեաց վճ մանեաց զանձն, ըստ որում յարէ։

26 · [illegible] ի ՝ ըստ որբեսցէ որբոյն սասպա. Նին բանիւ։

Յունականն պարզագոյն ասէ.* զի զնա որբեսցէ, մաքրելով առաքեալ ջրոյ՝ բանիւ. ։ ուր յառինն չյաւելու, բանիւ կենաց. որ չայլ Թարգմանս չիք, և ոչ՝ ի հին օրինակս յառինակսն։ Իսկ հայ բնագիրս զանց առնէ զառաքին՝ ջրոյ. վճ զի բաւն սասպան բան կարգի բանիս յայտ առնէ զաւարտական, այ զմկրտուեն ջրոյ։ Արդ՝ ասէ առաքեալն. քո՛ւ մանեաց զնւր անձն վճ եկեղեցւոյ, կամ վճ հաստատելոց, ոչ զի յառաջն գեղեցիկ էր, և անարատ, և ցանկալի. ոչ եթէ յայնմ՝ անուեն նոր ձգեցաւ ի սէր, և ի յանձնառուեն վշտաց

վշտաց սակս նոքա։ այլ զի ընդ արբեցս, զաղտեղին, զագելացեալն, զպարտաւորն բազում յանցանսօք՝ ընդ արասցէ, նուիրագործեսցէ ոչ, կապեսցէ զնա յիւր հոգևարական չարամտութեան, տալ նմա օժիտ զհոգի իւր նոքա։ Սբ֊ՈՒԲ ասացեալն։ ցուցանէ զեղանակ սրբարար բուժելոյն։ ոչ սրբելով կամ մաքրելով զնա յիմ մեղաց և ի պարտեաց ի ձեռն պիրատուի, նոր ծնունդ գործելով զնա արդարութիւնէ, զոր լուացումն պիրատուի ի մարմնի նշանակէ, և ի հոգւոյն ներ֊

գործէ։

Բ֊ԱՆԻ։ Ասաս ասկերեան, և այլք ի յուդայ և ի լատինացւոց իմանան զնորհրդական բանն պիրատուի, ոչ պիրտի յանուն Տեր և որդւոյ և Ս. Հոգւոյ։ և զայն միայ կարի պնդել կուսնելիս մեկնիչ։ Սակայն եւտիս ընդ այլոց լատինացւոց ոչ Տաճի։ վա զի ոչ ուրեք ի սբ. գիրս գտանեմք եկն կոչեցեալ զնորհրդոյ ձև պիրատուի։ այլ ընդ Ակաւռասին՝ սովորա բար ի գործս առաքելոց և ի Թուղթս նոցա եկն ասի արձակաբար, կիրաւելուա ծով այլոյ բառի՝ բանն Տաւատոց, քա բողուածի աւետարանին։ Ոչ այս միտս առնու յայտնապես նա ինքն օգոստինոս, (Տաս. Ե. ի վր Ոովհան. ժե. 3.) բացատրելով զասացեալն սոն։ * Դուք սբ էք վա բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ։ ‖ և ի վկայութիւն ասէ զառաքելոյս առ Հռովմ. (Ժ. 8.) * Ապրիքն է բանն Տաւատոց, զոր քարոզեմք։ ‖ և զվեց բոսին, ի գործս. (ժե. 9.) * Հաւատովք սրբեալ զսիրտս նոցա։ ‖ և դարձ ձեալ։ * Ծանեք... կենդանի և մըշ֊ անջնական բանիւն ոչ։ ‖ և ս, * Ապ յինքն է՝ բանն որ աւետարանեցաս ի ձեզ։ ‖ (ա. պետ. ա. 23. 25.) Այսին օրինակ արձակաբար ասէ նա ինքն։ * Ոչ ելեմ են նոք ապատամբք ի բա նէ անտի.... առանց բանին իսկ շա հեսցին։ ‖ (ԻԲ. 1.) Յաճախագոյն և ս ընծեռնումք ի գործս, խօսել զբանն, լսել կամ ընդունել զբանն են։ Վա որոյ առաւել Տարաւատ է ասասանօր, քա նէ, իմանալ զբանն Տաւատոց, որ ընդ պիրատուէն սբզբ զմարդիկ։ և ոչ իսկ Տարկ էր զնորհրդական բան պիրատուէն ուրոյն բացատրել։ վա զի ի բառն ասպան արդէն իմանի բովանդակ արա֊

րողութիւն պիրատուէ, ընդ նմին և ասացուածք բանիցն։ և ոչ այլուրեք ի պատմել գրոց զկատարումն պիրատուէ, կամ զզօրութիւն նոր, տեսանեմք ուրոյն չբնել զնիւթն՝ և ուրոյն զբանն խորհրդոյն։

Ապա ասել կամի առաքեալն, թէ քա առանց Տայելոյ յարժանաւորութիւն մարդկան, մանաւանդ տեսանելով իսկ զաղետութէ և զիշատմութիւն նոյ, այն չափ սիրեաց՝ մինչև մահու չափ աշ խատս եղև առ ի արդարացուցանել զնա։ մաքրեաց զնա Տաւատովքն, և պիրատուէն իբրև անյուծանելի կնքով Տարտնացոյց ինքեան։ Ապա յորելեայն ի վր բերէ, թէ դուք արդ՝ որպէս և վշտանայեցէք վա կանանց ձերոց, և կամ ի նոցունց իսկ կանանց, բնաւ չկարէք Տաւատարել օրինակին։ դուք ոչ երբէք զանցաւորն առ ձեզ Տարտնացուցաք նեք։ քանի և ոտեղ կամ չարաբարոյ կնոջ Տանդիպիցիք, ոչ այնպիսի կարէ լինել՝ որպիսի մարդիկ էին առ ձեռ։ կա նայք ձեր ոչ այնչափ հեռի են ի ձենջ, որչափ դուք ամենեքին ի քենէ։ Վա որոյ եթէ նա ոչ գարշեցաս յիւր Տարտնու թէ վերառնուլ զձեզ՝ անՏամեմատ չար չարաձօք, և առաւել ձեզ արժան է փոքրու Համբերութէ ինամ տանել կա նանց ձերոց, և զձերութէին՝ թէ ու նիցին, բժշկել ըստ կարի, և ի լաւա գոյնն փոխել երկայնմտութէ։

27 - Օ ի ՝ոգ֊ոյն ինն էր յաջորդն * Ջ֊ՈՒԱՐ ՀԵՒԵՑԵՑ, ԶԻ ՉՈ֊ ՆԻՑ ՒՆՁ ԱՐԱՔ, ՒՄ ԱՂՔԵՐՈՒՆ, ՒՄ այլ ինչ յայտոխեաց, այլ չի էին ՈՐ֊ Ն ԱՐԱՔ։

Սղնպէս ընձեռնու լատինն և ասո րին՝ Համաձայն աղբեանդրեան օրի նակին։ ուր սովորական յորին և արա բացին այսպէս կարդեն։ * Ջի յան դիման կացուցանէ զայն ինքեան՝ վա ռաւոր զնկեզիչ։ ‖ Իմասաքն են։ ոչ շատացաւ քիմաքրել զՏարտնացու նկնէ զնցին յատացնոց աղտեղութէից անտի, այլև գեղացանած յօրինեաց գնա արժա նի իւրում երկնաւոր փեսային։ այնպէս զի ՝ոգ֊ոյն ինն էր յաջորդն, ՝ոյ ներ կայ կի մեա առինքն ունիցի միշտ՝ Ո֊ ՈՐ ՀԵՒԵՑԵՑ, զԱՌԱՔԱՒՈՐԵԱԼ ՆԿՆ֊

ղեցի, իբրև Տարսն ամ զարդուբ ընոր-
հաց պայծառացեալ, լցեալ փառօքն
այ և քնի· Ներքին սրբաբար ընորհաց
վայելուլթիք, բազմապատիկ առաքի-
նուլթիք և պարգևք հաճոյարարք, ալ-
տաքին ձիրք դերբնականք, և մտաս-
կարարուլթիք խորհրդոց, պաշտամանց,
յայտնուլթից, և անհամար նպաստից,
այս ամ են մեծագոլն շքեղուլթիք, որովք
ած միայն դեղեցկանայ եկեղեցի յաւս
այ, այլև մատաղանայ իբրև օրերդ
փափուկ՝ զերծեալ ի զառամել հնու-
լթէ, ասելոց· Ահա են փառք Տարսին
եկեղեցւոյ ի ներքոյ, որոց վն Թագա-
ւորն երկնաւոր ցանկացաւ գեղոյ նո՛,
և ունի ընդաքնի իւրում զարդարեալ և
պատմուճեալ· (Սաղմ. խե՛· 10. 12. 14·)
Ահաքան հոգեցաւ քո և հոգոյ եկե-
ղեցւոյ իւրում, չի՛ ո՞վ ի՛նչ ինչ ասաց,
զբեծ ինչ մնացեալ յառաջին մեղացն,
ոչ բիծք ի դէմս, կամ պղտերուն, զան-
մաքրուլթի, որպա աղտք հանդերձից·
ամ այլ ինչ յայտնէաց, (ամանք, յայտն
ասաց·) այլ զինչ և իցէ թերուլթի, որ
ոչ եղացոյցանէ զտեսիլ կնոջ· որպիսի
ե կոյր լինել կի կաղ, կի զիջանի, կամ
ցաւագար· Ջայսոսիկ պատասուր
Տանդամանս՝ ի բնուլթէ կամ յայլ ինչ
պատճառանէ երեւելոյ ի կանայս՝ խոր-
հրդով յիշատակէ առաքելոյն, ցուցա-
նել թէ այսպիսեաց պատճառանօք յա-
լտկէ անՏաճոյ լինին կանայք՝ արանց
իւրեանց· բայց քո ոչ միայն չգարշե-
ցաւ ի մարդկանէ վասն այնօրինակ
արատոց Տոգևորաց, և ոչ միայն յա-
ռաջումն սրբեաց ընտաս, այլև միշտ
զնոյն սրբուլթե ներդործէ ի Տաւատա-
ցեալս իւր· Եթէ ամանք ապուհասան
դարձեալ, ոչ առնէ անտես, ոչ մերժէ
յառաքասէ իւրմէ, ոչ լուծանէ զկապ
Տարսնուլթէ, այլ ուղղէ Տնարի զսխա-
լեալն· կամ զլար յաժարուլթիս՝ մեաց-
ուածս անցելոց մեղաց քերէ ի բաց·
դանարժան շարժմանս ակամայս սան
ձաՏարէ· զոգիսուլթի կի զակարուլթի
բժշկէ· Եւ քանայ ամ խնամով, չի եկե-
ղեցի իցէ ոք և անարատ, իբրև պատա-
րագ նուիրական ած, այնչափ մաքրու-
լթիք զարդարեալ, զի մի գտանիցի առ
նմա անՏաճոյ ինչ ած, այլ Տամակ Տա-
ձելի·

Ահդ՝ կամի առաքեալ զերազանց օրէ-
նսիսաւս վկայել արանց, թէ արդարե-
ցականն ինքեանք՝ զի կանայք իւրեանց
իցեն ներքոյ և արտաքոյ Տաձելիք·
բայց մի ակնկալցին՝ թէ այնպիսեաց
վիճակին ամենեքեան, զի և ոչ քո այն
պիսի եգիտ զեկեղեցի· Այլ եթէ Տա-
կառակացն Տանդիպեսցին, մի զկա-
նանցն թերուլթիս առնուցուն պատ-
ճառս խոտուլթէ իւրեանց· այլ զեր-
կայմտուլթի քոյ յանձինս բերիցեն,
սիրով և խոհական անտեսուլթիք ջա-
նալով պիտանիս առնել զնոսա առաւել
ըստ բարուցն զեղեցկազարդուլթէ, քան
թէ ըստ արատացն Տապտանաց· որպ զի
զեղեցիկք իցեն և սիրուած յաւս ած,
քան ինքեանց·

Ջկատարեալ սրբութիւն եկեղեցւոյ՝
զորմէ խօսի առաքեալս, մեկնիչք յա-
նոց իմանան առաւել ըստ այժմու վիճա-
կին· և քանզի պեղազեան ազանդա-
ւորք խոտորնակի առնուին զբանս, Տե-
ռնեցուցանելով՝ թէ Տնար է մարդոյ
լինել յաշխարՏի առանց ինչ մեղաց, և
թէ բազումք ունին արդեամբք զսոյն
անարատուլթէ, ըստ որում նոքա ոչ
զայժմու քնաւ անարատուլթէ նշանա-
կէ, այլ որ ի Տանդերձեալսն լինելոյ
յանմահ և յանխոտ կեանսն· Ապաքէն
ազանդաւորք ոչինչ Տաճին ի նպատա
մոլորուլթէ իւրեանց· վասն զի ոչ ասէ
առաքեալն, կացոյց իւր յանդիմման զե-
կեղեցի՝ իբրև արդէն ամենևին ոՀ և
անարատ· այլ ասէ՝ զի էցէ՞ն, չի էցէ՞
յայտ արարեալ, թէ այժմն ի կեանս
պատրաստեաց քո զնոմ Տնարս՝ որք
զերս Տարսն զեկեղեցի ասենն յայմ սըր-
բուլթի, թէպէտ և իրօք ոչ յայմ ան-
դամս, և ոչ բան բոլոր անարատուլթէն
կատարի այն· այլ բովանդակապէս
լրացեալ, յորժամ անմահականն փոխա-
նակեսցէ զմահկանացուս, և որ այժմ
Տարսն ի քնի՝ ՏնորՀօք միայն և յա-
ւուլ, Տարնասցի և փառաւք· որով
նմ անդամք իւր զամենեսին անարա-
տուլթի զդնուցուն· Եւ այս են Տար-
ասնիքն՝ զորմէ ասէ յայտնուլթին՝ լի-
նել յերկինս, և Տարսն պատրաստեալ
փառաւք առ՝ի միանալ ընդ գառինն ած
անմահելի ողեՀառնուլթէ· (Յայտ·
ԺԹ·

ԺԶ. 7։)

28. Այնպես պարբին սրտ սիրել ընտանեաց, իբրեւ զինքեան մարդ ինս. որ սիրէ զինի իւր, զանձն իւր սիրէ։

Նկարագրել զսիրոյն քոյն զօրինակն առ Եկեղեցի, գայ ի հետեւումն բանին. Նոյնպես ասէ, նոովին սիրոգական խնամոցելոյ, անկեղծ և մշտաջան կամօք, պարբին սրտ, ոչ են ազատք, այլ քո ան պարտական եր, այլ պարտապանք սիրել զնոսա կանայս՝ օրինօք Ետեսու. այնպէս իշխել կանանցն՝ զի յառաջ գայցէ ի սիրելոյն զնա. առնել նոցա զնմ որ ի Ճշմարիտ սիրոյ Ծնանի, ոչ ըստ մարմնոյ դարմանացն և ևիթ, այլ և ըստ հոգևոր բարեմասնութեն կամել զնոսա բարիսն՝ խրատուք և օրինակաւ ուղղ վարուց։ Եւ սիրել ասէ՝ զնոսայն, և ոչ թէ զկանանցն զդեղեցկութեի, կամ զպերճասկանութեի, կի զՀոխութեի ընչից, կի զբարուցն ընտելութեի. վ՚ի զի անհասատատ գոլով այսոցիկ, անկայուն է և սերն յեցեալ ի նոա։

Իբրեւ զինքեանց մարմնոյ։ Ասա մասն կամ յարելի է յօրինակն քոյն. իբր ասէր. որպես քո սիրեաց զեկեղեցի իբրև իւր մարմին, նոյնպես արք պարտին սիրել զկանայսն իբրև յատուկ մարմին իւրեանց։ Եւ կի յայս առնէ զնոր պատճառ. կի ձեռնարկութիւն սիրելոյ. և զայս միտս առաւել ընտրէ ասկեբերան և այլք ըս կարգի յաջորդ բանիցն։ Վ՚ի զի օրինակ սիրոյն քոյն Եկեղեցւոյ գերազանց և անժխտելի, ոչ Տարկաւ բանադատեր զոկար միտս արանց. կարէր ոք խորհել, նա՝ քո էր և ւոծ, ըս իւրում մեծութենն՝ և սիրէր, և՝ զանձն մատներ. իսկ ես մարդ եմ կարճամիտ, կարօտ, և դիւրաթափոխ։ Այնին իրի զընմանէի օրինակ մարմնոյն մերձ գնե, իբրև բնական իրաւամբք հաւանեցուցանելով զաբս կարճամիտս։ Բնութեի օրինօք պարտին ասէ՝ սիրել արք զկանայսն, ոչ նովին օրինօք սիրեն զիւրեանց ըզկայուռկ մարմինսն։ Եւ իմանի նմանութեիս ըս կրկին յեղանակս. մի՝ ըս Հերոմ նիմասի, մարմինն գոլով անօթի և զօրծի Հոգւոյն, ոմ խնամօք դարմանի առ՝ ի նմանէ. զի մի՝ ի տկարանալ կամ՝ ի լուծանիլ մարմնոյ՝ և ինքն Հոգի առ դանս կրեսցէ։ Այնպէս կին իբրև անօթ և զործի է առնն յոմ առնին պէտս, և՝ ի զաւակասերութեի. ապա արժան է հաստատել՝ ի նա զսէր և զնմ խնամակալութեի. զի մի՝ ինքն մնալ ըս մարմնոյ կամ ըստ Հոգւոյ՝ առնին և վնաս հասանիցէ։ Երկիր, ըս ոսկեբերանին և այլոց, միաւորի պատկին մի մարմին կացուցանել զայր և զկին. ոչ և և են երկու, այլ մի մարմին. ապա արք պարտին նկատել զկանայս իւրեանց՝ ոչ իբրև օտարս և բաժանեալս յինքեանց, այլ մարմնակից և Հոգեկցորդս. քանզի և կինն առաջին եւայ՝ յառնէ իւրմէ առաւ, և միշտ Համարի մասն նո։

Ասյսոցիկ՝ ի դէպ գայ յայծորդն։

Որ սիրէ զինի իւր։ Թէպէտ յօտար ազգէ և յաշխարհէ կին ածիցէ, բայց անլուծանելի յօդմամբն ոչ միայն իւր ընտանի լինի, այլև նոյն ինքն՝ և մի անձն ըս նմա. ուստի՝ ի սիրելն զկինն, զնոյն իւր սիրէ։ Զիք այլ զօրեղ և բռնն ձգումն՝ ի սիրել քան զսէր անձինն. և այսու իրաւաբանօրէն ցուցանի պնդագոյնս թէ սիրել զկին ըս ասացեալ օրինակիս՝ ոչ այ ևեթ Տաճկական է, և աշխարհի՝ ի շնութենէն, այլև՝ ի մեծ օգուտ առն յոմ բարիս։ Հատանի միանգամայն զնմ պատճառանս անխնամութեի և առելութեի առ կինն. վասն զի եթէ թերութիք կայցեն՝ ի նմա ըս բարուց կի ըս քնութեի, իւրում անձինն են Հանգելի. և յայսպիսիս իւրացանչիւրոք ջատագով կանգնի անձինն՝ և ոչ դատաղ. որպէս և ասէ։

29. Ո՛չ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և պահանէ զնա, որպես և Քս զԵկեղեցի։

Այն եդեալ է փոխանակ մարմնոյ, ոմ յայս է՝ ի յոյնն և յայլ Թարգմանս։ Ասէ՝ որ առողջ միտս ունիցի, երբէք ատեաց զանձն իւր. (մի օրին. ոչ երբէք ատեաց։ այլ. ատեաց։) Իւրաքանչիւրոք յանձնէ իսկ գիտակ է, ոչ ունի պէտս յայլոյ գիտելոյ, Թէ ոչ բնաւ ոք՝ ի մարդկանէ խակապէս առել զմարմինն իւր՝ Թէ և արատաւոր իցէ, կի անպիտան. սերն ընդաբոյս՝ որով ամ մարդ ձգի յիւր բարին, ոչ կարէ չար ինչ կամ՝ մել

մել իւրում անձին կամ մարմնոյն. սիրել զինքն, և առել զինքն՝ եթէ ըստ ճշմարիտ նշանակութեանն առցին, այնպէս հակառութեան վակն՝ որպէս սիրել և ոչ սիրել զնոյն, առել և ոչ առել զնոյն:

Այլ ահաւադիկ, այլ մանաւանդ տայ մարմնոյն զգեստս կենաց՝ զկերակուր և զըմպելի, զբուժանալով նմա՝ ի վնասուց կարաց: Եւ թաղանէ զնա, պիտոյական հանդերձիւք և քնակութ. զամ խնամս որք պիտանի են մարմնոյ, և հնար է մտաւոյանել, ոչ քնաւ զլանայ. փութայ՝ ի բժշկութիւն ախտացելոյ անդամոյն. և զանբժշկելին ոչ լքանէ, բայց միայն յորժամ առաղ ջինչ պահպանութիւն պահանջիցէ:

Ոչ ևս ջնջեցէք: (մի օրէն. որպէս ևս, ամանք յայլ թարգմանչաց ևս կի յօրինակաց առանց Եւ դնեն:) Սովորական յոյն և արաբացին փոխանակ ից՝ դնեն ձ. բայց աղեքսանդրեանն, ոչ կերբեան, լատինն և ասորին ևս: Որպէս առաքեսր ոչ նշանակէ, թէ զոր օրինակ քո ոչ բնաւ առէ զկիզեղեցի՝ այլ դարմանէ զնա, նոյնպէս ոչ ոք առէ զիւր մարմինն ևն. այլ ի հակառակն խնամալի է առաւել, փոխանակ ասելոյ՝ առիպես, ջո. ոյզ ոչ ոք առէ՝ այլ դարմանէ զմարմինն, նոյնպէս և քո ոչ միայն ոչ առէ՝ այլ ամ խնամով սնուցանէ զմարմին իւր զկիզեղեցի՝ բանիւ վարդապետութեան, և խորհրդով մարմնոյ և արեան իւրոյ. զարմանէ զանազան պարդևօք և առաքինութիւք, և փառօք, որպէս ասաց վերագոյն: (26. 27.) Ջախտացեալն յանդամոց իւրոց ոչ բնաւ թողու անխնամ, մանաւանդ զնոսա առաւել քան զառաջնն փկայէ խնամարկել: (Ա տոթ. ե. 12:) Այլ ոք չկարէ երբէք հաւասար օրինակին քոյ զարման մատուցանել կնոջ իւրում. բայց ուսանի՝ թէ զնդրդ պարտ է սիրել զնա, և անպակաս լինել՝ ի խնամարութենէն:

Առաջնած առաքելոյն, թէ ոչ ոք երբէք առեալ զանձն կամ զմարմին իւր, արդարացեալ է յայմ. վ զի խօսի բան բնաւորական սիրոյ և խնամոց՝ որ օրէնօք անվրէպ պահչէ յայմ մարդ: Եւ ոչ այ ևս որդինէս, կի այլ ոմանք ըստ յիշելոյ հերձուածողին հաղեցին ոչ ճշմարտիլ՝ ի ցաւագնեալս ոմանս անբժշկական ախտիւք, կամ՝ ի կատաղեալս և յարս յաւասիտս, որք մահու ցանկան, կի իւրովի իսկ յանձինս գործեն: Այլ պիտ յօժարութենէ կի արարուածք ոչ եթէ յատելութենէ անձին կամ մարմնոյ զան յառաջ, այլ ըստ հակառակն՝ ի բնաւոր սիրոյ իւրեանց, և յատելութենէն ցաւոցն և ախտաւորութեց՝ յորոց կարծեն դիւրել անձանց ձեռնաւորութիւք մշհան: Ուսանել ևս արտաքոյ առելութենէ անձին զարձեն, որք սակս ցաւագնութենէ ճշտին զմարմնոյն, կամ փառքեն լուծանել՝ ի կապանաց նը: Այլ այս է ճշմարիտ և պերագոյն սէր անձին, և նմին իսկ մարմնոյ՝ արդելուլ զնա յախտաւոր բերմանցն, կի զնորա փոքր և անցանելի բարիս փոխարկել՝ ի մեծագոյն և յանանց, թէպէտ և առ երկրաւորս անտեղեակս ճշմարիտ բարւոյն՝ զատելութենէ ինն բերէ ցոյցս. որպէս դեղոց արբուցմանէք՝ անմիտ հիւանդի, կամ խրատ հայրական դաւազանի՝ առ որդի առաչակ. ուսոի առնոցա կարծիս խօսելով աւետարանին, զճշմարիտ սէր անձին՝ առելութենէ անձնանէ, և զառաջ առելութենէն՝ սէր.

* Որ սիրէ զանձն իւր (ըստ համարելոյ աշխարհաբարս,) արձակէ զնա (՝ի կորուստ.) և որ առեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ՝ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա. ո՝ր ոչ սէր ճշմարիտ և կատարեալ: (Յովհ. ժբ. 25:)

30. Ո՝ի անբան էմ մարդոյ նորա, ՝ի մարդոյ նորա ե յոյնքոյ նորա:

Յայտ առնէ զպատճառն՝ որոյ մի իբր բնաւորական գլծովք խնամի քո զկնէ զնդի: Ո՝ի անբան էմ. մեր իւրաքանչիւր հատատացեալք եմք անդամք, կի մանուածիցք մարմոյ նը. ըստ ասացի հրդեական մարմնոյն քոյ, որ է եկեղեցի. ՝ի մասն եմք եկեղեցւոյ, ուսոի և խնամարկեալք ՝ի քէ: Ըստ այլոց՝ բուն իսկ քոյական մարմնոյն անդամք եմք, յօդակապեալք ընդ նմա: Ջերկաքան չիւր իմաստս դնէ Տիրոնիմոս. բայց ըստ ակնբերանին և ըստ այլոց՝ հարազատս. դոյն է երկրորդն՝ ըստ կարգի յաջորդ բանին:

'ի մարմնոյ նոցա։ Ջորանն ադամայ ասացեալ վա՛ եւայի՛ 'ի կիր արկանէ, յայտ առնելով Թէ 'ի քո և յհկեղեցի ունէր այն զղեսաւորութեի խորհրդոյն։ Ըստ Ճառին յերեսի ասաց ադամ։ * Աչ՛ այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմոյ։ ‖ (Ծննդ. ը. 23.) վա՛ զի մարմին եւայի կազմեցաւ 'ի կողէն ադամայ, որ էր ոսկր՝ բայց մեամբ ինչ մսոյն։ Բայց աստի սովորութեի եղև առ երբայեցիս՝ նշանակել այսու զհամարիան մերձաւորութեին կամ զազգակցութեի, Թէպա և մին չիցէ յաւացեալ 'ի միւսմէն։ ոյլ լսքան ասաց վասն յակոբայ, և դաւիթ առ յուդայ եանան։ (Ծննդ. իե. 14։ ը. Թագաւ. ժե. 12։) Եւ զի 'ի բաղկացուածս մարմնոյ նոյ՝ զլաւսոր և բազմազոյն մասն են ոսկերք և ին, նմին իբրև սեաեին յոսկերացս և 'ի մարմնոյ ուրուք, նշանակէ զմեծ հարազատաւեին։ մինչ զի իմանի՛ համարիան, ազգակից, ընտանի և միաբնակ ե՛ նմա։ և այսպէս բացայայտէ ոս-

կերբան, և այլք։

Ապա ասել առաքելոյն, մեք 'ի մարմնոյ և յոսկերաց քոյին եմք, ը՛ ամ մեկնիւ չաց նշանակէ՝ ազգակից լինել քոյ, համարիան և զլիսովին ընտանացել՝ նմ։ Բայց Թէ ե՛, կամ մինչ միտս, զանազանաբար բացայայտեն։ Որպէս՝ ըստ հաղորդութեի մարդկային բնաւէն առնուն, ոյլ Թէ նմին մարդոյն քոյի բնաւիկ եմք և, ո՛չ պարզաբար՝ Թէ մարդ է և նա իբրև զմեզ՝ մարմին զգեցեալ։ զի ըստ այդմ առաւել ասելի էր՝ քո՛ 'ի մարմնոյ մերոյ է, և մեզ հաղորդեալ։ այլ զի ընկալաւ նա մարմին 'ի Տոգւոյն սքի կազմել։ և մեք նոյնպա 'ի Տոգւոյն սքի ծնեալք աւազանաւն, հաղորդակից մարմնոյ նո՛ դառնիմք, ը՛ ոսկեբանին և Տերնիմոսի։ Կամ զարձել, մարմնոյն քոյի կցորդելո՛ իբրև զլխոյ, յորմէ ամ շինուած մարմնոյ եկեղեցւոյ առնու զկազմուածի իւր։ Կամ զարձել ը՛ այլոց, 'ի մարմնոյն քոյի եմք՝ այն որ 'ի խաչին զեղեալ։ յորոյ 'ի կողէն արեամբն և ջրով կերպացաւ մարմին եկեղեցւոյ, որպա եւայ 'ի կողէն ադամայ ննջեցե-

լոյ։

Իսկ այլք ընտանեզդին և համարիոն ը՛ խորհրդական միութենն իմանալ։ ո՛ ձա-

չակամբ նմին իսկ մարմնոյ և արեան քոյի՝ ձշմարտապէս յօդեալ եմք 'ի նա՝ Թէև խորհրդաբար։ այնպէս ընտանի և համակիցք քոյի, մինչ զի մարմին նո՛ բովանդակ ամբողջութ՛ 'ի մեզ ընկալեալ, նոյն մարմին և ոսկր առնէ զմեզ։ զոր ը՛ամանեալ և առաւերաբար նկարագրեր կոչն ադամայ՝ ընկալեալ յեւայ։ զի ո՛չ մարմին ադամայ ոյլոյն այլ մասն ինչ նո՛ եղև։ հաղորդե՛լ կնոջն, իսկ 'ի մեզ բովանդակ մարմին քոյի նո՛ր դրամայ։

Ջայս ամ իմաստս ակնարկէ ոսկեբերան 'ի բանս իւր, որպա և այլ վարդապետք՝ երանոս, Նիւսացին, և այլք։ Եւ ասեն 'ի դէպ գայ դիտաւորութեի առաքելոյն։ վա՛ զի հաղորդակցութ՛ մեր ը՛ քոյի մարդացելոյ իբր ը՛ դաղափարի հոգևոր ծննդեան մերոյ, իբր ը՛ սրբարար ողկակիզի, և իբր ը՛ կերակրոյ՝ տայ նմա զամ խնամս առնել 'ի վը անդամոցն միացելոց այսքան հարազատութ՛։

31. Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ կին՝ ընդ իւրոյ. և էիցին երկոքին 'ի մարմին մի։

Ջորան ծննդոցն առնու ը՛ կարգի՛ իբր յարմարիւրեամ առաքելուեն։ (Ծննդ. ը. 24.) զոր ոմանք համարին լինել ասացոմած մովսեսի։ իբրև Թէ առ բանն ադամայ, այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, ինքն մովսես հետևութ՛ 'ի վերբերէ՝ Թէ վասն լինելոյ կնոջ յառնէն՝ պարտին անորոշել յարել առ միմեանս։ Սակայն լաւ ևս ինքեին քո ընծայե՛ այսպէս յետ կազմելոյն զեւայ։ զի արուեէգ արարե՛ զնո՛, ասաց ամ բերանով ադամայ, վասն այսորիկ Թողցէ եւն։

(Ա՛ատթ. ժե. գ. 5։)

Ըստ Ճառին՝ զանբաւականի լծակցութ՛ օրինաւոր ամուսնացն օրինադրէ բանս, միանդամայն զմիոյ առն ը՛ միում կնոջ կենակցութ՛։ Վ՛ ասորէն, (ոմանք, ա՛ նորէն։) և իմանի՛ վա՛ այն զի եւայ յառնէն կերպացաւ, կի՛ ը՛ ոմանց՝ վա՛ նորա, վա՛ կնոջն, Թողցէ այր, ը՛ բնակութ՛ և ը՛ անաւսական կենցաղակցութ՛, և ո՛չ ը՛ խնամարկուե՛ զձնօղս իւր։ ԵՒ երթիցէ զնէ կնոջ իւրոյ. կի՛ ը՛ յառնէն՝ յարեսցէ 'ի կին իւր։ ը՛ համակից լեցէ կնոջ իւրոյ

րամ սիրոյնէ, քանակութէ, միաբան գոր-
ծակցութէ յամ առանին իրս։ Ասորիկ
անդրադարձն իմանի զօրութէ՝ ի վերա
կնոջն և ս. ՝ի կինն թողեալ զՏայր իւր
և զմայր, և յարեսցի յայր իւր. և յեր-
կոսին և ս՝ Թողուլ ըս քնակուն զնոցա
իւրեանց ոչ ելթէ Տարկ Տրամանի զնէ,
ոչ թէ անդէն յամուսնանալն պարտին
Տրաժարել՝ ի տանէ ծնողաց իւրեանց,
այլ միայն զիշխանուելթէ տայ Տրաժարե-
լոյ զի կարօղ են, և ոչ ևս կապելոք ըս
տէրութէ ծնողացն։

Եւ եղեկն էր։ (մի օրինն էր։) ե-
րկոքինն նք այրն և կինն լինելոցին ամուս-
նութէն՝ ի մարմին. զի մարմին՝ կամ
զի մարդ բացակատարեացն բարոյա-
պէս և ըս քաղաքական կարդի, ոչ սակ
յօդմամբ սիրոյ ըստ որում ոմանք Տա-
մարեցան. զի այդ միութէն Տատարակա-
բար պատշաճի ամ սիրելեաց. և զի եթէ
պատահէր ատելութէն լինել ըս այր և ըս
կին, ոչ և ս մեայր միութէն։ Ասլ իմա-
նի ըս անբակատելի դաշնաւորուն՝ որով
տիրեն ՝ի վը մարմնոյ միմեանց. այնպէս
միացեալք առ իրեարս ըս մարմնական
կենակցութէն, զի միայն մանն՝ որ բա-
ժանէ զՏոգի՝ ի մարմնոյ, բաժանել կա-
րիցէ զայր ՝ի կնոջէ։ Բայց քանզի այս
ընակցութէի կարդեալ է ՝ի ծնունդ զա-
ւակի, նմին իրի ամուսնական մերձա-
ւորութէն թէպէտ և ոչ է յիսկութէ
ամուսնութէ, բայց լսումն է նորա, և
արտաքին ցոյցք՝ մի մարմին լինելոյ ա-
մուսնացք ըս միմեանս. և ՝ի սոյն միտս
բերեն վարդապետք, և առաքելն իակ
՝ի ս. կորն. (ետ. 16. է. 7. 4։) Ավ այսո-
րիկ ոմանք զասեն՝ եղեցին երկուքեան ՝է
մարմին ՝է, այսպէս և ս բացատրեն, այլն
և կին լծեալոյն ՝ի ծնանել զմի մարմին,
այ զզուաւն։

Ասդ՝ յիմայիկն օրինադրութէ աստ
ցուցանէ առաքելն, թէ պնդագոյն
միաւորութէ ամսմանեցաւ ՝ի մէջ առն
և կնոջ, քան ՝ի մէջ ծնողաց և որդւոց.
մինչ զի առաքինին լուծանէ զերկրորդա-
և ինքն ոչ բնաւ լուծանի՝ բայց մաՀ-
ուամբ։ Եւ զի եզականաբար ասէ՝ առն
յարել ՝է կին իւր, այսու յայտնէ զմիոյ
ըս միամ լծակցիլ՝ և ոչ ըս բազմոց։ Իակ
թէ զինչ առ ՝ի միտս ցուցանի այնու
նորօրինակ միաւորութէ, յաջորդաւն

մերկանայ։

ՅԲ. Ասորերըս այս ինչ՝ որ կամ ինքնին զաղ-
ամն է և դժուարամկնելի, և կամ է
նշանակ այլ ինչ զաղամի և ձեռային
իրաց. երկաքանչիւր եղանակաւ իմա-
նան ասս վարդապետք ըս իւրաքանչիւր
մեկնութէ. այլ խնդրելի է՝ թէ զինչ
ցուցանէ զերամուն այս։

Որմանք յաղանդաւոր մեկնեաց Համա-
րին ցուցանել զմիաւորութէն քան ընդ
եկեղեցւոյ, որ է զաղամի խորհուրդ
ձեռային։ Սակայն ոչ անմիջաբար յա-
ռաջ գայնմանէ խօսեր առաքելն, ոչ
զի այս զերամուն ցուցանել կարիցէ
զմերձաւորն. այլև զկնի յաւելուլն՝ Բայց
ես ասեմ ՝է ս, յայս առնէ՝ թէ զայլ
ինչ իմանալ անուամբ խորհրդոյն, և
գայնպիսի ինչ՝ որ նշանակէ զՀոգևաւորն
միութէն քան ըս եկեղեցւոյ։

Ասլ ՝ի լսելն վարդապետացդ՝ Հա-
մարեցան զերամուամբն այս՝ ցուցա-
նել զպատկեր քրիստոնէական. իբրև թէ
այս այժմու ամուսնութէիւն Տաւատա-
ցելոց՝ է խորհուրդ մեծ, նշանակիչ
միաւորութէն քան ըս եկեղեցւոյ։ Ա յսմ
մեկնութէ առաջնորդն եղև պետրոս լսմ-
բարտաս՝ վրդպտ վՀռոց ասացեալ. (՝ի
ՀԷ. գիրս. Ջանազան. իգ.) յոր յա-
ւելին մեկնիչք նր, և այլ ձեռաքանք՝ թէ
խորհուրդ կոչէ առաքեալն՝ ոչ միայն իբր
նշանակիչ միաւորութէն քան, այլև իբր
բերօղ արբարար շնորՀայ՝ ոմն զայլ
խորհուրդս եկեղեցւոյ. և զընաբանա
մեկնեն այսպես։ Խորհուրդ ամուսնու-
թէն քրիստոնէից՝ է մեծ, ոչ ըս նախկին
վիճակին՝ այլ ըս որում ասեմ ՝է քս և
յեկեղեցի. այ ըս այմ որ պաշտի ՝է քան
օրէնսն և յեկեղեցւոյ։

Սակայն ոչ միայն առաջին վարդա-
պետք և մեկնիչք չյիշեն զայդպիսի
միտս, այլև յետին մեկնիչք կուռնելիոս,
եւսեբիոս, և կաղմիթ անհարատաս Տա-
մարին, կիմ ըս Տետևորդի միայն՝ և ոչ
նախկին իմաստս բանից առաքելոյն։
Ավ զի նախ քան զայս խօսեր զամուս-
նութէնն ադամայ ըս եւայի, և որ յետ
այնր՝ ի աերունդս մարդկան լինելոց էր
ըս սահմանելոյն այ. ուստի անմիջաբար

յաւելուլն՝ խորհուրդ այս ունի է, ըստ կարգի ոչ կարէ ցուցանել զյաւուկ պատկն քրիստոնէական, այլ առ հաւատոյ զնմ ամուսնութեանն օրինաւոր ի սկզբանէ և այսր. յորում ժամանակի չէ և այսպէս քնական ամբարձեալ էր ի խորհուրդ շնորհաբեր, այլ միայն նշանակիչ էր միաւորութեան քոյ ընկերի ցոյ։ Նաև ոչ եթէ սոցին ամուսնացելոց ամենեցուն՝ առ որս խօսի զխրատն, ի դէպ էր ասել զնոյ ամուսնութենն խորհուրդ յաւուկ ըստ քրիստոնէական պատկին. մի զի բազումք ի նոցանէ ամուսնացեալ էին ի հեթանոսութենէ իւրեանց. և մկրտութենէ նոյ յետ այնր՝ ոչ ամբաւ նայր զամուսնութենէ նոյ ի խորհուրդ եկեղեցւոյ՝ ըստ հաւանականագոյն կարծեաց։ Ընդարձակագոյն ճառէ յիմս այսր բանի եատիս ոչ միայն ի մեկնութենս, այլև առանձինն ի բացատրութ վճռոց լմբարտոսի. (յօդուած. է.) և առ բանս ինչ վարդապետաց՝ կի որիդենդեան ժողովոյն պատասխանի առնէ, թէ նոյ հաստատութեք առաւել յաւանդութենէ եկեղեցւոյ՝ որ զպատկն ասէ լինել մի յեօթից խորհրդոց եկեղեցւոյ, քանան ցուցանել զայն նաև ի գրոց՝ ոչ ի միոջէ եւեթ բանէ, այլ ի բազմանգակ վարդապետութենէն՝ որով առաքեալն պահանջէ զգերագոյն մաքրութիւն և զսէր ի քրիստոնեայ ամուսնացելոց՝ օրինակաւն քոյ. յորմէ իմաս տասիրէ՝ թէ շնորհք ինչ կապելոյ են ընդ քրիստոնէական պատկին. բայց ոչ ասեն՝ թէ բառդ խորհուրդ զայն նշանակէ առ մանաւանդ։

Վասն որոյ միայ տեսանել զհաստատակ իմաստս առաջին և յետին մեկնուցս։ Ամենեքին դերասնումբեն այս՝ իմանան զամուսնութ ազգակաւ և եւայն, ընդ և զսերնդոցնոյ, որոց առաւելապէս յարմարի թէպետև զհայր և զմայր՝ բան թէ նախատեղծեցն, որք չունէին հայր և մայր։ Ապա իմաստքն են. խորհուրդն նշանակել բանիւս, թէպէտ այր զհայր և զմայր, յոյժ մեծ է և դժուարագտութ. ամուսնութիւն որով զազգաց ածզազգամ և զերայ, և որով սահմանեաց զազգաւորել զայլ ամասնսինս անբակութ թէ առ իրեարս, է հրաշալի և խորհրդաւոր։

Իսկ թէ յինչ միտս ասէ խորհուրդ, ոչ կերևրան կրկնակի առնու. այ ոչ միայն իբրև նշանակիչ միաւորութ քոյ ընդ եկեղեցւոյ, այլև զի ինքնին ազանչելի իմն է և գաղտնագործուկ այս յարութն առն և կնոջ առ միմեանս։ Ջ իմրդ աղջիկ կոյս ընտրուն գտուել ի տան ծնողաց, յանհամար իմամս նոյ վայելելոյ, գորս վասոք աձեցուցեալ զնմ ժամանակս, այնպս ոգեկառնի ի փեսայ ոք օտար յատաջնմէ օրէ անտի, մինչ զի առ սէր նէ մոռանալ զգալի ծնողաց և զտուն հայրենի։ Եղեալս երկնաստղ դաղմանելոյ և դաստիարակեալ ի ծնողաց իւրոց՝ որպէս վաղվաղակի ընտանենալոյ յաղջիկ օտար՝ ոչ տեսել, և ոչ խօսելոյ ընդ նմա. մինչև յատաջատասել զնա քան զնմ ծանօթս և զբարեկամս, և զծնօղս իսկ։ Ոչ փոքր զարմանալիք են գործել ի ծնօղս առն կի կնոջ. զի զբաղում վշտօք ստացեալ զաւակ իւրեանց զուսոր կամ զդուստր՝ կամակոր յօժարութ չանեն ի գրկաց իւրեանց, և աւանդեն մշակ ջնեաւոր յայլ ոք օտար, բազում անգամ և անծանօթ. ոչ ի ծախս ագահնեն վարձանացն և չանգերձանաց, և հարամանեաց. մերկանան յընչից և ի զաւակն սխորժելով առ ի մեծացուցանել զօտարն բարգաւաճութ պատուոյ և զաւակաց. և զայն ինքեանց վարկանին փառս և ուրախութ։ Արդարև այս ամ ոչ մարդկային իմն է, այլ գաղտնիք արարչական տեսչութն. որ նորահրաշ սիրելութ զօրացուցանէ զնուիրեալն ընդ ամն նմին իսկ բնութ։

Արդ՝ ըստ այս զարմացեալ առաքելոյն, ասէ՝ յիրաւի մեծ խորհուրդ է այս ծանկալ ի բնութես. բայց յորժամ զայն տեսանեմ և ուսուցանեմ կատարել ի քս և յեկեղեցի, ապշիմ հիանամ. եթէ առ մարդիկ մեծ է այսպիսի հրաշ ժարուն ի ծնողաց, և ընտանութենն օտարաց առ միմեանս, զինչ ապա ի քս և յեկեղեցի տեսանել զնշաւոփա. ոգոյնն։ Այսպս բացատրէ ոսկեբերան՝ թէ ի մեկնութենս, և թէ յառաջին ձին Ճառին մակագրել։ * Ջ որպիսի կա-

Իսկ այլ մեկնիչք խորհուրդ իմանան միայն իբրև նշանակիչ զազգանի իրաց. առ որ բերէ հերձնիմոս զբացատրու-

թէն՝ զոր ՚ի բերանոյ գրիգորի ՅՈՎՍԷՓ բանին ինքն իսկ լռեալ ասէ բազում անգամ. և է այսպիսի ։ Զոր ինչ միանգամ ասէն գիրք զաւամայ և զնչայէ՝ յաղագս կազմուե նիջ և ամաւանուէնն, մնծամեծ իրս գաղտնիս բովանդակեն. բայց ես ոչ զնոին կարացեալ արտայայտել, ասեմ զայն միայն՝ որ Տայի ՚ի քէ և յեկեղեցի ։ Կամ իմ այսպէս ։ Խորհուրդն ծածկել ՚ի կազմուածէ նախասահեղծիցն, և ՚ի նիջ միաւորութենէն անմեկնելի յօրինակ ամ ամաւանաւորաց, մեծ է ըստ բովանդակ հասողութենէն, դժուարին և ծանր առ ՚ի մեկնել ըստ ամ գաղտնութենէն. բայց շատ համարիմ ասել կամ յիշատակել միայն ըստ սիրոյն՝ որով քէ յարեցաւ յեկեղեցի. զանց արաք ընել ասել, թէ ոնչ և զնարդ եւթող նա զՏայր կամ զմայր. կամ առ ի՞նչ այսքան քրտամբք և տուժանօք և նամաստու թիք խնդրեաց իւր Տարսն զանարժանն և զապաշնորհս. Թողում առ այժմ բացայայտել զայս և զայլս բազումս. քաւական է ասել թէ անորոշելի յարեցաւ յեկեղեցի ։ Ա՛յսմ մտաց զկնի գայ յաւելուլն, թէ և դուք նոյնպէս ի՞ք ըստ միոջէ իւրաքանչիւրոք զնւր կին սիրեցի, և կինն երկնչեցի նէ։

Ըստ ասացելոցս՝ զնորհուրդն ծածկեալ ՚ի կազմուածէ և ՚ի միաւորութեան նախասահեղծիցն, այլ և յապագայ ամուսնութեան մարդկան՝ կամեցաւ առաքեալս մասնաւորաբար ևւթէ ծանուցանել, որչափ առաջարկութեան բանիցն պահանջէր։ Կամք եղեն ամենայնեցուց յառաջիւթենէն այ՝ որպէս զնախկին արարչութենէն տալ յօրինակ երկիրս, և զաղաւին հին՝ նորոյս ադամայ, նոյնպէս զմիաւորութենէն ադամայ ընչ եւայի՝ և զննդոցն նիջ առ միմեանս՝ իբրև զապատճառ ածելուէ աշխարհի՝ կարել նշանակ միաւորութենէն քոնի իբրև պատճառի բազմամարդութենէ երկնից։ և զայս զնւր խորհուրդ նախատպաւորեաց մարդարէական բանիւն ադամայ, Թողցէ այր զՏայր իւր և ընչ։ Յաւիտենական բանն ածն նախ զառաջինն միաւորեցաւ անբաժանելի յօդմամբ ընչ մարդկայինս օտար բնութենս, բազկացեալ ընչ նմա մի դէմք, և մի դէպակ իրականն, որով ըստ իրաց ինչ համարի Թողուել զՏայրն ածն, և զմայրն՝ զերկնայինն եղէմ ընչ հերոնիմոսի. կի ընչ այլոց՝ ՚ի հրեական ազգէ ծնեալ, եթող զՏրէականն ժողովարանն։ Կամ ընչ Տայ մեկնութենն՝ եղիք եթող զնւր մայրն ընչ մարմնոյ զնչ կոյսն, և դիմեաց ՚ի խան. ուր ՚ի կողէն բացելոյ կազմեցաւ եկեղեցին հեթանոսաց, ոնչ եւայ ՚ի կողէն ադամայ։ Յաւելու Տայ մեկնութենէն, թէ նոյնպէս եկեղեցի հեթանոսաց եթող զՏայր և զմայր զկուռս սրաքականս և իգականս, յորոց ՚ի կրօնս ծնեալ էր։ Աւդ միացաւ քէ այն ինչ շինեալ եկեղեցոյ՝ անմեկնելի շաղկապմամբ, յորմէ ոչ մահ կարէ բաժանել, ոչ յաքրութենէն, ոչ վերանալն. այլ մշտնջենաւոր կացեալ ընչ նմա մինչ ՚ի կատարած աշխարհի, Տրաշափառագոյն և ս յօրինէն զՏարսնութենէն փառս ՚ի յաւիտեանս կան առագաստին յերկինս։ Եւ որպէս ադամ նախ՝ իբրև հինն և գլուխ մարդկութենէս, և ապա եւայ օգնական նմին՝ իբրև մարմին, նոյնպէս նախ քէ հինն և գլուխ որդոց ոյ, իսկ եկեղեցի՝ մարմին նէ, ՚ի քէ ընկալեալ զնմ ազգութիւն Տոգևորական. և ոնչ գործակցութիքէ ադամայ և եւայի՝ աճելուէն եղև ազգէ մարդկան, նոյնպէս քէն ազգմամբն յիկեղեցի՝ հինեցաւ, և օր ընչ օրէ զաճումն առնու ազգատոհմ հաւատացելոց և սրդարոց։ Ա՛յսպէս քէն միաւորութենէն ընչ եկեղեցոյ՝ նախատիպ եղև ամուսնութենէն ադամայ, ոչ միայն մինչ յամեղութենէն եր, այլև յետ յանցանելոյն. և ընչ նմին օրինակի ամուսնութենէ այլ մարդկան արարեալ ընչ սահմանելոյն ոյ՝ այսմ մեծս խորհրդոյ նշանակ եղև. մանաւանդ ՚ի նոր օրէնս աւետարանին՝ ամուսնութենէ հաւատացելոց տպատրագնոյն և առաւել Տուպ երևեցուցանել զնոյն խորհուրդ՝ իբրև արդէն իրօք կատարել, և ոչ ապագայ ոնչ յաւրայն. ուստի ինքնին զմեծագոյն սրբութենէն պահանջէ և զողջախոհ կենակցութենէ ամուսնացելոց, աճեցուցանել զնմանագոյն հաւատացեալս՝ ոչ այնչափ վնր երկրի՝ քան թէ երկնից։ Սորին վնր կամք եղեն քնի՝ զպատկ հաւատացելոց վերացուցանել ՚ի կարգ ընտրեալ խորհրդոց. և այս է՝ զոր վերագոյն ասացաք, թէ ՚ի բնաբանի ասս ըստ հետ

հետևորդի միայն նկատեն այժմու մեկ-
նիչք զպատկն քրիստոնէական լինել
խորհուրդ եկեղեցւոյ:

Եւ ահա առաքեալս զանց արարեալ
զբացատրութիւն այսպիսի մեծահրաշ խոր-
հրդոյ, ասէ՝ Թէ յիշատակեմ միայն
զբանն ոյ խօսեցեալ բերանով ադամայ,
և Թողում իմանալ զայն ըստ նշանակու-
Թենն՝ զոր ունի ի միաւորութիւնն քան ըզ
եկեղեցւոյ. ոմն զի ի միտ առնուցուք
ծրպիսի սէր և անախտ միաբանութիւնն
ընդդէմ ի մէջ քրիստոնեայ ամուսնոց,
արժանապէս գնալ արդեամբք ըստ մեծի
խորհրդոյն՝ զոր օրինակաւ երևեցոյ-
ցանեն:

Աւետն, բայց ես ասեմ ինէ, այսպէս զրի ի
լաւ օրինակս. բայց դոյ և այլ օրինակ
կին՝ յորում չիք ինէ. և այլ օրինակ ըն-
տիր ի լուսանցսն միայն յաւելու զայն.
որ տայ կասկածել գուցէ ի տարբե-
րութիւն զրոյց մտել իցէ կրկնութիւն շաղ-
կապին, ոմանց՝ ընդ զրելով, և ոմանց՝
ինէ. և յետոյ այլք զրիչք վերկուան և
եդեալ իցեն ի բնաբանին:

33. Այլև դուռ նորա ի դուռ դիզէ, չէ
խոչընդոտ չիւր կին այնպէս
սիրեցէ՝ ինքն չէր անյն. և կին ընդ
ինկեցէ յաղէտ խորհ:

Այլև յոմանց իմանի՝ բայց սակայն,
իբրև Թէ՝ այս է խորհուրդն ծանկեալ
ի բանին ադամայ. բայց սակայն Թո-
ղել զայն՝ ի միտ առիք զոր պարտ է
առնել ձեզ ամուսնացելոցդ ևն: Իսկ
այլք մակաբերական մտօք իմանան,
պոռնկակ ասելոյ ըստ որոյ, ուրեմն. և
զերկոսին միտս ընծայիր մեր բնազիրս.
զի այս բան՝ եղբայրացուի է անցելոցն:
Զի խոչընդոտ չիւր կին այնպէս սիրեց-
ցէ: Յօրինակս ինչ չիք վ. որ և ի յոյնս
զօրութիւն դնի. այլ օրինակ հին զրէ,
սիրեցէ խոչընդոտ չիւր կին: Իսկ բառն
այնպէս, կայ ի յոյնն և յայլս, և պա-
կասի միայն ի լատինն:

Արդ ասէ. ահաւասիկ եղի ձեր առա-
ջի զօրէնս ամուսնութեան ի սկզբանէ
անտի, և զխորհուրդն՝ որ ի քս ունի
զակնարկուածն յայտնեցի. վս որոյ և
դուք ըստ օրինադրութեանն այ, և որպէս
ի նախագիծ օրինակին քան տեսանէք,
պարտապան էք ի դուռ դիզել, այ ամենէ-
քին, ոչ զոք ի բաց առնել, եթէ մեծա-
մեծք, եթէ փոքունք, եթէ կնոջ բար-
ւոյ դիպեալ իցէք, և եթէ ոչ բարւոյ,
ոմն զի իւրաքանչիւր այր սիրեսցի զօրէ-
նասոր կին իւր, այնպէս՝ ընդ չէ՞ր անյն:
Առանձօր ընդ ոչ զնամանուի նշանա-
կէ, ոմն Թէ ասել, ոչ պակաս ք զինքն
սիրել, այլ այնպէս որպէս ոք զիւր ինքն
սիրէ. վս զի այս եղանակ սիրելոցն
հաստատակաբար պահանջի առ ամ ըն-
կերս: Այլ իմանի ըստ հաւատոյն,
այ այնպէ սիրել զկինն՝ իբր զի իւր անձն
և մարմին է նա, ամուսնական յօդիւն
անլուծանելեաւ՝ ի ինչ եղել ըստ կնոջն.
ոմն ասաց վերագոյն. (28. 29:)

Եթ ոչ ընդ ինչ: Ըստ իւրաքանչիւր
պատշաճից զնկուացանէ զպարտան. առ-
նըն իբրև զլոյղ զսիրելն հրամայէ, ըստ
որով իմանի խնամարկելն զկինն, զգու-
շանալ պատուոյ նր, զերծանել տկարու-
Թենն, և այլն ամ զոր պահանջել կարդ.
դաւորել սէր անձին: Իսկ կնոջ իբրև
մարմնոյ և խոնարհագունի՝ հրամանա-
որէ զերկիւղ, ոչ զծառայական՝ այլ զա-
պատականն, ի սիրոյ յառաջնկել և ի
մեծարանաց. զոր վերագոյն հնազանդ
լինել ասաց: (22. 24.) Պարտիք սիրոյ
ի զօրինակ պատշաճին կնոջ առ այր իւր.
բայց յայտնապէս ոչ զայդ պատուիրէ՝
այլ զերկնչելն, ծանուցանել Թէ ոչ
իբրև առ հաւասար պարտի ունել ըզ-
սէրն, այլ հանդերձ երկիւղիւ իբրև
առ վերագոյն. և զի ի խոնարհոյ սէր
առնն վայելելով, մի իշխել նմա կամ-
ել քան հնազանդել. որով անդորրու-
Թիւն տանն ոչ կա պահի. զի ըստ ասե-
լոյ ոսկեբերանին՝ ուր զուռ պատուհա-
Թի է, անդ խաղաղութիւն լինել անշր-
նար է:

Առ սիրել առնն եցոյց և զնեղանալն
ասելով, եթէ չէ՞ն անյն. իսկ առ ելլ
կնոջն չյաւելոյ ինչ: Եւ պատ-
ճառ այ ասկեբերան, վս զի ի կարդ
դաւորիլ սիրոյն՝ այլն ամ դիւրաւ յա-
ջողէ ըստ չափու իւրում: Զորժամ այրն
սիրելով իշխէ, նոյնպէս կինն սիրելով
երկնչի, և ոչ ծառայաբար. ոչ կինն ի
սիրոյն համարձակի, և ոչ այրն յերկիւ-
ղէն բռնանայ. և լինի գեղեցիկ զու-
դահաւորութիւն սիրոյ և երկիւղին երկո-
ցունցն. յորմէ ծնանի զաւակ՝ ցանկալի

խաղաղութեին։

Աստանօր դադարեցուցանեմ առաքելն
ղերբասան առ ամենայնացեալս, սակայ-
ւուք զնմ զկարևորսն ասանդելով նոցա։
Թէպէտ և մարմնական է վիճակն ամուս-
նութեան, բայց ի քրիստոնեայս Հոգևո-
րսպէս պահանջէ առնել զնմ։ Հրամայէ
խնդրել ի միմեանս՝ ոչ ղերկրաւորս հաս-
տութեի, կի զղեղեցկուի, կի զաղնուա-

կանութեի, այլ զՀոգևորականն և եթէ
առաւել Հոգեպէս միաւորիլ ընդ օրինա-
կին քրի՝ քան թէ մարմնապէս. անյու-
ծանելի կապ ամուսնացելոց փոխարկիլ
ի շղթայ ծանրակիր, թէ ոչ ծանրեցին
սիրով և սրբութիբ. և որք իբրև զնոր
Հուրդ եկեղեցւոյ ընտրեին զայն, պարտ
ուին ի մաւտելն և ի վարիլն ցուցանել
զսրբութիբ նէ։

Գ Լ Ո Ի Խ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ։

1 Որդիւ՛ Հնազանդի
ելբուք ծնողաց ձերոց ի տէր.
զի այն է արժան։ 2. Պատ-
ուեա զհայր քո և զմայր. որ
է առաջին պատուիրան յաւետեան։ 3. զի քեզ
բարի եղիցէ, և երկայնակեաց լինիցիս ի վր
երկրի։ 4. Հայր՛ մի զայրացուցանէք զորդիս
ձեր. այլ սնուցանիջիք զնոսա խրատու և
ուսմամբ տեառ։ 5. Ծառայ՛ հնազանդ լի-
բուք աներկնչ ձերոց մարմնաւորացդ, աշխ
և դողութեամբ և միամտութեբ սրտից ձե-
րոց՝ որպէս և քրի։ 6. Մի առ ակամբ ծա-
ռայբք քոնի առնել զկամս նոց։ 7. Այսու մտօք
ծառայել իբրև տեառ, և մի իբրև մարդկան։
8. Գիտացջիք թէ իւրաքանչիւրոք որ զինչ
առնէ զբարին, զնոյն ընդունի և ի տեառէ,
եթէ ծառայ՝ և եթէ ազատ։ 9. Եւ գուք
տեարք՝ զնոյն առնիջիք առ նոս։ Ներբևով
առնել զպատուհասն. գիտացջիք թէ և ձեր
և ձեր տէր յերկինս է. և ակնառուն ոչ
գոյ առաջի նէ։ 10 Ա յսուհետև զօրացա-
քուք աներամբ, և կարողութբ զօրաւէ նէ։
11. Եւ զգեցարուք զսպառազինութիւն ած.
զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սա-
տանայի։ 12. Ջի ոչ է մեզ պատերազմ ընդ
մարմնով և ընդ արեան, այլ ընդ իշխանութեիս
և ընդ պետութեիս, և ընդ աշխարհակալս խա-
ւարիս այսորիկ՝ ընդ այս չարութեբ որ ի
նեբքոյ երկնից։ 13. Վասն այսորիկ առէք
զսպառազինութիւնն ածոյ, զի կարող լինիջիք
ի դիմի հարկանել չարին յաւուրն չարու-

թեբ։ 14. Եւ իբրև զնմ ինչ կատարիցէք,
հաստատուն կացէք. զգեալ կալբք զբե-
դեալ զմէջս ձեր ճշմարտութբ, և զգեցեալ
զպատնան արդարութեբ, 15. և ագուցեալ
զոտս պատրաստութեբ աւետարանին խա-
ղաղութեբ։ 16. Եւ ի վեր ամենայնի առէք
զվահանն հաւատոց, որով կարող լինիջիք
զնմ նետս մեռեալս չարին շիջուցանել։ 17.
Եւ առէք զսաղաւարտն փրկութե, և զսու-
սեր Հոգւոյն՝ որ է բանն ածոյ։ 18. Աի ա-
ղօթիւբ և խնդրուածովք աղօթս առնել
յամենայն ժամանակի՝ Հոգւով. և ի նոյն
տքնիջիք նմ ժուժկալութեբ և խնդրուա-
ծովք, վասն ամ սրբոց, 19. և վասն իմ-
ն ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ,
համարձակութբ ցուցանել զաւետարանին։ 20. ոբ որոյ պատգամաւորիմ
կապանաւք. զի նովին համարձակեսցայց ոպ
և սպառ իցէ ինձ խօսել։ 21. Բայց զի գի-
տիցէք և գուք զնէնի զինք գործիցեմ,
զամ ինչ ցուցցէ ձեզ սիւքիկոս սիրելի եղ-
բայր և հաւատարիմ պաշտօնեայ ի տէր։
22. զոր առաքեցի առ ձեզ գնոին իբրև,
զի գիտասջիք գուք զնէնք, և մխիթարսցէ
զսիրտս ձեր։ 23. Խաղաղութբ ընդ եղբարս,
և սէր հաւատովք Հանդերձ, յայ ի Հօրէ
և ի տեառնէ յիսուսէ քրիստոսէ։ 24. Շնորհք ընդ ամե-
նեսին որք սիրեն զտէր մեր յս քրի անեղ
ծութբ։

Աա էպիստոլի գրեցաւ ի հռոմի ի յետ գո-
ղոթայ։

1. Որդէ՛ն հնազանդ լերուք ծնողաց ձերոց ՚ի Տէր. զի այն է արժան։

այելւյաբար ըն կարդի բնութեն ընթանալ ՚ի խրատս կանոն ծնողական պօղոս. վա՛ղ զի նախ է ամենանացելոցն վճռակ, և երկրորդ ՚ի նոցանէ որդիքն գան ըստ կարգի ծննդեան. յոր հաստատեալ են պարտիք նոյ առ ծնօղս. նախն իրի յետ խրատելոյ զայր և զկին՝ առ որդիսն դարձուցանել զբանն։

Որդէ՛ն հնազանդ լերուք։ Հնազանդութի՛ն ասէ զնմա որդիական պարտիսն, այ՛ ըզ-աեր, զմեծարանս, զմտադիւր լսողութե՛ն, և զինամակալութե՛ն ՚ի կարիս ծնողաց. զայսոսիկ և զայլսն ամ՛ որ ինչ անկն են որդւոց առ ծնօղս, միով անո՛ւամբ հնազանդութի՛ կոչէ. վա՛ղ զի զայն ամ՛ պարտին կատարել իբրև հպատակք և ՚ի հրամանէ։ Ծնօղաց ձերոց. ընդհանուր դնէ առանց խորհ առնելոյ ընդ հայր և ընդ մայր. վա՛ղ զի այր և կին բաղդատութե՛ առ միմեանս միայն ունին զանհաւասարութե՛ն, մին հրամայելով, և միւսն հնազանդելով. բայց նկատելք առ որդիս իբրև հայր և մայր, մի և հաւասարք են ՚ի հրամայել. և որդիք պարտապանք են՝ ոչ ըստ օգուն, նոյնպ մօր հնազանդ լինել, ՚ի յանդիմանութե՛ այնոցիկ՝ որք առ երկիւղ չէշխեն ելանել ընդ կամս հօր, իսկ զմայր անպատիւ առնել ոչ խղճեն։ Եւ դարձեալ, ծնօղք անուշամբ կոչէ զնա, յիշեցուցանել ըզբուն պատճառ իրաւանցն՝ զնոցունն, որով իբրև պատճառաք դոլոյ և անբնդեան՝ յիրաւի ծնօղք պահանջին, և որդիքք պարտին հաւուցանել զհնազանդութի՛ն։

՚Ի Տէր։ Ըստս յարեն ամանք առ ծնօղս. իբրև թէ հնազանդ լինել այնց ծնողաց՝ որք ՚ի տէր ծնանին հոգևորապէս, այ՛ հոգևոր առաջնորդաց և վարդապետաց։ Կամ, ծնողացն՝ որք ՚ի տէր են, այ՛ քրիստոնեից, տա՛ւատացեալք։ Սա կայն ոչ պատշաճի կարգի բանիցս. ուր ընդհանրական առանդն զնրատան՝ և ոչ մանաւանդ՝ ոմանց որդւոց առ այս կի՛ առ այն ծնօղս։ Վա՛ղ որոյ հաւատացեալք տէր, յարելի և առ հնազանդ լինել ընդ ծնօղսն. այ՛ ընծայել ծնողաց զհնազանդութիւն վա՛ղ ոմն, ըն հրամանին այ. զի այն է հաճոյ այ, և հաւիմատ օրինաց նո՛ն. ոչ առ երկիւղի հնազանդիլ ծառայաբար, և ոչ ակնկալութե՛ օգուտ կա՛մ ժառանգութե՛ իբրև վարձկան. այլ զի յինդ պաշտութե՛ իցէ հիմնացեալ հպատակութե՛ ձեր։ Կամ դարձեալ, ՚ի ո՛ր հնազանդիլ, յայտ ասէ որ ըն կամաց այ իցէ, և ոչ ՚ի հակառական կամ ՚ի խորտակ իրս. յորժամ հրամայեն զիրաւացն, զպիտանին, և զկարելին, և որ անկն է ծնողական իշխանութե՛։ Ըստ կաքանչիւր իմաստս ասանդ ոակնբնբան, և այլք։

Ըն այն է արժան։ Հին օրինակ հայ մեկնութեն զդէ. այն խոչ է արժան։ Ոչ են պէտք իբրկար բանից յորդորել զձեզ. և ոչ նոր ինչ կա՛մ մեծամեծս առաջի դընեմ. այլ զի ինքնին իրաւունքն ուսուցանեն հնազանդիլ ծնողաց. այն է արդար և արժանի գործ հրամայել ՚ի բնական օրինաց՝ զոր և անբանք կատարեն. յօրինաց ազգաց՝ զոր և բարբարոսք և վայրենամիտք և անհնազանդ դիտեն և պատուհաս. յիմ՛այնչ օրինաց՝ որ յետ այ զծնօղս հրամայէ ճանաչել, արարօղս բնութե՛ ձերոյ։ Ըզ ինչ այնպէս արդարացն՝ քան զիոխարէն հնազանդութե՛ հատուցանել այնոցիկ, յորոց զգոն ընկալայք և զանուն և բնդդաստիարակութե՛. այս երախտիք նո՛ անհոգաստելի են. որչափ և հպատակութե՛ բերիցէք առ նո՛, միշտ պակաս տայք քան զոր առիքն. եթէ բարեկիրք են ծնօղք ձեր, ահա կրկնակի պարտապան էք՝ վա՛ղ բնութե՛ն և վա՛ առաքինութե՛. իակ եթէ չարաբարոյք, բնութե՛ն ոչ կորուանան զիւր իրաւունս. և վա՛ այնր առաւել պարտիք լինել բարի որդիս՝ համարձակ, ակնածուս, սէր բունս. զի բարի դոլոյ պատճառք ծնողացն լինիցիք։

2. Պատուէ՛ զհայր քո և զմայր. որ է առաջին պատուիրան խոստման։

Յետ ասելոյ ընդհանրապէս՝ արժան և իրաւացի է հնազանդիլ ծնողաց յիշեցուցանէ զնծաւրհամն պարտան ՚ի առն

տան պատգամաց անտի : Պոռնկե
ցեալ ⁘ և վասն · լսանին , ասորին և
արաբացին կրկնեն զվերանուանն ⁘ ·
բայց ի յոյն չիք : Յանուանէ դնին
հայր և յայր , նշանակելով յաղագս մալ
ձնաւոր ծնողացն բանքն · և նախ կալ
զե զհայրն՝ իբրև զլուխ տանն · բայց
զպատիւն երկոգուն և մատուցանել
հրամայէ : Եւ որպէս յաղագս հնազան
դութեն ասացաք , նոյն իմանալի է և
ի պատուելն · իբր զի ի ներքս փակէ
զնմ զներքինն և զարտաքին պաշտա
մունս՝ զոր կարեն մատուցանել որդիք
ծնողացն · ցի է՝ զնիծարանս իբրև վերբ
նագունից , զկատարումն հրամանաց՝
իբրև վերակացուաց , զնմանութիւնն
իբրև զարմանոյց , զհամբերութիւն տը
կարութեն նշ ի ցաւս կի ի բարս՝ իբրև
այնոցիկ որք բազում վիշտս կրեալ են
վն որգւոյն , և համբերեալ խակութեն
նոցա · և մեզ բանիւ , զնմ նպաստա՝
նաև զհոգևորս առնել նշ պատուասեր
կամօք , և ոչ ակամայ , կի իբրև երախ
տաւորելով :

Որ է աՒաղնի պոռնկիցն յաւելեալ : Մի
օրինակ գրէ , յօրինեն · այլ ոչ է հարա
զատ · և այլ օրինակ ունի · որ է աՒաղնի
պոռնկիցն , և յաւելեալն չի տէզ իբրե
էէյի · բայց և այս չէ հարազատ :

ԱՒաղնի ասէ պատուիրան՝ ոչ դասիւ ,
այլ յաւելեալ , ցի ըն խոստմանն ձոյ · այս
է՝ առաջինն ի տասնաբանեայ հրա
մանս , որում յայտնի և առանձին բա
րիս խոստանայ ձե , ցի զերկայնակե
ցութեն : Այլ պատուիրանք գրեթէ
ամենեքին հրաժարականք են , որոց
պատճառիք առընթեր դնին · իսկ այս
յանձնառական գոլով , զխոստումն բա
րեաց ընդոծդ իւր ունի : Որում պատ
ճառս ասյ ոսկեբերան , թէ վն զի հը
րաժարականքն հրամայեն միայն զնո
տումն ի չարէն , վարձք ոչ եդան առ
ընթեր · իսկ այս պատուիրան զի հր
ամայէ զնատուրսն բարւոյն , խոստ
մամբ վարձուցն պատկեցաւ : Միւս
և պատճառ ցի ազուիծացուցն · զի մի
ոք զպատուասխրուն ծնողաց իբրև բը
նական պարտիս՝ անվարձ մեալ կարծէ
ցե : Որմանք աՒաղնի ասել համարեցան
ցի տեղւոյն · զի ասեն՝ յերկրորդ տախ
տակին առաջին զձգտրեալ քան զայլ
պատուիրանս՝ որք հայկն առ ընկերն :
Սակայն այս թէպէտ և ի բազմաց ա
սացեալ չունի հաւաստի ցոյցս առա
ջելոյ :

Ձերոնիմոս տարակուսանս արկանէ՝
առաջին իմանալ ցի խոստմանն · վն զի
ասէ՝ նախ քան զայս գոյ խոստումն
առ գլխաւոր պատուիրանն ձե պաշ
տուիեն · զի յետ ասելոյն՝ մի երկիրպա
գանել կուռց , ես եմ տէր ձե քո ևն , յա
ւելու · * Աանեմ ողորմութիւն ի հազար
ազգս ‖ ևն : (Ելից· ե· ։ ց· 6·) Վն որոյ
ինքն ներհակիմս համարի աՒաղնի պատ
ուիրան կոչել՝ ոչ միայնակ զպատուել
ծնողացն , այլ համօրէն զամենքեանս
հրամանն · իբր զի յելանել իճլացուց
յեդիպտոսէ՝ նախ զառաջինն ասանձ
դեցան · իսկ այլ օրինք խոտականք յէ
ոոյ յաւելան : Սակայն այսոքիւք ոչ
տկարանայ Հաստատակաց մեկնութեն ·
քանզի բանն յէշտակելոյ ի ներքին
մասէ՝ առնեմ ողորմութիւն ևն , ոչ է ա
ռանձին խոստումն շնորհելոյ պաշտա
ղին զնձ , այլ ընդհանուր ամենեցուն՝
որք պահիցեն զորինան հրամայելս · ոնզ
ընդհակառակն՝ ընդհանուր սպառնալիս
ոոյ օրինազանցիցն : Իսկ առ պատ
ուիել զնօրհս յաւոյկ խոստումն առ
նէ ձե :

3· Օ է ⁘էզ բարի եղիցի , և երկայնակեաց
լինիցիս ի վն երկրի : (Սի օրին·
երկայնակեաց լիցիս :)

Ըստ Ճառին խոստանայ ձե իճլացուցն՝
եթէ բարեխրատաք լինիցին առ ծնօղս ,
զպատեաց վայելուչս յաշխարհի , և վերջ
կայուածի կենաց · կամեցեալ ձոյ պա
հել յայսմ ղՀամեմատութիւն ինչ փոխա
րինացն · իբր զի որդիք պատուամբ
ոոյցք և ծնողասէրք յերկարացին երջ
կեանն՝ զոր ի ծնողաց անտի ընկալ
լան՝ իբրև արժանիք կերոյ և վայելելոյ
ի բարօրութիւն : Աոդ՝ զնոյն խոստումն
որ առ հինն իճլ , յիշեցուցանէ առաջ
քեալս · իբր ոչ եթէ երկրաւոր հա
տուցմունք եւեթ կան մնան բարեխրատ
որդւոց · այլ զի ծանուցանիցէ՝ թէ ոչ
իճլացուց միայն և ոչ յերկրին աւետեաց
սոսկ Հշմարտել են այն խոստումնքն · այլ
Հաստատակաց ամենեցուն է , և վն ամէն
կրի · սորին վն անորոշաբար եղ , զանց
արաք

արարեալ զյաւելուածոցն՝ որ ի բա-
նին մովսեսի ։ (Ելից. ի. 12.) * Ի վէ-
րինէն բարուեցան՝ զոր ոչ ետ ասել
քեզ ։ ‖ զի մի հրէայք և հրեաքոյր կար-
ծիցեն՝ զայն խոստումն սահմանել կամ
ի վէր երկրին հրեաստանի , և կի ի վէր
այլոյ երկրի՝ զոր մեախս ունի ժառան-
դեցուցանել նոյ ։

Երկայնութիւն կենաց՝ որ ինքնին ոչ է
յիշխանութիւն մարդոյ , ըստ իւրաց ինչ հա-
մարի լինել ի ձեռս որդւոց՝ ի խոստ-
մանէն ասի , եթէ երկիւղածք լինիցին առ
ծնօղս իւրեանց ։ Եւ թէպէտ այն խոս-
տումն ոչ է բացարձակ՝ անվրէպ կա-
տարելի առ ամենեսին , սակայն ըստ ա-
վուրական տեսութեանն ասի ՀՀմարտել է
առ բազումս արդեամբք ։ Իսկ եթէ
ոմանց պատուիրանապահ որդւոց դէպ
լեցի չկայանել՝ ի յօդուտ կի յերկայն
կեանս , և ընկառանկն՝ անխրատից
ոմանց բարեկեցիկս լինել և երկայնա-
բեայս , այնպիսեաց հատուցումն կա-
տարի փոխանակութեամբ այլոյ մեծագոյն
բարւոյ , կի պատուհասի՝ ստս կի՛ ի
հանդերձեալսն ։ Եւ ոչ է հարկ սակս
այսպիսեաց սակաւուց՝ ի խորհրդական
միտս ձգել վնասուցին ասի , ոյ՝ առնել
հերձուիմս , իմանալով զհոգևորական
բարիս և զերկնային կենաց ժառան-
գութիւն . այս իմաստք լռելեայն փակին
ի խոստմանս , մանաւանդ յորժամ առ-
քիաոստնեայս լինին բանքն , բայց ոչ
են ընդ գրոյն ։ Եւ ոյ ազդ առնէ ոսկէ-
բերան , ոչ ի բարձրագոյն պատճառաց
կազմի առաքեալ զյորդորմանն , ոյ յօ-
րինակէն քէի , կի ի փառաց երկնից ։
Վա՛ զի որդիք տՀասք ընդ Հասակի կի ըստ
դիտութիւն՝ ոչ շարժին այնպիսեսք , այլ
առաւել մարմնականսքն զդծնականն ի
պատուհասականսն , և զգուշանան յան-
պատուհաս ։ Վա՛ որոյ առաքեալս եր-
կուս միայն փաստս հատանեցուցիչս
յիշել շատ համարեցաւ ։ ոյ զարդարու-
թիւն իրացն՝ զի այն է արժան , և զըս-
բեացն փոխարինս՝ զոր այժմէն իսկ
պարգևէ ընծ որդւոց երկիւղածաց ։
որով կազմիակի դեկուցանել զչար պա-
տուհասն՝ որք անխրատ որդւոց ի վէր
Հասանեն սովորաբար ։

4. * Տէր՝ ի զայրացոցանէ զորդիս իւր ։
այլ անդրանկիէ զնոսա խրատու և
ասեմ՝ ըն ։

Ի խրատ ծնողաց դարձուցանել զբանն,
զի մի որդիքն կարծիցեն՝ թէ զնմա ծանր
բան թէ պարտեաց ինքեանք ունին տա-
նել ։ և դրձէ, զի բազում անգամ պատ-
ճառ անկարգութեանէ որդւոց՝ անհրա-
հանգուիլութիւն ծնողացն է , կամ անչափ
խստանալով , և կի տարադէպ զիջանե-
լով ։ Յանուանէ առ Հոբ խօսի , ըն նո-
քօք իմանալով և զմարս ։ և զի բարիոք
դաստիարակութեի որդւոց առաւելա-
պէս ի Տարց անկասելի է , և նոյ ան-
տուղութիւ յոլովակի անկարգանան որ-
դիք ։ և ընՀակառակն՝ եթէ ի մարդ ան-
տի պատահեացի լինել Վատակար ինչ
բերումն առ որդիս , բարեխրատ արիա-
նութի Տարցն դիւրաւ խափանել կարէ
զնոսան ։

Արդ ասէ , ո՛ Տարք , ի զայրացոցանէք
զորդիս ձեր ։ ոչ ասէ՝ սիրեցէք , խնամ
տարայք որդւոց ։ վա՛ զի քնութիւն ինք
նին յորդորէ յայդ ։ այլ զգուշացուցա
նէ ի տարադէպ խստութի , որով յա
ճախ սխալին Տարք , ոյ մարք ընՀակա
ռակն մեղկաբերս ներողութիւ յանցա
նեն ։ Մի՛ ի սխալել որդւոց ձերոց՝ վա
րիցիք անչափ խստութիւ , ծանր և ան
պատշաճ Տրամանօք , կսկեցուցիչ բա
նիւք և Տարուածովք ։ որովք ի ձայրա
յումն շարժէք զնա , և ոչ ի զգաստու
թի ։ մի լինիք առ նա անողորմ և վայ
րենաբարոյ , անպատճառ նախատելով ,
կի դժնեայ դէմս ցուցանելով , կի այլ
և օրինակաւ՝ որ առ ծառայս լինի , և
ոչ առ որդիս ։ ապա թէ ոչ՝ դառնա
նան որդիքն , և արուիւ օտարացեալք՝
ոչ և ևս իբրև ծնողաց ակնածեն պատ
կառանօք , այլ իբրև ի բռնաւորաց
ահաբեկ լինին ։ յորմէ ծնանին բազում
չարիք և խռովութիւնք , և անուղղայ
գնացք որդւոց ։ Պատահէ Տարց ոմանց,
զի ի յանդիմանել զորդիս սխալեալս՝
թափին զպատուին իւրեանց ընդ պատր
ուական Տայրական իշխանութե ։ աղա
ղակու և անպատշաճ թշնամանօք և
անողորմ Տարուածովք կարծեն ուղ
ղութի մատուցանել ։ և ոչ խորհին՝ թէ
չարն զոր ինքեանք առնեն , կարի մե՛ծ
է քան

է քան զսխալանսն որդւոց՝ որ բազում անգամ յառաջ գայ ի տհասութենէ սմանցն, [Թողումասել՝ երբեմն ի նոցին ծնողացն չար օրինակէ, և կամ յանհոգութենէ ծնանի։ Բայց թէև ի սոսահալ կուքէ գործեցին որդիք անհնազանդք և խնդաբարոյք, ոչ եթէ բարկութիւն և անժոյժ յարձակումն ծնողաց ուղղել զնա կարիցէ · այլ առաւել և զրդռէ ի խորխորատ կորստեան։

Այլ ասացանէք ինձ։ Ի մատաղ տիոց անտի ջանացարուք կրթել զորդիս ձեր՝ ոչ միայն ըստ մարմնոյ, և աշխարհական պիտանի վարժմամբք, այլ մանաւանդ իրաց և հոգւոյ։ Եւ խրատ ի նոսա կիցէ զիրս առաւել նշանակէ զսատ կիճ զպատուս. Հաս առ յանցաւորս՝ ոչ զի ուղղեցին. (տե՛ս երբայ. ԺԲ. 6. 7.) իսկ ասացին սատ խնդանն ոմանք զյանդիմանութենէ բանից, և այլք ըստ ոսկէբերանին՝ ըզհրաշանգս գրոց։ Ոչ եթէ արգելում ասէ՝ դպրոցական իշխանութենէ վարել առ որդիս ձեր։ Նա կամիմ զի ի յանցանսն նոյ, կիմ ի ներանալն առ որդիսկան պարտիս իւրեանց՝ ի կիր առնուցուք զսատան, և ըստ պիտելոյ նաև ըզդաւազան։ բայց այնու չափով՝ զի ծանչեցին նոքա եթէ անուշանել կամիք, և ոչ թէ վերաւորել։ Եւ սատան ձեր ունիցի իւր ընկեր զուսումն բանից։ ի զգուշացուցանելն զնա յանպատշաճից՝ պարտիք ուսուցանել և զպատշաճան։ անձամբ կիմ ի ձեռն այլոց վարժել զնա ի հրամանս ոյ, ի քրիստոնէական ծանօթութիւն, զի ի գրոց անտի նախ զայն ուսանիցին՝ թէ պատուէ զկայր քո և զմայր։ Որդիք ձեր բանաւորքն, բայց ի խակուէ հասակին ոչ գնան բանիւ · վա՛ որոյ դուք նախ բանիւ վարժեցէք զնա։ և ի չանսալն՝ ապա դանիւ խրատեցէք սերով և իմաստութիւ։ որպէս զի պատկառեսցին առանց զայրանալոյ կիմ յանդգնելոյ։ Եւ յայսմ հոգեծնոյդ դաստիարակութիւն առաւել ճանաչեմ զվարպետութիւն բնութեան, ասէ ոսկէբերան։ (Ճառ ի վե՛ր Գործոց։)

Այսու բարեկարդէ առաքեալն ըզխոստութիւն, միանգամայն և զվճռութիւնն ծնողաց · զի յերկոսին և պատահէ անցանել ըստ չափն։ և ծանուցանէ նոցա, թէ ասին եթէ խրատ, և եթէ ուսումն ըստ կամաց են լինելոց է, ըստ օրինացն ասէ։ և զի որդիքն զարգանայցեն ի վարս ամենաճաշոյս և ի գիտութիւն ամպաշտութ, ի կշտամբութիւն այնց ծնողաց՝ որք առաւել հոգան՝ յարհնաստ և յուսմունս երկրաւորս տալ զորդիս իւրեանց։ Բարեկիրթ դաստիարակութ որդւոց՝ կարծի յոգուստ նոցա լինել · սակայն ի շահ ծնողաց դառնան արդիւնքն · և այնմ փոյթ առնել արժան է ի մատաղ հասակին · առ որ բերէ հայ մեկնութիւնն զառակաւոր բանն ·

* Ուսումն մանկութենէ քանդէ ի բարեխակ ուսումն ծերուէ զիր է ի պաղի։ ‖

5· Ո՜վ այր՝ հնազանդ լերուր տերանց քոց մարմնաւորաց, ահ և դողութեամբ սրտից քոց և ոչ ակնապիշութեամբ իբրև զմարդահաճս, այլ իբրև զծառայս Քրիստոսի, կատարեալ զկամս Աստուծոյ յերկինս, ամենայնիւ տերանց ոչ կիմ որպիսիք և իցեն, եթէ հաւատացեալ, և եթէ անհաւատ, եթէ բարեխ-

Աչեռաբանին աշակերտք ոչ միայն չարգելուն զպէտս մարմնական ծառայութենէ, այլև հրամանաւք օրինադրեն իրրև պիտանացու մարդկային ընկերութենէ · վկայելով առ ամենեսին՝ թէ քրիստոնէական ազատութենին քաջիկ միաբանի ընդ երկրաւոր ծառայութենէ · և քո ոչ կամի իւրովք օրինաւքն խափան առնել կիմ փոփոխումն քաղաքական կարգաց · Եւ զի ոչ ամաւնացելոց ի որդւոցն բազկարգութիւն, նոյնպէս և ծառայիցն բազում լինչ նպատոս մատուցանէ ի շնութենէ տանն, նմին իրի յետնոյ խրատ և զծառայսն՝ իբրև յետինս վերջ կաւ քան զնոմ եղելոյն ի տան։

Ծառայ՝ հնազանդ լերուր։ Մի համարիցի զնէ ասէ՝ բնութ և հաւատացն մասամբ այնպէս հաւասարս լինել այլ մարդկան՝ մանաւանդ հաւատացելոց, մինչ զի կարծիցէք զնի միայն տէր ձառնալ ձեզ զյն բա։ Որոշումն կայ մարդնական աստիճանաց՝ տուել ի բնական բերմանէ, և յոյ տեսչութենէն նախախնամէ, որով ոմանք լինին ծառայք, և ոմանք տեարք։ մի որոյ զուք՝ որք ծառայական կարգի էք վերակացք, մի ըմբռնասանայք, մի անարգութիւն ձեզ համարիցիք զձեր ծառայութենէ · այլ ըստ ացարանք հնազանդիք, կատարել ըզկամս տէրանց յերկ, ամենեցուն տերանց ոյք կիմ որպիսիք և իցեն, եթէ հաւատացեալ, և եթէ անհաւատ, եթէ բա-

բնբարոյք, և եթէ անբարիք, (ըստ ա. պետր. ք. 18։) Վա՛յ զի իրաւունք տերու- թեան՝ յանձնելոյն մի էն։

Մարտիրոս։ Տեարք են նոքա ժամանա- կաւորք, ըստ մարդոյ ևեթ և՝ ի մարմնա- կան սպասաւորութիւնս տիրեն ձեզ։ Ա- յսու չափ դնէ երկուց կողմանց ևս, տերանց՝ ի հրամայել զոր ինչ անկ է իւ- րեանց իշխանութեան։ և ծառայից՝ զի ՚ի մարմնականն ճանապհացն վնաց առա- ւելութեան, և մի՛ վա՛ հաւասար բնաւին դժկամակեսցին, կամ առ հասոյս նոցա անսիդելի առնիցեն զՏոգևոր գանձս։ զի ոչ ՚ի հոգիս ծառայիցն՝ և ՚ի խիղճ մտաց նոցն անցանէ տերութեան մարմնա- կան։ Եւ դիտել, ըստ ոսկէբերանին՝ Տէր Տեառ կոչելով՝ միթէպարէ զվարկանել զերիս ծառայիցն, զի մի՛ վշտանայցեն անարգս դնելոյ անսանելով՝ ՚ի տան քան զկին և զորդիս։ Վա՛յ զի անուամբ ևեթ է ծառայութիւն։ և տերութիւն նոյ մարմնական գոյով, ժամանակաւոր է և կարճատև։ իսկ Տոգւոյն բարեսոհմա- թիչ ոչ միայն զուգապատիւք են, այլ գերազանցել ևս կարող են՝ եթէ կա- միցին։

Բայց զի մի՛ մարմնական լսելով, շատ համարիցին զմարմնով միայն հնազան- դիլն, յայտ առնէ զպարտութիւնսդ եղբանակն, ասէ՛ և տեղ-ին։ Երկու բա- րիս ասվոր է առաքեալս ծանուցա- նել վնասու և զիդէթ զդուշաւոր։ (ա. կորն. ք. 3։ փիլիպ. ք. 12.) ուստի ասս ևս խնդան ոմանք, հնազանդիլ տե- րանց ամ փութով և ակնդիրութիւ, երբ կիւղիւ չլինելոյ անվնաս, մի դանդա- ղանօք և ակամայ։ Այլք խնդան զերբ կիւղ յարգական և զմեծարանս։ որպես վերագոյն պահանջէր ՚ի կանանց։ Բայց ոսկէբերան, Տերտղիանոս, և այլք՝ ասելի ինչ խնդան ՚ի ծառայսն։ ըստ մեծագոյն երկիւղիւ կալ նոյ ՚ի սպաս տերանց։ ոչ միայն ներքոյ ունել զսոյ և զակնածու- թիւ, այլև արտաքոյ պատկանաւօք վա- րել, և զհրամանսն կատարել երկիւղիւ պատուհասից։ զի այս է յատուկ ծա- ռայական կարգի։ Այսու աղդ առնէ՝ մի՛ վատահանալ և համարձակիլ ՚ի հա- սասար եղբայրութեն, զոր ՚ի քո ունին ըստ հաւատոյ՝ տեարս։ այլ խոնարհա- նել երկիւղական հպատակութեըն զնո-

նարհութեն իւրեանց։ զի ոչ է այս ցա- ծուքի, այլ առաջին ազնուականուե՝ ճանաչել զանձն որ ինչ է։

Սակայն և ոչ երկիւղն բաւական է։ զի պատահէ բազմից ծառայից երկիւղածս հնազանդիլ և օտարաբար դաւաճանել զայն յաւելու, և խոնարհութիւ սրտիւ չէ ըստ։ Անհարդախ սրտիւ կալ ՚ի ծառայ- ութեն, հաւատարմութե ունել ՚ի բանս, և ՚ի գործս, և յինչս տերանցն։ Ծա- ռայք աշխարհի սովորութեամբ ունին զատելն առ տեարս, զկեղծաւորիլն, զդողանալն կամ վատնել անխնամաբար զդոյս տեն։ զայս ամ արգելու։ հաւա- տացել ծառայից՝ պատուիրելով զնմա- մուքեն։ Ոչ է չէ։ Ա՛նպէսի ունել երկիւղ և բարեսրտութե առ մարմնա- ւոր տեարս, ոչ պարտ է ունել առ քա՛ ՚ի- րն բոլորեցուն։ ոչ քա՛ ծառայեմք՝ որ գնամ տեսանել և դատե։ կամ, ոչ թէ ՚ի տեարս ձեր զքա՛ ինքն տեսանեք, և նմա սպաս տանիք։ կամ, այնպէս հնազանդիլ՝ ոչ քա՛ հրամայէ և հաճի, առանց վշտացուցանելոյ զքա՛ առ ՚ի հաճել զտեարս աշխարհի։ Ա՛յսու օրէն նախատ ոչ միայն անվնաս լինի ծառայ- ութեն մարմնական, և յորդորանիս, այլև գերազոյն քան զերկրաւոր վարձս՝ երկնային հատուցմունք պահին ձեզ։ մանաւանդ թէ ըստ մարմնոյ ծառայեին փոխարկի ՚ի Տէրմարիս ազատութիւն և աղնուականութե։ զի ընտրեսի կամաց բառնայ զՏարկ։ և այսպիսի ծառայք աղնուաբարոյք իշխեն ՚ի վե՛ր սրտից տե- րանց իւրեանց։

6. Ա՛ռ ասէ ծառայել էբրէ՛ մարդս հաճոյ, այլ էբրէ՛ ծառայ Քրիստոսի։ և առնել կամս։

Ջհամառօտ ասացեալն ըստ ձարձակագոյն դնէ։ Ա՛ռ ասէ ծառայել։ Ծառայ- ութիւդ ձեր մի՛ լինիցի առևրեսս միայն, յանդիման տերանցն զվատակս ցու- ցանելով կամ զհաւատարմութե, իսկ հե- ռի գոլով և անտես ՚ի նոցանէ, այլագ- գաբար վարիլ։ մի՛ յայն սակս միայն ծառայել, զի շնորհս գտանիցեք. կամ ՚ի ցասմանէ նոյ անպատուհաս մնայցեք- մի՛ վա՛ հաճոյ լինելոյ նոյ անդարժանս գործիցեք։ Էբրէ՛ մարդահաճոյ, որոց վոյթ է միայն հաճել զմարդիկ, և ըզ-

հաճոյս մարդկան խնդրել՝ ի դէպս և յանդէպս. որք ի գործս իւրանց առաւելել կամին ձևանալ բարեկիրք՝ քան լինել այնպիսիք. ոչ յարդարուեցէք շար. ժին կամ ի սիրոյ, այլ՝ ի հաճոյից այլոց. ոչ գէհզի ծառայ եղիսէիք այլ ինչ ձևաւ նայր յաչս ան իւրոյ, և այլ ինչ խոր. հեր և առնէր ի ծածուկ. լեհպիտ և քաջ գիտէր՝ լեհ որ իւր մարդարէ և է: (ի. թագ. ե. 20. 25. 26:) Սղոնիա ծառայք սաւուղայ՝ ի հաճոյս նր յանձն առնուին գործել զանիրաւան:

Այլ էբե ծառայ էր: Յիշելով լեհ գուք ծառայք էք քրիստոսի՝ գերագոյն ան, այնպէս պարտիք ծառայել մարդկան, ոչ վայել է ծառայից քրիստոսի, ի՛ ձշմարտութեէ և հաւատարմաբար իբրև՝ ի պարտեաց՝ և ոչ յերկիւղ: Անխափ արդարութեէ, որպիսի կամի քրիստոս, առաւել զհաճոյս քրիստոսով և ոչ զմարդոյ. եթէ երկիւղ մարմնաւոր տեառն նահանջէ զձեզ յանպատշաճից, որչափ և ս երկիւղ քրիստոսի անխոթ դատաւորին: Առնել չմա ոյ: Ձոյն օրինակի յաւելու, հռոմ. և միաբանի լատինն և առաքեալն. բայց չունի ասորին. և ի յոյն օրինակս ինչ յարի՝ ի յայտարդն, փոխան որոյ մերս դնէ, որոյ մօտ: Ի մարմնական ծառայութէն ձերում ոչ եթէ զկամս մարդկան պարտիք առնել, այլ զկամս ոյ՝ որ հրամայէ ի պատշաճականն հնազանդիլ տեառնց յօժարաբար, իսկ յանպատշաճէն մի տալ տեղի:

7. Որոյ մօտ ծառայել էբե ն, և ոչ էբե մարդկան:

Պատահէ երբէք՝ զի ծառայ ոք լինի հաւատարիմ առ որ, երկիւղած և կատարեալ, բայց դժկամակութէ վարի ի ծառայութէնն, մանաւանդ եթէ որ խստաբարոյ ոք իցէ: Առ այնպիսին ասէ, որոյ մօտ ծառայել, մի՛ ակամայ, բռնի և որոնջանօք կատարել զծառայութէնն, այլ յօժարաբար, սիրով և ընտանի աչալրջութէ, ոչ թէ բանիւք իցէ և ոչ ծառայ՝ ի ներքոյ ծառայական նշանի մարթէ ի սիրտ ղրարել կամն ունել. և երանելի է որ ոք՝ որ զբարեկամ ունիցի փոխան ծառայի: Դժուարին կարծէ զայսքան իմաստասիրոսն զտանել ի ծառայ ոք. բայց դիւրաւ յայտնէսցէ, եթէ համարիցի ծառայել էբէ ն, ոչ թէ քրի կի ոյ ծառայուն առնէ՝ և ոչ մարդկան. եթէ ոչ՝ ի լաւութէ ոնն, կի յակնկալուէ վարձուցն շարժիցի՝ ի պաշտօնն, այլ՝ ի պատուոյն ոյ, և՝ ի հաճոյից քրիստոսի, որ գնա տարիմ և զսիրուն ծառայս կամի ինքնին փառաւորել: Ա՛ն ոորն իւր ինքեան համարի զծառայուէն, զոր ծառայք կամաւ հարկանեն տեառնց խստից և անհաւատից. և համբերեն բռնաւէ նց, զի մի խափան ինչ լինիցի ոծ պաշտօուէն և հաւատոց: Այսքան է ասա դերապանցուէն աւետարանական օրէնից, զի գհարկաւոր ծառայութէնն հաստէ՝ ի կամաւոր աղատութէն, և՝ ի մարդկայնոյն՝ ոծ պոնն առնէ. և ուր առակն հին ասէր, այնչափ թշնամին ունի ոք, որչափ ծառայս, աւետարանն՝ ի հակառակն փոխել կամի, այնչափ բարեկամս՝ որչափ ծառայս:

Ի բնաբանին զոյ տարբերութէն ինչ. զի յոմանց սովորական օրինակն պարզաբար դնէ, ծառայել ն և ոչ խոթիմ. և սոյնպէ ընդհանուր տրաբացին: Իսկ յոմանց ընդարձակ օրինակն, և ոսկերբան, և այլ գրչագիրք յոյնք ունին էբէ. և նոյնպէս ընդհանուր լատինն և ասորին:

8. Գնաջուէ՛ ի՛ ի՛ ի

գործիցէ։ Ե էրէ ապա ծնունդսմբն ևս աստիճանաւ, և տիրական գործովք։ Աստել կամի, թէ ծառայի և ազատի որոշումն՝ ըստ աշխարհի միայն է, առ ժամանակեան, և յարտաքին իրս։ առ ոմն և առ հաճոյս նոր չիք խոիր՝ թէ ծառայ իցէ ոք՝ կամ ազատ։ այլ գործք իւրաքանչիւրոցն իմդրին՝ թէ արժան նիք իցեն։ Եթէ ծառայ վճարէ զիմ զպարտս իւր ըստ նմ կամացն, թէ և անվարձ և անշնորհ միայցէ ի մարմնաւոր տեառնէն, գոյ նորա անվրէպ հատուցումն ի գերագոյն տէր՝ ի քրիստոս։ որ ոչ այժմ, և ոչ ի դատաստանին ակնածէ ազատի՝ քան ծառայի։ արժանի ըստ վաստակոցն պարակ գծառայն՝ որ գոլ ծառայ ազատ է։

Ը. Եւ դուք տէրք՝ ընդ առնէիք առ նոսա։ Ներելով առնել պատուհասս. գիտասջիք իմ և նոցա և ձեր երկոցունց էիմն։ և անխոտորնի ոչ գոյ առաջի նոր։

Եւ մարմնաւոր տեարս շրջէ զդէմս խրատուն։ վն զի գոյ և նոյ գերծանիկ իշխանութիւք իւրեանց, և տալ պատճառս սատակութեան ծառայից։ և զի մի՝ ի տրտունջ մտաբերիցին ծառայք՝ թէ զմի տատս խրատուն ի մեզ արկանն, անխրատ ծողեալ զտեարս։

Ե՞ք ասէ՝ որք ի մարդկանէ գերծէք, տիրական պատճանի վճռակեալք, և ունիք եւ ձեռամբ զներքոյանկեալս, զնոյն առնիջէք առ նա։ առ ծառայս ձեր զնոյնս գործեցէք։ զոր ինչ ի նոցանէ պահանջէք, զնոյն հատուցէք նոցա։ Նոյն ասէ՝ ոչ եւ տեառնի գործոյն, այլ թէ գեղանկի և պարմանէ նի իւրաքանչիւր։ ցի որպէ դուք կամիք՝ զի ծառայք ձեր պահիցեն զձեռատարս մուծէք և զմոռացիւր ապաստարուէք երկիւղիւ, երբեք չկոյ և վն այ հրամայեալ, նոյնպէս դուք իշխեցէք նոյ առ կնոջ կամօք և բարեսիրութիք, զգարի նոյ կամելով, զգուշանալով չտալ պատճառս անկարգութեան նոյ, ոչ զրկել զնա ի վարձան, ոչ տարապարտ վշտացուցանել։ ի կիր առնուլ զնա իբրև ծառայս քոյ, և զծուլութիք խնամել։ Այս ոտ օրինակս եւ ոսկէբերանին՝ զրէ թէ տեարքն ևս ծառայիցն իւրեանց ծառայիցն, զնոյն զգուշութիւնն պահելով առ մխիթար, թէպէտ և այլ և այլ են գործքն։

Բայց զի սովորաբար տեարք պատճառն են, թէ ստամբակ է ազգն ծառայական, յաւելու առաքեալն։ Ներելով առնել ղգործսն։ Գիտեմ զի յոլովակի պակասին ծառայք ի պաշտաման իւրեանց՝ անհոգութեամբ, կամ չարութիք, կամ անեղկիւղութիք, որով արժանի պատժոց լինին, և ի քաղցրութիք տեառնցն առաւել ժանտանան։ Սակայն դուք ըստ կարի և իմաստութեամբ ծուլացուցէք զպատուհաս նոցա։ մի ի փոքր յանցմունս նոյ մեծամեծս զպրանայցէք։ մի առ ամ պատճառս յանախիցէք սպառնալոյս, թերամանս, և կարճանս անուղղրմս։ նաև ի պատժելն զնոյ յիրաւի ըստ յանցանացն ցուցցիք զնմանս քաղցրութիք և ներողութ։ չափ դիցիք բարկանալ ձերում։ որպ զի ծանիցի՝ թէ զանցանան ատեք, և ոչ զծառայն։ Իսկ եթէ ծանրանան ըստ այս ներողութիք խստապահանջ տեարքն, ահ արկցէ նե նոյ։ գիտասջիք իմ և նոցա և ձեր երկոցունց էիմն։ Յուշաց սովորական օրինակն ընթեռնու։ * զի և ձեր նոցա տէրն է յերկինս։ ¶ և համաձայնի արտաքսին։ իմաստնն են։ նա՝ որ երկնաւոր տէր է ծառայիցն, նոյն և ձեզ տէր է։ ոչ այլում նոքա, և այլում դուք ներքոյ անկնալ կք, ոպ զի ի խստանալ ձեր քան զարժանն՝ կարծիցէք անայցելու մնալ նոյ։ կի թէ տէրն ձեր վերակացու և ջատագով լինիցի ձեզ ընդէմ նոն նոցա։ Սակայն աղեքսանդրեան օրինակն, և լատինն ըստ մերում գնաբանի ընթեռնուն։ և նովին մտօք դնն ոսկերերան, ցի, և ձեր և նոյ տէր գոյ։ Եւ այսր ընթերցուածոյ իմաստքն են։ որպէս ծառայիցն գերագոյն տէր գոյ, նոյնպէս և ձեզ։ դուք ոչ եք ինքնատարք։ յոր միւս ընթերցուածն յաւելու զայս միտս, թէ ոչ միայն դուք և ստ տէր ունիք, այլ զնոյն զոր և ծառայք ձեր ունին։ ի բան գերագոյնն ընթերցուածքն միաբան նին երկոքին ընթերցուածք։ զի ձնշել կամի զգուռոշտն մարմնաւոր տերանց, որք անեղկիւղ գոլով ի ծառայից իւրեանց՝ ոչ զգուշանան ի ծառայեցուցանելն և ի պատժել զնոյ։ վասն որոյ ասէ,

ասե՛ , Թէ յո՛չ լեցի՛ ձեզ՝ զի և դուք ու՛նիք զայն, որ պահանջէ՛ ի՛ ձէ՛նջ ղերա՛ւնա՝ որպէս դուք պահանջէ՛ք ի՛ ծառայից ձերոց ։ արդարացուցանել կամ պարտաւորել զձեզ , զոր օրինակ դուք դնառայս ձեր ։ մանաւանդ Թէ նոյն է՛ ձեր և նո՛ր իր խնամակալ և վրէժխնդրո՛ղք ։ Եթէ յաչխարհի՛ չունիցիք զոք վերադրո՛ղ ի՛ դատել զձեզ , կի՛ Թէ ուրե՛մն իցէ՛ք՝ բայց ոչ առնու ի՛ ձէ՛նջ հնամարս , մի՛ վասն այդր անհոգանայիցէ՛ք ։ Ա՛ւ զի դոյ չէ՛ինա՝ ամենեցուն տիրոջ և դատաւոր , որ ամենագէտ է ՛ի քննե՛լ զպարտս իւրաքանչիւրոց՝ ու՛մ և ծառայի՛ , և չզոք ՛ի դատել զյանցաւորն՝ կամ աստէ՛ն , և կամ ՛ի հանդերձեա՛լն ։

Ե՛ս ա՛ն՚առ՛ն՚ոլ զոյ առ՛ա՛լի նո՛ւ ։ Երկնաւոր տէրն ոչ ըստ օրինաց երկրի՛ վարի՛ ՛ի դատաստանս իւր , որդարացուցանել զոք՝ զի տո՛ւ է , և պարտաւորել զայլ ոք զի ծառայ է ։ առաջի մարդկան՝ և ըստ օրինաց աշխարհի՛ միայն լինի այդպիսի խորհրդիւն ։ բայց առ նո՛ւ՝ մի է՛ տո՛ւ և ծառայ ։ զերկաքանչիւր մով ակամբ նկատե՛ իբրև արարածս իւր , իբրև փրկեալս իւր , իբրև նովին օրէնսբ դատելիս՝ կի՛ պահելիս ։ ոչ հայի՛ ՛ի պատուոյ զանազանութիւն , այլ՛ ի գործս ։ եթէ տեսրբ՝ նեղող լինիցին առ ծառայս , և կամ անողորմ , նովին չափով ընդունին զկշիռն յանաչառ ո՛նէն ։ Ապա ուրեմն այնպէս տիրեցէք ծառայից ձերոց , որպէս զի զերադրո՛ղն նո՛ն տա՛ճոյ լինիցէք՝ և՛ դուք , և՛ ծառայք ձեր ։

10 . Ա՛յսու՚հետ՝ զօրացարո՛ւք փեղմբ , և ՚ի կարդս՚ն՚ զօրո՛ւն նորա ։

Կարդաւորեալ զառանձնական վիճակս հաւատացելոց ըս՛ իւրաքանչիւր պատշաճ խրատուց , ՚ի կատարածիս ըՀՀան՚ բանին բանիւ՛ խրախուսե՛ զամենեսին ՚ի կատարումն շրամանացն ։ Ա՛յսու՚հետ՝ թ՛ե՛ ասե՛ ։ յետ ծանուցանե՛լոյ ձեզ ըզպարտիս ձեր զառանձնականս և զՀՀաթակաց , ո՛չ միայ ինչ կարե՛ւոր առ ՚ի ասե՛լ ձեզ , բայց սրտապնդել ՚ի համբերութիւն և ՚ի մտադիւր կատարումն նմին ։ մի բազմացան խրատքս զձեզ լքեսցեն ։ մի՛ մարքն որ ՚ի ներքին և յարտաքին Թշնամեաց , մի՛ իմ կապանքս և հալածանքս՝ որովք տառապիմ , և որք ձեզ և՛ս կարեն հատանել , երկիւղ արկցեն ։ զօրացարո՛ւք ՝ի՛ տէրն և յայլ Թարգմանս զոյ , եղբա՛րք , կամ եղբա՛ր ես ։) բայ լերուք , արիական սրտիւ պնդեցարուք , ո՛չ յանձինս ձեր վատահացեալք , այլ յաւսոյն առ նո՛ն , զո՛ր քս ունելով ձեզ օրինակ և օգնական և բաջալերիչ ։ Ա՛նեղի արուեստե՛ պատճառ է զինուորի՝ առաքնորդ ուղղել զզօրագլուխ խնամատուն և ամենափոթ ։

Ե՛ս ՚ա՛ր՚ղ՚ո՛՚ւ՚ք ։ Զօրացարուք զզօր կարողութ՛ե՛ն՝ կամ քո՛ւ ՚յանձինս ընկալարուք զանհնար զօրութ՛ե՛ն նո՛ւ ։ առանց նո՛ւ օգնականութ՛ե՛ և գործակցութ՛ե՛ ոչ իմք կարող է՛ք ։ բայց ՚ի նմանէ զօրացցի՛ք , չէք ինչ առ որ տկարանայիցէք ։ այլ դիւրաւ և անհնսալ յաջողեսցէ՛ ձմ՛ ՚ի գործս դժուարինս պնդոյ է խնդրութ՛ե՛ առ ՚ի գործել ։ եթէ դուք ՚ի հոգևորական պատերազմս ունիցիք առաջնորդ զքո՛ , որ և ներքին ուժով ամրացուցանէ ըզձեզ , ահա բարձեալ է երկիւղ դժուարութ՛ե՛ն ։

11 . Ա՛ ՚ա՛ր՚ղ՚ո՛՚ւ՚ք զպատրաստ՚ն՚ո՛՚ւ՚թ՛ե՛ն՚ն՚ ձ՛՝ ՚ի ՚ա՛ր՚ղ՚ո՛՚ւ՚ք ՚ի՛ն՚լ՚ի՛՚ք՚ ՚ի՛ն՚լ ընդ՚ դէմ հնարից սատանայ ։

Բայայայտ՝ Թէ զնարդ լինի զօրանալ կարողութ՛ե՛ն ձմ՛ ։ Զօրացարո՛ւք ասե՛ ։ ոչ է բաւական ունել զօրագլուխ ձեզ Տէր ՚ի պատերազմի զքո՛ , Թէ ոչ դուք և՛ս կամակար վատակօք դործակից լինի՛ք , զանձամբ ձերով արկեալ զպատե՛՚զ՚ե՛՚ն՚ն՚ո՛՚ւ՚ն ձ՛ ։ Ձորին ասե՛ խոնարհ՛ե՛ս , ըմ՛ ամ զէն , կի՛ բոլոր զինուորութ՛ե՛ ՝յոր մէ՛ ՚ի մեր պատե՛՚զ՚ե՛՚ն՚ն՚ո՛՚ւ՚ն նշանակէ զամ՛ զէն պատերազմական՝ որովք ամրանայ զինուոր յամ՛ անդամս իւր՝ Թէ՛ ՚ի պաշտպանե՛լ անձին , և Թէ ՚ի վանե՛լ և վնասե՛լ Թշնամւոյն ։ Թէպէտ ՚ի հոգևոր պատերազմին տիրապես խօսելով՝ ամ՛ զէն է պաշտպանողական հոգևոր զինուորին , և ոչ վնասիչ Թշնամւոյ ուրուք ։

Աղ՛ո՛ ասե՛ , Թէ հաւատացեալք ըս՛ իւրաքանչիւր առանձին վիճակի ունին արդարե՛ պարտս յատուկ , բայց առհասարակ ամենեցուն առաջի կայ պատ՚

տերագոյժ իմանալի ընդդէմ ազգի ազգի Թշնամեաց, որոց առաջին և զօրագո՛ լուխ սատանայ է իւրովքն գործակցօք։ Վա՛ որոյ ամենեքին դուք՝ արք և կա՛ նայք, մեծամեծք և փոքունք՝ զինուո՛ բեալք ընդ դրօշակաւն քո՛ի պարտիք միշտ յանձինս կրել զզէնս հոգւոյս՝ զոր ետ տայ ձեզ, ո՛չ զայս կամ զայն մասնաւոր զէն՝ այլ զրովանդակն, ո՛ բովք հոգին՝ և որովք մարմինն պատա՛ պարի ընդէմ հոգեկան և մարմնական չարաչիմանց սատանայի։ Հոգւոյ զէնք են՝ հաւատք, սէր, առաքինութի՛ւնք, արդարագործութի՛ւն, և այլք զոր ըստ մա՛ սին՝ ի թիւ արկանէ յայդոցանէ։ և մարմնոյ զէնք՝ ժուժկալութի՛ւն, ծնօտաւո՛ր թիւն։ Բայց զի այս ամ՛ լիով կան՝ ի քո՛, և՝ ի քո՛ւ մատակարարին, վա՛ւ այն ըստ ներքին մասոյ՝ նոյն է զէնուլ զպա՛ ռազինութի՛ւն այ, և զէնուլ զբա՛։ որո՛ւ ասէ Տէրն հմմտ։ Ա՛ր՝ զօրաւոր՝ զինուեալ այնչ պէս պարիսպ զէնուլ յանձինս ձեր, զի մի՛ բնաւ՝ ի բաց մերկանայցէք կա՛ մատրաստս։

Ջի կարէ լինել նմ։ Արթուն և ամ՛ նապատրաստ զինուորութի՛ւն պէտք են ձեզ, ոմա՛ զի կարիցէք պինդ կալ՝ ի հո՛ ղևորական մարտի, և ո՛չ անկանիլ կի՛ Թիկունս դարձուցանել։ ոմա՛ զի կարի՛ ցէք տակալ աշխատութի՛ւնց, մարտնչել, վանել, և հաստատուն մնալ յաղթո՛ ղի՛ւքն՝ ի հաւատս քո՛ի և յանձապատուի՛ւն։ Ընդդէմ հնարից սատանայի։ Ընդ անուանմբ սատանայի՝ որ զօրագլուխն է և սկզբ՛ նաներդակ, իմանին ամ՛ զինուորեալք նո՛ր գնդ և մարդիկ՝ ոչ այնչափ զօրու՛ թեամբ մարմնի սատանայ՝ և չարանի կռո՛ւով, քան թէ նենգաւոր և պատ՛ րուազական հնարիւք՝ որ՝ ի բանս և՝ ի գործս, որովք զչարն՝ բարի կերպա՛ րանէ, և յոլովակի զնդն իսկ զէնն ոյ՝ առնէ զէն իւրոյ պատերազմին։ Ա՛ այսպիսի բազմահնար և անհանգիստ պատերազմող՝ պիտոյ է միշտ արթուն կալ, միշտ սպառազինեալ, միշտ՝ ի Տէրն համբերութեան՝ զի և՝ ի մարմնական պատերազմի՝ առաւել երկնչելի է զո՛ րագլուխ Հարատարաւնեա՝ քան ու՛ ժեղակ յաւետ և՝ հոգեւոր մարտիս՝ ուր մարդ ինքնին ոտար է, և՝ ի չարիս հա՛ կամուեալ, և դիւրահաւ, ընդէմ միշտ՝ մարտ և բազմորգալի Թշնամեաց չէ կարօղ ժուժկալել, թէ ոչ ձեռայնին զի՛ նուքն ամրացեալ կայցէ հանապազ։ Մ՛անաւանդ զի ոչ միայն որոգայթա՛ դիր ունիմք Թշնամի, այլև բազմա՛ ձեռն։ որպէս և ասէ։

12. Ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնով ▪ և ընդ արեան, այլ ընդ իշխանու՛ թիւնս և ընդ պետութիւն, և ընդ աշ՛ խարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ ոգ՛ ւոցս չարութե՛ն որ՝ ի՝ երկինս էրիւից։

Յօրինակս ինչ, ոմա՛ և՝ ի հայ մեկնուո՛ ղի։ Ջի ոչ է մեզ մարդ պատերազմ՝ և յա՛ ջորդն՝ ընդ մարմնոյ և ընդ արեան, ՚ի յոյնն յետ և յառաջ դնի, ընդ արեան և մարմ՛ նոյ։ և նոյնպէս արաբացին։ բայց լա՛ տինն և ասորին ըստ մերումս ընթեռ՛ նուն։ Ա՛ատանօր մարդն և արեան ոչ իմա՛ նին իբրև հակառակք հոգեկան մասին մերոյ, փոխանակ մարմնական ցանկու՛ թեց, և ոչ դարձեալ, մարդիկ աշխարք հասեբք, խառնաձնացք։ վա՛ զի ըստ այ՛ սոցիկ մտաց՝ անդադար պատերազմ է հատատացելոց ընդ մարմնոյ և արեան։ ոմա՛ բազում ուրեք սաեն գիրք։ (Գա՛ զատ։ ե։ 16. 17։ Յակոբ։ դ՛։ 1։ ա։ Պետ։ ը՛։ 11։) Ա՛յլ իմանին մարդիկ առհասարակ, ազգ մարդկան՝ իբրև՝ ի մարմնոյ և յարենէ կազմեալք, տկարք բնութե՛ն և անցաւորք, և իբրև դիմա՛ դրելք անխիթական բնութե՛ն՝ որք հղօրեղք են, և անեղծականք։ Յայս միտս ասէ։ (Մ՛ատթ։ ժ՛։ 17։) * Մ՛արմ՛ին և արիւն ոչ յայտնեաց քեզ։ ‖ Ապա իմաստքն են։ պատերազմ հատատացե՛ լոցս՝ ոչ է երկրաւոր և մարմնական, որպէս մարդիկ սովոր են առնել ընդ մի՛ մեանս մի՛ գաւառաց և կալաւածոց, և իշխանութե՛ն։ ոչ եթէ առ մարդիկ ու՛ նիմք մարտնչել, որոց մարի՛ն է ընդէմ դնել՝ առ բռնութե՛ն զբռնութե՛ն՝ առ հնարան՝ հնարս, առ բազմութիւնն՝ զբազմութե՛ն։ կամ եթէ մի կողմն տկա՛ րանայցէ, մարի՛ է իսուել զՏաշտուե՛։

Ա՛յլ ընդ իշխանութի՛ւն և ընդ պետութի՛ւն։ Ո՛մանք՝ ի յետին մեկնչաց իմանան ըզ՛ մարդկային իշխանութե՛ն։ և ընդ անցելոյ մասին այսպէս բացատրեն։ մեր պա՛ տերազմ՝ ի պաշտպանութի՛ն աւետա՛ րա՛

բանին՝ ոչ է ըստ հասարակ մարդոյ՝ այլ ըստ իշխանաց աշխարհի. ոչ ևեթ սահմանք ոմանք են թշնամիք ձեռնպաշտութեան, կամ խաժամուժ ամբոխ ժողովրդոց՝ յորոց դիւրին է խոյս տալ. այլ թագաւորք, գաւառակալք, քաղաքապետք, և գաւառք, յորոց՝ ի ձեռն կայ իշխանութեի և տրամանաւարութի, յարուցեալ կան ընդդէմ մեզ անիշխան մարդոց:

Սակայն սովորական իմաստք հին և նոր մեկնչաց առնուն ի վեր դիւականն իշխանութեիցն, իբր առաւել համեմատ անցեալ և յաջորդ բանից. զի նախ առաջ՝ կալ ընդդէմ հնարից սոքանչի. և զկնի ասել նորընպէս, ի դիմի հարկանել ըստ: Եւ դարձեալ, զի հակառակութեի երկրաւոր իշխանաց և այլ մարդկան ընդդէմ աւետարանին՝ ոչ պարզապար ի նոցանէ չարժեալ է, այլ ի զբաղեալոյ դիւական իշխանութենէ. որոց գործունէութիւնք են մարդկի, և իբր զնմ ոմանք. նմին իրի որպէս ի մարմնականս՝ նորընպէս յայսմ հոգևոր պատերազմի՝ առ հրամանատու դևոն վերաբերի դրդիռ մարտին: Իսկ զայր դևան կռել իշխանութիւնս և պետս, ոմանք հաւ մարին՝ թէ ի դասուց երկնային իշխանութեց և պետութեց անկեալք, պս հենտկաւին զնոյն անուանս՝ թէպետ և ոչ զպաշտօնն: Այլք ասեն, պետս կարաւ ունել զոյն անուանս վս չարս, կամ բռնութեց՝ զոր վերագոյնք նոցա ի կիր ածանն առ վայրագոյն գնս, կամ առ հնազանդեալս ի մարդկանէ: Այլք ասեն, ըստ բնական կատարելութեան և զօրութեան որով մի քան զմի առաւելուն, կրել զանուն իշխանի կամ պետի:

